



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



783

---

2-78

36

11



1



783  
G-78

636 w 62!

*Քաղաք*

ՆԿԱՐԱԳԻՐ ԵՐԳՈՑ

ՀԱՅՍՏԱՆԵԱՅՑՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀՐԱՏԱՐԱԿԱՑ

Ե. Մ. ՏՆՏԵՍՅԱՆ

Ա.

*N. 188 m*



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍՅԱՆ

Կ. ՊՈԼԻՍ. ՊԱՀՋԷ ԳԱՔՈՒ. ԷՍԱՏ ԷՅԷՆՏԻ ԻՍՆ

1874

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՆԵՔՏԻՆԻ

ՄԱՍԻՆԻՍԻ ԲԵՆԵՔՏԻՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Բ. Մ. ԲԵՆԵՔՏԻՆԻ

Ս.



ՀԱՅԱՍՏԱՆԻ Բ. Մ. ԲԵՆԵՔՏԻՆԻ


Բ. Մ. ԲԵՆԵՔՏԻՆԻ ԲԵՆԵՔՏԻՆԻ

1874



783  
G-78

ՆԿԱՐԱԳԻՐ ԵՐԳՈՑ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑՍ ԵԿԵՂԵՑԻՈՑ



ՀՐԱՏԱՐԱԿԵԱՑ  
Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Ա.



1420

Կ. ՊՕԼԻՍ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

ՊԱՀՃԷ ԳԱՔՈՒ, ԷՍԱՑ ԷՃԷՆՏԻ ԻԱՆ

1874 //

STANDARD PAPER

STANDARD PAPER

STANDARD PAPER

STANDARD PAPER

U.



STANDARD PAPER

STANDARD PAPER

STANDARD PAPER



357-91

15 NOV 2011



ՈՐ Ի ԼՈՒԾԻԼ ԴԱՐՕՏԻ ԿԵՆԱՑԳ  
ԶՅՈՅՍ ԽԱԲՈՒՍԻԿ ԿԱՐԻ՝ ՎԱՂ,  
ՅԻՆԷՆ ԿԱՊՏԵՑԵՐ,  
ՄԱՆՈՒԿ ՇՆՈՐՀԱԼԻ,  
ՅՈՎՀԱՆՆԷՍ Կ. Մ. ՏԵՏԵՍԵԱՆ  
ՍԱՆԿ ԻՄ ԵՒ ԵՂԲՕՐՈՐԴԻ.  
ԱՌՀԱՒԱՏՁԵԱՅ ԹԱՂԾԱԳԻՆ ՍԻՐՈՅՍ,  
ԶԱՅՍ ՓՈՒՆՁ  
ՆՈՒԻՐԵՄ ՔԵԶ  
ՅԻՇԱՏԱԿ

---

ՆՆՁԵԱՑ Ի ՏԵՐ ՅԱՄԻՆ 1871 Ի ՏԻՍ ՏԱՍՆ ԱՄԱՅ





THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY  
540 EAST 57TH STREET  
CHICAGO, ILL. 60637  
TEL. 773-936-3200  
WWW.CHICAGO.EDU

UNIVERSITY OF CHICAGO LIBRARY



## ՉԵԿՈՒՑՈՒՄՆ

Բաւական ժամանակէ հետէ ազգայնոց շատերուն հետ մեք ևս կը բաղձայինք մեր ազգային եկեղեցական երաժշտութեան կանոնաւորութեանն ու միօրինակութեանը, և այս մասին երբեմն մի քանի առաջարկութիւն ևս ըրինք հրապարակաւ . այժմ գոհութեամբ կը տեսնենք որ սոյն խնդիրը օր ըստ օրէ կարեւորութիւն կ'առնու, և մասնաւորութենէ ելնելով՝ ազգային պաշտօնական կերպարանք կ'ստանայ : Ասկէ քաջալերելով կը ձեռնարկենք դարձեալ այս խնդրոյն վերայ մի քանի հրատարակութիւն ևս ընելու, մասն առ մասն՝ երեք տետրի բաժանելով :

Առաջին տետրը պիտի պարունակէ՝ եկեղեցական երաժշտութեան վերայ մինչեւ ցարդ մեր հրատարակած հատուածները և ասոնց տրուած պատասխանները, յաւելցընելով 'ի վերջոյ՝ սոյն խնդրոյն յարակից մի քանի յիշատակութիւններ ու գիտողութիւններ ևս : (Որովհետեւ արդէն հրատարակեալ սոյն հատուածները այլ և այլ պարբերական թերթերու մէջ ցրուած և այս խնդրոյն ուշադիր անձանց շատերուն անգամ անմատչելի ըլլայր փորձիւ իմացանք) : Եւ որպէս զի նիւթերու դասաւորութիւնը կանոնաւոր ըլլայ, անոնց հրատարակութեան թուականներուն կարգաւը պիտի զետեղենք զանոնք յաջորդաբար՝ սոյն տետրիս մէջ :

Երկրորդ տետրը պիտի պարունակէ երաժշտական խազերով եկեղեցական երգերու հատուածներ, որոց մէկ մասը պիտի առնունք արդէն հրատարակեալներուն մէջէն :

Երրորդ տետրը պիտի պարունակէ հայերէն երաժշտական նոր խազերու դասախօսութիւնը :

Եւ ահա սոյն առաջին տետրը կը փութամք հրատարակել վստահ լինելով որ մեր պատուարժան ազգայինք պիտի քաջալերեն զմեզ յառաջիկային մէջ սոյն ձեռնարկն աւելի արդիւնաւոր կացուցանելու, 'ի փառս առաքելական Ս. Եկեղեցւոյս Հայաստանեայց և 'ի փայլ սրբազան քնարին՝ մերոց երջանկայիշատակ նախնեաց :

ԵՂԻԱ Մ. ՏԵՏԵՍԵԱՆ





ԵՐԳՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՆՈՒՆ ՏԵՏՐԻՆ ՏՊԵԱԼ Ի ՎԵՆԵՑԻԿ

Շատոնց 'ի վեր Մխիթարեան Մխարանութիւնը փորձ փորձ ձեր էր խաղացի կտորի՞՞ երաժշտի մը օգնականութեամբը հայ եկեղեցւոյ սրբազան երգերն եւրոպական երաժշտութեան խաղերուն (նօրա) վրայ առնելու . աս բանիս նպատակը՝ ազգային երգոց աւելի կարգաւորութիւն և աւելի կանոնաւոր ընթացք մը տալ էր, միանգամայն ազատ պահել զանոնք փոփոխուելու վտանգէն : Պ . Պետրոս Պիանքինի վենետիկեցի երիտասարդ երգահանը՝ աւելի բարեբազդ գտնուեցաւ աս նիւթիս մէջ քան զբազում եւրոպացի նշանաւոր երաժիշտս , դաշնակի (ֆիանոյ) քաղցր հնչմանց կատարելապէս յարմարցընելով զանոնք : Որոնց մէջէն ճաշակի համար մէկ երկու ձայնաւորի երգերէն՝ մէկ երկու ալ շարականէն 'ի լոյս կ'ընծայենք հիմա . և են ութ ձայն Օրհնութիւնները , Խորհարար խորին , Ընորեալը յԱստուծոյ , Անկանխօտաւ ինքնաբերական , Ի խաչանիշ փայտին , Նորահրաշ պատկառար , Հայր մեր որ յերկնս , և գոհացողական երգ մը :

Այս փորձը , որ տարիներով առաջ վիմագրած էր , դեռ ևս միտք չունէինք 'ի լոյս հանելու , մինչեւ որ մէկալ երգերուն վիմագրութեամբն ալ չճոխացընէինք . սակայն ազգայնոց ալ եռանդն ու ըրած ձիգնը , միանգամայն ազգասիրաց և մանաւանդ նշանաւոր և մեծարգոյ անձի մը տուած յորդորն համարձակեցուցին զմեզ ընծայելու հասարակութեան այս դոյզն ճաշակը : Թէ որ համագգի եղբարք խրախուսեն զմեզ յայս պիտանի գործ , կը խոստանանք ամբողջ սուրբ պատարագն եւրոպական երաժշտութեան նշանագրերով և դաշնակութեամբ հրատարակելու :

## ԲԱՑԱՏՐ ՈՒԹԻՒՆՅ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՒԱԳԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՍ Ս՝ ԵԿԵՂԵՅԻՈՅ

ԱՆՈՒՆ ՏԵՏՐԻՆ ՏՊԵԱԼ Ի ՊՈԼԻՍ

Հայաստանեայց եկեղեցւոյ սրբազան երգոց եղանակները թէ և դարերէ հետէ շատ փոփոխութեանց ու եղծմանց ենթակայ եղած էին, այլ գոնէ ներկայ գտնուածը բոլորովին եղծման վտանգէ ազատելու համար՝ երաժշտական խաղերով (նշխայով) արձանագրելու և տարածելու կարեւորութիւնը գրեթէ եռսուն տարիէ ՚ի վեր ճանչցուած է, սակայն այս կարեւոր գործը յառաջացնելու համար քանիցս անգամ զանազան փորձեր լինելէ յետոյ տակաւին յուսացուածին չափ արդիւնք տեսնուած չըլլալը յայտնի է :

Ուստի այս վերջի տարիներս՝ նախ քան զհրատարակութիւն Հայկական Փնարից, Պ. Գաբրիէլ Երանեան երաժիշտը տեսնելով որ ազգիս մէջ ալ օր ըստ օրէ կը յառաջանայ եւրոպական խաղերու ուսումը, առաջարկեց մեզ որ իւր հետ ընկերութեամբ՝ եկեղեցական երգերը եւրոպական երաժշտական խաղերով գրելու փորձն ընենք. և որպէս զի եղանակաց կազմութեանը վերայ ճիշտ դիտողութիւններ ընելով՝ եւրոպական կանոնաց յարմարցնելը դիւրին ըլլայ, որոշեցինք որ ինքն նախ ընագիրը կը գրէր հայերէն խաղերով, և մեք ալ եւրոպականի կը յեղաշրջէինք զանոնք, մեր դիտողութիւններն ալ աւելցրնելով. և այս օրինակները եկեղեցական երգոց հմուտ Մինէճեան Պ. Արմօնի կողմէն ալ կը հաստատուէր :

Գործը այսպէս շարունակելով՝ շարականի երգոց երկու հինգերորդ մասը գրելէ յետոյ, մեր՝ ժամանակ մը ՚ի Պօլսոյ բացակայութեանը, և սոյն միջոցին Պ. Գ. Երանեանի մահուանը սլատճառաւ, գործոյս շարունակութիւնը ակամայ ընդհատեցաւ. և ասիէ հինգ ամիս առաջ ՚ի Պօլիս վերադարձած ժամանակնիս, եւրոպական խաղերով գրուած օրինակներուն մեծ մասը որ հանդուցելոյն քով կը գտնուէր՝ անհետ եղած էին :

Իսկ մեք այսպիսի ծանր գործի մը շարունակութիւնը դիպող ժամանակի մը ձգելով, առ սյժմ՝ այս մասին հրատարակում մը



ևս ընելու դիտաւորութիւն և յօժարութիւն չունէինք երբէք, սակայն Վենետիոյ Մխիթարեան բազմադիւն հարց հրատարակած երէք Հայաստանեայց Եկեղեցւոյ անուն տեսարը մօտ օրերս ձեռքերնիս անցնելով, որուն մէջ կը գտնուէին՝ եւրոպական երաժշտական խաղերով մեր եկեղեցական երգերէն համառօտ հաւաքածոյ մը, համարձակեցանք և մեք հրատարակել ներկայիւս մի քանի հատուած Շարականի երգերէն՝ եւրոպական խաղերով, և մեր արդէն գրածներէն աւելի պարզ կերպիւ՝ իբր արմատ . որոնցմով Ութն Զայնից (եղանակաց) և Ստեղծաց սկզբնաւորութիւնքը, փոփոխութիւնքը և վերջաւորութիւնքը բացայայտ կ'երեւին: Եւ այս ձեռնարկութեանս մէջ մեզի նպատակ ունեցանք նախ՝ այս մասին ձեռնհաս և կարող ազգայնոց ուշադրութիւնը վերատին զարթուցանել, երկրորդ՝ Մխիթարեան Վերսալատեցի հարց հրատարակած երգոց՝ ընդհանրապէս գործածուածէն տարբեր մէկ քանի տեղերը ցուցնել:

Այս ձեռնարկութեանս մէջ ամենայն կարելի զգուշութիւն ըրինք ՚ի մասին ճշդութեան երգոց, և զանոնք՝ հայերէն խաղերով վաղուց գրուած օրինակներու, Հայաստանի եղանակներու և Պօլսոյ մէջ եկեղեցական երգոց հմուտ անձանց շատերուն ճաշակին հետ համեմատելէ զատ, իբր հիմնական սկզբունք հետեւեալ կանոնները գործածեցինք, մէկ քանի տեղ մասնաւոր զարուշութեամբք:

Նախ՝ այժմեան եղանակները որք ամենուրեք միօրինակ կ'երգուին իրարմէ քիչ տարբերութեամբ, իրենց պարզ փիճակին վերածելով անփոփոխ պահեցինք:

Երկրորդ՝ ո՛րչափ որ առ ձեռն կրցանք գտնել ընտիր ձեռնալիր ու սպալլիր շարականներ, անոնց խաղերուն վաղեմի կարգադրութեանը հետեւեցանք ըստ կարելւոյն:

Երրորդ՝ չափերու (ոտքերու) բաժանումները մի միայն հաճոյից ու սովորութեան վերայ չհիմնելով ընդհանուր կանոնի մը վերածեցինք: Առին սօսող՝ նշանով վանկ՝ կէս ոտք ( $\frac{1}{8}$ ): Երկու  $\overset{\circ}{\curvearrowright}$ ,  $\overset{\circ}{\curvearrowleft}$  և ասոնց տեսակ նշաններով վանկեր՝ մէկ ոտք ( $\frac{1}{4}$ ): Երկու  $\overset{\circ}{\curvearrowright}$ ,  $\overset{\circ}{\curvearrowleft}$  և ասոնց տեսակ նշաններով վանկեր՝ ( $\frac{2}{4}$ ) երկու ոտք: Երկու  $\overset{\circ}{\curvearrowright}$ ,  $\overset{\circ}{\curvearrowleft}$  և ասոնց տեսակ նշաններով վանկերը չորս ոտք ( $\frac{1}{2}$ ) այսինքն մէկ Ամբողջ չափի բաժնեցինք . և ո՛ր տեղ որ երբեմն անյարմար կու գար չափերու կանոնացը, Զայնահատ մը աւելցուցինք ըստ սլահանջման կարգի բանին: Այս ընթացքն ընդ-

հանրապէս արդի սովորութեան ալ համաձայն լինելէ զատ, ոտանաւոր հատուածներու ևս լաւ կը յարմարի, որոց եղանակներն առանց փոխուելու՝ քանի վանկ որ ունին այնչափ ոտք կը բաժնուին :

Սոյն եղանակներուն ձայնաստիճաններն ալ բուն արեւելեան եղանակաց կարգաւը դրուած են, թէ և մէկ քանի եղանակ ուրիշ ձայնաստիճաններէ կրնային դրուիլ : Արեւելեան ձայնաստիճանները՝ արեւմտեանէն փոքր ինչ ցած են, այնպէս որ արեւելեան լա՛ ձայնաստիճանը՝ արեւմտեան «ս» ձայնաստիճանին հետ կը համեմատի, սոյնպէս և միւսները կարգաւ : Շարականի երգերը դաշնակի վերայ ձեռքով նուագելն ըստ մեզ երկրորդական խնդիր է . դժուարութիւնը ձայնով երգուելուն վերայ է . եթէ ասիկայ հաստատ կանոնի մը վերայ հիմնուի, դաշնակի յարմարցընելը շատ կը դիւրանայ : Միանգամայն պէտք է նկատել որ արեւելեան եղանակները բաց 'ի մէկ քանիէն՝ տարբեր ձայնաստիճաններէ ներդաշնակութեան շատ լաւ չեն յարմարիր, ինչպէս որ կը յարմարին արեւմտեան եղանակները, հասլա մի և նոյն եղանակը իրարմէ ութնեակ մը բարձր ու ցած ձայներով մէկտեղ կ'երգուի և կամ աւարտելի ձայնաստիճանը պարզապէս կը հնչուի (ֆեֆ) . ասոր պատճառը արեւելեան ելեւէջի ընթացքին և միջոցներուն արեւմտեանէն ունեցած տարբերութիւնն է : Արեւելեան չափերն ալ արեւմտեանէն ծանրկէկ և եղանակներն ալ մեղմ՝ են . արեւելեան երգոց փոքր ինչ ճաշակ ունեցողներն հարկաւ զիտեն զայս, ուստի մի ըստ միովէ՛ զասոնք նշանակելը զանց ըրինք համառօտութեան համար :

Այսչափ տեղեկութիւն տալէ յետոյ, մեր՝ այս կանոններն ընտրելնուս պատճառներուն բացատրութիւնը, վաղեմի և արդի հայկական խազերուն և եղանակներուն, ինչպէս նաև Մխիթարեան հարց հրատարակած տետրին վերայ մի քանի դիտողութիւններն ուրիշ պատեհ ժամանակի մը թողելով կը վերջացենք, արգոյ բանասիրաց դիտողութեանը յանձնելով այս ներկայ հրատարակութիւնս ալ :

Եւ եթէ ասով՝ Հայաստանեայցս Եկեղեցւոյ սրբազան երգոց միօրինակութեան և ճշդութեան կարեւոր խնդրոյն վերայ գէթ աղօտ լոյս մի տուած համարուինք՝ մեր փափաքին հասած կ'ըլլանք :



(ՏԵ՛ Ի Երևանի Հանրէս 1864 թիւ 35)

Պ. Խմբագիր .

Պ. Տնտեսեան մօտերս համառօտ տետր մը հրատարակեց ,  
 Բովանդակութեան Եղանակաց Հայաստանեայց Ս. Եկեղեցաց անունով :

Հայաստանեայց Եկեղեցւոյ սրբազան երգերը միօրինակ ընե-  
 լու և օրէնքի մը ներքեւ գնելու համար սոյն տետրը հրատարա-  
 կուած է : Սակայն դիտեցինք որ անոր մէջ բաւական զգալի փո-  
 փոխութիւններ մտած են , և այնպիսի փոփոխութիւններ , որոնք  
 չէ թէ Եւրոպական խաղերուն կամ օրէնքին համաձայնեցնելու  
 համար տեղի ունեցած են , այլ կ'երեւի մեզ թէ իրեն աւելի  
 քաղցր և հաճոյ թուեր է այնպէս ընել , և փոխանակ ներկայ գըտ-  
 նուած եղանակները բոլորովին եղծման վտանգէ ազատելու , ա-  
 ւելի յեղծումն կը տրամադրէ : Մեր ըսածները առանց փաստի  
 չերեւցնելու համար կ'ըսենք միանգամայն թէ , որովհետեւ իր  
 հրատարակած տետրին յառաջաբանին մէջ ցուցցեր էր թէ , ինք  
 ատենօք լուսահոգի Երանեան Գաբրիէլ աղային հետ այս գործոյն  
 աշխատած է , և շարականի երգերը Եւրոպական խաղերով կը  
 գրէ , և Մինէճեան Սիմոն աղայէն ալ եղանակներուն ճշդութիւնը  
 կ'ստուգուի եղեր , մենք ալ նոյն տետրը ձեռուընիս Սիմոն ա-  
 ղային գացինք , և գրուածը ճշդիւ կարդալով , հարցուցինք թէ ինք  
 ա՞յնպէս կ'երգէ , կամ ա՞յնպէս գիտէ , կամ ա՞յնպէս իր երեւելի  
 դասատուէն հանգուցեալ Մինէճի համբաւաւոր շարականագէ-  
 տէն սորվեր է . ինք Սիմոն աղան մերժեց , և նոյն եղանակները  
 չընդունեց : Ասկէ կ'իմացուի որ Պ. Տնտեսեանը իր քմացը հա-  
 մաձայնեցուցեր է շարականի ասմունքը . որովհետեւ առանց եղա-  
 նակը փոփոխելու և առանց Եւրոպական երաժշտութեան օրէնք-  
 ները եղծելու , մեր շարականի երգերը կրնան Եւրոպական խա-  
 զերով գրուիլ :

Ասոր փորձը ատենօք մենք ըրինք : Երանեան Գաբրիէլ աղա  
 լուսահոգի դասատուիս հետ ատենօք ձեռք զարկինք շարականի  
 երգերը Եւրոպական խաղերով գրելու . և ան ատեն ես ինքս  
 անձամբ քանի մը անգամ Սիմոն աղային գնացի , քանի մը ծանր  
 ստեղծներ անկէ առնելու , և ձայնագրելու համար . ան ատեն  
 բաւական պարապեցանք այս գործին . և որպէս զի կարող ըլլանք



դիւրաւ 'ի գլուխ հանել, մտածեցինք նախ Քնար Հայկական անու-  
նով երկշաբաթական թերթ մը հրատարակել, ու անիկայ թէ  
ազգային երգերով և թէ Հայկական ու Եւրոպական ձայնագրու-  
թեան դասերով լեցնել, որպէս զի ձայնագրութիւնը քիչ մը  
զարդանելէն զինի, շարականի աստուծոնքննին ալ ձայնագրուած  
հրատարակելու ձեռնարկենք. բայց ասի չափաի ընէինք, մինչեւ  
երաժշտաց ժողով մը կազմելով, մեր յօրինածը անոնց քննու-  
թեանը չյանձնէինք, և անոնց որոշմամբը չվաւերացնէինք :  
Գծբաղդաբար Քնար Հայկականն ալ երեսի վրայ մնաց և դադ-  
րեցաւ, և մեր փափաքն ալ յառաջ չգնաց, մանաւանդ Երա-  
նեանի ցաւալի մահուանը պատճառաւ :

Պ. Տնտեսեան կ'ըսէ թէ չափերու բաժանումները հաճոյից  
ու սովորութեան վրայ չէ ուզեր հիմնել, և ընդհանուր կանոնի  
վերածելու ատեն պարտաւորեր է քանի մը գլխաւոր սխալներ ալ  
գործելու. շարականի մէջ պարունակուած խաղերը միայն տեւո-  
ղութեան և չափերու վրայ հիմնուած չեն, այլ եղանակ ալ կը  
ցուցնեն, այսինքն՝ իրենց այլ և այլ ձեւերովը իւրաքանչիւր ձայնի  
մէջ զատ զատ պաշտօններ և այլևայլ դարձուածքներ ունին.  
չափերու մասին սէտք է գիտնալ թէ մէկ ոտք տեւողութիւն  
ունեցող խաղ մը շատ անգամ 2, 3, 4 ոտք, և 2, 4, ոտք տե-  
ւողութիւն ունեցող խաղ մը շատ անգամ 3, 8, 10 ոտք տեւո-  
ղութիւն կ'ունենայ. ասիկայ ընդհանուր կանոն մ'ունի, բայց այն  
կանոնը տեւորին մէջ դրուած չէր, և խաղերուն վրայ եղած բա-  
ժանումները ու տրուած տեղեկութիւնները սխալ են. և  $\frac{1}{8}$  ոտք  
նշանակած սուղ (°) նշանին՝ 2 ոտք տեւողութիւն տուած է  
Որ յանարտաք ստեղծին մէջ,  $\frac{3}{4}$  ոտք նշանակածին ալ 13 ոտք տե-  
ւողութիւն դարձեալ նոյն ստեղծին մէջ :

Սոյս առթիւ կ'ուզենք դիտողութիւն մ'ալ ընել Երգեհոնի  
վրայ, որուն համար քանի մը օրագիրներու մէջ խօսք կը պտըտի  
եկեղեցեաց մէջ գործածելու յարմարաւորութեանը կամ անյար-  
մարութեանը վրայ : Երգեհոնը Եւրոպացիք իրենց եկեղեցեաց մէջ  
կը գործածեն. բայց գիտնալ սէտք է որ արեւմտեան ժամեր-  
դութիւնը շատ տարբեր է արեւելեան ժամերգութենէն. արեւ-  
մտեան եկեղեցական եղանակները 3, 4 ձայնով շինուած են.  
փրիմօ, սէքօնիօ, պասս ևն. երգեհոնն ալ անոնց հետ ընկերա-  
ցած ժամանակը մի և նոյն ձայները կը հանէ : Իսկ Հայաստա-  
նեայց Եկեղեցեաց ժամերգութիւնը մէկ ձայնի վրայ է, մայր եւ



զանակի վրայ, և անոր զուգընթաց սէքօնթօ, պասսօ չունի, և ունենալ ալ անհնարին է. ըստ որում արեւելեան սքալան ընդունակ չէ զուգընթաց ձայներ յառաջ բերելու. շարականը ծայրէ 'ի ծայր, և Ս. Պատարագի արարողութիւնը գրեթէ ամբողջ մայր եղանակով (փրիսօ) կ'երգուին, և ամենեւին յարմարութիւն չունին ուրիշ զուգընթաց ձայներու, հետեւաբար երգեհօնի ալ: Կան քանի մը շարականներ, և Ս. Պատարագի արարողութեանց մէջ ալ քանի մը երգեր, որոնք արեւմտեան եղանակի մերձաւորութիւն ունենալուն, կրնան սէքօնթօ և պասսօ և՛ զուգընթաց ձայներու ալ գալ: Սակայն երգեհօն գործածել ուղղները 'ի հարկէ միայն մէկ երկու երգի կամ շարականի համար չեն ուզեր գործածել, այլ պիտի փափաքին որ միւս բոլոր ժամերգութիւնն ալ երգեհօնով ըլլայ. ան ատեն ժամերգութեան եղանակները փոխուիլ պէտք են, որ յարմարին երգեհօնի. և աս անկարելի ըլլալուն երգեհօնի յարմարութիւնն ալ ուրեմն անկարելի է: Միայն թէ քանի մը զուգընթաց ձայներով առանց քանթօյի դէժ ըսնել հնարաւոր է երգեհօնին մէջ, և ասիկայ արեւելեան երգեցողութեան աւելի քաղցրութիւն մը կրնայ տալ. իսկ այն քանի մը շարականները և Ս. Պատարագի արարողութիւնները, որոնք արեւմտեան եղանակի մերձաւորութիւն ունին, կրնան անոնք երբեմն օքթավով և երբեմն ալ քանթօյին հետ ընկերանալով երգուիլ: Սակայն միշտ ընդունելին այն է որ քանի մը զուգընթաց ձայներով դէժ ըսնուի, որ ինչպէս ըսինք քաղցրութիւն մը կրնայ տալ. այն ալ եթէ չարէն աւելի գործածուի, գլխու ցաւ կու տայ:

Խնդրելով որ սոյն նամակիս տեղի շնորհել բարեհաճիք ձեր պատուական Հանդիսին մէջ մնամ և՛:

Ն. Ս. ԹԱՇՃԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌՆԱԽՈՐԵԹԱՅ ՅՕԴՈՒԱԾՆ

(Տես Ժամանակ Հանդէս 1864 թիւ 58)

Պ. Խմբագիր.

Ձեր պատուական Հանդիսին 55 թուոյն մէջ Ն. Ս. Թաշճեան ստորագրութեամբ յօդուած մը տեսանք, որ խիստ քննադատութիւն մը կը պարունակէր 'ի վերայ Բովանդակութեան նոսափաց



Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ անուն տետրին, զոր անցեալներս հրատարակած էինք: Մեր նպատակն ալ այս էր որ այս խնդրոյն հմուտ ազգայնոց ուշադրութիւնը արթննայ և եկեղեցական երգոց կանոնաւորութեան խնդիրը յուզուի. ուստի և առ այժմ սոյն յօդուածին վերայ խօսելու մտադիր չէինք, եթէ անոր մէջ չգտնուէին այնպիսի կէտեր յորոց ակամայ ստիպուեցանք դիտողութիւննիս յայտնել:

Յիշեալ յօդուածին գլխաւոր իմաստն այս է թէ մենք Շարականի երգերը յեղծումն տրամադրած ենք՝ մեր քանցը յարմարցնելով դանոնք, թէ, չափերու մասին մեր ընթացքը սխալ է, և թէ Պ. Ս. Մինէճեան մեր տետրը մերժեր է, և այլն:

Մենք եկեղեցական երգոց եղանակներուն անփոփոխ մնալուն ջերմ նախանձաւորներէն ենք և զմեզ ՚ի մտոյ ճանչողները լաւ գիտեն զայս. սակայն այսօրուան օրս ամեն մէկ շարականագէտ ա՛յնչափ տարբեր կ'երգեն իրարմէ, որ ստիպուեցանք այս Բաբէլոնեան դռնակէն մէջէն ամենէն հասանականը, պարզ ընդունելով, հմուտ անձանց շատերուն երգեցմունքին, հայերէն խաղերով զանազան օրինակներու, ընտիր շարականաց խաղերուն, և Հայաստանի եղանակներու հետ բաղդատել, և միոյն մէջ եղած երկրայութիւնը միւսով լրացնելէ զկնի, հմտագունից դիտողութեանը յանձնել իբր կարծիք քան թէ վճիռ: Հետեւաբար մեր կարծեցեալ փոփոխութիւնքը ա՛յնպիսի անորոշ կէտեր էին, զորս դիտմամբ ըրած էինք՝ երգոց եպիսկոպոսութիւնը իբր պրոֆանաւելի պարզ ցուցնելու համար. և վստահութեամբ կրնանք ըսել թէ մեր Բովանդակութեան մէջի երգերը էապէս համաձայն են ՚ի վաղուց անտի սովորական եղած ընդհանուր եղանակներուն. անկողմնասէր քննիչ մը կրնայ բաղդատել զայս. ուստի չենք զարմանար երբ ոմանց մասնաւորաց ճաշակին անախորժ կու գայ: Մենք հետեւելով բազմաթիւ հմուտ անձանց՝ կ'ըսենք թէ ինչպէս որ մեր լեզուին ճշդութիւնը գտնելու համար անցեալ դարուն ոճը մեզի ուղեցոյց չէինք կրնար ընել, այսպէս և եկեղեցական երգերը երբ կ'ուզենք բարեկարգել, չենք կրնար կուրօրէն հետեւիլ յամենայնի ներկայ եղանակներուն, այլ կը հարկադրինք քննել, կարգադրել ա՛յնպիսի քանի մը կէտեր, որք առաջի գիտնական քննադատութեան՝ եղծումն կը համարուին, և որոց նորաձեւութիւն և դարաւոր անկանոնութենէ յառաջացած աղաւաղութիւնք ըլլալը կ'ապացուցուի:



Ս, յո՛, մեր եկեղեցական եղանակները ճիշդ եղածնուն պէս կրնան դրուիլ եւրոպական երաժշտութեան խաղերով, այլ պէտք չէ՞ համաձայնեցընել միմեանց եւրոպական խաղերու օրէնքը, արեւելեան ճաշակը, պարզութիւնը, արդի սովորութիւնը, հնու-թիւնը, ազգային բանահիւստութիւնը, գորս ընելու համար երբ և իցէ պիտի ըլլան ա՛յնպիսի կարգադրութիւնք, որք ունակու-թեան ստուերին հետեւողաց իբր զԲաբելոնացիներն և արեւելեան — տաճկական երաժշտութեան ճաշակին վարժողաց իբր եղծած պիտի երեւին : Մեք ըստ մեր կարեաց աշխատեցանք համաձայնեցընել միմեանց վերոյիշեալ կէտերը . և անկեղծաբար ըսելով շնորհակալ կ'ըլլայինք եթէ աւելի հմուտ անձինք մանաւանդ նոյն յօդուածն ստորագրողը՝ մեր ըրած եղծածները, չափերու սխալները, շարականի խաղերուն համար իբր ընդհանուր կանոն ցոյց տուած անկանոն կանոնք զօրաւոր ապացոյցներով հաստատած ըլլար . որով ոչ միայն մեր հետաքրքրութիւնը գոհ կ'ըլլար, այլ և ազգին ալ ծառայութիւն մը ըրած կ'ըլլար, լոյս մը սփռելով այս մութ խնդրոյն վերայ : Սակայն այս մասին երաժշտական ժողով մը պէտք է եղեր . շատ լաւ . մեք մեր կարծիքը բացատրեցինք և եթէ աւելի հմուտ ան-ձանց կողմանէ աւելի զօրաւոր փաստերով հակառակը ապա-ցուցուի, չենք դանդաղիր ընդունելու :

Եւ եթէ Պ . Ս . Մինչձեան մեր տետրը չէ ընդունենք՝ մեզ փոյթ չէ . սակայն մեք չէինք ըսած թէ անի մեր ներկայ Բո-վանդակութիւնը հաստատած է, որուն հարկ մը չէինք տեսնէր : Մեք չորս հինգ տարի առաջ եղած փորձի մը (առանց չափազանց կարեւորութիւն մի ևս տալու), համառօտիւ յիշատակութիւնը ըրած էինք գլխաւորաբար այն պատճառաւ որ Պ . Գ . Երանեանի վախճանած ժամանակ ՚ի Պօլիս չգտնուելով, հինգ ամիս յետոյ մեր վերադարձին երբ տեսանք որ նորա քով եղած մեր ձեռա-գիր տետրերը կորսուած էին, կասկածեցանք որ մի՛ գուցէ այնպիսի մէկու մը ձեռք անցած ըլլան որ յանդգնի իւրեան սե-փականել թէ՛ հանդուցելոյն յղացած ազնիւ գաղափարը և թէ՛ մեր բազմօրեայ աշխատութիւնը զոր կրած էինք առաջին ան-գամ, մեր եկեղեցական երգերը եւրոպական խաղերու անյեղի սկզբանցը համաձայնեցընելու ատեն : Թէ և հրապարակաւ կը յայտարարենք այժմ՝ որ նոյն օրինակներուն թէ՛ բնագիրները և թէ՛ ընդօրինակութիւնները ճանչելէ զատ՝ ամենայն փաստ ՚ի ձեռին ունինք յապացոյց անոնց մեր ձեռագիրն ու թարգմա-



նութիւնը լինելուն, ինչպէս բազմաթիւ պատուաւոր վկայներ և վաւերական գրութիւնք: Ահա նոյն օրինակներն են որ հանդուցելոյն ձեռք Պ. Ս. Մինէճեան ոչ միայն հաստատած այլ և ստորագրած է, և որ ինքն ալ կը խոստովանի այսօր:

Մեր եկեղեցական եղանակները ազգային դարաւոր յեղաշրջութեանց և կանոնաւոր ձայնագրութիւն ալ չըլլալուն պատճառաւ եղծման ենթակայ էին բնականաբար. այսու ամենայնիւ մեր այն նախնի դպիրները որք թէ՛ սխալ և թէ՛ ուղիղ իրենց վարժապետէն սովորած իրր պտտգամ համարելով չէին ուզեր յայտնի սխալն անգամ ուղղել և կամ նշանախեց մը փոփոխել, տակաւին զատնք իբր ասանբապան պէտք է համարել և ոչ եղբայր:

Սակայն եկեղեցական երգերը յեղծածն որսմարտեցան այն ատեն, երբ տաճկական երաժշտութեան մեղի ճաշակն սկսաւ մուտ գտնել եկեղեցւոյ մէջ՝ հակառակ սորա վեհ պարզութեան: Այն ատեն, երբ Ասասոյ լասայէն մինչեւ Սեբասթապոլի, նաեւ Ջրօհնէայ, Ոսնալասայէ և այլ երգոց եղանակները մեծ մասամբ հիմնովին փոփոխուելէ և ա՛լ աւելի անկանոնութեան մէջ մլտանելէ զինի, բուն իսկ շարականի երգոց վերայ ևս շատ գրաւի փոփոխութեան եղանակ միմիայն նորաձեւութեան և ո՛չ երբէք կանոնաւորութեան բազմանքով. և որոց համար շատ դժգոհութիւններ յայտնուած է հմուտ և նշանաւոր ազգայնոց կողմանէ: Արդ եկեղեցւոյ մէջ սկսան մուտ գտնել նորօրինակ անձոննի եղանակներ. երբ առաւօտուն կանուխ արթնցողը նորօրինակ եղանակաւ Ա. Բ. հայր սուրբ մը Տեր սղորթա մը ևս սկսաւ հնարել որով արդէն գպրութիւն ընողներն ստիպուեցան կա՛մ նորէն ուսանել և կա՛մ պաշտօնին ձգել. ձայնաւոր աշակերտք ալ ամեն օր նորօրինակ եղանակաւ Տեր սղորթա, Ա. Բ. հայր սուրբ ուսնելով դլուխնին ոււեցաւ, որով գրեթէ ժամասացութիւն ուսանելու ատեն չունեցան. հետեւաբար օր ըստ օր՝ եկեղեցական երգոց մանաւանդ շարականի հմուտ անձանց թիւը զգալի կերպիւ կը սրակսի մինչեւ անգամ եկեղեցականաց դասէն. և դուրսէ օր մը պիտի ստիպուի ազգը դպրաց ալ թոշակ վճարել եթէ աղէկը դառնուի բաւական թուով: Այսու ամենայնիւ ճշմարտութիւն մ'է որ ամեն ազգային դպրոցաց մէջ ձայնաւորի դաս կայ, բնէ է որ մեծ ծախք կ'ընէ ազգը ստոր համար սակայն արդիւնքը շատ քիչ է. պատճառ, վասն զի գոնէ իւր սահմանին մէջ կանոնաւոր ուսման ձեւ առած չէ այս դասը, և ի՞նչպէս կանոնաւորելու է . . .



« Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ » :

Ազգը՝ ձայնագրութեան անունը լսած օրէն՝ ՚ի վեր մեծ սէր ցըցուց այս ուսման, զի կը կարծէր թէ գոնէ այս միջոցաւ եկեղեցական եղանակները պիտի դիւրանան և հետեւեալաբար տարածուին . սակայն փորձը ասոր հակառակը ցոյց տուաւ . և քանի որ հայկական ձայնագրութիւնը արեւելեան — տաճկական բազմաշփոթ եղանակներէն չէ զատուած գէթ մասամբ իւր, այս մասին ամեն ջանք ՚ի հարկէ ոչինչ պիտի ըլլան . վասն զի երբ տարիներով փորձառու երաժշտաց շատերն անգամ տաճկական ամեն եղանակներու մասին հմտութիւն չունենային կը խոստովանէին, ուրեմն զսրտցի աշակերտ մը ՚ի հարկէ չկրնար զատնը ուսանել քիչ ժամանակի մէջ, ուստի և Հայ ձայնագրութիւնն ալ ուսած չհասարուիր . բայց ինչո՞ւ դեգերի Հայ մանկտին՝ տաճկական երաժշտութեան լարիւրինթոսին մէջ :

Ըստ մեզ՝ այս ուսմունքը յառաջացնելու համար, միմիայն ընդունակութիւն ունեցող ձայնաւոր աշակերտաց ա՛յնչափ եղանակ և կանոն պէտք է ուսցընել հայկական կամ եւրոպական ձայնագրութեամբ, որչափ որ առ այժմ՝ անհրաժեշտ պէտք է եկեղեցական եղանակներու համար, միանգամայն մինչեւ ցարդ եւ զածէն աւելի դիւրին կերպիւ աւանդելով զայն :

Այս դիտմամբ կարգադրած եմք դասատետր մը հայկական ձայնագրութեան համար, զոր կը յուսամք փորձով ալ կատարելադորձել :

Ի վերջ բանիս կը յայտնեմք նաեւ թէ մինչեւ որ եկեղեցական երգոց վրայօք արդէն ծանուցած մի քանի դիտողութիւննիս չհրատարակեմք՝ այս ինքրոյս վերայ խօսելու չեմք թէ և աւարկութիւններ ալ ըլլան հրապարակաւ :

Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ



# ՏԵՍՈՒԹԻՒՆՔ

Շ Ա Ր Ա Կ Ա Ն Ի Ե Ր Գ Ո Յ Խ Ա Ջ Ե Ր ՈՒ Ն

ԵՒ ՆՈՑԱ ԶՕՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ

(Տե՛ս Ժամանակ Հանդէս 1864 . Էջ Գաւառեւրոտքն 43 թասոյն)

Քանի որ մեր եկեղեցական երգոց ճշդութեան, կանոնաւորութեան և միօրինակութեան հարկն զգալի կերպիւ կը ճանչցուի օր ըստ օրէ, և մինչեւ անգամ հրատարակու զանազան առաջարկութիւններ կ'ըլլան յայտ մասին, ոչ սակաւ կարեւոր է ատենց եղանակներուն և Շարականի մէջ մինչեւ ցայսօր դորձած ուսած խաղերուն անցեալ և արդի դրութեանը վերայ ևս ուշադրութիւն մը դարձունել, մանաւանդ որ առանց այս ուշադրութիւնն ընելու և այս մասին որոշ գաղափար մը ունենալու, անհնար է ո՛ր և իցէ հիմաւոր կարգադրութիւն ընել եկեղեցական երգոց եղանակներուն վերայ:

Սակայն այս խնդրոյն վերայ մինչեւ ցարդ դրաւոր դիտողութիւն մը եղած չըլլալէ վաս, աղքային հին մատենադրութեանց մէջ ալ գոհացուցիչ տեղեկութիւն մը թէ և չգտանք, այսու ամենայնիւ մէկ երկու հին դրութեանց մէջ գտնուած ընդազօտ տեղեկութիւնքը հաւաքելէ ու այլ և այլ ձեռագիր ու տպագիր Շարականաց խաղերուն (որոց հնագունին թուականն էր 208), և մեծահամբաւ քերթողի Հ. Արտէնի Վ. Կ. Բաղրատունոյ՝ Վիրդիլիոսի Մշակականաց թարգմանութեանը յառաջարանին ծանօթութեանցը հետ բաղդատելէ զկնի, մեր ամենօրեայ փորձառութեամբ ու հետազօտութեամբ ըրած դիտողութիւննիս ալ յաւելցընելով ու վերլուծական ձևի մը վերածելով՝ կը համարձակիմք ահա ներկայացընել բանասէր և հմուտ աղքայնոց, վստահ ըլլալով որ ներողամիտ աչօք պիտի նային ա՛յն տեսակ թերութեանց որք առաջին անգամ եղած այս տեսակ ձեռնարկութեան մը մէջ մեր ուշադրութենէն կրնային վրիպիլ:



Թէ և այս խնդրոյն վերայ պատմական տեղեկութիւն մ'ալ կարեւոր էր, այլ համառօտութեան համար զանց ընելով՝ այլում առթի կամ այլոյ հմտագունի կը թողումք զպսս և միայն քանի մը տեղ շատ պէտք եզած աստեն՝ մանր յիշատակութիւններ կ'ընենք:

Եւ նախ խաղից ձեւերուն վերայ ընդհանուր տեսութենէ մը յետոյ՝ ասոնց զօրութեանը վերայ խօսիմք, Առաջին՝ իբր Աճանակ կամ Տեւողաթիւն, երկրորդ՝ իբր Տրոհակ կամ Առաջանաթիւն, երրորդ՝ իբր Եւանակ կամ Երթեցողաթիւն:

ԱՐԴԻ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ [ԽԱՁԻՅ ԶՆԻԵՐԸ

Պարզ խաղեր:

օ սուղ	օ պարոյկ կ'աճ ոլորակ	ճճ խաղ
՛ ր շեշտ	ճ զարկ	ճճ վերնախաղ
՛ բութ	՛ սուր	ճճ ներքնախաղ
՛ փուշ	՛ թուր	բ բենկործ
օ ծունկ	՛ խոսրովային	օ կիործ
օ խունծ	՛ հուհայ	Ղ ձակործ
փ տաշտ	՛ փաթութ	մ մենկործ
փ երկար		

Մեղեալ խաղեր:

օ ճնկներ. ≈ խում. ճճ քարքաշ:

Կեանախաղեր:

փ կիսախում. օ կիսավաթութ:

Կետիլ խաղեր:

փ փ յ (Ասոնց և կետեւեալներուն յարմար անունները դեռ չգտանք: Գիտողութեան արժանի է որ գրչագիր Շարահանաց մէջ սոյն կետերը ամեն տեսակ խաղերու վերայ կան, իսկ սուգազրեալներուն մէջ այս երեք խաղն զատ չկայ:)



Բ	ԻԲԲ	(Բ <sup>Բ</sup> )
Բ <sup>Մ</sup>	ԻԲԲ	(Բ <sup>ՄՄ</sup> )
Բ <sup>Բ</sup>	ԻԲԲ	(Բ <sup>Բ</sup> և կամ Բ <sup>Բ</sup> )
Բ <sup>Մ</sup>	ԻԲԲ	(Բ <sup>Մ</sup> )
Բ <sup>Մ</sup>	ԻԲԲ	(Բ <sup>Մ</sup> ) և այլն :

Յետագայ խաղերն ալ որք միշտ միևնոյն կարգով միմեանց կից դրուած են՝ այս բաղադրեալ խաղերու կարգին կամ թերևս միացեալ խաղերու կարգին կը պատկանին . մանաւանդ որ առանք ինչպէս և ուրիշ բաղմաթիւ խաղեր եւս՝ գրչադիր օրինակաց մէջ իրարու կցուած են .

Բ <sup>Մ</sup>	(Բ <sup>Մ</sup> ) :	Բ <sup>Բ</sup>	(Բ <sup>Բ</sup> ) :	Բ <sup>Բ</sup>	(Բ <sup>Բ</sup> ) :	Բ <sup>ՄՄ</sup>	(Բ <sup>ՄՄ</sup> )
Բ <sup>Մ</sup>	(Բ <sup>Մ</sup> ) :	Բ <sup>Բ</sup>	(Բ <sup>Բ</sup> ) :				

Կը կարծուի թէ հետեւեալներն եւս բաղադրեալ ըլլան . որ .

Բ <sup>Մ</sup>	ԻԲԲ	(Բ <sup>Մ</sup> ) :	Բ <sup>Բ</sup>	ԻԲԲ	(Բ <sup>Բ</sup> ) :	Բ <sup>Մ</sup>	ԻԲԲ	(Բ <sup>Մ</sup> ) և այլն :
----------------	-----	---------------------	----------------	-----	---------------------	----------------	-----	----------------------------

Գրչադիր օրինակաց մէջ ուրիշ այլ և այլ ձևերով խաղեր ալ կան , որոց կաղապարները չդանուելով՝ դժուար է դանոնք ցուցնել . միանգամայն ուշադրութեան արժանի է ստանց ձևերուն սպազրեալներէն զգալի տարբերութիւն ունենալը :

## Ա . ԱՄԱՆԱԿ

Այս մասին ընելիք քննութիւննիս ճիշդ ըլլալու համար երկու հիմնական կէտերու վերայ պէտք է հաստատենք . նախ՝ ազգային բանահիւսութեան և տաղաչափութեան օրէնքներուն . երկրորդ՝ երգոց արդի ընդհանուր դործածական ընթացքին , որ թէեւ շատ կէտերու մէջ խառն և անհամաձայն այլ հիմնապէս միօրինակ է :

Ինչպէս յայտնի է , Շարականի երգոց մէկ մասը տաղաչափութիւն , և մէկ մասը արձակ բանահիւսութիւն է : Նախ՝ ուտանաւոր երգոց վերայ խօսինք և քննենք թէ խաղերը քանի բաղմաթ (Battuta) տեւողութիւն ունին նոցա մէջ . զայս ընելու համար ոտանաւորներու վանկերը և խաղերը չորս կարգի վերածենք :

Ա. Մուշ կամ յոդոս վանկ (°) , իբր 1/8 կամ 1/16 :

Բ. Մեկ (1) կամ շեշտ վանկ ( ' √ √ ° √ ) իբր 1/4 կամ 1/8 :

Գ. Երկու վանկ ( √ | ) առաջ առ առ Բ ~ ~ ~ ~ ~ իբր 1/2 կամ 1/4 :

Դ. Մեծ-երկու վանկ ( ~ ~ ~ ~ ~ ) և այլն , իբր 4/4 կամ 1/2 :

Ա. Կարգին օրինակ :

Մուշը (°) ոտանաւոր հատուածի մը աւելորդ վանկը կը յապակէ . զոր օրինակ .

է կիր յեր կիր : աստ ուս ծա բար : դա տել զաշ խարհս :

1 2 3 4

իշխանաբար : քնդարդաբու թեան : և ընդ մեղաց : . . . . :

1 2 3 4

. . . . : դար ձեալ ա սեմը : քստան ա ուս կին : թէ հայր մե զայ : քեզ 'ի յեր կին :

Մուշ ° և սուշ ~ 'ի միասին կը վարուին քառանդամ ոտանաւոր հատուածներու շատին՝ առաջին անդամին վերայ , թէ՛ քառավանկ ըլլայ և թէ՛ եռավանկ . քառավանկ եղած ատեն ° ը՛ առաջին վանկին վերայ դրուելով միւս երկու վանկերուն վերայ ալ կ'ազդէ որք 3/8 ի տեւողութիւն կ'ունենան , և ~ ը՛ չորրորդ վանկին վերայ կը դրուի որ 5/8 ի տեւողութիւն կ'ունենայ . և կամ սուշ առաջին երկու վանկին վերայ կ'ազդէ որք 2/8 ի , երրորդը դարձեալ 2/8 ի և չորրորդը 2/4 ի . վերջապէս ° և ~ 'ի միասին 8/8 կամ 4/4 ի տեւողութիւն կ'ունենան . ինչպէս .

1 2 3 4 1 2 3 4

Ա՞ստուած ան ե՞ղ : և կա՞ Ա՞ստուած ան ե՞ղ : ան ծա մանակ : . . . . :

Կարելի է այս սլարագայիս մէջ սկիզբէն 1/8 արժէքով Զայնահասր (Aspetto) մը աւելցընել որոյ հետ երեք սուշ վանկերն ալ միանա-

(1) Թէեւ երկուսն հակառակ սարգ վանկերուն միայն սուշ կ'ըսուի , այլ մէք էսլին անուան և շարականագրաւոր արդի սովորութեանը հետեւելով իբր յոդոս վարեցիկը զայս անունը և բուն սուշին և շեշտի տեսակներուն հիշ- վանկ ըսինք :



լով  $\frac{1}{8}$  ր տեւողութիւն ունենան, և այն ատեն դաշտին ալ  $\frac{1}{8}$  տեւողութիւն կը մնայ : Սորակէտով մը ջուցընեմք զայս .

1 2 3 4

Ե՞րբ լից ղօ բէն : սըն Մովսէ սի : . . . . : և այլն :

Եւ ալ մանկ եղած ատեն ալ սոյն կանոնով կը վարուի . զոր օրինակ .

1 2 3 4

Ն՞օրա հրա՛շ : պը սա կաւ որ : և ղօ բա դլուխ : առաքինեաց : . . . . :

Այս պարագայիս մէջ ալ  $\frac{1}{4}$  արժէքով Չայնահայր մը սկիզբը կըրնայ դրուիլ ղօրութեամբ . ինչպէս .

1 2 3 4

• Տա՞րա ծեա՛շ : ձեռք ընդ ձեռաց : . . . . : և այլն :

Այս ղ՞ը՛ միայն՞ ին կետ կը վարուի :

Բ . Կարգին օրինակ :

Երբ ստանաւ որ երգի մը ամեն անդամները հաւասար քառափանկ ըլլան, այն ատեն իրը ճշտի վանկ՝ պէտք եղած ատեն շեշտի տեսակ խաղեր կը գործածուին, ամեն մէկ վանկ  $\frac{1}{4}$  ր ղօրութեամբ . ինչպէս .

1 2 3 4

Ն՞յն և նը՛ ման : Հօր ե՛ւ Ո՛րդ ւոյ : Հո՛ գիդ ան ե՛ղ :

և հա մա գո՛յ : բը՛ղ խու մըն Հօ՛ր : ան քը՛ն նա՛ բար :

ա՛ ռոդ յորդ ւո՛յ : ա՛ն ճա ռա բա՛ր : . . . . :

1 2 3 4

• Բա՞նին հօ՛ր : փա ռաց ը՛ւ սոյ : Պետ բո՛ս մե՛ր ձիլ :

1 2 3 4

յոտս ոչ նե բէ՛ր : . . . . : և Ե՛ս ա՛ սա՛ ջի՞ : Տեր ս՛ղոր մեա՛ :

հո՛գ ւո՛յ ի մո՞յ : բաղ մա մե ղի՛ : . . . . : և այլն :

Գ . Կարգին օրինակ :

Այս տեղ պիտի տեսնեմք որ երկար խաղերը  $\frac{2}{4}$  տեւողութիւն ունին . ինչպէս .



1 2 3 4                      1    2    3    4                      1    2    3    4  
 ԱՅՅ սօ՛ր : կանգ նե ցա՛ւ . (1) : ա՛ւա՛ զան մը :

1    2    3    4    1    2    3    4    1    2    3    4  
 կը՛ր տո՛ւ թեան ՚ի : թո՛ղ զու թիւն մե՛ : զա՛ց մե րո՛ց :

Այլ շատ անգամ ոտանաւոր հատուածներու տաղին անգամը երբ երկավանկ կ'ըլլայ, առաջին վանկը իբր ֆլուկ՝ 1/4 ի, և երկրորդը թէեւ երկուր վանկ սակայն 3/4 ի տեւողութիւն ունենալու էր. այլ այս տեսակ դէպքի մէջ կա՛մ երկուքն ալ 2/4 ի տեւողութեամբ երկարել, և կա՛մ սկիզբը 1/4 ի արժէքով Չայնահատ մը աւելցընել լաւ է. ինչպէս .

1    2    3    4                      1    2    3    4                      1    2    3    4  
 Ա՛ն ձի՛նք : դե՛ր է երբէլ ա՛ն ձի՛նք : է՛ր ա նը ձի՛նք

1    2    3    4    1    2    3    4    1    2    3    4  
 և ըստ երկրորդի : Ա՛ն ձի՛նք : նը՛ւ ի րեա՛ : լըք սի րո՛նք :

1    2    3    4                      1    2    3    4    1    2    3    4  
 Քրիս տո սի՛ . . . . . :: Ղե կա վա՛ : ըքք ճար տա՛րք :  
 հո դեւ սո՛ր : հըմ տու թեա՛մք թե : թեւա բե՛ :  
 ոք՛ն մար մնո՛վ : ե՛ւ մը տո՛ք : սը լա ցեա՛լք . . . . . ::

1    2    3    4    1    2    3    4  
 Յո բում ցըն ծա՛ : այր զուար ճա ցեալ : ա՛ն աըխ րա կա՛ :  
 ան խըն դու թեամբ : . . . . . :: ևայն, ևսյն :

1    2    3    4                      1    2    3    4    1    2    3    4  
 • Ծա՛ղ ու մըն : հրա շա դործ որ : ՚ի կու սէ՛ն : ծա դե ցա՛ւ . . .  
 ճա աւ՛ գա՛յ : թե՛ լո՛վ : զա րա րա՛ ծս : ա մե նա՛յն . . . . . ::

1    2    3    4  
 Ա՛յ սօ՛ր ա՛ղ : բի՛ւր դի տու թեա՛ն : բը՛ղ խեա՛լ ՚ի :

(1) Թէ և այսպիսի մի քանի տեղ եւեւ խաղ չկայ հին օրինակաց մէջ, այլ ոտանաւորի սահմանը պահելու համար այս խաղը դործածելու ստիպուած են, որով և նոր օրինակներուն մէջ ալ դրուած է շատ տեղ. ամենյամբ սուներով մեր ալ շատ պէտք կ'ըստ տեղեր Չայնահատ դործածելիք երբեմն :

տո՛ւրբ վեր նա տո՛ւնն : յո՛ւր մէ՛ լը՛ : ցան ախ՛ և՛ զերբ :  
 1 2 3 4  
 Գնա՛ ցի՛ւր զեր : տո՛ցն ո՛ւ ուղ մա՛մբ (1) :

Կարելի է երբեմն և տասը զեղջիլ և անոր յետագայ վանկին վերոյ երկար խաղ մը յաւելցնել, և փոխանակ գրելու, Ղեր կա վա՛ : ըբ՛ք ճար տա՛րք : Էրե՛ւ սա՛պե՛ . Ղեր կա վա՛րք : ճա՛ր տա՛րք : և այլն :

Թէ և յետագայ անդամին պակասը՝ նախընթացին երկարովը կը լրանայ թիւ ընթերցման ատեն, սակայն երգելու ժամանակ ամեն Ս.Ք.ուղէ (Intiero) աւելցած ձայները (իբր Սնչա՛նէլ, Sincopa) հետեւեալ Ս.Ք.ուղէ չխառնելու, միանդամայն անընդհատ երգել անհնար ըլլալով՝ շունչ առնելու համար հետեւեալ կերպիւ պէտք է երգել ու ձայնադրել .

1 2 3 4 1 2 3 4 1 2 3 4 1 2 3 4  
 Հո՛խ՛ի սի մէ՛ : մեծ խոր հո՛ւրդ : և ա՛նո՛ւն : ցան կա լի՛ . :  
 1 2 3 4 1 2 3 4 1 2 3 4  
 և ո՛ւնէ . Հո՛խ՛ի սի մէ՛ : է մեծ խոր հո՛ւ : ուրդ և ա՛նո՛ւ :  
 1 2 3 4  
 ուն ցան կա լի : . . . . : և այլն :

Գ. Կարգին օրինակ :

Ոտանաւոր հատուածներու մէջ այս չորրորդ կարգի օրինակը շատ հազուադիւրէ . ինչու որ դուռն ուրեք կը պատահի որ միավանկ բառ մը իբր մէկ անդամ դործածուած ըլլայ, ուստի օրինակ մը միայն կը բաւէ :

1 2 3 4 1 2 3 4 1 2 3 4  
 է՛ ո՛ւն : զար մա ցո՛ւմն : և ՛ի վե՛ր : քան ըղ հրա՛շա . . . . . :

Այս տեսակ Վե՛մբերկար խաղերու օրինակներ արձակ երգոց մէջ յաճախ կան, զոր իրենց կարգին կը տեսնենք :

(1) Այս տեսակ վերջաւորութեանց մէջ՝ և իբր Յո՛ւն (Corona) (Գ) կը վարուի :



Տաղաչափ երգոց վերայ այսչափ խօսելէ յետոյ քիչ մ'ալ արձակ երգոց վերայ խօսինք բարդատելով զանոնք արդի սովորութեան և վերոյիշեալ օրինաց հետ որով պիտի տեսնենք որ խաղերու տեւողութեան արժէքը նոցա մէջ ալ միւսնոյն է :

Ասոնք երկու կերպ կ'երգուին . Ա. Սեփեթա՞ (Coro) որ ծանր կամ Յորդոր կ'ըլլան ըստ սլառչածին , և այս կարգէն են Շարահանի երգոց 4/3 մասը : Բ. Սփեդէ կամ Մեդէդէ որք Ա. առջինն (Solo) և Բ. սփ հաճոյս (à volonte) կ'երգուին . այս կարգէն են ստեղծներ և քանի մը մասնաւոր երգեր : Հարկ է գիտնալ որ այս արձակ երգոց ամենուն ալ բառերուն շարքը քիչ շատ ներդաշնակ համեմատութիւն ունին միմեանց հետ , և երգի մը առաջին համարը ինչպէս որ է՝ միւսներն ալ անոր նման են քիչ բացառութեամբ , և ասոր սպացոյց է ասոնց խաղերուն իրարու հետ ունեցած կանոնաւոր համեմատութիւնը . որոց ազաւազութիւնը որ եղած է մանաւանդ վերջին տալազրութեանց մէջ՝ երգելու ասեն շատ շփոթութիւն կը պատճառէ :

Նախ Միաբերան երգոց վերայ խօսինք . ինչպէս .

Ա/ստուան ծածին խորան լուսոյ : անվայրափակ  
 Ա/նապա կան տաճար : և՛ մորենի  
 Կե/նդանի տապանակ : կտակարանաց  
 արվւնյն կենաց : սը եղե՛ր անրեւելք :  
 անկի՛ զեկի : սը զանչե՛ր զսը աստուա :  
 նորոյ ուխտիս : սըով ե՛րք յե՛րկեր :  
 արե՛գականն արդարութեան :  
 ծն՛լթեանն ՚ի քեզ տարեա՛լ կրեցե՛ր :  
 աւե՛ր տեսոց հորդեա՛լ :  
 և՛ նը՛ստեր՛ցս ՚ի խա՛ւարի լոյս ծա՛ղեցեր :  
 ո՛րով բնութեանս կիզեա՛լ շիջա՛ւ կրեց բոց :  
 հս՛գւոյն ՚ի քե՛զ արպա՛ւ ւորեա՛լ ըանին :

Արձակ երգոց կազմութեանը մասին առայժմ վերոյգրեալ օրինակը բաւական համարելով, ասոնց խաղերուն տեւողութեանը վերայ եւս քանի մը օրինակներ ցուցնենք . ինչպէս .

1 2 5 4 1 2 5 4  
Լ<sup>ու</sup> սող աստ : ուա ծու թեա<sup>ու</sup>ն : քո ֆրիս սո<sup>ու</sup>ս լու :

1 2 5 4  
սա ւո բե ցեր : սուբբ զե կե զե : ցի<sup>ու</sup> , սա<sup>ու</sup> նեա ըզ :  
սա ան շա<sup>ու</sup>րժ : յա ւի տեա<sup>ու</sup>ն :: Լայն :

1 2 5 4  
Օրհնեցէք ըզ : Տէ<sup>ու</sup>ր : յօրհնութիւն 'ի նոր . . . ::

1 2 5 4  
Լոյս 'ի լուսոյ ծագեալ 'ի հօրէ . . . ծը : նո<sup>ու</sup>նի :

1 2 5 4  
անապական . . . :: Ժո զո վեա<sup>ու</sup> լքս : 'ի յիշատակ

1 2 5 4  
որբոց մարտիրոսացն միա : բա<sup>ու</sup> : նութեամբ երգե-

1 2 5 4 1 2 5 4  
լով . . . :: Այսօր սօ : նե<sup>ու</sup> : եկեղեցի . . . ըզ : յիշատակ :

1 2 5 4 1 2 5 4  
ս<sup>ու</sup> ըր բո<sup>ու</sup>յն : Գրի<sup>ու</sup> : գորի . . . :: Այսօր ընդ գերագոյն

1 2 5 4  
անօրէնութիւնըք քո Որ : գի<sup>ու</sup> : Աստուծոյ . . . :: Լայն :

1 2 5 4  
. . . և որդիքն իսրայելի գնացին ընդ ցամաքն : 'ի<sup>ու</sup> :  
մէջ ծովուն :: Լայն :

Աւելի բազմաթիւ խաղեր եղած տեղեր՝ Ըստ հաճոյս կ'երգուին ,  
թէ և արդի սովորութեան մէջ ասոնցմէ շատը համառօտուած է :

Արձակ երգոց մէջ սուղը թէեւ շատ տեղ անգործածելի ե-  
ղած է , բայց գործածուած ատեն 1/8 ի արժէքով միմիայն յետա-  
գայ վանկին վերայ կ'աղդէ . ինչպէս .

1 2 5 4  
Այսօր զենաւ մեզ պատարագ . . . : 'ի<sup>ու</sup> վե ըա<sup>ու</sup> խա չին :  
Իսկ որչորին հեա եղած ժամանակ իւր բուն կանոնիւր կը վար-  
ուի . միայն թէ որչորը այն ատեն 1/4 ի տեւողութիւն կ'ունե-  
նայ . ինչպէս .

1 2 5 4 1 2 5 4  
Զթա<sup>ու</sup> գաւ ո<sup>ու</sup>ն ան մահ : . . . ուր : տղա<sup>ու</sup> յա յա<sup>ու</sup>ն ա<sup>ու</sup> սոր : . . . :



Շատ հաւանական է որ Շարահանի երգոց մէջ եռաչափ ու հնգաչափ տեւողութեամբ խաղեր չկան, և հին տաղաչափութեան մէջ հնգաչափն անդամ չըլլալն ասոր ապացոյց մ'է, որ եթէ դանուի ալ՝ վանկին մէկը կա՛մ կը յապաւի և կա՛մ հետեւեալին կը խառնուի: Այսու ամենայնիւ կարելի է եռաչափ երկարել հետեւեալին և նմաններուն մէջ, ինչպէս.

ի ջեր յերկ նից : 'ի չօ բէ և : մարմ նա ցար 'ի :  
1 2 3 4  
կո՛Յ Լ սէ՛ն : . . . . :

Թէեւ արդի սովորութեան մէջ այս ձեւը չգործածուիր, այլ կ'երգուի,  
1 2 3 4

• ի ջեր յերկ : նից 'ի չօ բէ : և մարմ նա ցար :  
1 2 3 4 1 2 3 4  
'ի կո՛Յ Լ սէ՛ն : . . . . : և կա՛մ ի ջեր յերկ նից : 'ի չօ բէ և :  
1 2 3 4

մարմ նա ցար 'ի : կո՛Յ Լ սէ՛ն . . . . . :

Իսկ  $\frac{3}{8}$  և  $1\frac{1}{2}$  ամանակ տեւողութիւն ունենալ կը թուին  $\int \approx \sigma$   
Թէեւ այժմ առաջինը  $\frac{1}{4}$  և երբեմն ալ  $\frac{1}{2}$ , և միւս երկուքը  $\frac{1}{2}$  տեւողութեամբ կը վարուին :

Շարահանի երգոց մանաւանդ արձակ հատուածներուն չափերու բաժանմանց մասին կը կարծուի թէ ամեն մէկ բաղխում  $\frac{1}{4}$  ի արժէքով միշտ դէպ 'ի վայր կը վարնուի հակառակ րուն երաժշտական դրութեան որ բաղխումները այլ և այլ թուով հաւասար մասերու կը բաժնէ: Սակայն դիտող և իցէ, երբ կը հարկադրինք այս բաժանումն ընել կը տեսնենք որ Շարահանի ամեն երգերը միշտ  $\frac{1}{4}$  կամ  $\frac{2}{4}$  ի վերայ կրնան բաժնուիլ: Սակայն կան քանի մը երգեր որք  $\frac{3}{4}$  ի վերայ աւելի լու կը յարմարին. ինչպէս.

1 2 3 1 2 3 1 2 3 1 2 3 1 2 3  
Ո՛Ւ րա՛խ : լեր մա՛յր : լու սո՛յ : Մա բէ՛ : ա՛մ եր կի՛ր :  
բա՛ նա՛ : Լո՛ր ա : բե՛ գ.ա : կա՛նն օ : Թա՛ րան : . . . :

Նոյնպէս և Ուրաի լեր եկեղեցի սարք, Հայր սուսող Մեծնիդ և Արեւադալի երգոց Յորդորակները. և այլն :

Մինչեւ հոս տեսնուած կանոններն արդի սովորութեան մէջ այնչափ հիմնական են որոց կը համաձայնին Շարականի երգոց <sup>5/6</sup> մասը, իբաց առնելով Ստեղիները և ծանր երգերը. մնացեալները երկու տեսակ զարտուղութիւններ են՝ երկան և դիպասական :

Իրական են անոնք որք չափական երգի մը մէջ ըստ հաճոյս կ'երգուին, ինչպէս. Կնիդեան, Տեասնընդասուշի, Աղասոցից Ե. Կեարակէի և ասոնց նման հարցերու Գործատունները, երբեմն ալ մէկ կամ քանի մը բառ կամ վանկ միայն. ինչպէս .

1 2 3 4 1 2 3 4

Ըլտէր օրհնեցէք բարձր արա : բէ՛՛՛ : է : է : է,ք : և այլն : Այսօր ընդ ծերոց . . . բարեբանեցէք զանմահ թագաւորն :

1 2 3 4 1 2 3 4 1 2 3 4

ւորն : ե՛՛՛՛՛՛, ե : ե : կեա՛՛՛՛՛ : ա : ա : ալ : և ա՛լ աւելի կա՛ս պակաս : Այսօր անճառ լուսոյն ծագումն : . . . . . :

1 2 3 4 1 2 3 4

նախ քան զընթ ըր՛՛ : սըն խոր հըր դոյ : . . . . . : ( Հոս տեղ ը իբր Յոգաղասո՛ գործածուած է :

Ասոնք և նմանները երաժշտական կանոններէ ընդունուած օրինաւոր զարտուղութիւնք են :

Իսկ Գիպասական են անոնք որք սովորաբար աւօրեայ պաշտամանց մէջ գործածուելով, համառօտութեան համար եղանակներն և տեւողութիւններն կրճատուած է, և մէկ քանին բուն եղանակները և չափերը կորսուած են, մէկ քանին ալ դեռ երկու տեսակ կ'երգուին, զորս մի առ մի յիշել աւելորդ է : Կան նաեւ այնպիսի երգեր ալ որք հանդիսաւոր օրերու յատկացեալ գոլով, իրականէն աւելի ընդարձակուած են, որոց կարգէն են Ճրագալացի և Չեթի Շաբախու օրհնութիւնքը և Աղասոցի ու Յնանց հարցերուն մէկ քանին, և այլն : Այս տեսակ զարտուղութիւնք իբր եղծումն համարուելով՝ կանոն չեն կրնար ըլլալ թէեւ իրենց արդի ձեւերը եղածին պէս ալ պահուի : Քանի մը զարտուղութիւնք ալ խաղերու աւելի կամ պակաս դրուելէն՝ մասնաւանդ հետեւեալներուն միակեանց հետ շիտթեղէն յառաջացած է. ինչպէս .

Թ Բ Բ՛ Բ՛՛ : Յ Շ Շ : / ~ ~ : օ օ Թ :  
 ✓ ~ : ✓ ~ , և այլն :



Ստեղի երգերը վերցրելու օրինաց ըստ մասին կը համաձայնին, մեծ մասամբ զարտուղելով. այսու ամենայնիւ իրենց մէջ ալ ընդհանուր կանոնի մը հետք կը նշմարուի. բայց ասի առանց Զայնաբուհիան (Note) բացատրել անհնար ըլլալով՝ համառօտ ուրուագիծ մը միայն ցուցընենք. զոր օրինակ.

Ո՞ զոր մու : թեա՛նց : բաշ խո՛ղ : Գրի՛ս :  
 Ո՞ր ՚ի բար կու : թեա՛ն : զո զո՛ր : մո՛ւ :  
 Ո՞ր ՚ի ժա մանա : կեա՛ն : մեր ձեա՛լ : մա՛ :

տոմ՛ն : ո : ո : ոս : ո՛ր գը : թա ցար : ՚ի՛ն : ի :

թիմ՛ն : ի : ի : լն : յի՛ շե : (1) . . : ցե՛ն : եր :

հոմ՛ն : ու : ու : ուն : վի՛ր կե : ցեր : . : ր՛ : րը :

քո՛ : յա՛ : ա : ա : ա : ա : րա : րա՛ծա :

ա՛ն : քո՛ : ո : ո : ո : ստեղ : ծուա՛ծա :

նի՛ն : ուէ : է : է : է : ա : ցի՛նն :

դը՛ : թա՛ : ա : յի՛ս ՚ի : . . : մե՛ղա : ւո՛րս :

յի՛ : շեա՛ : ա : զի՛ս ըզ : » : » : » :

վի՛ր : կեա՛ : ա : զմե՛ղ ՚ի : հրոյն յա : ւի՛ տե : նի՛ց :

ո՛ր : ո՞ղոր : մա՞ : ա : ա : ածգ : ե՛ս յա՛ : մե՞նայ : նի՛ : ի :

Գրեթէ ամեն Ստեղիք ալ այս ձեւն ունին քիչ բացառութեամբ, և Մեղմ՛ ու Մանր կ'երգուին : (2)

### Բ. ՏՐՈՂԱԿ՝

Թէ՛ խազից անուններէն և թէ՛ ներկայ աւանդութիւններէ կրնանք հետեւցընել թէ՛ մեր Շարականի խաղերուն գէթ մէկ մեծ

(1) և կա՞ ցեր . : ա՛ն : առ : քո՛ : ր՛ : ր : ր : ր : տեղծ : ուա՛ծա :

(2) Վահանայ Գողթնացւոյ երգին՝ Ա, Գ, Դ. և Բ, ու Ե. հատուածները միմեանց համաձայն են, իսկ Ղեւոնդեանց Պայնաբուհի երգը զոչ զոչ կը համաձայնին կարգաւ :

մասը նաև իրր առողջանութեան նշան գործածուած են . (1)  
որոց ձեւերէն և անուններէն ալ յայտնի է . ինչպէս .

Վ ը Ռ Մ Ո՛՛ և այլն :

ձայնը շէշէլ երէտրէլ, զարնէլ . և այլն :

Բուրը (՛) եղանակի ու հատուածի վերջաւորութեան ատեն  
իրը Չայնահատ կը վարուի . ինչպէս .

Օ՛ւ՛ գոււրն : հրաչա՛լլ : ս՛ր անյալյա : էր ՛ի մէ՛նջ :  
կե\* (․) , Սորբակե\* (․) , վերջակե\* ( : ) , կա՛մ դարձեալ իրը  
Չայնահատ և կա՛մ հատուած ու եղանակ ընդմիջելու կը գոր-  
ծածուին . երբեմն ալ նշանակայ (-) կը գտնուի որ շատ մը խա-  
զերու առգաղարձ եղած կամ իրարմէ հեռու մնացած տեղերը  
միացընելու համար իրը կո\* (Legatura) գործածուած և յետոյ  
բուն խաղերու կարգին մէջ սարգած է : Ասոնցմէ զատ ձեռա-  
գիր օրինակաց մէջ մասնաւոր դրեր ալ նշանակուած են թէ՛  
խաղերու և թէ՛ առանց խաղի եղած բառերու ներքեւ , զորս  
տպագիրը ՛ի սպառ զանց ըրած են . զոր օրինակ .

բ․ : ՛․ : ՛․ : Ռ՛Բ : Բ՛Բ : Բ՛Բ : Վ՛՛ : Վ՛՛ : և այլն :  
․․ ւ․ Լ․ Լ․ ․․ Բ․ Դ․ Ժ․ Դ․ ւ․

Ասոնք՝ գուցէ ձեռագիրներու ազաւարութենէն միմեանց անհա-  
մաձայն ըլլալով թէեւ ընդհանուր կարգի մը վերածել չյաջողե-  
ցանք , բայց կը կարծուի թէ ձայնից զօրութիւնը և եղանակաց  
ընթացքը ցուցընելու համար գործածուած ըլլան իրը Մե՛ղ՛ ,  
Ու՛՛՛՛՛ , Մա՛նր , Յոր՛որ ( p . f . t . ˘ ) , և այլն : Ասոր ապացոյց  
այն է որ ասոնք Մանր երգոց վերայ աւելի կը գտնուին քան թէ  
պարզ երգոց :

Ի վերջոյ հարկ է դիտնալ որ այս հատուածը միմիայն իրը  
դիտողութիւն յառաջ կը բերենք . ապա թէ ոչ ամեն մէկ խաղի  
ճիշդ եղածին սկս զարնէլ , խաղընէլ եթէ սկտք ըլլայ , արդի ե-  
ղանակները զգալի կերպիւ կը փոխուին և գուցէ ճաշակի դէմ

(1) Ար կարծուի թէ երևեջ ցուցընող խաղ չկայ , և եթէ կար , որն ըլլալը  
անյայտ է : Թերեւս ձայնի երևեջ կը ցուցընեն

կէտը ( ՛ ՛ ՛ ) և Բութը ( ՛ ՛ ՛ )

այս տեսակ ձեւերու մէջ , այլ ինչպէս որ է՝ ասոնց զօրութիւնը լիովին  
յայտնի չէ մեզ :



կու գան . վասն զի թէ՛ խաղից աղաւաղութիւններէն և թէ՛ դա-  
րաւոր անխութութենէ՛ ասոնց իբր Տրոհակ գործածութեան  
ձեւերը փոխուած կամ կորսուած է :

### Գ . ԵՂԱՆԱԿ

Շարահանի Ուն Զոյն և Երկու Սրէշէ եղանակները ՚ի սրբոց  
Թարգմանչաց անտի հաստատուած են , որք ասոնց ձայնական  
խաղերու՝ դուցէ՛ քանի մը առողանութեան և չափի նշաններով  
աւանդեցին , և այժմեան արեւելեան եղանակաց պէս բերանա-  
ցի աւանդութեամբ կ'երգէին մինչեւ ՚ի Խաչատուր վարդապետ  
Տարօնացի , որ եղանակաց խանդարմուկքը բարեկարգելով՝ երա-  
ծըշտական նշանադրերու գործածութիւնը առաջին անգամ ե-  
մոյժ յարեւելա (1) :

Սակայն աղգային զանազան արկածից առթիւ այս խաղերու  
գործածութիւնն ալ հետզհետէ անհետ ըլլալ սկսաւ , որով այ-  
սօրուան օրս ասոնց չափերու մասին ունեցած վօրութենէն զատ  
(որ այն ալ տաղաչափութեան օրէնքին ուժովը կրնանք հաստա-  
տել) , ինչպէս առողանութեան նոյնպէս և եղանակներու մասին  
ալ բացարձակապէս դոհացուցիչ ակզեկութիւններ թէեւ չենք  
կրնար տալ , այսու ամենայնիւ Հայաստանի եղանակներու մէջ  
գտնուած քանի մը աղօտ հին ձեւերը՝ Շարահանի խաղերուն միօ-  
րինակ դրութեանը , և Պօլսոյ ընդհանուր եղանակացը հետ հա-  
մեմատելով , քանի մը ստուգութիւն կը գտնենք :

Նախ՝ խաղերէն ոմանք կամ ինքնին և կամ մէկ քանին մէկ-  
տեղ Գեղեղեղանք կը ցուցնեն , ձայնի այլ և այլ ելեւէջներով  
իրենց յատուկ ձեւին համեմատ . ինչպէս .

( Տէ՛ Բ՛ Ը ) Տէիէր : ( արարէ՛ ք ) արարէիէք :

( ա՛ յ՛ յսօր ) աուլայսօր : ( օրհընէ՛ ք ) օրհընիէք :

( նըստի՛ ս ) նըստէիս : և այլն :

Այս ընթացքը մինչեւ մօտ ժամանակներս ընդհանրապէս կը

(1) Կարծիք կայ թէ յունական ձայնանշաններու կարգին հետեւած ըլլայ  
ասոր մէկ աղօտ հետքը թէեւ կը նշմարուի , սակայն խաղերու արգի գործա-  
ծական ընթացքին նայելով՝ ասոր վրայօր որոշակի խօսել զրեթէ անկարելի  
է . սակայն այս մասին ուրիշ առթիւ :

դործածուէր, որպէս և այժմ՝ ուրեք ուրեք, մանաւանդ Հայաստանի կողմերը:

Երկրորդ, թէ և խազերու մեծ մասը անխտիր ամեն ձայներու մէջ կը գործածուին, այսու ամենայնիւ ասոնք այլևայլ կարգով միմեանց յաջորդելով ա՛յնպիսի կանոնաւոր դրութիւն մը կը կազմեն, յորմէ Ռեթն ձայնի ամեն եղանակներուն մանաւանդ մէկ քանիին իրարմէ ունեցած տարբերութիւնը ակներեւ կը տեսնուի. թէ և ասոնք նոր ձայնագրութեանց նման երգի մը բուն եղանակը չեն կրնար ցուցընել, այլ օրինակի համար, Ռեթր Երեմի և Ս. Եր. Երեմ. Ա. Երգերը դասառութեամբ միանգամ՝ ուսնելէ յետոյ միւս Ա. Երգերուն ասոնց ո՛ր տեսակին պատկանիլը մինակ խազերու կարգադրութիւնէն ալ կրնանք իմանալ. որոցմէ մէկ քանի օրինակ ցուցընենք.

- |                     |   |
|---------------------|---|
| աձ. եղանակ:         | Վ, /, ✓, օ, օ, Մ, Բ, և այլն:                  |
| աձ. դարձնաձայն (1): | /, Վ, Բ, /, Բ, ~, Բ, մ <sup>Մ</sup> , և այլն: |
| ակ. եղանակ:         | ✓, /, /, Բ, /, ≈, և այլն:                     |
| ակ. դարձնաձայն:     | ✓, /, Մ, օ, Վ, Բ <sup>Մ</sup> , Բ, և այլն:    |
| դձ. եղանակ:         | /, /, Բ, Վ, ≈, Բ, ~, Մ, Մ, և այլն:            |
| դձ. դարձնաձայն:     | ✓, Վ, Բ <sup>Մ</sup> , Բ, ~, Բ, /, /, և այլն: |

Այս ձեւերը ա՛յնչափ զգալի են որ օրինակի համար Հողեղախտեան առաջին աւուր Հարցը սկիզբէն բուն Ա. Երգի և Գործատունին դարձուածք ըլլալը խազերուն զգալի փոփոխութենէն անմիջապէս կ'իմացուի. նոյնպէս Գ. Երգի Ա. Երգի աղանոց երգէն յետոյ երբ կենդանաբար Ա. Երգի երգը պիտի սկսի, եղանակին խտորումը իմանալու համար բաւական է խազերուն կարգը ճանչնալ. և զխտելու արժան է որ ամեն մասնաւոր խազերու կարգ իրենց սովորականէն դատ ձայնի մէջ չեն գտնուիր, ինչպէս կենդանաբար Ա. Երգի Գ. Երգին խազից կարգը բնաւ մէկ ձայնի մը մէջ չկայ, ըսել է որ Գ. Երգի եղանակին յատուկ է. նոյնպէս և միւսները. ասկէ սա օգուտը կրնանք քաղել որ շատ մը երգե-

(1) Ամեն մէկ ձայն՝ մէկ կամ աւելի ստորաբաժանում ունին՝ իրենց նախնական եղանակին վերայ հիմնուելով, որոց սովորաբար դարձնաձայն կ'ըլլուի:



բու վերայ երբ խնդիր կ'ըլլայ թէ արդեօք դարձուածք են թէ բուն եղանակ. — այս հարցումը ասով կը լուծուի. — եթէ ձայնին սովորական խաղերը զգալի կերպիւ կը փոխուին՝ հաստատութեամբ կրնանք ըսել թէ այն երգը դարձուած է: Թէև դարաւոր սովորութեամբ այս մասին ալ քանի մը անտեղութիւններ մտած են, խազից ձեւերը չփոխուած քանի մը երգեր իրր դարձուածք և փոխուածներէն մէկ քանին ալ իրր բուն եղանակ երգուելով, այսու ամենայնիւ այս մէկ քանի արմատացած բացառութիւնքը եթէ պահուին ալ, դէթ միաձայն չընդունուած և անհամաձայնութեան ներքեւ եղած խնդրոց լուծումը այս վերոյիշեալ կանոնով կրնանք տալ: Եւ չենք կրնար չվստահիլ այնպիսի դրութեան մը որ Շարահանի երգոց դէթ Յիմ մասին վերայ բացայայտ կ'երեւայ: Ահաւասիկ բուն և դարձուած եղանակներէն մէկ մէկ օրինակ:

## Բան եղանակ.

## Դարձուածք.

ա) . Որ 'ի Լերինն այլակերպեալ:	Տընօրինեցաւ:
ա) . Որ նախիմաց:	Ծով կենցաղոյս:
բ) . Անեղանկի բընութիւն:	Որ 'ի հարաշարժ:
բ) . Որ գտիրականը:	Որ խոնարհեցար 'ի բարձանց:
գ) . Որ արարեր զօրութեամբ:	Արեգակն արդարութեան:
գ) . Երգեցէք որդիք սիօնի:	Նահատակ բարի:
դ) . Այսօր 'ի կատարումն:	Կենդանարար Աստուած: (1)
դ) . Խորհուրդ մեծ:	Անձինք նըլիրեալք:
ե) . Լուսապըսակացն:	Որ յանէից ստեղծեր:

Այժմ գործածութեան մէջ գտնուած եղանակներն ու դարձուածքները այսչափ են և մենք ալ այս կարգով նշանակեցինք, խազերու զգալի փոփոխութեանց ալ համեմատ. բայց եթէ մի և նոյն ձայնի մէջ խազերու կարգին իրարմէ ունեցած մանր տարբերութիւնները սահմանել պէտք ըլլար, ամեն մէկ ձայն քանի մը ստորաբաժանում կրնար ունենալ. և որուն 'ի վաղուց գոյութեան հետքը տեսած ալ ենք Հայաստան օրագրոյն 49—101 թուոյն (1882) միջոցաւ հրատարակուած հին Ժամագրքի մը վերայ

(1) ր) և ր) եղանակները մասնաւոր երրորդ ձեւ մ'ալ ունին, սուղնոյնն է Աստուածը և այլ քանի մը մասնաւոր հատուածներ, և երկրորդինն է Վաստիքի և այլն:

տրուած ծանօթութեան մը մէջ (1)։ Այլ այն ստորաբաժանումներն արդի սովորութեան մէջ խափանուած ըլլալով գրեթէ անհնար էր զատուք սահմանելը, ուստի շատացանք ներկայ և գլխաւոր բաժանումները միայն յուցընելով ։

Ահա մինչեւ հոս փոքր 'ի շատէ ջուցինք հայկական հին խազից կազմութեանը մասին մեր զխտողութիւնքը, անկարելի ըլլալով օրագրի սահմանի մէջ ամփոփել խազերու ածանցմանը և այլ և այլ եղանակներու մէջ իրենց որոշեալ զանազան գրիցը վերայ եղած մանրամասն տեղեկութիւնքը ։

Ուստի փափաքելի է որ վերստին շարական տպուած տուն խազերուն թէ՛ ձեւերը և թէ՛ կարգերը ընտիր օրինակներու վերայ սրբագրուի, վասն զի թէեւ ձեռագրաց մէջ ալ աղաւաղութիւններ կան, այլ տպագրեալներուն մանաւանդ Զայնքաղի վերջին տպագրութեան մէջ աղաւաղութիւնը վերջին աստիճանի հասած է. և եթէ հին օրինակներու վերայ ալ շոք անհրաժեշտ երեւցած քանի մը տեղեր փոփոխութիւն մ'ալ ընել պէտք ըլլայ, վաղեմի կարգը է՞ր հիմն ճանչցուի ։

Գուցէ ոմանք կարծեն թէ նոր ձայնագրութիւնն ըլլալով ասի ընելու հարկ չկայ. այլ մենք պէտք չէ խաբուինք և յոյսերն իս

(1) Ձեռագիր Երականաց մէջ շոտ երգերու հատուածի սկիզբները լուսանցքին վերայ զանազան մասնաւոր խաղեր նշանակուած են, և որոց ամենն ալ այժմ մի և նոյն կերպիւ կ'երգուին. կը կարծուի թէ ասոնց ամեն մէկը զատ զատ ձեւերով կ'երգէին նախնիք ։

(Սոյն հրատարակութենէն յետոյ դէպ եղիւ մեզ տեսնել այսպիսի հին ժամագրքեր որք խազիքը կոչուած են՝ հաւանականաբար խաղերու այն հոժութեան պատճառաւ որ ասոնց մէջ կը դասուին, և այս անուամբ արձանագրուած են աղջային քանի մը գրագրաններու մէջ ։ Ժամագրքին երաժշտական մասն է սա որոյ մէջ Մեսեդիները և Ուղիղեղիցիներն ալ երաժշտական խաղերով նշանակուած են և որոյ մէջ կան հարցփաստեր և ուրիշ երգեր որք անգործածելի են այսօր ։ Այս երգերուն շատին թղթի լուսանցքներուն վերայ բառեր գորշմուած է իբր այլ և այլ եղանակաց ձեւերու անուններ, ինչպէս, Ա-ռ-ռ-ռ, Ձ-ր-ր, Գ-ռ-ռ-ռ, Զ-ռ-ռ և այլն, որոյ մեկ հետքը կայ և Երականացոց մէջ թէ և տարբեր անուններով, ինչպէս, Ա-ռ-ռ կողմ, Վ-ռ-ռ ձայն. և այլն ։)

(Ծանօթ. Բ. Տղարք. )



միմիայն նոր ձայնադրութեան վերայ հաստատենք . զի ասի մինչեւ որ կանոնաւոր ուսման կարգ անցնի և ըստ բաւականին ուսանողներ և դասատուներ պատրաստուին , շա՛տ ժամանակի կարօտ է . մանաւանդ որ առօրեայ ժամացատութեան մէջ փոխանակ ջայնքաղ շարահանի Նօթայի թերթ գործածելը անհնար ալ է դրեթէ . ժամասացութեան տեղեկութիւն ունեցողները դիտեն այս մասին եղած դժուարութիւնը . հապա քահանայք ի՛նչ պիտի ընեն զանազան արարողութեան ատեն . ո՞չ ապաքէն Մաշտոց պիտի գործածեն : Եւ քանի որ առանց խաղի շարական երգելն ալ անհնար է , ուստի հին խաղերը սրբագրելով , ձայնագրութիւնը՝ դասատուութեան և միայն ծանր երգոց համար վերապահելու է առ այժմ՝ մինչեւ որ ընդհանրանայ :

Այս մեր դիտողութիւնքը վերջացընելէ առաջ , եւրոպական խաղերով շարական դրելու խնդրոյն վերայ ալ քանի մը խօսք ընենք :

Ասի գուցէ ուրիշներ խորհած կամ փորձած ըլլային՝ չէինք դիտեր երբ հանդուցեալ Պ. Գ. Երանեան 1860 թիւին սկիզբները առաջարկեց մեզ այս ձեռնարկութիւնը , որոյ եղանակներուն կազմութեան հոգը իւր վերայ ըլլալով , մեր ուշադրութիւնը բոլորովին չափերու յարմարութեանը դարձուցինք , չընդունելով Պ. Գ. Երանեանի ընտրած՝ չափերու դիպուածական բաժանումները (որուն բնագրերը պահուած են մեր քով ) , և այս գործոյն մէջ հիմնական կանոն ըրինք մեզ , նախ՝ վերոյիշեալ դիտողութիւնքը ըստ մասին . երկրորդ՝ թէ՛ Մանր և թէ՛ Քաղուած երգըւած հատուածներուն չափերու համեմատութիւնը , որք թէ՛ զատ զատ և թէ՛ անընդհատ երգուած ատեննին՝ իրենց մէկ հատուածին վերջը միւսոյն սկզբնաւորութեանը հետ իբր շղթայ համաձայնի՝ մինչեւ անգամ զանազան երգերէ այլեւայլ հատուածներ իբր Քաղուած իրարու միացած ատեն . ինչպէս .

	1	2	3	4
Երգեսցուք երգ նոր . . . փառաւորեա :				ԼԸՆ Ժ Խ ԽՕ Կ :
1 2 3 4				
• Դու յանչն ա :	ուեր . . . . .	զանճառ	խոնարհու :	
1 2 3 4				
Ընչուր :: Զոր ընր :	բեայ	աստըւած . . . . .		

Նայեցայ ես . . . . . փառաւորեցից ըզքեզ Ֆրիս :  
1 2 3 4

Կոստ : Ի Խո : չիլըն քո . . . . . տիեզերաց արբուցեր զան :  
1 2 3 4 1 2 3 4

Եւ հոս թէ ան : Աստուծոյ շնորհ : ծին անարատ կոյս . . . . . :  
Հրով աստուածութեանը քս . . . . . զանմահութիւն  
1 2 3 4 1 2 3 4

պարզեւեցեր ազ : Գի Երբ Կոստ : Եւ Յայտ արդ ան : մահութեան  
ճաշակեցաք . . . . . :

Ահաւասիկ ասոնց միջին երեք հատուածները վերացման խաչի  
քաղուած եղած ատեն՝ բնաւ չիտխուելով կը համաձայնին միմեանց  
ինչպէս .

1 2 3 4 1 2 3 4  
Կոստ Եւ Յայտ : Եւ Երբ . . . . . խոնարհու : Եւ Յայտ :  
1 2 3 4

Չիլըն քո . . . . . արբուցեր զան : Եւ հոս թէ ան :  
1 2 3 4

Եւ Յայտ արդ ան : մահութեան . . . . . : Եւ այլն :

Եւ տառին ներգործութեամբ կամ գործութեամբ գործածուելուն  
օրէնքն ալ մեծ դիւրութիւն տուաւ այս մասին :

Իսկ երբ Նախագայ Բովանդատիւնը հրատարակեցինք , փոր-  
ձառութենէ ուսած մասնաւոր փոփոխութիւններէ զատ՝ վերո-  
յիշեալ սկզբունքներէն չչեղեցանք , միայն եղանակաց մասնաւոր  
տարբերութիւնքը համաձայնեցընելու դժուարութիւնը տեսնելով՝  
զանոնք իրենց պարզ ձեւին վերածել ստիպուեցանք :

Այս առթիւ վէնետիոյ Միսիթարեան հարց հրատարակած  
Երգարանի վերայ ալ քանի դիտողութիւննիս կը համարձակինք  
յայտնել :

Այս երգարանը թէ՛ պարզութեան և թէ՛ ձայնից ներդաշնա-  
կութեան և կանոնաւորութեան մասին շատ ընտիր երկասիրու-  
թիւն մ'է . թէեւ եղանակները մեր սովորաբար գործածական  
ընթացքէն բաւական կը տարբերին , այլ եղանակաց արդի խա-  
ռըն կացութեան մէջ մասնաւոր ձեւ մ'ալ ասի լինելով , ասոնց



վերայ խօսիլ՝ ներկայ սահմանէս դուրս է . մեր ղխողութիւն ընելիք կէտերն են .

Ե. Երկու Օրհնութիւններէն մէկ քանին՝ որոց երգերը տարբեր Չայնասոսթիճաններէ (Tono) գրուած է . ասի արեւելեան եղանակաց մասնաւանդ մեր եկեղեցական երգոց մէջ շատ շիտխօսութիւններ կը յարուցանէ . վասն զի անհնար է որ ք) Օրհնութիւնը կամ Ողորմեայն «ը ձայնի վերայ թողումք և ի խաչանիչ փայտն երգը թէ ձայնի վերայ երգելք . Ելեւէջի տեղափոխութեամբ երգելն ալ շատ դժուարութիւններ ունի , ինչու որ եկեղեցական պաշտամանց մէջ այս երգերը ըստ պատշաճին խառն և անընդհատ կ'երգուին . և գլխաւորապէս պէտք է դիտել որ արեւելեան եղանակները արեւմտեանին պէս միմիայն երկու Ելեւէջի (Scala) վերայ հիմնեալ չըլլալով՝ ո՛չ այնչափ Չայնասոսթիճանն ղեղանակը կը ճանչցընէ , որքան որ եղանակն ղՉայնասոսթիճանը . ուստի պէտք է որ միւսնոյն եղանակէ ամեն երգ միւսնոյն Չայնասոսթիճանի վերայ դրուի , և եթէ ուրիշ եղանակ մ'ալ միւսնոյն Չայնասոսթիճանի վերայ դրել պէտք ըլլայ , անոր ալ Ելեւէջի ընթացքին և այլ պարագայներուն տարբերութիւնը իրեն մասնաւոր նշան մը կ'ըլլայ՝ միւս Նայնասոսթիճան եղանակներէն որոշելու համար . զոր օրինակ . բուն Ա. և Գ. ղարձուածք եղանակները միանգամայն «ի Չայնասոսթիճանի վերայ կը գրուին , այլ առաջնոյն ղարձուածքը լա և վերջաւորութիւնը ք) Չայնասոսթիճանի վերայ կ'իջնայ , քանի որ երկրորդին բուն եղանակը թէ և վերջաւորութիւնն ալ լա Չայնասոսթիճանի վերայ կը մնայ . և երբ այսպէս հաստատ դրութիւն մը ըլլայ և օրինակի համար՝ Գ. ղ եղանակին թէ Չայնասոսթիճանի վերայ գրուիլը որոշակի գիտնանք , խորհուրդ խորն երգն ալ սոյն Չայնասոսթիճանին վերայ գրուելով Գ. ղ ըլլալը որոշակի կը ճանչցուի , և ձայնագրութիւնը կարգացողն ալ արդէն աչքի վարժութիւն ունենալովը՝ նորանոր փորձեր ընելու պէտք չունենար :

Բ . վարդանանց Նորհարալ երգը շատ խառն չափով մը գըրուած և գուցէ՝ ոտքի յարմարելու համար եղանակը այլայլած է : Ասի ոտանաւոր երգ մը ըլլալով, 32 կամ 64 ոտք պէտք էր ըլլալ , որն որ 68 ոտքի բաժնուած է :

Գ . խորհուրդ խորն երգին յորդորակ հատուածներուն ամեն մէկը իրարմէ քիչ շատ տարբեր ձեւերով գրուած է , որն որ անտանկի և աւելորդ դժուարութիւն մ'է երգելու մասին : ( Այս

վէտին վերայ տե՛ս նախընթաց յօդուածը) :

Կարելի է սմանք կարծեն թէ բաւերու իմաստին համեմատ ամեն հատուած այլ և այլ ձեւերով երդելու է . այս կարծիքը սխալ է և անդործադրելի՝ եթէ ոչ մէկ քանի գլխաւոր պարագայից մէջ իբր շատ մասնաւոր դարտուղութիւն . և միթէ այսչափը արդի շարահաններու մէջ նշանակուած չե՞ն , և ի՛նչ հարկ է այնչափ բժախնդիր ըլլալ և հազար ութիւն հարիւր քսան դրուագ շարահանի եղանակները ամեն մէկ իմաստին մանր բաժանմանցը համար հազարաւոր ճիւղերու ևս բաժնել, և միօրինակութեան մասին արդէն եղած անհամար դժուարութեանց վերայ յաւելցնել ա՛յնպիսի աւելորդ դժուարութիւն մ՛ալ, որ և ոչ եւրոպական երգոց մէջ կայ (1) . եթէ այս ընթացքը նախնիք ալ ունեցած ըլլային , անհնար էր որ շարահանի երգերը գէթ այսօրուան եղածին չափ ալ մեզի հասնէր . դեռ քիչ ժամանակ յառաջ՝ երգի մը մէկ տունը ուսնելով, միւսներն ալ անոր վերայ կ'երդէին :

Յիշեալ երգարանին մէջ կան նաեւ ուրիշ քանի մը դիտողութեան արժանի կէտեր , ինչպէս՝ կիսաձայներու և եղանակաց ելեւէջի անյարմարութենք , այլ ասոնք եղանակաց տարբերութենէն եղած համարելով՝ մի ըստ միով ցուցնել աւելորդ կը համարինք . և թէ՛ այս մասին և թէ՛ մեր դիտողութիւն ըրած կէտերուն վերայ Վերապատուելի Հարց կարծիքը թէ և չենք գիտեր , այլ կարծեմք որ այս անյարմարութեանց գլխաւոր պատճառը՝ ձայնադրող Եւրոպացի երաժշտին արեւելեան եղանակաց և հայերէն շարահանի կազմութեան և Ելեւէջի ընթացքին վերայօք որոշ գաղափար մը չունենալն եղած է . վասն զի անձամբ փորձած ենք ասի ՚ի Պօլիս , ուր շատ երեւելի Եւրոպացի երաժիշտք չեն կրցած ինչպէս որ պէտք է ձայնադրել արեւելեան եղանակ մը , մինչեւ անգամ գրուած երգ մը կարդալու ալ չեն յաջողած , բաց ՚ի մէկ քանի նշանաւոր երաժիշտներէ որք շատ ժամանակ ՚ի Պօլիս մնալով՝ արեւելեան եղանակաց կազմութեան և ընթացիցը լաւ վերահասու եղած են :

Այս արեւելեան եղանակաց կազմութեանը նաեւ ազդային

(1) Ինչպէս յայտնի է , ամեն երգի մէկ կամ երկու հատուածին վերայ եղանակները յարմարցուելով՝ միւս հատուածները ճիշդ անոնց նման կ'երգուին , իմաստին անորոշ շփոթութեանց ուշ չգրուելով :



եղանակաց գոյութեանը և սպառնալից հին և նոր երգերու վերաց մեր կարծիքը ուրիշ առթիւ խօսելու առաջագրութեամբ կը վերջացրնենք ներկայ յօդուածս՝ արդոյ ընթերցողաց բարեմիտ գատողութեանը յանձնելով : (1)

Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

## ՅՕԴՈՒԱԾ ՄԸ ԸՆԴԴԷՄ ՏԵՍՈՒԹԵԱՆՅ

(Տե՛ս Ճամանակ Հանդէս 1864 թիւ 46)

ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆ ՈՒՂՂԵԱԼ ԽՆԴԻՐ ՄԸ

Պ. ԽՏՐԱԳԻՐ .

Ձեր Հանդէսին վերջին թուոյն հետ Յաւելըստ մը կարդացինք, որ Շարահանի խաղերուն վրայ քանի մը գիտողութիւններ կը պարունակէր հեղինակութեամբ Արդոյ Ե. Մ. Տնտեսանի :

Կ'ուզէինք մի և նոյն կերպով և աւելի մանրամասն դիտողութիւն ընել այս նիւթոյն վրայ, բայց ընդհանրապէս մեր օգտայնոց անծանօթ նիւթ մ'ըլլալուն, միայն քանի մը պարզ ու համառօտ դիտողութիւն կ'ընենք, զանոնք ձեր պատուական թերթին միջոցաւ երաժշտութեան հմուտ, մանաւանդ չարսկանազէտ անձանց ուչադրութեանը յանձնելով. և կարեւոր խնդիր մ'ալ կրօնական պատկառելի ժողովոյն ուղղելով :

Շարահանի խաղերուն ունեցած տեւողութիւնը և զօրութիւնը գիտցուին նէ ալ, դարձեալ եզանակը ճիշդ երգելը անհնար է, քանզի խաղերը ձայնագրութեան պէս եղանակ չեն

(1) Հարկ կը համարենք յիշել աստ, թէ տոյն Տնտեսանիքը մեր ծախքովը և Ճամանակ օրագրի թուոյն չափ տպագրուած և նոյն օրագրի խմբագրութեանը յանձնուած էր, որ և նա իւր բաժանորդացը զրկած էր. բայց հիմա ո՛ր գիտէ ի՞նչ պատճառաւ, ասոնցմէ և ո՛չ հաս մը կը գտնուի, ո՛չ Ճամանակի աւելորդ թիւերուն և ո՛չ ալ վաճառուելու արուած կարմեալ տարեկաններուն մէջ. ուստի և նոցա մէջ երեսներու թուահամարներն ալ կը սրակսին, սոյն Տեսութեանց թուահամարներուն համեմատութեամբ :

(Ծանօթ. Բ. Տ. Գ. Գ.)

ցուցնէր, և ամէն մէկ խաղ իրենց ձայնին յատուկ չէն կրնար ըլլալ, ինչպէս որ Պ. Տնտեսեան կ'ըսէ, ասի հնարաւոր կ'ըլլար երբ որ իւրաքանչիւր ձայնի վրայ ըսուած երգերուն ամենն ալ միակերպ երգուէին: Թողունք Ստեղծները և ծանր Հարցերը, կան նաեւ ուրիշ երգեր, որոնք թէպէտ և մէկ ձայնի վրայ են, բայց խաղերնին բոլորովին տարբեր. ինչպէս են Ի յերկնաց երեւոտ, Անժամանակը Ասորոսած երգերը, որոնք դ՛ ձայնի վրայ են բայց խաղերնին բոլորովին տարբեր: Կանանցն կանխելով, Լոյս է լոսոյ է հօրէ առտեցար, Մայր լոսոյ Մարեմ երգերը դ՛ ձայնի դարձուածք ունին, և դրեթէ մէկմէկու ալ նման, բայց խաղերնին տարբեր են: Ես ասացի Տէր սղորտ հոգոյ իմոյ Բաղմօնդէ՛ դի ձայնի երգը ճիշդ նման է Ափնասուրբ Երրորդութեան երկրպագեն զբո՛ երկնային՝ դի ձայնի երգին, բայց խաղերնին տարբեր. և այլ շատ երգեր կան, որոնք հմտագունից ծանօթ են: Թէպէտ և ամեն եղանակի դարձուածք իրենց խաղերուն շարքէն կ'որոշուին, բայց ամեն մէկ կարգը և նոցա դարձուածքը մէկ տեսակ խաղեր չեն ունենար, թէ եւ մէկմէկու ալ նմանին. ասոնց վրայ ուրիշ առթիւ երբ հարկաւորի կը խօսինք, խաղերով և ձայնազրուեթեամբ հանդերձ: Բուժը եղանակի ու հատուածի վերջաւորութեան ատեն Չայնահար կը վարուի կ'ըսէ Պ. Տնտեսեան. հետեւեալներուն մէջ անկարելի է Չայնահատ վարուիլը: Եսն և նման Հօր և Արդոյ՝ Հոգիդ անեղ և համաբոյ: Գայ զբոսութեանց Բաբասորն՝ ի նորոգել զարարածս. և այլն:

Ասոնց վրայ խօսելէն ետքը նոր խաղերով շարական տպել կ'առաջարկէ, և շարականը ձայնազրուելու պէտք չի կայ կ'ըսէ. մենք ինչպէս որ միշտ կ'ըսենք, դարձեալ կը կրկնենք հրապարակաւ թէ, մինչեւ որ շարականը չի ձայնազրուի, շարականի երգերը փոխփոխութեան և եղծման վտանգէ ազատ պահել, և եկեղեցական սրբազան երգոց ճշդութեան և միօրինակութեան կարեւոր խնդիրը լուծել անհնար է. թէպէտ և պէտք է շարականի խաղերուն վրայ տեղեկութիւն ունենալ, բայց անկարելի է անոնց եղանակը ճիշտ դիտնալ և երգել. ըստ որում խաղերուն զօրութիւնը անծանօթ մնացած է ըստ մեծի մասին. և չդիտցուիր, դուցէ ձեռքէ ձեռք օրինակուած ատեն անհմտ անձերու միջոցաւ, նոյն խաղերուն վրայ ալ մեծ ուշադրութիւն եղած չըլլայ, որով անոնց նշանակութիւնը այժմ՝ դիտնալ ան-



հնար կը թուի, հետեւաբար անոնցմով շարականի երգոց անա-  
զարտ պահուիլն ալ: Ուրեմն սէտք է շարականը ձայնագրել.  
որուն համար կրօնական ժողովոյ ուշադրութիւնը կը հրաւիրենք  
այս ամենակարեւոր և շատերուն փափաղած խնդրոյն վրայ,  
որպէս զի Շարականի սրբազան երգոց եղանակները եղծման  
վտանգէ ազատ պահելու համար՝ բարեհաճի շարականագէտ  
հմուտ անձանց ժողով մը կազմելու, և նոցա որոշմամբ շարա-  
կանը գրել և վաւերացնել տալու: Եւ թէպէտ գիտենք որ ա-  
տենօք Շարականի բոլոր երգերը Բարեբար Սնճի մը շնորհիւ  
ձայնագրուած կան, բայց անիկա Հայկական ձայնագրութեամբ  
է, և անոր հմուտ եղողն ալ շատ քիչ են. ուստի ժամանակ  
անցնելով ան գրուածն ալ՝ եթէ հրատարակուի, կ'երեւի որ  
Եղիպտոսի նշանագրերու կարգը պիտի անցնի, կամ նոյն խի  
Շարականի խաղերուն նման անոնց զօրութիւնն ալ անծանօթ  
պիտի մնայ. որմէ օգուտ մը չպիտի հետեւի: Ուստի կը խնդ-  
րենք որ, կամ Հայկական ձայնագրութիւնը ծաղկեցնելու միջոց  
մը գործադրուի, որ նոյն գրուած շարականն ալ երբ ազգային  
կրօնական ժողովոյ հաճութեամբ տպուի, զանիկա կարդացող և  
հասկացող ալ գտնուի, կամ չէ նէ Եւրոպական ձայնագրու-  
թեամբ Շարականի երգերը գրուին և հրատարակուին, որ ապա-  
զայ ժամանակի մէջ եղծման վտանգէ բոլորովին զերծ մնան:

Ն. Ս. ԹԱՇՃԵԱՆ

## Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ի Ա Ի Ն Ա Խ Ը Ն Թ Ա Յ Յ Օ Դ Ո Ի Ա Ծ Ն

(Տէ՛ս 'է Մեղը- հանդէս, Ուրբերդոյ Կոթի. 1864. Թի- 248.)

Մեծայարդ խմբագիր .

Ճամանակ հանդիսի ԱԵ թուոյն մէջ յօդուած մը տեսանք՝ ստորագ-  
րութեամբ Արգոյ Ն. Ս. Թաշճեանի, որուն վերնագիրը թէպէտ  
առ կրօնական ժողովն ուղղեալ, այլ շարժառիթը՝ նոյն Ճամանակ  
հանդիսի ԱԾ թուոյն յաւելուածովը՝ շարականի խաղերուն վերայ  
մեր հրատարակած Տեսութիւնքն եղած են: Յիշեալ յօդուածին  
մէջ խաղերու զօրութեանց և անոնց գործածութեան մասին իբր

եղբակացու թիւն յառաջ բերուած մէկ քանի փաստերը գրեթէ կէտ առ կէտ մեր Տեսութեանց արձադանքն են . ուստի թէ՛ ասոնց և թէ՛ իբր առարկութիւն ցուցուած մէկ քանի օրինակներու մասին երկարօրէն խօսելու և վիճելու ատեն չունենալով՝ այսչափ միայն կ'ըսեմք թէ այն օրինակներուն մէջ խազերու տարբերութիւն չեմք տեսներ , ինչպէս որ կ'ուզէ ցուցնել , բաց 'ի Անթամանկոյ Սարուած երգէն որ այն ալ տեսակ մը ստեղի է՝ նման Երկուսոյ ֆետոյ երգին . հետեւաբար պէտք է գիտնալ թէ մեք մի միայն հիմնական կէտերու վերայ հաստատած եմք մեր Տեսութիւնքը , աւելորդ համարելով մի ըստ միտջէ յիշել ամեն մէկ մասնաւոր դանաղանութիւն :

Այսու ամենայնիւ՝ առաջին անգամ մամուլի ներքեւ ինկած խնդիր մը կրնար ըլլալ որ ակամայ սխալներ կամ թերութիւններ ևս ունենար , որն որ ընթերցողաց դիտողութեանն ալ յանձնուած լինելով , ինչպէս ամեն կարող անհաս՝ նոյնպէս և Արդոյ Պ . Ն . Թաշեան որ բարեհաճեցաւ այս երկիցս անգամ սոյն խնդրոյն վերայ խօսելու համար 'ի հրատարակ իջնել , ազատ է իւր կարծիքն ըսել , այլ պէտք է որ խնդրոյն մթութեան հակառակ մեր համառօտ Տեսութեանց մինչեւ անգամ ամեն մէկ բառերուն՝ միմեանց հետ սերտ կապակցութիւն ունենալը նկատելով , եթէ հնար է՝ աւելի ուշադրութեամբ կարդայ զանի , և իւր առարկութեանց շատին լուծումք և մեր կարծիքը դարձեալ հոն կրնայ գտնել . դիտելով միանգամայն որ այս խնդիրը երաժշտական քննութեան որչափ ալ ենթակայ ըլլայ , տակաւին իւր սրբազան հնութեանը աղագաւ պատմական և բանասիրական արժէք մը ունի զոր մեզի սկզբունք ընել ջանացած եմք , այս խնդրոյն վերայ Արդոյ հասարակութեան ներկայացած օրերնուս 'ի վեր . հետեւաբար այս մասին արդէն եղած և ըլլալիք դրութիւնները եթէ սոյն բանասիրական ուղղութիւնը չունենան՝ շատ կարեւորութիւն մը չունին ըստ մեզ : Եւ սակայն մեր կարողութեան սահմանն ալ ճանչելով կը փափաղիմք որ այս խնդիրը ա՛լ աւելի գիտնական ազդայնոց ուշադրութիւնը գրաւէ , զի մինչեւ որ ասի չըլլայ՝ հիմնական բարեկարգութիւն մը անկարելի կը թուի մեզ , որոյ ապացոյց են ցարդ եղած փորձերը :

Այս առթիւ կը հարկադրիմք ուղղել յիշեալ յօդուածին մէկ գլխաւոր սխալն ալ , որով կը ցուցնէ թէ մեր շարականը



Ճայնագրելու պէտքը չձանչելով՝ նոր խաղերով շարական տպել առաջարկած եմք : Շարականը ճայնագրելու մասին մեր բաղձանքը կարծեմ՝ զգալի կերպիւ յայտնած եմք դեռ քիչ ատեն յառաջ . սակայն պէտք է պարզեմք մեր խօսքը որ սխալ հասկըցուած է : Ա. Մեր եկեղեցական եղանակաց հնութեան և ճշդութեանը մասին բացարձակապէս վճռող հեղինակութիւն մը չըլլալով ներկայիս մէջ , խաղերուն հնութիւնը բաւական երաշխաւորութիւն մը ըլլալով շատ կէտերու մէջ մեզի կրնայ առաջնորդել : Բ. Ազգին ներկայ վիճակին նկատմամբ՝ շատ կարեւոր գրքեր մինչեւ անգամ Ժամօքիչ չգտնուած ատեն՝ (1) ճայնագրութեամբ շարականը որուն օրինակն անգամ պատրաստ չէ , մեծամեծ ծախքերով տպուելուն յոյս մը չունենալով՝ պարզ Զոյնաղբ տըպուելու ատեն խաղերուն սրբագրուիլը առաջարկած եմք , ապագայ յոյսէն վերադաս համարելով՝ ներկայ դանուածին բարւոք գործածութիւնը : Գ. Հայաստանեայցս եկեղեցւոյ ժամերգութեան սահմանին մէջ երգոց մեծ մասը յորդորակ և քաղուած ըլլալով , ճայնագրութեան մէջ ալ բառերուն իրարմէ տարապայման հեռաւորութիւն ունենալը , մէկ օրինակի վերայ քանի մը անձ ճայնագրութիւնը ճիշդ կարդալու անհնարութիւնը , եւայլն , եւայլն , ա՛յնպիսի դժուարութիւններ կը յարուցանեն որով կ'ստիպուիմք Զոյնաղբ կարեւորութիւնը ձանչնալ . իսկ ճայնագրութեան առնուած շարականը մի միայն իբր հիմնական կանոն՝ դասատուութեան և ծանր երգոց համար կրնայ գործածուիլ , միանգամայն և եղանակները եղծման և կորսուելու վտանգներէն կ'ապահովէ : Դ. Ուստի հա՛րկ է որ շարականի խաղերն ալ սրբագրուին , և ճայնագրութեան առնուելու շարականը ըստ կարելւոյն անոր վերայ հիմնուի , որով այս երկուքը համաձայն դրութեան մէջ մտնեն : Ահա՛ մեր կարծիքը :

Եկեղեցական երգոց բարեկարգութեան մասին Յանձնաժողովի մը որոշումը Ազգային կրօնական ժողովը արդէն ըրած էր և հրաւիրագրերը ղրկած , Ժամանակէ 48 երորդ թուոյն տպուելէն յառաջ : Սակայն այս յանձնաժողովին մէջ պատմութեան և մատենագրութեան հմուտ անձինք ալ պէտք են որ երաժշտութեան չկրցածը վճռեն . վասն զի եկեղեցական երգոց բուն եղանակները գտնելու և վճռելու խնդիրը կարծուածին չափ զիւրին չըլլա-

(1) Սոյն թուին ժամագրքի սով կար որ բաւական ատեն տեւեց :

լով, այնպիսի նախատեսութիւններ պէտք են, որ այս մասին եղած կարգադրութիւնները ընդհանուր Ազգային եկեղեցեաց մէջ ընդունուելու և գործածուելու տրամադրութիւններն ունենան, և տպուելէ յետոյ իրաւացի գանդատներու և դիտողութեանց տեղի չմնայ՝ որչափ որ կարելի է :

Արժանայարգ Խմբագիր, խնդրելով որ Ձեր պատուական Հանդիսին մէջ սոյն գրութեանս տեղի չնորհել բարեհաճիք, կը մատուցանեմ Ձեզ այս առթիւ ևս անկեղծ յարգանացս հաւատարմիքը :

Կ. Պ. Է. • 1864 Մ. Կ. • 28

Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՒՆ

(Տէ՛ս 'ի Սէ՛ն ամսագիր • Տպ. յերոսաղէ՛մ • 1867 • Ա. ամիսն • 6—9 •)

Երաժշտութիւնը մարդոյս հոգւոյն և սրտին զգացման արձագանքը, անոր ծագումը մարդկութեան ծագմանը ժամանակակից (Մ. Կ. 21), իւր ներգործութիւնը խիստ ազդու, և միանգամայն ժողովուրդի մը կոշտութիւնը կրթելու զօրաւոր միջոց մը ըլլալը, յայտնի ճշմարտութիւններ են : Ո՞չ ապաքէն Ուփիէսոսի քնարին սքանչելիքը, Դաւթի տասնադիրն ազդեցութիւնները և ասոնց նման դէպքեր հանրածանօթ են . ո՞չ ապաքէն մարդս բնապէս երաժշտական ձայներէ զգածուելուն համար է որ իւր բոլոր կենացը մէջ անոր ազդեցութեանը ենթակայ է . օրօրոցին մէջ անօ՛վ կը ննջէ, ուրախութեան մէջ անօ՛վ կը զուարճանայ, տրտմութեան մէջ անօ՛վ կը սիրօփի, և մինչեւ 'ի յաւիտենականութեան դուռը անոր տխուր միմունջներովը կ'երթայ : Ուստի 'ի սկզբանէ հետէ մարդկային ազգը ունեցած է երաժշտութիւնը, և 'ի գործածեր է զայն իւր կրօնական պաշտամանց, քաղաքական հանդիսից և ընկերական կենաց մէջ : Թողունք մարդկային ազգը . ո՞չ ապաքէն Հրեղինաց դուռերն ալ իրենց Սըրբասացութիւնքը և Ալէլուքը՝ երաժշտական հոգեղէն հնչմամբ առ Բարձրեալն Էմմանուէլ մատուցանելին՝ քրիստոնէական եկեղեցւոյ մէջ ալ ընդունուած սրբազան աւանդութիւն մ'է :



**ԱՂԻՍԱԿ  
ՁԱՅՆԱՍԻՒՃԱՆԱՑ**

Սակայն՝ ինչպէս որ մարդկային ազգին լեզուն, ընկերական ու քաղաքական վիճակը և կրօնական համոզումը զանազան ազդաց մէջ տարբեր եղած է, նոյնպէս և երաժշտութիւնն ալ այլ և այլ տարբեր դաշնակներ ու ձայնից դասաւորութիւններ ունեցած է, ազգի մը յառաջադիմութեան, զգացման և մինչեւ անգամ ընկած երկրին հանդամանացն համեմատ . այնպէս որ ազգ մը ո՛րչափ կիրթ ձաշակ, փափուկ զգացում և վառ երեւակայութիւն, նոյնչափ ալ կանոնաւոր ու դեղեցիկ երաժշտութիւն ունեցած է . և ընդհակառակն՝ ազգ մը ո՛րչափ յետադէմ, կոշտ ու անզգայ կամ մեղկ ու թոյլ եղած է, այնչափ ալ անդաշնակ և անկանոն, կամ մեղկ ու թոյլ երաժշտութիւն մը ունեցած է : Հետեւաբար ազգի մը երաժշտութիւնը՝ անոր հոգւոյն և զգացման պատկերն է : Սակայն թողլով այս ընդհանուր տեսութիւնը, մասնաւորենք խօսքերնիս մեր ազգային երաժշտութեան վերայ :

Ամեն ազգաց երաժշտութիւնը որչափ ալ իրարմէ տարբեր, այլ հիմնապէս մէկ ըլլալով, միայն թէ ձայնից դասաւորութեան և ներդաշնակութեան կանոններով իրարմէ կը տարբերին, որուն համար մանրամասն օրինակներ ցուցնել դժուար ըլլալուն, կը յիշեցնենք միայն արդի երաժշտութեան եւրոպական ու արեւելեան — տաճկական երկու գլխաւոր ճիւղերը, յաւելցնելով աստ ձայնաստիճաններու աղիւսակ մը (1), յորմէ կ'երեւի

162	Բեւ Լբբեւ	70	192
184	Բեւ Բեւեւեւ	65	180
176	Բեւ Եբեւ	60	170
168	Եեւեւեւ	55	160
160	Եեւեւեւ	50	152
152	Եեւեւեւ	45	144
144	Եեւեւեւ	40	136
138	Եեւեւ	35	128
132	Եեւեւ	30	120
120	Եեւեւ	25	114
114	Եեւեւ	20	108
108	Եեւեւ	15	102
102	Եեւեւ	10	96
96	Եեւեւ	5	90
88	Եեւեւ	0	85
84	Եեւեւ	0	80
76	Եեւեւ	0	76
72	Եեւեւ	0	72
69	Եեւեւ	0	68
66	Եեւեւ	0	64
63	Եեւեւ	0	60
60	Եեւեւ	0	57
57	Եեւեւ	0	54
51	Եեւեւ	0	51
48	Եեւեւ	0	48

(1) Սոյն աղիւսակը որ յօդուածիս վերջերը դրուած էր համառօտիւ՝ յառաջին ապագրութեանն, այժմ ընդարձակելով զեւրոպայիս աստ . որուն վերայ քանի մը տեղեկութիւն եւս պիտի աւելցնենք ի վերջն յօդուածիս :

որ երաժշտական ձայնաստիճանները երկու ճիւղին մէջ ալ գրեթէ մի և նոյն են , բայց եղանակներու տարրերութիւնը կը յառաջանայ ութն ձայներու և կիսաձայներու տարրեր կիրառութենէն . այսու ամենայնիւ շատ եղանակներու մէջ ալ կը համաձայնին միմեանց , ելլելը՝ հետեւարար և եղանակի միութեամբ : Բայց իրարու հետ անմիջական յարաբերութիւն ունեցող սահմանակից ազգաց երաժշտութիւնը այսչա՛փ ալ տարրերութիւն չունենալով , շատ կերպիւ կը նմանին միմեանց , ինչպէս է այսօր յարեւելս , ուր տեղ ամեն ազգ որչափ ալ իրարմէ տարրեր՝ այլ էապէս մի և նոյն ձայնի դասաւորութեամբ մի և նոյն եղանակներն ունին : Այս պարագայիս մէջ երաժշտական տիրող դաշնակը գլխաւորապէս ա՛յն ազգինն է , որ կա՛մ այս մասին աւելի յառաջադիմութիւն մը՝ և կամ ինչ և իցէ կերպիւ ազդեցութիւն մը ունեցեր է միւս ազգաց վերայ , ինչպէս են այսօր յարեւելս՝ Թուրքը , Արաբացին ու Պարսկը : Եւրոպայի մէջ ալ այսպէս է . նախկին հելլենական ու հռովմէական երաժշտական դաշնակն է որ տիրած է էապէս ամեն ազգի մէջ . թէպէտ և ատեն ատեն այս մասին փոփոխութիւններ մտած են , և ամեն ազգ ալ իրենց մասնաւոր ճաշակն ունին՝ իրարմէ քիչ շատ տարրեր :

Մեր ազգն ալ աշխարհիս հին ազգերէն մին ըլլալով , ո՛րչափ ալ միշտ ուրիշ ազգաց հետ յարաբերութեան մէջ և շատ անգամ ալ նոցա ազդեցութեանը ենթարկուած է , այսու ամենայնիւ եթէ Արաբացւոյն ու Պարսկին նման գլխաւոր ու տարածուն երաժշտութիւն մը ունեցած ալ չըլլայ , տակաւին պէտք է ունեցած ըլլայ իւր մասնաւոր երաժշտութիւնը , ազգային ճաշակը և երաժշտական հնչիւնը , քանի որ ժամանակաւ ուրոյն կառավարութիւն մը և մինչեւ այժմ ալ լեզու մը , անկախ եկեղեցի մը և ընկերական կեանք մը ունեցած է և ունի : Ի հարկէ մեր Գողթան գաւառն ալ՝ այժմեան արարական Հէճազն , պարսկական Խճահաճն և այլոց նման իւր մասնաւոր եղանակներն ունէր , և իւր քնարներն իրենց գողթնական դաշնակը և իւր բանաստեղծ երգիչներն ալ իրենց ազգային ճաշակն ու ազգային երաժշտական հնչիւնն ունէին . բայց այսօր ի՞նչ ունիմք արդեօք՝ ՚ի ձեռին՝ բաց ՚ի մի քանի երաժշտական գործիքներու անուաներէ և հատակոտոր երգերէ , որք թէ և ազգային գրականութեան համար մեծ արժէք ունին , այլ ազգային երաժշտութեան համար գործնական



օգուտ մը չեն ընծայեր . արդեօք մեր ազգն ալ այսօր եթէ ոչ իւր Գողթան եղանակները՝ բայց գոնէ իւր ազգային երաժշտական ճաշակն ու հնչիւնը մասամբ իւրք կրցած է պահել , ինչպէս որ պահած են մեզի վիճակակից ազգերը , Յոյնը , Հրեայն , Պուլկարը , Ալպանիացին , և այլք :

Երաժշտութիւնը սոյն տեսութեամբ մասնաւորելու համար քանի մը բաժանում կրնանք ընել :

Ա . Չայնի ելեւէջներ և աստիճաններ , որ այսօր գրեթէ միօրինակ է ամեն տեղ . եւրոպացւոյն դաշնամուրը և արեւելցւոյն սաղը կամ Բաճադուր մի և նոյն ութն ձայնաստիճանի ելեւէջն ունին նուազ տարբերութեամբ :

Բ . Ելեւէջներու տարբեր դասաւորութիւններէն ձեւացած տարբեր եղանակներ , որք երկու գլխաւոր ճիւղ կը բաժնուին այսօր , Արեւելեան և Արեւմտեան . արեւմտեան ճիւղը՝ Ժօֆէօր և Ֆլէօր ըսուած երկու բաժանում ունի . իսկ արեւելեան ճիւղը ամեն մէկ ձայնաստիճանի՝ մասնաւորապէս անոնց մէկ քանիին վերայ բազմաթիւ տարբեր ելեւէջներ հետեւաբար և եղանակներ ունի , որոցմէ ոմանք կը համաձայնին եւրոպական եղանակաց : Եղանակաց սոյն դասաւորութիւնը՝ արեւելեան ամեն ազգաց մէջ համարեա թէ միօրինակ ըլլալով , ամենուն մէջ ալ մի և նոյն եղանակները՝ երբեմն քիչ շատ տարբերութեամբ կը գտնուին նաեւ իրենց կրօնական երգոց մէջ :

Գ . Թէպէտ և ասոնց մէջ տիրող ազգաց երաժշտական ճաշակն ու եղանակները ընականաբար աւելի տարածուն և դործածական եղած են , այսու ամենայնիւ կան եղանակներ ալ որք ազդի մը կամ տեղւոյ մը յատուկ եղած են գրեթէ , և շատ անգամ ալ անոնց անուններն առած են , թէ և ուրիշ տեղեր ալ ասոնց նման կամ ճօտ եղանակներ գտնուին . ինչպէս . Աբադ , Թիւրքի , Պուլկար , Արնասո , և կամ Հիֆալ , Ուշլափ , Իփահոն , Նեշադուր , և այլն անուանեալ հաճանք կամ եղանակներ (1) : Շատ հաւանական է թէ մեր ազգն ալ իւր մասնաւոր եղանակ

(1) Արեւելեան երաժշտութեան եղանակաց բազմաձիւղ ըլլալուն , անոր ելեւէջներուն , քնարներու ձայնից դասաւորութեանցը և այլ և այլ ազգոց երաժշտութեան իրար խառնուած ըլլալուն վերայ մի քանի դիտողութիւններ սկանայ զմեզ բրտծ եմք , յօդուածիս անձկութեանն արդգաւ :

ներն ունէր, սակայն թէ՛ մեր ազգին կացութեանը պատճառաւ և թէ՛ եկեղեցիէն դուրս հրատարակական հանդէսներ կամ ֆանայիւններ, մեզի յատուկ ժողովրդական բանաստեղծներ (չէօհրաններ) և երաժիշտներ չունենալնուս, և շատ անգամ օտար լեզու՝ հետեւարար և եղանակ գործածելնուս համար, եկեղեցիէն դուրս մեր ազգային եղանակներն անհետ եղած են. և այսօր ո՛չ տեղական և ո՛չ բառական նշանակութեամբ ազգային յատուկ եղանակ մը չենք կարող ցուցանել՝ արեւելքի այնչափ բազմաթիւ եղանակներուն մէջէն. և եթէ կայ, թերեւս մեք չենք լած. քանի մը դարէ ՚ի վեր հայերէն ո՛ր և իցէ երգերուն ամենն ալ օտար եղանակներու վերայ երգուած են (1) : Մեր ազգային մասնագրութիւնն ալ թէ և երգերու մասին առատ, այլ երաժշտութեան համար մինչեւ ցարդ բոլորովին ամուլ ըլլալով, միմիայն Շարական մը յանձնած է մեզ երաժշտական խաղերով (առանց աւանդելու անոնց ալ գործնական կանոնները). և մեք ալ չկրնալով այսօր ոչ էրգրումի համբաւաւոր Էֆէնլէն ազգային քնար, և ոչ ալ Վանի հանրածանօթ եղանակն ու սրբը ազգային երգ համարել, ուստի ազգային երաժշտութիւն մը միայն եկեղեցական շարականին մէջ պէտք է որունէնք, ուր կը գտնենք բաւական ճոխ եղանակներու հաւաքում մը, որք թէ եւ արեւելեան ուրիշ եղանակաց նման և անոր մէկ ճիւղն են, այլ իրենց վերջաւորութեամբը, դարձուածներովը, դասաւորութեամբը և ուրիշ շատ յատկութիւններովը մասնաւոր ազգային եղանակներ են, ինչպէս որ են արեւելեան ազգաց մասնաւոր եղանակները արեւելեան ընդհանուր երաժշտութեան նկատմամբ :

Գ. Երաժշտական ազգային հնչիւն, որով տարբեր ազգերէ անձինք կ'որոշուին, մի և նոյն երգն երգելու ատեն. զոր օրի-

(1) Երգ համբարձման, Հիւնային զիւրջի-բիւն, ՚ի գոյնն՝ կուէ հասուն Կուրբ : Երգ առ փրկիչն Յիսուս, Մեր անուն Յիսուս դարչին, ՚ի գոյնն՝ Գալատի Կիւրբ : Երգ ՚ի սուրբ Կոյնն, Գերբաւոր հարս շէտեւ : ՚ի գոյնն՝ Իլ սգլորտն Էֆէնլէն, և այլն : Ասոնք շատ ազգարաններու մէջ կան, զոր թերեւս ակամայ ընդունած են հրատարակողք, ստիպուած ըլլալով այս միջոցաւ գոնէ հայերէն երգեր տարածել ժողովրդեան մէջ, ինչպէս որ մօտերս ալ եւրոպական երգոց եղանակներուն վերայ նուագելը յաճախած է : Ասոնցմէ կ'երեւի թէ եկեղեցիէն դուրս չունինք մասնաւոր եղանակ մը՝ որով գոնէ մի քանի երգ երգուած ըլլայ :



նակ . բոլոր արեւելցւոց ընտանի և շատ տեղ մայրենի օրօրնե-  
րու յատկացած և արարերէն հիշող կոչուած եղանակով երգ մը՝  
երբ Յոյն մը կամ Հրեայ մը երգէ , իրեն ազգային արտասանու-  
թիւնը և կոկորդային կամ ոնգային եւայլն երաժշտական հըն-  
չիւնն այնպէս մը կը հնչէ , թէ եւ ո՛չ դիտամաք , որ լսողը անմի-  
ջապէս կ'իմանայ իրեն ինչ ազգէ ըլլալը : Մեր ազգայիններէն  
տեղ տեղ բնիկ Հայաստանցիներն քիչ շատ պահած են այս ե-  
րաժշտական հնչիւնը , որոց մէջ ո՛րչափ օտար ճաշակ ալ մտած  
ըլլայ՝ տակաւին ազգային նշանակութիւն ունի սոյն երաժշտա-  
կան բերանացի հնչիւնը՝ բաղդատուութեամբ Պօլսոյ և շրջակայից ,  
ուր տեղ ոչ միայն յակամայս մտած է օտար երաժշտական ճա-  
շակ , այլ մանաւանդ մրցում մ'ալ կայ նաեւ դասատուաց մէջ՝  
եթէ հնար է բոլորովին օտար երաժշտութեան հետեւելու հա-  
մար , որուն վրայ պիտի խօսինք յետոյ :

Մեր ազգայնոց՝ ամեն ազգաց լեզուն արտասանելու կարու-  
ղութիւնը , իւր մայրենի լեզուին ճիշդ հնչման տկարանալուն կամ  
անհետանալուն հետեւանքն ըլլալը , որ շատերը կը հաստատեն ,  
ուշադրութեան արժանի է մանաւանդ երբ համեմատենք զայն  
ազգային երաժշտական հնչման հետ . մեր ազգայինք ի՛նչ չափով  
որ ազգային լեզուի առողջանութիւնը պահած են , նոյն չափով  
պահած են և իրենց երաժշտական հնչիւնը և այլ ազգային յատ-  
կութիւնները : Եւեւանցի մը , Վանցի մը որ հաղիւ ուրեք կրնայ  
փոխել իւր տեղական արտասանութիւնը , ի՛նչ և իցէ երգ մը  
երդած ատեն իւր ազգային երաժշտական բերանացի հնչիւնն ալ  
հաղիւ ուրեք կրնայ փոխել . ասի փորձով տեսնուած է , ՚ի տղա-  
յութենէ անտի շատ տարիներ ՚ի Պօլիս և ուրիշ տեղեր կեցող և  
սւսեալ անձանց շատերուն վերայ : Այս բերանային հնչիւնը՝ օ-  
տար երաժշտութեան անսեղեակ մեր եկեղեցական երաժիշտ-  
ներէն ալ շատերը ո՛ր և իցէ երգ մը երգելու ատեննին կը պա-  
հեն նաեւ ՚ի Պօլիս , որուն սովորաբար Դիւրացո՞ւի Բերան կ'ըսեն ,  
որ ազգային հնչիւն մ'է եկեղեցական երաժշտութեան մէջ մնա-  
ցած : Ուշադրութեան արժանի է նաեւ որ իրենց երաժշտական  
հնչիւնն ամենէն աւելի պահել կրցող ազգերն , իրենց լեզուին ար-  
տասանութիւնը՝ հետեւաբար իրենց ազգային ամեն յատկու-  
թիւնները պահողներն են :

Մեր խօսքին եղրակացութիւնն ընելէ յառաջ , քիչ մ'ալ եկե-

ղեցական երդոց ներկայ վիճակին վերայ պետք է խօսինք, քանի որ հոն միայն կրցանք գտնել քիչ շատ ընդհանուր ազդային եղանակներ և ազդային ճաշակ :

Մարդոյս հոգւոյն ու սրտին վերայ երաժշտութեան ըրած ներգործութիւնը, թէ՛ ըստ եղանակին և թէ՛ առաւելագէս ըստ իմաստի երգին և զգացման երդողին, երկու տեսակի կը բաժնուի : Առաջին, պարզ ու վսեմ, որ մարդոյս սիրտը կը կրթէ և կ'ազնուացընէ . և այս նպատակին միայն սէտք է ծուռոյցէ և եկեղեցական երաժշտութիւնը, ինչպէս կը սահմանէ և Վամբրոնացին . Եղանակաց վայելուչ քաղցրութեամբ, երաժշտական նուագաց ազդեցութեամբ, հեշտալուր երգերով հեռացուցանել լսողներուն մտքէն սատանայական խորհրդոց արկածները, մարմնական գրաղմանց յիշատակները . քանզի, կ'ըսէ, չկայ բան մը որ երգերու ձայնին շարի կարող ըլլայ յեղաշրջել մեր կամքը յուրախութիւն կամ 'ի սրտմութիւն, երբ «*Կեո՛ր Եղածն պէ՛ս ըլլայ*», և եկեղեցին անոր համար ընդունած է երաժշտութիւնը . այսպիսի երդոց հնչմունքներն ունին զօրութիւն որ կարող են ընդստուցեալ զարթուցանել ու մարքել պատրաստել մեր միտքը աւրարճարդոյն տեսութիւնս, առ 'ի տենչումն շնորհին, և յախշտակեալ գրաղեցուցանել յաստուածայինս . (տե՛ս մանրամասն . Վամբր . մեկն . պատարագի . Թալ . յԵրուսաղէմ . էջ . 33 . 137 . 139) : Երկրորդ, թոյլ և մեղի, որ կա՛մ կը մեղիացընէ զմարդ և կա՛մ բարբը մոլեգին կ'ընէ, ինչպէս կը նկարագրէ Յենեւոն . «*Եւարձ Մենտոր և զերաժշտութիւն Ռոյլ և Օւլի, որ ապականէրն զմանկոյն . ըստ նմին օրինակի և զսպանդարամետական նուագան արդեւ խստիւ, որ ոչինչ անընդհատ 'ի դինեոյ արբեցուցանէ և լիրբ և մոլեգին զբարս գործէ . և ամիտիեաց զերաժշտութիւնն 'ի մեհեանս և 'ի տօնախմբութիւնս դից և դիւցազանց, ոչք ջքնալ առաքինութեանց կացին օրինակք*» : ( Մեհ . Տեւ . Գիրք ԺԲ : )

Հոս տեղ բնականաբար կ'ստիպուիմք ակնարկել՝ թէ արդեօք մեր ներկայ եկեղեցական երաժշտութիւնն ալ վերոյիշեալ նպատակին կը ծառայէ՞, «*Կեո՛ր Կեո՛ր եր ըլլալ*» . թէ արդեօք մեր եկեղեցական երաժշտութեան մէջ ալ մուտ գտած չե՞ն Մենտորի խստիւ արդիւած նուագներուն նմանը . թէ արդեօք շատ անդամ անպատշաճ եղանակներով և զեղգեղանքներով եկեղեցոյ սրբավայրը և հոգելից երգերը ա՛ պատիւ եղած չե՞ն . . . . այս



տնտակ հարցումներուն ոչ միայն կարելի չէ ժխտական պատաս-  
խան տալ դժբաղդարար , այլ և մինչեւ անգամ մէկ քանի կեղ-  
բոնական տեղեր՝ բուն պարզ ու վսեմ երաժշտութիւնը անհաճոյ  
երեւնալու չափ՝ այս եղծմանց սովորական եղած ըլլալն ևս հաս-  
տատել կարելի է . բայց այս մասին ընդարձակելը ներկայ նպա-  
տակէս դուրս ըլլալով՝ ընթերցողաց ուշադրութեանը կը յանձ-  
նեմք զասոնք , և մեր խօսքին կարգը կը շարունակեմք :

Միայն Պօլսոյ մէջ ալ եղած եկեղեցական երաժշտութեան  
վերայ ակնարկութիւն մը ընողը խկոյն կը նշմարէ թէ հոն ալ  
պարզութիւն և վսեմութիւն՝ հետեւարար և միօրինակութիւն կը  
պակի . կը տեսնէ թէ հոն ալ շատ քիչ կայ կանոն , պատշաճ և  
աղգային ճաշակ . կը նշմարէ որ ասի յատուկ ուսում մը համար-  
ուած չըլլալով , ամեն երգող ազատ թողուած է : Իւր ուղածին և  
զիտցածին թերիւս և չզիտցածին պէս ալ երգելու : Հետաքրքիր  
մէկը կրնայ գիտել որ շատերը շարժի մը կանոնաւոր ուսանելու  
համար օրերով աշխատութիւն և դրհողութիւն յանձն առած ա-  
տեն , եկեղեցական երգերու համար ըստ քմաց կամ ըստ զիպաց  
երգել բաւական կը համարին . և եթէ երբէք կան երգեր՝ զորս  
չգիտողներն ալ անտարբերութեամբ երգեն , այն ալ կարծես թէ  
մեր եկեղեցական երգերն են (1) : Ասոր դարման ըլլալու համար  
թէպէտ և երբեմն մասնաւոր քաջակերութիւններ և յորդորներ  
եղած են , այլ դործին առօրեայ սոխպողականութեանը նկատ-  
մամբ՝ ձեռնարկուած դարմաններն անօգուտ եղած են : Հոս  
տեղ մեք թողլով երգոց վսեմ կամ մեղի երգեցմունքը , որ ա-  
ւելի երգողաց ու ըռւաց զգացմանը և հոգւոյն արտայայտու-  
թիւնն է , միայն եկեղեցական եղանակաց կազմութեան և զաշ-  
նակի մասին եղած եղծմանց գլխաւոր պատճառներուն վերայ

(1) Մեր խօսքը անոնց համար չէ որք բարեպաշտական ոգւով կը փախսին  
ու կը վարեն եկեղեցական երգեցողութեան պաշտօնը ձրիապէս ՚ի փառս Տեառն ,  
որոց մէջ կը գտնուին նաև մեծատոհմ աղգայինք , և ասոնք բնաւ չեն ուն-  
ցած նոյն յանգնութիւնը որ իրենց չգիտցած երգերը այլայլէն կամ ըստ  
քմաց փոփոխեն , այլ միշտ յարգած են վաղեմի պարզ սամուէրը և զանոնք  
զիտցողները քաջակերած : Արտի՛ գեղեցիկ աւանդութիւն մ'է սո՛ մեր Հայ-  
աստանեայց Ս . Եկեղեցւոյ մէջ ՚ի վաղուց անտի , որ ժողովրդեան մէջին եր-  
գեցողութեան հմուտ անձինք՝ ընդհանուր ժողովրդեան երգելիք երգերը իբր  
՚ի գիմաց նոցա կ'երգեն ձրիապէս , և այս սովորութիւնը ժողովրդեան առ իւր  
Ս . Եկեղեցին ունեցած սիրոյն գլխաւոր յօգակապէրէն մին է : Սակայն մեր

քանի մը դիտողութիւններ կ'ընենք, որչափ որ մեր փորձառութիւնը կը ներէ :

Ա. Անցեալ դարերու մէջ ինչ և իցէ կերպով եղած եղծումները 'ի բաց առնելով, այժմեան եղանակաց այլայլութեան և անհաստատութեան գլխաւոր պատճառներէն մէկը՝ եկեղեցական եղանակաց վերայ վճռող հեղինակութիւն մը չգտնուելն է. և քանի որ ասի չկայ, երգերու տարբերութիւնը վերնալ անհնար պիտի ըլլայ, իւրաքանչիւր որ իւր գիտցածը ստոյգ համարելով փոխել չուզելուն համար. սակայն այս հեղինակութիւնը գտնել շատ դժուար չէ. պէտք է ժողով մը գումարել և շարականի խաղերուն դիրքը և երգոց բանաստեղծական կազմութիւնը ուշագրութեամբ քրքրել, և ներկայ եղանակաց ամենէն հնադոյնն ու պարզը ընտրելով ասոնց հետ համեմատել, և եթէ յայտնի սխալներ կան՝ ուղղել և ասիկայ կանոն ընել, 'ի բաց թողով սովորութենէ յառաջացած նախապաշարումները. (այս մասին մեր կարծիքը տե՛ս և 'ի նախընթաց յօդուածն մեր) : Սակայն շատ եկեղեցական երաժիշտներ ունիմք, որք խաղերուն անունը լսելէն անգամ կը խորշին, չգիտնալով թերեւս որ եւրոպական (note) նօթ բառին համապատասխանող բուն հայերէն բառ մի է, և ձայնանիշ եղող գծերը կը ցուցնէ. յայնֆրոնիս բառը նոր է, և աւելի վերացեալ նշանակութիւն ունի. (աւելի յարմար է յայնանիշ բառը գործածել քան թէ յայնֆրոնիս բառը) : Խաղերու դրութիւնն առ ոչինչ համարողներէն ոմանք ալ կ'ուզեն փոփոխութիւն մտցընել երգերու ա՛յն տեղերը, ուր երբեմն բառերու արտասանութիւնը իրենց ականջին ծաղրական կամ մալորական կը թուի. զոր օրինակ. Անխախտելի կուսութիւն. Տաճար անխախտելի ըզքե՛զ մեծացուցանեմք. Կարճ՝ զանկեալքըս մեղօք քոյի՛ն սուրբ չարչա-

ցաւը անոնց համար է միայն, որք 'ի ցոյցս մարդկան վարելով սոյն պաշտօնը՝ գոնէ չեն աշխատիր ըստ կարելոյն ուսանիլ եկեղեցական երգերը, մինչդեռ դռեհիկ երգեր ուսանելու համար ամեն աշխատութիւն և զնչողութիւն յանձն կ'առնեն. կամ թէ չեն յարգեր եկեղեցական պատշաճը ու չգիտցածնին եւս ըստ քմաց երգել կը յանգգնին, որ գոնէ պարտ էր լռելին և գիացողին թողուին : Տեսած ենք շատեր ինչպէս և երաժիշտ դաստասներ, որք զիամամբ կ'այլայլեն եկեղեցական երգերու եղանակները, զորս իրենք չեն գիտեր, և իրենց գիտցած խաղերու եղանակներուն վերայ կը ջանան յարմարցնել զանոնք :



րանօք, և այլն . որոնք որպէս թէ եղած ըլլան անխախտ Գեղեկ կուսութիւն, անխախտ Գեղեկ ըզքե՛զ, զանկէսալքքս Գեղե՛ք Գեղե՛ն, և այլ շատ մը անհեթեթ և այլանդակ կարծիքներ, նաև և այս կամ այն վանկը շեշտելով կամ սղելով եղած խեղդատակ այլարանութիւններ և ուրիշ անլի առասպելներ ու պատմութիւններ, որ գուցէ ընթերցողաց շատերն ալ լրած են, և որոց վերայ հրատարակաւ խօսել անպատեհ կը համարիմք : Ասոնք պէտք էր մտածելն որ եթէ կայ երգ մը որուն շեշտը Թուրքաստանի մէջ Գեղեկ (խենդ) նշանակէ թերեւս այնպէս հասկացող գլուխներու համար, ուրեմն 'ի Ռուսաստան, 'ի Պարսկաստան, 'ի Հնդկաստան և յայլուր գտնուող ազգայինք ի՛նչ պէտք է ընեն, երբ նոյն տեղերու լեզուներով ալ ուրիշ բառ մը կամ շեշտ մը ուրիշ բան մը նշանակէ . և եթէ վերոյիշեալ դրութեամբ ասոնց ամեն մէկն ալ վտխել պէտք ըլլայ, ալ անկէ աւելի բարկունեան դաշնակ կարելի՞ է ըլլալ : Գիտելու արժանի է նաև որ երգերն իրենց դիրքովը և կանոնաւոր երգունին, և ոչ այս կարծեցեալ անտեղութիւնները կ'ըլլան :

Այս մէկ քանի գիտողութիւններն որ ըրինք, ոչ թէ այն գրախօսութեանց կարեւորութիւն մը տալու համար, այլ նախ՝ թէ գուցէ անուշաղիր և անտեղեակ անձանց ոմանց իրաւացի թուին ասոնք, և երկրորդ՝ ցուցնելու համար թէ մինչեւ ո՛ր աստիճան խեղճ վիճակի մէջ կը գտնուի այսօր մեր եկեղեցական երաժշտութիւնը : Սակայն երբ և իցէ եկեղեցական երգերու համար գիտողութիւն եղած ատեն պէտք է նկատել թէ ինչպէս որ ընթերցումը իւր առողանութիւնը՝ և բանաստեղծութիւնը իւր օրէնքներն ունի, նոյնպէս և երաժշտութիւնը որ թէ և բանաստեղծութեան օրինաց կը համաձայնի ըստ տեղոյն, այլ չի կրնար հպատակիլ (1) . մանաւանդ չափական այնպիսի երգոց մէջ, որոց ամեն տողն ալ մի և նոյն եղանակի վերայ կ'երգունին . զոր օրինակ .

(1) « Եթէ լի կորչաւու համար ոտանաւոր գրողը համեմատաբար գերի է չափի, ապա ուրեմն ևս, որի ոտանաւորը պիտի յարմարի երաժշտական խաղերի, բացարձակապէս ստրուկ է : (Տրուտու Ուէրէ . Տպ . 'ի Ս . Բեգերայ . 1864 . Աշխատ . Յովհ . Սահրատեանց : ) Թէպէտ և մեք այսչափն ալ չպահանջելով՝ կը փափաքիմք որ քերթողութիւնն ու երաժշտութիւնը իրարու գերի կամ ստրուկ չըլլալով, բնիկեր ու բարեկամ ըլլան : (Տանի . Բ . Տպ . Գր . )

Օրհ նե՛մք ըլլ քեզ ան լս կիցք ըն հայր որ դւայդ մի ա ծնի .  
 դո՞ր ա ուտ՝ քե ցեր 'ի դար ձուս՝ ըն մո՛ լս բեալ ոչ խա բին .  
 դար ձո՛ և զմեզ 'ի մե դաց որ դւոյ՛քո չար չա բա նօք :

Սոյն դաշնակով այսինքն երկրորդ վանկերը երկարով՝ այլ և  
 այլ ձայներէ յիսուն հաւի չափ ոտանաւոր երգեր կան . ուրեմն  
 ի՞նչպէս կարելի է փոփոխութիւն մը ընել (այն ալ առանց բա-  
 նաւոր պատճառի) , առանց խախտելու շարականի դաշնակին  
 մէկ հիմնական օրէնքը : Նոյնպէս և ուրիշ մասնաւոր ձեւեր ալ  
 կան , որոնք հիմնական օրէնքներ են , որոնց ամենէն ընդհանուրը՝  
 երկարէն յետոյ հինգ պարզ վանկով ընդ միջէլ կամ վերջաւորէն  
 է . զոր օրինակ . Երգ նոր 'ի ծննդեան ճշ պետան . Սնխախտելէ  
 կոտուելէն . Փըրկե՛լ զարարածքս 40 . Յաւո՛ւր ծննդեան սրբոտանայն .  
 Ի զդե՛ստ անկողողելէ . Տան ա՛ւեփիս աշխարհի . և այլն : Նաեւ՝  
 Օրհնո՛ւնիանս նրմո՛ հոգեւոր երգով . Տաճար անխախտելէ ըզե՛զ մեծա-  
 ցոսցանեմ . Յոյս սե՛ր և շահաւորս մեզէւ յաւեփեան . և այլն , և այլն .  
 և եթէ երբէք պէտք ըլլայ չափերու մասին ուղղութիւն մը ընել ,  
 պէտք է զդուշանալ ձեռնհասութենէ դուրս շեղելու համար .  
 վասն զի հին եզանակաց և խաղից՝ զրութեան մէջ ա՛յնողիսի կէ-  
 տեր կան , որք՛դ եռ քննութեան ներքեւ չեն ընկած . և ինչպէս  
 որ գրչադիր շարականաց խաղերուն ներքեւ եզած գրերուն հա-  
 մար կարծեր կինք (տե՛ս յերես 30 .) , թէ գուցէ ձայնից դօ-  
 րութիւնը ցուցնելու համար գործածուած ըլլան իրր մեղճ , ուժ-  
 քին , ծանր , յարտ , ( ք . Բ . Խ . Ծ ) և այլն , և ահա Ս . Երուսա-  
 ղէմի վանուց թանգարանը եզած գրչադիր մատենին մէջ՝ մեր  
 կարծեաց համեմատ բացատրուած կը գտնուիք զանոնք . ինչպէս .  
 Բ , բարձր . Դ , դարձ . Զ , զարկ . Ը , թանձր . Լ , լայն . Ծ , ծանր .  
 Կ , կամաց . Ե , յետ ձգէ . Զ , շատ . Կ , պինդ . Ը , սրէ . Գ , վերցո .  
 Կ , ցած . Դ , քաշ :

Հոս տեղ 'ի դիտողութիւն հետաքրքիր անձանց՝ կ'աւելցընուիք  
 նաև կարդա՛մը խաղերու անուններ և անոնց վերայ քանի մը տե-  
 ղեկութիւններ որք կը գտնուէին նոյն գրչադիր մատենին մէջ ,  
 ուր կայր նաև լատինական երաժշտական խաղերու վերայ հա-  
 մառօտ աղիւսակ մը զոր աւելորդ համարեցինք յառաջ բերել աստ :  
 Խաղերու սոյն անուններէն շատերը թէ և անսովոր , և սակայն  
 կը հաստատեն զրութիւնն միացեալ կամ բազադրեալ խաղերու  
 զորս ակնարկած էինք երրեմն . (տես յերես . 19—20 .) :



✓ . ~ ~ ~ ✓ ✕ ✓ w<sup>m</sup>

Վերադիր . Արաշեշա . Քարշ . Ստորագիր . Վանդ . Կուռ . Զուհիկի . Խաղ .

W W ✓ ~ B F W W W W W

Դո . Ծընկեր . Հար . Հարկորձա . Կորձա . Բեր . Բաղձկանակ . Աղանձակ .

ժ / 1. ~ . P P O O Ծ

Հարակ . Զայնդարձ . Հանգրոյ . Խուհձ . Բնաշարդ . Առանձնատար . Բնատար .

Յ ✓ . , ✓ . Յ O ~ ~ ~ P

Ծնատար . Շէշա . Զարկ . Դիր . Լերկ . Խանձ . Քաշ . Թուր . Սուր . Ծոյ .

o :f<sup>h</sup> ✓ B B / P W W W W

Բեր . Բենկորձա . Դակորձա . Եկորձա . Խաղ . Վերնախաղ . Ներքնախաղ .

f ~ w<sup>m</sup> ~ W / Ծ ✓ W

Ղուճ . Խորտակոյն . Քարքաշ . Փաթութ . Հոյուհայ . Թաշա . Ծընկիկ .

o ✓ W f<sup>m</sup> P / :f<sup>h</sup> W

Գլր . Բարձր հարեր . Վերքաշ . Միմաւոր . Փաշ . Կրակէ . Յեռ ձրէ :

Եթէ ոք այսպէս ձայնէյ . բերէ ✓✓✓է'է'✓այս ձայնս գա' .  
 Ի վեր ի սրահէն : Եւ մինչ ոքն վագէ ա<sup>W</sup>ա ա<sup>W</sup>ա ա<sup>W</sup>աւ<sup>W</sup>ւրհ-  
 նեալ է աէր . սա ի վեր գա' ի բոլոր բերանոյն որ կոչի  
 առ թուշն : Եւ մինչ ոք երգէ մի'✓ ի' իմ ի<sup>f<sup>m</sup></sup> ի<sup>W</sup>է  
 աէր , սորա ելք 'ի քմացն ի դուրս գան . Ով որ գոչէ  
 ա<sup>W</sup>ա<sup>W</sup>ա<sup>W</sup>ա<sup>W</sup>մ<sup>W</sup>ձլէլու . բերանն առու ի խոչակ գլխոյն և բախէ :  
 Եւ յորժամ ոքն վագիւ կոչէ . և առէ . է<sup>f<sup>h</sup></sup>է<sup>f<sup>h</sup></sup>է<sup>f<sup>h</sup></sup>ձձձ . սա 'ի  
 ծայրից ատամանոյն քարչէ ի դուրս զձայնն : Իսկ ոք մինչ երգէ  
 ը<sup>W</sup>ը<sup>W</sup>ը<sup>W</sup>նդ . քեզ է սկիզբն , սա զծայրի լեզուին շունչն  
 քարչէ 'ի վեր : Եւ մինչ առէ ոք ո<sup>W</sup>ձձւրախ լիցո<sup>f<sup>h</sup></sup>ֆ<sup>h</sup>մ<sup>W</sup>ւք .  
 սա զըրկու շուրթն առ իրեարս պնդէ զծայրսն : Եւ ապ'  
 աճին և բազմանան ի զանազան ձայնից տեսակս . . . զոր  
 ի մանկանց եկեղեցւոյ սակաւք զնոյն գիտեն . . . :

(այն ինքին լատինացիքն վերայ հրատարակելու) որ են թուով  
 ի՞նչ . է . ՚ի դոյցանէ գլխաւորք են ըստ է . եղանակաւոր  
 գրոյն որ են այս ա՛ . ե՛ . է . է . լ . (Տեսցեալն եղծեալ էր : ) (1)

Բ . Արդէն յիշեցինք թէ մեր եկեղեցական եղանակաց մաս-  
 նաւոր տարբերութիւնները ազգային ձեւեր են և անոնցմով  
 կ'որոշուին միւս արեւելեան եղանակներէն , սակայն մեր երա-  
 ժիշաներուն մեծ մասը միշտ կ'ուզեն ամեն կերպով նմանցընել  
 զատոնք արարական՝ մանաւանդ ինչէ սուր ըսուած մեզի ու թոյլ  
 եղանակներուն , կարծելով թէ մեր քչ եղանակը բուն հիւսիսն է ,  
 քչ եղանակը հիճու , և քչ եղանակը սաղմունք են , վասն զի անոնց  
 նմանութիւնն ունին . այլ միթէ արեւելեան ամեն ազգաց եղա-  
 նակներն ալ իրարու յիշեա այս նմանութիւնը չունին . և բուն իսկ  
 թուրքականին մէջ փոփոխուող , շարժեալն ու սաղմունքը աւելի մօտ չեն  
 իրարու քան զմեր քչ եղանակն ու հիճու . ո՛չ ապաքէն իսլամական  
 եղանակը տեսակ մը նեղու է , գուցէ իսլամականացուց նեղուն : Ասոնք  
 և նմանները ուրոյն եղանակ ճանչցուած ատեն , ի՞նչ հարկ կայ

(1) Թեպէտ և մինչև ցարդ կան ոմանք , բայց երբեք մանաւանդ  
 սակէ քառասուն յիսուն քարոյ չափ յառաջ մեզնէ շատերը մտադիր եղած են  
 մեր եղանակները յունականին վերայ սրբադիւր կամ քիչ շատ հետեւիլ նոցա ,  
 կարելի է կարծելով թէ մեր նախնիք ալ յունաց հետեւած են այս մասին :  
 Սակայն թողով այս խնդիրը՝ թէ մեր նախնիք մինչև ո՛ր աստիճան հետեւած  
 են յունականին և ո՛ր կէտերու մէջ , որ շատ դժուար է որոշել այսօր , մեր  
 կ'ըսեմք թէ քանի որ մեր ներկայ եղանակները յատուկ կազմակերպութիւն մը  
 ունեցած են , իրենց ծագումն ի՞նչ որ ու ըլլայ , ներկայ ձեւերնին իբր աղ-  
 դային ձեւ պէտք է յարգել և անկողմ պահել . այլ խնդիր է թէ երբեմն  
 պէտք ըլլայ օտար երաժշտութեան կարծիք առնել և կամ իբր ուսումն աւան-  
 դել զայն : Սոյն յունական հետեւողութեան մէկ փոխարն է՝ Վեստարցի Գրի-  
 դոր գայիւրն Գատրասպալեան որ ՚ի թուին 1794 և 1808 հրատարակած է երկու  
 հատ երաժշտական տաղարաններ , որոց մէջ կը խօսի հայկական և յունական  
 ձայնանիշներու և տաճկական երաժշտութեան վերայ : Թէ և մեր շատ աշխա-  
 տած և չեմք կրցած գոհացուցիչ օրհնակութիւն մը առնուլ ասանցմէ , շատ ճա-  
 պաղ , մթին և պակասաւոր գրուած ըլլայնուն համար , այլ այսու ևս հարկ է  
 շնորհակալ ըլլանք սոցա հեղինակին որ այս խնդրոյն պետքն զգացեր և իւրով-  
 սանն աշխատեր է . քանզի և Հայերէն տաղարութեան սկզբնաւորութեանն  
 մինչև մեր օրերը՝ մի միայն հեղինակն է սա՛ որ եկեղեցական երաժշտութեան  
 վերայ ըրած հրատարակութեամբը Ծանօթ է մեզ : (Ծանօթ . Բ . Տղար : )



մեր եղանակներուն մասնաւորութիւնը միայն սխալ համարել և թուրքականին վերայ սրբադրել այն մասնաւոր ազգային ձեւերը որք երաժշտական օրինաց ալ դէմ չեն . ինչ ապացոյց կայ հաստատելու թէ մեր եկեղեցական եղանակները բոլորովին ներկայ արաբական աղբիւրներէն առնուած են , կամ մի և նոյնն են , կամ պէտք է ըլլան , ինչպէս որ կը կարծեն մեր երաժշտաց շատերը : Եթէ մեր եկեղեցական եղանակները՝ չըսենք սրբոց Թարգմանչաց , ինչպէս կը սիրենք հաւատալ , այլ և եթէ Ս . Շնորհալուոյ և կամ Յ . Եղնկացւոյ օրերէն աւանդաբար առ մեզ հասած են , ապա ուրեմն ինչ հարկ կայ որ ինքզինքնիս բռնադատենք հաստատելու համար թէ մեր նախնիք ալ թերեւս իրենց անծանօթ հիւսէյնի և հիճաղի ներկայ եղանակներով երգած ըլլան իրենց վսեմ երգերը . քանզի եկեղեցական եղանակներուն այս աւանդական հնութեան կարծիքն անգամ բաւական լինելու էր մեզ որ յարդէինք մեր եղանակաց ո՛ր և իցէ մասնաւորութիւնքը և անեղծ պահէինք դանոնք :

Թէ՛ այս և թէ՛ եղանակաց կազմութեան մասին ալ օրինակներ յառաջ բերել կարելի է , սակայն առաջին հատուածին մէջ ըսածնիս եղանակաց համար ալ պէտք է իմանալ , այսինքն թէ երբ պէտք ըլլայ եղանակ մը գրել կամ ընդհանուր երաժշտական օրէնքի դէմ եղած սխալ մը ուղղել , պէտք է զգուշութեամբ յարգել շարականի եղանակաց ձեւերը , առանց որոյ չեն կրնար ազգային ըսուիլ մեր եկեղեցական եղանակները :

Գ . Ինչպէս որ ուրիշ ատեն ըսած եմք , դարձեալ կը կըրկնեմք թէ մեր եկեղեցական երգոց խանդարման մէկ գլխաւոր պատճառն ալ՝ եկեղեցոյ մէջ նոր եղանակներ մուտ գտնելն է : Ո՛վ որ ալ ըլլայ՝ թէ և չափաւոր հմտութեամբ մէկը , կը համարձակի փոխել երգի մը եղանակը . թէ և նախկին եղանակը սխալ ալ չըլլայ , այլ քանզի հին է , ուստի պէտք է փոխել . հետեւաբար ոչ միայն ժողովուրդը՝ այլ և այս մասին ևս ուղղակի նախանձախնդիր ըլլալու պարտքն ունեցողները՝ այս եղծումը յառաջադիմութիւն կարծելով կը խարուին , և կը սխալն նոր եղանակներ պահանջել , և երաժշտի մը հմտութենէն աւելի նորասիրութիւնը և երգածին պայծառութիւնը բնտուել , թէ և նորա եղանակները եկեղեցւոյ անպատշաճ ըլլան , թէ և ազգային ճաշակ չունենան : Այո՛ , եկեղեցւոյ մէջ երգելու համար չափաւոր ձայն մը գոնէ

պէտք է, սակայն խնճոյքի նուագածութիւն մ'ալ չըլլալով այս, պէտք է կանոնաւոր հմտութիւն, թէ՛ եկեղեցական երգոց եղանակաց և իմաստին և թէ՛ արարողութեանց և եկեղեցական պատշաճից. և եթէ երգողին հմտութիւնը պակաս ըլլայ գոնէ աւանդապահ ըլլալ գիտնայ: Այլ ասոնց հակառակը տեղի ունենալով և երգողները միայն զժողովուրդը զբօսցընելու զբաղելով, այս պաշտօնն ալ իւր պատիւը և բարոյական արժէքը կորուսանելով մասնաւորաց հաճոյիցը ենթարկուեր է:

Բաց 'ի վերոյիշեալներէն՝ մեր եկեղեցական երաժշտութեան խանգարմանը պատճառ եղող քանի մը կէտեր ևս կան, որք ուշադրութեան արժանի են. ինչպէս է՝ եկեղեցւոյ երգեցողութեան գրեթէ բոլորովին տղայոց վերայ թողուիլը, որ շատ հին սովորութիւն ալ չէ: Ասով ալ շատ անգամ երգերը կը խանգարին. վասն զի շատ մասնաւոր բացառութիւններէ զատ՝ տղայոց ոչ կարողութիւնը և ոչ ժամանակը կը ներէ՝ երգ մը պէտք եղածին պէս ունենլու կամ եղանակին զօրութիւնն զգալու. հետեւաբար երգերը շատ անգամ տղայոց ըմբռնմանը կամ ընդունակութեանը կը յարմարցուին, որով երգերու շատին վսեմութիւնը անզգալապէս կը կորսուին օր ըստ օրէ: Տղայոց երգելուն լաւութիւնը գլխաւորապէս ձայներնուն փափկութիւնն ըլլալով, այն ալ կարծես թէ միայն զուարճութեան առիթ մը դարձած է (1): Թէ և եկեղեցական խնդիր մը համարուի, այլ երգի վերաբերելուն համար կը յիշեմք նաեւ թէ երգերու գործածութեան մասին եկեղեցւոյ մէջ ալ քանի մը անկանոնութիւններ կան. զոր օրինակ, երգի մը՝ մի և նոյն ատեն երբեմն ծանր և երբեմն յորդոր երգելու ստիպումը՝ որով երգերու դաշնակը 'ի հիմանց կը քանդի. և կամ այս ինչ երգը թողլով՝ ուրիշ երգ մը երգել տալու սովորութիւնները՝ և այլն, հակառակ տօնացոյցի հրահանգին, այնպէս որ շատ եկեղեցի իրեն համար մասնաւոր ոճ մը ունի ժամասացութեան:

Այս նիւթին վերայ մինչ աստ ցուցուած օրինակներն բաւական ըլլալով՝ ևս մանրամասն պարագայներ յառաջ բերել աւելորդ կը համարիմք. սակայն մեր խօսքը վերջացընելէ յառաջ՝ քիչ մ'ալ ազգային նոր երգոց վերայ պէտք է խօսիմք:

(1) Ձայնաւոր մանկանց մասին ևս խօսել թէ և կարելոր էր, սակայն սերիշ առթի կը թողումք:



Նախ՝ ասոնց նիւթերուն մեծ մասը միօրինակ են, Հայաստանի և Սահմանադրութեան վերայ, ու շատ քիչ կը գտնուին զգացման, կրից և բնական գեղեցկութեանց վերայ երգեր. եղածներն ալ կա՛մ գրարառ են կա՛մ շատ բարձր ոճով, որով և ընդհանրութեան անիմանալի: Ըստ մեզ, պէտք էր որ ազգային բանաստեղծք՝ ազգային գրականութեան համար աշխատած ատեն, քիչ մ'ալ ուշադիր ըլլային ժողովրդեան արդի կեանքը և տեսիլները յարգել, և պէտք եղած ատեն անոր նախապաշարմունքէն անգամ իրենց նիւթ առնելով՝ նորա բարոյական և ընկերական կենաց ուղղութիւններ տալ, պարզ ու դիւրիմաց ոճերով ընտանի երգեր երգելով, որպէս ըրած են Սէյեսաթ, Թաղիադեանց, Նահապետն և Խ. Ս. Ս. Բովեան, որ այս մասին ընդարձակ կը խօսի Վէրտ Հայաստանի յառաջաբանին մէջ. (Տպեալ 'ի Տիգրիս 'ի 1838): (1)

Ժողովուրդ մը որչափ ալ իւր ազգը, իւր նախնեաց յիշատակները, իւր վարչական օրէնքը և ասոնց վերաբերեալ երգերը սիրէ, տակաւին իւր ներկայ կեանքին և զգացման համեմատ երգեր կ'ուզէ, և քանի որ ասիկայ չկայ, ի՛նչ իրաւունք ունի՞ք պահանջելու որ զուարթութեան մէջ դրօսանք և տխրութեան մէջ սփոփանք բնտուած ատեն, շարժի, հանի, կամ շինի Ֆերհաթ ու աչքի զարեօ երգելու տեղ միշտ արէ՛ք հոյսալուծ կամ ֆարսան Հայաստան երգէ: Անիրաւութիւն է ըսել թէ ժողովուրդը ազգային զգացում չունենալուն՝ ազգային երգ չսիրեր. վասն զի ժողովուրդը ազգասէր ըլլալու համար մարդ ըլլալէ չկրնար դադրիլ հետեւաբար միայն պատմական ու վարչական երգերով չկրնար ապրիլ:

Երկրորդ, ասոնց եղանակներուն մեծ մասը եւրոպական են, և զուրկ ազգային և արեւելեան ճաշակէ, ու նաեւ դժուար՝ որ հազիւ թէ ճիշդ կրնայ երգուիլ: Երբէք չէ՞ մտածուած արդեօք որ ամեն ժողովուրդ իւր ընդունակութեան աստիճանն ու մասնաւոր ճաշակն ունի, և ամենէն կոշտ ժողովուրդն ալ իւր սըրինգը իտալական երգէոնին հետ չփոխեր. և եթէ հարկ ալ ըլլայ ազգի մը ճաշակին մէջ փոփոխութիւն ընել, այն ալ միայն

(1) Ստորը խօսելով հայերէն ժողովրդական երգեր բուսիաբանի Հայոց մէջ աւելի ճիշտ կը գտնուին քան Թուրքիոյ Հայոց մէջ:

իրեն ընտանի եղած բաները մշակելով կ'ըլլայ, և ոչ թէ մեզրամտի նման շուտ մը կը ձուլուի, զոր և ոչ աշխարհակալք կրցած են ընել :

Այս նկատումները չըլլալուն, մինչեւ հիմայ ալ եղած մեր երգերը թէեւ ամեն վարժարանաց մէջ դաս կը տրուի և ամեն ազգային հանդէսներու մէջ կ'երգուի, (այնչափ ալ ուրիշ առջաց մէջ նմանը չտեսնուած յաճախութեամբ և ամեն աննշան առիթներու մէջ, որ մեր ձայնաւոր մանկունք կարծես երգեցիկներու խումբ մը ըլլային, ) այսու ամենայնիւ այս երգերն դարձողի սեմէն դուրս չեն կրցած ելնել և ընտանեկան կենաց մէջ մուտ գտնել. ազգային երգոց սիրահարներուն անգամ շատը շարժներով ու ծանօններով դրօսներէ 'ի դատ, կան նաեւ որք գումարներ ալ կը մ'ստեն ասոնց համար : Ազգային երգ թերեւս եղանակներուն համար երբեմն եւրոպական երաժշտութիւն եղած տեղեր և կամ քանի մը մասնաւորաց տուները կը լսուի, որ այս ալ ազգային նշանակութիւն չունի : Ահա մեր ազգային նոր երգոց պատկերը : Ասոնց ամենուն վերայ մեր կարծիքը սա՛ պէս կրնամք ամփոփել :

Քանի որ քիչ շատ ազգային դրօշ ունեցող երաժշտութիւն մը միայն եկեղեցւոյ մէջ ունիմք, և ազգին այժմեան վիճակին մէջ եկեղեցիէ դատ կեդրոն մ'ալ չկայ, ուր հաւաքուին ամեն կարգի ժողովուրդք, և ուր տեղ միայն կարելի է կանոնաւոր երաժշտութեան գեղեցիկ ճաշակը ընդհանրութեան մէջ տարածել, ուստի մէկ կողմէն այս երաժշտութեան դարգացմանը և եկամուտ եղանակներով եզմանէ զերծ մնալուն աշխատելու, միանգամայն սոյն եղանակաց այն մասնաւորութիւնները որ երաժշտական օրինաց դէմ չըլլալով ազգային ձեւեր են՝ պահելու փոյթ տարածատեն, միւս կողմէն ալ ազգային մասնաւանդ ընտանեկան երգոց համար առանց ամեն օտար եղանակաց կապիօրէն նմանելու, արեւելեան այնպիսի եղանակները պէտք է ընտրել, որք մեր ազգին ընդունակութեանը յարմար ըլլալով՝ նաև եւրոպական դաշնակի ալ կը յարմարին, և ասոնց վերայ պէտք է նուազել զիւրընտել ու սահուն ոճերով հայերէն երգեր, որ ընդհանուր ժողովուրդին հաճելի կ'ըլլան . բաց 'ի ասկէ նաև գրաւոր երաժշտութիւնը՝ հանդերձ տեսական գիտութեամբ, և չափերուն (ամանակի) գործնական կանոնները եթէ կարելի է դռնէ ամեն



երաժիշտ դասատուներու ուսցընելու փոյթ տանիլ : Ասոնք ընելու համար այնքան մեծ դժուարութիւն չկայ, քանի որ ձայնական երաժշտութեան դասը ամեն դպրոցաց մէջ կայ արդէն, միայն թէ յատուկ ուշադրութիւն ընելով՝ կանոնաւոր ուղղութիւն մը տալու է այս ուսման : Այս կերպով ժողովրդեան մէջ կրնայ ընդհանրանալ գեղեցիկ երաժշտութեան ճաշակը ; և թերեւս օր մը գտնուի հանձար մը՝ որ ազգային երաժշտութեան նոր ոգի և կենդանութիւն տայ, և մինչեւ ասոնք չըլլայ, թէեւ ազգային երգ կ'ունենամք, վասն զի գրականութիւն ունիմք, այլ ազգային երաժշտութիւն երբէք և պոփոյն երաժշտութեան, պոփոյն երգ և պոփոյն երաժշտութեան առեւտրէն ալ ցամաք բառեր, և մեր ազգայինք ալ տեղ մը հանէնք, տեղ մը շայնք և տեղ մ'ալ թատրոնի դերասան պիտի մնան :

Ինչպէս և արդէն ըսինք, սոյն դիտողութիւնքը մասնաւոր հետաքրքրութեամբ հաւաքած ըլլալով կը յուսամք որ թերեւս առիթ ունենամք օր մը ասոնց գործնական մասին վերայ ալ տեղեկութիւններ հրատարակել : Սիրելի է մեզ հաւատալ որ ոչ միայն ազգային երգիչք և դասատուք, որոց պարաքն է 'ի մտոց հոգ տանիլ այս մասին, այլ և եկեղեցականք և դրագէտք եւս երբեմն իրենց ուշադրութիւնը պիտի դարձնեն այս առարկային վերայ : Իսկ մեք կը յայտնեմք ահա՛ որ այս նիւթին վերայ թէ՛ անձամբ և թէ՛ թղթակցութեամբ ինչ հարցում և առարկութիւն որ ըլլայ՝ պիտի ընդունիմք ու մեր կարծիքը յայտնեմք :

Եւ եթէ ոմանց աւելորդ թուի ազգային երաժշտութեան վերայ այսքան կարեւորութիւն տալ, կը յիշեցընեմք ըստ Անդրիւայի հեղինակի մը թէ «Նովին ո'ր կողմէն փշեղն իմանալու համար ոչ թէ քար մը՝ այլ փետուր մը կը նետուի օդին մէջ, նոյնպէս և ժողովուրդի մը ոգւոյն ուղղութիւնն ոչ թէ ծանր պատմութիւններով՝ այլ թեթեւ երգերով կ'իմացուի» . ինչպէս և քաղաքական յանցանաց կասկածներով բանտարկեալ ժամանակակից անմեղ հանձար մ'ալ լսելով բանտին մէկ ուրիշ կողմէն իրեն վիճակակից մէկուն սրտաշարժ ու վսեմ կերպիւ երգելը, ըսաւ . «Այն սիրուն՝ ուրկէ այս ձայնը կ'ելնէ, չկրնար չար սիրտ մը ըլլալ» . վասն զի «Չարերը երգ չունին» կ'ըսէ Շիլլէր :

# Ե Լ Ե Ի Է Զ Ք

Ինչպէս որ խոստացած եմք 'ի ծանօթութեանն՝ յերես 48 , կը յաւելումք աստ մի քանի տեղեկութիւն՝ արեւելեան ու արեւմտեան երաժշտութեան ձայնից ելեւէջներուն վերայ :

Շատ անգամ կը հարցո՞ւի թէ արդեօք արեւելեան եղանակներն ալ արեւմտեան եղանակներուն պէս քանի մը տարրեր ձայներէ ներդաշնակութեան շէն յարմարիր : Այս հարցման պատասխանելու համար հարկ է երաժշտական ձայնից ելեւէջներուն վերայ քանի մը տեղեկութիւն տալ :

Ըստ բնական օրինաց , մարմնոյ մը օդին հետ բաղխուելն՝ շրջակայ օդին մէջ ճօճում մը կը պատճառի , ուրկէ յառաջ կու գայ ձայնը : Չայն մը որչափ որ բարձր է , նորա ճօճումն ալ այնչափ շատ է , և փոխադարձաբար : Չայներու սոյն ճօճումները յատուկ դործիքներով չափած ու դտած են բնագէտք , և ասով երաժշտական ձայներուն իրարու հետ ունեցած համեմատութիւնը որոշած են : Յաճ ֆօ ձայնը 420 ճօճում ունի . բայց որպէս զի կոտորակաւոր թիւեր չլատահին , 48 թիւը դործածեցինք մեր աղիւսակին մէջ՝ փոխանակ 420 ի :

Եւրոպական երաժշտութեան մէջ ձայնից ելեւէջները վերոյիշեալ օրինաց վերայ հիմնեալ են , և երկու հիմնական ելեւէջ հետեւաբար և երկու եղանակ կը կազմեն , որք են Բլէօր (առողջ) և Բօթէօր (թոյլ) :

Եւրոպական մասէօր եղանակը ֆօ ձայնաստիճանէն և մինչ օր եղանակը ւ՛ ձայնաստիճանէն կը սկսին հիմնապէս . բայց մեք որպէս զի կարող ըլլամք համառօտ և որոշակի ցուցնել ձայներու ելեւէջները , ձայնաստիճաներու անունները չդնելով աստ , միայն ելեւէջքի ձայներու ճօճմանց թիւերովը պիտի ցուցնեմք , ըստ արեւմտեան բաժանման , ինչպէս կը տեսնուի ձայնաստիճաններու աղիւսակին մէջ թէ՛ ձայներու անունները և թէ՛ անոնց ճօճման թիւերը :

Մօթէօր .

$$48 + 6 = 54 + 6 = 60 + 4 = 64 + 8 = 72 + 8 = 80 + 10 = 90 + 6 = 96$$

Մէնէօր .

$$40 + 5 = 45 + 3 = 48 + 6 = 54 + 6 = 60 + 4 = 64 + 8 = 72 + 8 = 80$$

Եւրոպական ամեն եղանակներ սոյն երկու ելեւէջներուն վե-



իոյ հիմնեալ են և ըստ այնմ իրենց ձայնաստիճանները 15 կիսաձայններէ կը բաղկանայ . սոյն օրէնքին վերայ հիմնուած է և իրենց եղանակաց տարբեր ներդաշնակ ձայներով երգուելուն կանոնները :

Իսկ արեւելեան ելեւէջներն ու եղանակները սովորութենէ ծագած ըլլալով՝ ոչ թէ միայն եւրոպական ելեւէջին շեն նմանիւր , այլ և ամեն եղանակ իրենց համար յատուկ ելեւէջ ունին , և մինչեւ անգամ կան եղանակներ որք մի և նոյն ձայնաստիճանի վերայ ըլլալով եւս՝ ամեն մէկը զատ զատ ելեւէջներ ունին : Որուն պատճառը կարելի է այն ըլլայ թէ արեւելցիք որք որ և իցէ խնդիր բազմաթիւ ճիւղերու բաժանելով վարդապետելու սովորութիւնն ունէին , իրենց եղանակաց համար ալ ձայնանիշ խաղեր չունենալով , եղանակներու այլ և այլ դարձուածքներն ու ձեւերը իրր զատ եղանակ բաժնել և ըստ այնմ ուսուցանել սովորութիւն ըրած են . և հետզհետէ սոյն մասնաւոր ճիւղերը առանձինն եղանակներ եղեր են . միանգամայն այլ և այլ ազգաց երաժշտական ձեւերն ու ճաշակները իրար խառնուելով՝ այժմեան արեւելեան եղանակները գոյացեր են . սոյնպէս կարելի է մեկնել և արեւելեան երաժշտութեան մէջ ամանակներու և ձայնաստիճաններու անուանց ստուարութեան պատճառը . վասն զի արեւելեան եղանակաց ձեւերովը մասնաւոր կտորներ արեւմտեան եղանակաց մէջ ալ կան , բայց իրր ձեւ միայն կը գործածուին ըստ տեղոյն և ոչ իրր եղանակ , հետեւարար և անոնց համար յատուկ ելեւէջներ չկան՝ արեւմտեան երաժշտութեան մէջ :

Յստիմ յառաջ բերեմք աստ նաեւ արեւելեան ելեւէջներէն ալ քանի մը օրինակներ . բայց նախ պէտք է ըսենք որ ինչպէս կ'երեւայ Ձայնաստիճաններու աղիւսակին մէջ , յերես 45, արեւելեան երաժշտութեան ելեւէջը ոչ թէ 15 կիսաձայն աստիճաններէ կը բաղկանայ ըստ եւրոպականին , այլ 15 կիսաձայն աստիճաններէ . ուստի և մեք սոյն արեւելեան ելեւէջները իրենց ճօճման թիւերովը պիտի ցուցնեմք , ինչպէս որ ցուցինք արեւմտեան երաժշտութեան ելեւէջն ալ իւր թիւերովը :

$$\text{Տաժ. } 48+6=54+6=60+4=64+8=72+8=80+10=90+8=98$$

$$\text{հէճը. } 40+2=42+9=51+3=54+6=60+3=63+9=72+8=80$$

$$\text{պոհէ. } 40+4=44+4=48+3=51+9=60+3=65+9=72+8=80$$

$$\text{սէճ. } 40+4=44+4=48+6=54+6=60+3=63+9=72+8=80$$

Ահա վերոյեղեալ ձայներու ճօճմանց թիւերէն յայտնի կ'երեւի որ արեւելեան ելեւէջները արեւմտեանին չեն համապատասխանէր, հետեւաբար և անոր նման ներդաշնակութեան չեն յարմարիր . կարելի է նմանողութիւն մը գոյացնել, այլ ոչ բոլորովին յարմարութիւն : Բայց ենթադրեմք թէ թերեւս սոյն տարբերութիւնը՝ ձայներու ճօճման թիւերուն ըստ արեւելեան բաժանման եղած տարբերութենէն յառաջացած է, ուստի և բաղդատեմք վերոյեղեալ արեւելեան եղանակներէն մէկը՝ ըստ արեւմտեան բաժանման եղած ճօճման թիւերու կարգին հետ . զոր օրինակ .

Մ<sup>ա</sup>ժէօր .

$$48 + 6 = 54 + 6 = 60 + 4 = 64 + 8 = 72 + 8 = 80 + 10 = 90 + 6 = 96$$

Հիճալ :

$$40 + 2\frac{1}{2} = 42\frac{1}{2} + 8\frac{1}{2} = 51 + 5 = 54 + 6 = 60 + 4 = 64 + 8 = 72 + 8 = 80$$

Ահա դարձեալ տեսնուեցաւ որ արեւելեան ելեւէջները արեւմտեանին կարգը չունին թէ և արեւմտեան ձայնից ճօճման թիւերովն ալ կարգադրուին : Բայց կան արեւելեան այնպիսի եղանակներ որք զիպուածաբար ըստ բաւականին կը յարմարին արեւմտեան ելեւէջին, հետեւաբար և անոր ներդաշնակութեան . զոր օրինակ .

Մ<sup>ա</sup>ժէօր .

$$48 + 6 = 54 + 6 = 60 + 4 = 64 + 8 = 72 + 8 = 80 + 10 = 90 + 6 = 96$$

Րոսոս .

$$36 + 4 = 40 + 4 = 44 + 4 = 48 + 6 = 54 + 6 = 60 + 6 = 66 + 6 = 72$$

Աճէճ — աշբան .

$$65 + 9 = 72 + 8 = 80 + 4 = 84 + 12 = 96 + 12 = 108 + 12 = 120 + 6 = 126$$

Հիմա սոյն արեւելեան եղանակներէն մէկը՝ ձայնից ճօճումներուն արեւմտեան բաժանման կարգին վերայ եւս եթէ բաղդատեմք, կը տեսնեմք որ արեւմտեան ելեւէջի կարգին հետ աւելի մօտադոյն կու գայ . զոր օրինակ .

Մ<sup>ա</sup>ժէօր .

$$48 + 6 = 54 + 6 = 60 + 4 = 64 + 8 = 72 + 8 = 80 + 10 = 90 + 6 = 96$$

Աճէճ — աշբան .

$$64 + 8 = 72 + 8 = 80 + 5 = 85 + 11 = 96 + 12 = 108 + 12 = 120 + 8 = 128$$

Ինչպէս որ մինչեւ ցարդ յայտնի եղաւ, արեւելեան եղանակներուն արեւմտեանէն ունեցած տարբերութեան պատճառը



որ այնչափ իւր ձայներու ճօճմանց թիւերուն տարբերութիւնն է որչափ որ իւր եղանակաց և ելեւէջներու շատութիւնը և ասոնց կազմութեան այլաձեւութիւնը . վասն զի կոն եղանակներ եւս , որոց ելեւէջներուն մէջ մանր փոփոխութիւններ մտած են՝ նաեւ մօտ ժամանակներս , մանաւանդ եւրոպական երաժշտութեան յարեւելս մուտ գտնելէն ՚ի վեր :

Ինչ որ մածէօրին համար ըսինք , նոյնը պիտի խմանամք և մինչօրին համար եւս : Կան քանի մը արեւելեան եղանակներ ալ որոցմէ են քուսեւէք և նեհալէնք ըսուած եղանակները որք ըստ բաւականին կրնան մինչօր ելեւէջին յարմարիլ , բայց ասոնք ալ դիպուածական են , և հետեւաբար արեւելեան մնացեալ բազմութիւ եղանակները եւրոպական եղանակաց հետ կատարեալ համեմատութիւն մը չունին :

Սոյն արեւմտեան ելեւէջին , ձայնից ճօճման օրէնքներուն , վերջապէս ձայնի փիլիսոփայութեան վերայ ընդարձակ տեղեկութիւն ուզողը կրնայ գտնել բնագիտութեանց , եւրոպական երաժշտութեան վերայ ճառող դասագրքերու և երգարանաց մէջ :

Իսկ արեւելեան եղանակներուն կազմութեանը և ներկայ դրիցը նկատմամբ ընդարձակ տեղեկութիւն առնելու համար առ ձեռն պատրաստ միջոց մը չունիմք , բաց ՚ի եղանակները հետազօտելէ : Ասոնց կազմութեանը մէջ կը նշմարուի՝ իրարմէ ածանցում մը որ շատ եղանակներու ելեւէջին կազմութեանը մէջ յայտնի կ'երեւի . եթէ ասոնք ըստ օրինի քննուին և իրենց պարզ ձեւերուն վերածին , յայնժամ աւելի որոշ կերպիւ երեւան կ'ելնէ ասոնց մէջ դառնուած այն գեղեցիկ ու բնական ձեւերը որք անշուշտ սիրելի են նաեւ եւրոպացւոց :

Ե . Մ . ՏՆՏԵՍԵԱՆ

# ԱՄ ԱՆ Ա Կ Ք

## ՈՏԱՆԱՆՈՐԱՅ ԵՒ ՉԱՓՈՒՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆԱՅ

Ոտանաւորի և երաժշտական ամանակներու չափերը ցուցընելու համար հայերէն երկու բառ և երկու նշան կայ, Մուշ<sup>օ</sup> և Երկուր : Մուշն է (1) սովորական վանկը, և երկարը անոր կրկինը, այսինքն՝ երկու սուղի տեւողութեամբ : Ասոնցմէ բաղադրուած են ուրիշ չափեր ևս, այլ և այլ տեսակ ոտանաւորներու երգեր չափելու համար :

Մուշ, Երկուր .

Մուշ, աղօր (breve) է հասարակ վանկ, կարճ կամ ձայնաւոր . միավանդ . միամանակ . որդոն . իմ, է, այս, տուն, և այլն :

Երկուր . է երկար վանկ (longe) . միավանդ . երկամանակ . որդոն . Տուր, ինձ, ո՛վ, տէ՛ր, և այլն : Այն երկուքէն կը բաղադրին և յետագայքդ :

## ՉՈՅԳ ՎԱՆԳԻՔ

Անգայր, Երկանգայր .

Անգայր . որ ունի զերկուս սուղս . երկավանդ . երկամանակ, որդոն . Ար թուհ, բարի, հը զօր, տէր իմ, և այլն :

Երկանգայր . որ ունի զերկուս անգայրս . քառավանդ . քառամանակ . որդոն . Երանե լին, տմե նե ցուն, տէր սուրբ գրի գոր, անուն ար թուն, և այլն :

Համբայր, Իրկհամբայր .

Համբայր . որ ունի զերկուս երկարս . երկավանդ . քառամանակ . որդոն . Մա՛ զի՛կ, սլա՛յ ծա՛ն, յե՛րկ ըի՛, ցո՛ւ ցա՛ւ, և այլն :

Երկհամբայր . որ ունի զերկուս համբայրս . քառավանդ . ութամանակ . որդոն . Լո՛ւ սա՛ւ ո՛րեա՛, կ՛ ըո՛ւ սա՛ զի՛մ, քա՛ն զի՛ յա՛ ըեա՛ւ, լո՛յս քո՛ քրիստո՛ս, և այլն :

(1) Շարահանաց մէջ գործածուած սուղը չէ այս . վասն զի հոն տեղ ոչս անունը յուր կը նշանակէ . այս Սուղ օ նշանին թիւ ոտանաւորներու մէջ գործածութիւնը ընդհանուր չըլլալուն համար մեք ևս չգործածեցինք սաս . միայն երկար՝ նշանը գործածեցինք՝ սուղ և երկար վանկերը իրարմէ որոշելու համար : Այս մտոն տե՛ս և ՚ի ծանօթութիւնն յերես 21 :



## Մեծասար, Մեծազէրջ.

Մեծասար. որ ունի զառաջին վանդն երկար և յետինն սուղ. երկավանդ. եռամանակ. որդոն. Ե՛ր գեմք, ա՛յ սօր, նո՛ր երգս, ա՛նեալ, և այլն :

Մեծազէրջ. որ ունի զառաջին վանդն սուղ և յետինն երկար. երկավանդ. եռամանակ. որդոն. Գա՛րո՛ւն, շնոր հա՛ց, ՚ի մե՛զ, ծա գեա՛ց, և այլն :

## ԿՈՃԱՏ ՎԱՆԳԻՔ

## Ներքեա, Սո՛ս.

Ներքեա. որ ունի զերիս սուղս. եռավանդ. եռամանակ. որդոն. Ա՛րեւելք, դերար լիին, օթա՛րան, լուսա՛ծին, և այլն :

Սո՛ս. որ ունի զերիս երկարս. եռավանդ. վեցամանակ. որդոն. Ա՛շխարհի՛, ո՛ղո՛ր մեա՛, մա՛րդա՛ սէ՛ր, տէ՛ր գը՛թա՛ծ, և այլն :

## Սորեղն, Վերջաբանջ.

Սորեղն. որ ունի զառաջին մի վանդն երկար և երկու յետինքն սուղ. եռավանդ. քառամանակ. որդոն. Ա՛րդա՛րոց, ցը՛ն ծու թիւն, ե՛ս քրիս տոս, ա՛ն տըւած, և այլն :

Վերջաբանջ. որ ունի զառաջին երկու վանդն սուղ, և յետինն երկար. եռավանդ. քառամանակ. որդոն. Հա՛իս սիմէ՛, մեծ խոր հո՛ւրդ, և ա՛նո՛ւն, ցանկալի՛, և այլն :

## Հաւեղ, Ասորոեղ.

Հաւեղ. որ ունի զառաջին երկու վանդն երկար և յետինն սուղ. եռավանդ. հնգամանակ. որդոն. Քա՛ղցրա՛սցին, վա՛սըն մեր, պա՛ղա՛ տանք, ա՛րդա՛րոց, և այլն :

Ասորոեղ. որ ունի զառաջին վանդն սուղ, և երկու յետինքն երկար. եռավանդ. հնգամանակ. որդոն. Ճըզ՛նա՛ւո՛րք, ճըզ՛ մա՛րի՛աք, և վը՛կայք, քրիս տո՛սի, և այլն :

## Քողաբորթ, Քողաղոթ.

Քողաբորթ. որ ունի զմիջին վանդն սուղ. եռավանդ. հնգամանակ. որդոն. Ե՛ւ որո՛ջք, ա՛ն ա՛րա՛տք, ը՛ն ծայ կա՛լք, ա՛ն տու ծո՛յ, և այլն :

Քողաղոթ. որ ունի զմիջին վանդն երկար. եռավանդ. քառամանակ. որդոն. Օր՛նե՛ցէք, զաս տըւած, ա մե՛նայն, ա՛րա՛րածք, և այլն :

Թա- (crasse) հաստ և թանձր ձայն տառի- Թ, Լ, Խ, Զ, Ը, Գ,  
 Կ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը,  
 ԼԵՐԻ- (mou) նուրբ և կակուղ հնչիւն տառի- Ղ, Զ, Կ, Ը, Թ, Կ, Գ,  
 Ը, Զ, Կ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը,  
 յի քան զիկն՝ թաւ է, և քան զիկն՝ լերիկ է:  
 յի քան զիկն՝ թաւ է, և քան զիկն և զիկն՝ լերիկ:  
 Գառն՝ յի մէջ ԿԵՆԻ, ԿԵՆԻ և ԿԵՆԻ-  
 յի քան զիկն և Խոյլ, զի քան զԿոնն թաւ է և քան զԲոն լերիկ-  
 յան միջակ է ԿԵՆԻ, Կոյլի և Կոյլի- յի քան զԿոն և զԿոն թաւ է  
 և քան զԿոն լերիկ: Ժեն (ընդ մէջ) Կոյլի և Կոյլի, յի քան  
 զԿոն թաւ է, և քան զԿոն լերիկ: (ԹԵՐ-ՔԵՐ-)

« Ի բաղաձայնից ոմանք են կիսաձայնք- որդոն, Ղ, Զ, Կ, Ը, Թ,  
 Զ, Կ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը,  
 Լուզանեն ձայն: Ոմանք են անձայնք- որդոն- Թ, Կ, Ը, Թ, Կ, Գ,  
 Ը, Զ, Կ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը,  
 և անձայնք ասին, զի ՚ի յարտաբերիլն իւր-  
 եանց, եթէ ոչ հանդիպիցի ձայնաւոր կամ կիսաձայն, արգելուն  
 զլուռնչս: Ոմանք են կրկնակք- որդոն- Ղ, Զ, Կ, Ը, Թ, Կ, Գ, Ը,  
 Զ, Կ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը,  
 և կրկնակք ասին, զի զերկուս արժեն բաղաձայնս »:  
 (ՔԵՐԻՔ. ՅՈՒՎ. ՎԱՐՂ- ՏՊ. 'ի Հոտով՝ 1674: ) « Ի բաղաձայնից  
 միջակք են, Թ, Կ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը,  
 Խ, Զ, Կ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը,  
 և անձայնք ասին, զի յար-  
 տաբերիլն շունչն արգելանի: Կիսաձայնք են, Ղ, Զ, Կ, Ը, Թ, Կ, Գ,  
 Ը, Զ, Կ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը,  
 և կրկնակք ասին, զի երկուց բաղաձայնից ազդումն տան:  
 Եւ նայք են չորք- Ղ, Զ, Կ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ,  
 Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ, Կ, Գ, Ը, Թ,  
 Սիմ, օնի Չուզայից • ՏՊ. 'ի Պոլիս • 1723: )

Ի հարկէ ասոնց վերայ աւելի ընդարձակ տեղեկութիւններ կը  
 դնուին, բայց մեք այսքանը զոր ատենօք ՚ի խնդրոյ բարեկամի  
 ուրումն հաւաքած էինք հայկապնեան բառարանէն՝ աստ զեռեղե-  
 ցինք, իբր տետրիս նութին հետ ՚ի մօտոյ առնչակից խնդիր:

Հարկ է աստէն քանի մը խօսք ալ աւելցնել ը տասին գոր-  
 ծածութեանը վերայ: Շատերը թէ՛ արձակ և ոտանաւոր գրու-  
 թեանց և թէ՛ երգերու մէջ սոյն տառը ըստ սլոտահման կը գոր-  
 ծածեն, երբ մանաւանդ մէկէն աւելի բաղաձայնով սկսած բա-  
 ռեր պատահին, մանաւանդ տառադարձութեանց մէջ: Շարա-  
 կանի երգիչներ ալ կան, որք շարականաց մէջ եղած ը տառե-



րուն շատը կը ճնջեն իբր աւելորդ , ինչպէս Ս. Գրքած բառին մէջ  
 և ուրիշ տեղեր . ասոր հակառակ՝ շատ տեղեր ալ սոյն տառը  
 կը յաւելցընեն , ինչպէս քրիստոս , հրեշ ասի , քրիստոս և տանց նման  
 բառերուն մէջ , հնչելով զանոնք քրիստոս , հրեշ ասի , և այլն :  
 Եւ ասով կարծես թէ սոյն տառը շատ անգամ դանդաղութիւն մը  
 կու տայ մեր լեզուին , փոխանակ դիւրութեան և կոկուսեան :

Նախնիք այս բաներուն մէջ յատուկ կանոններով վարուած  
 են , և երբ կա՛մ 'ի պահանջել հարկին բառերու մէջ պէտք եղած  
 տեղեր ը տառը ներգործութեամբ յաւելցուցեր են , և կա՛մ եր-  
 գին անուշութիւն մը տալու կամ եղանակին չափը լեցընելու հա-  
 մար գործածեր են , ինչպէս , և ը կէցո , ը ը ըն , և այլն , այլ վերու-  
 յիշեալ տեսակի բառերուն մէջ ը տառը գործածելէ խորշեր են ,  
 և սկզբնատառ երկու բաղաձայններուն մեծ մասը իբր մէկ տառ  
 համարեր և այնպէս վանկատեր են զանոնք . զոր օրինակ , քրիստոս ,  
 հրեշ ասի , սոբա քոյ , ինձ սոյ , շնոր հել , քրիստոս , սոբ քաննոս , սոբան-  
 քանել , և այլն , և ոչ թէ քրիստոս , հրեշ ասի , քրիստոս , և այլն :  
 Եւ այս կանոնով այս տեսակ բառերը իբր մէկ տառով սկսուածի  
 պէս կ'ըլլան , որպէս են յունարէն (ξ) քէ , (ψ) քէ և գաղղիարէն  
 (x) իս տառերով սկսուած բառերը : Գաղղիարէն լեզուին մէջ  
 կան արդէն ուրիշ բառեր ալ որք երկու բաղաձայնով կ'սկսին  
 բայց իբր մէկ վանկ կը վարուին :

Մեր նախնիք բառերու վերջընթեր դիմորոշներուն և ուրիշ  
 գոյգ բաղաձայններուն , և բառերուն սկիզբը եղած նախդիրնե-  
 րուն համար ալ ը տառը խորհրդով են գործածեր . յետագայ  
 բառին սկիզբը կամ նախընթաց բառին վերջը բաղաձայն տառ  
 եղած ատեն ը տառը յաւելցուցեր են , և ասոնց ձայնաւոր ե-  
 զած ատեն չեն գործածած . զոր օրինակ . երբե՛ք , քե՛լ , երբե՛ք  
 այօր , ծնեա՛ն այօր , Բարե՛ւալն բարե՛ւալ , ընկա՛ր ըզմո՛րսն  
 շնորհոց , շնորհեա զնորհա՛նիսն , և այլն , և այլն . որոնց նման է  
 գաղղիարէն լեզուին այն օրէնքը որ բառերու վերջընթեր բաղա-  
 ձայնները եթէ անհնչելի եւս ըլլան՝ ձայնաւորով կամ անձայն և  
 տառով սկսուած յաջորդ բառին վերայ բարդուելով կ'արտարերին :

Սոյն ը տառին գործածութեան վերայ ընդարձակ տեղեկու-  
 թիւններ տե՛ս 'ի յօդուածն Գեր . Եղուարդ Վ . Հիւրիւղեանի 'ի  
 Բազմավէպ հանդիսարան , նոր չար — առաջին սարի , Բ . պրակ  
 Լուամսեայ , 1865 :

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Ա. . . . .

Մեծ պարզ բարեկամ .

Երբեմն մեզնէ անդեկութիւններ ուզեր էիք Շարահանաց խաղերուն միջոցաւ երգերուն սեռակները որոշելու հերպին վերայօք : Ահա ասիկա կը փութանք թէ և քիչ մը ուշ, այս մասին մանրամասն դրել ձեզ, որչափ որ կարելի է գրով բացատրել :

Երգերու սեռակները նախ ձայներով կ'որոշուին, ինչպէս, ա), ա), և այլն . բայց իրենց այլ և այլ բաժանումները և սեռերը խաղերու շարադասութեամբը կ'որոշուին : Խտղերը թէ և իբր ձայնանիշ՝ ամեն եղանակի մէջ կը գործածուին, այլ բաց 'ի այն խաղերէն որք յատուկ եղանակներու մէջ միայն գործածուած են միւս ամեն խտղերն ալ եղանակաց այլ և այլ ձեւերուն ու սեռակներուն մէջ որոշ դասակարգութիւններ ունին, զորս իրարու հետ բաղդատելով՝ ըստ բաւականին կրնանք որոշել եղանակաց սեռակներն ու սեռերը, որոյ արդիւնքը ըստ անկեանցն հաւանա-  
կանութեան ճշդագոյն է :

Բուն եղանակները յատուկ ճիւղեր ունին որոց Գործուածք կ'ըսուին . բայց մեք որպէս զի կարող ըլլա՞նք գիբաւ ճանչցնել զասոնք, բուն եղանակներէն քանի մը հաստ միայն նշանակելով, դարձուածքներն ու դարտուղութիւնները աւելի ընդարձակ նկտի դրեմք, յորմէ մնացեալ բուն եղանակներն ըստ ինքեան կը ճանչցուին :

## ԱՁ ԵՒՆՈՒՄ .

Այս եղանակի բուն ձեւին օրինակ կ'ըլլան, Հրաշակերտ և զբեղ, Յարսեղեղ 'ի Տեւեղ, Ու Քրօրհնէս, Ու Էկէր 'ի Էրիւմէն տէրերաց, և ասոնց նմանները, զորս կարելի է ճանշել իրենց խաղերու պարզ շարքէն : Այս եղանակին դարձուածքը՝ խաղերու որոշ շարք մը ունին, և խիտ՝ հակառակ բուն եղանակին պարզ խաղերուն : Ասոնց օրինակ կը համարուին, Տնօրէնեցոս, Այօր յարեաս, Պայծառացի, Ժպտեացի 'ի յիշարակ, և այլն : Բաղդատէ՛ ասոնց խաղե-



իւր բուն սարգ եղանակին խաղերուն հետ : և յայտնի կը տեսնուի տարբերութիւննին : Այս եղանակին դարձուածքներուն յատուկ խաղ մի է սա (կամ ը), և շատ անգամ այս միայն կը բաւէ ոչ երգի մը տեսակը որոշելու համար . վերջապէս երբոր երգի մը բուն ձեւին խաղերու ընթացքը կը փոխուի, որոշակի կ'իմացուի թէ նոյն երգը դարձուածք է : Այն Հարցերուն դարձուածքին մէկ յատուկ նշանն է նաև՝ երբ իրենց յետադայ Մեծացուցեն, եթէ ունին, կամ Ողորմեան եթէ դարձուածք ըլլայ, յայնժամ Հարցն ալ ամբողջ կամ ըստ մասին դարձուածք կըլլայ, (վասն զի երբեմն երգերուն մանաւանդ Հարցերու կէսն կամ մէկ տունն կամ վերջին տան մէկ մասը միայն դարձուածք կ'ըլլան) . ասոր օրինակ է Տնօրինեցաւ, Ուրբառնի, Պայծառնի Հարցերը և իրենց Մեծացուցէները կամ Ողորմեաները . պահոց՝ Որ յամենայն էս, Երբեք մանկունքն, Բարեբանեալ էս Բարեբանեալ էս Բարեբանեալ էս 'ի յաւիտեան Հարցերը և իրենց Ողորմեաները . Յոյս և յարաւիտեան, Ընդ կունայն էս Ղաթերան երգերուն վերջին տունները, և այլն :

Ընդ հանուր Հարցերուն և 'ի մասնաւորի ոչ Հարցերուն վերայ խօսելով՝ կան նաև ուրիշ նշաններ եւս անոնց դարձուածք ըլլալուն . որք են՝ Գործատուններուն Գործքք տեսնելու բառերով և անոր տուններուն Օրհնեցե՛ք, Գեղե՛ք Գեղե՛ք Գեղե՛ք Գեղե՛ք, Որհնե՛ցե՛ք, Իօրայել Գեղե՛ք Գեղե՛ք Գեղե՛ք Գեղե՛ք Գեղե՛ք Գեղե՛ք, վերջը օրհնեցե՛ք կամ ըզլնու բառերուն մէջ և տառը դանուիլը որ միայն ոչ Հարցերուն յատուկ է, և այլն : Թէպէտ և կան հարցեր, որոց Գործատունը Օրհնեցե՛ք և Օրհնեցե՛ք ունին և սակայն դարձուածք չեն, բայց ասոնք բացառութիւն են, և թերեւս սխալ . իսկ միւսները ընդհանուր կանոն :

Ա. Կ Երանակ .

Այս եղանակին սարգ տեսակին կը պատկանին Որ նախնայն : Խորհուրդն անձաւ, Արեւիկանն արդարութեան, Ըղբեղ Գաղաթ ասորածոյ, Անեղանելիք ասորածո, և այլն : Ասոնց խաղերու միօրինակ դիրքը եթէ դիտենք, որ ուրիշ ձայներէն աւելի որոշ կարգ մը ունին, յայնժամ զգալի կերպիւ կ'իմանաւր այս եղանակին սարգ ձեւերը : Այս եղանակին դարձուածքներն են՝ Որ եկե՛ք 'ի քրիստոսեան, Աստեցար 'ի հօրե՛, Այսօր կունեցաւ, Զանաւն Գեղեցաւ օրհնե՛ք, և այլն : (Շատերը այս երկրորդ ձեւը իր բուն եղանակ կը համարին, և առաջին ձեւը իր դարձուածք, բայց զիարդ և իցէ՛ բաւական է

որ իրենց խաղերուն կարող են կրնամք տեսակինն որովհետև : ) Այս եղանակին պարզ ձեւին համար յատուկ խաղ մի եւս կայ , որ կը դրուի երգի մը երկրորդ տողին առաջին անգամ պատահած երկար վանկին վրայ և է այս ~ և որ շատ օրինակաց մէջ չվտժած է սա խաղին հետ :

### ԲՁ Եղանակ .

Այս եղանակը դարձուածք քիչ ունի , և դրեթէ ամեն քչ երգեր բուն եղանակին վրայ կ'ընթանան . թէպէտ և կան երգեր որոց խաղերու դրութիւնը տարրեր է միւս բուն տեսակին , բայց հաւանական է որ ասոնց դարձուածք եղանակները անհետ եղած ըլլան , ինչպէս են Անտոյական Բանդ , Այսօր Բեւեռեալ , և այլն : Սոյն եղանակին դարձուածքներն են այսօր Որ 'ի հարաշարժ , Սննտաժողով : Կան երեք երգեր ալ որք իրենց համար յատուկ եղանակ ունին , որք են Չարմախի է ինչ , Երբե՛տ Կեղ երբս , Ուղիչ Են ճանապարհը Կ : այս վերջին երգին Գործատո՛ւնը միայն ստուգիւ դարձուածք է ինչպէս կ'երեւի իւր խաղերին , բայց հիմա ամբողջ երգը դարձուածք կ'երգուի . կայ Հարց մի եւս Որ 'ի յերկնեց իջէր որ այժմ ամբողջ դարձուածք կ'երգուի , բայց ասի նորասուտ կ'երեւի , թէ եւ եղանակը գեղեցիկ է և յարմար :

### ԲԿ Եղանակ .

Այս եղանակն ալ քիչ դարձուածք ունի , և գրեթէ ամբողջ քի երգերը բուն եղանակին վրայ կ'երգուին այսօր : Իւր դարձուածքը կամ լաւ եւս իւր մէկ մասնաւոր ձեւն է Որ Խոնարհեցար 'ի Բարշնոց , Որ իջէր յերկնեց , երկու երգեր , որոց խաղերու կարգը եւս յայտնի կ'ընէ ասոնց զատ ձեւ մը ըլլալը . հաւանական կարծեօք այս ձեւին պէտք է պատկանին երկու երգեր եւս որք են Որ Եիբ յառաջ Կան զյառախոթանս , Անտոյական կառտ , բայց ներկայ սովորութիւնը զատոնք քի եղանակին պարզ ձեւին մտադոյն կ'երգէ : Բի եղանակը ունի և ստեղծներ , որք են , Աստուած հզօր Օրհնեցե՛տ Ժակասե՛տ , Որ յանէից , որք բոլորովին նման չըլլալով Գի ստեղծներուն՝ իրենց յատուկ ձեւ մը ունին քի եղանակէ և ստեղծի խառն : Մանկանին Գերեալ Հարցին գործատունն ալ իւր հին ձեւը կորուսած կ'երեւի , որոց խաղերէն յայտնի է դարձուածք ըլլալը : Արեւայն արարած երգն ալ քչ եղանակի դարձուածքին նման եղանակ մը ունի որ զարտուղութիւն մ'է :

Հաւանական է որ երգերու լուսանցքին կամ տուներուն



սկիզբը գրուած խաղերն ալ որ սոյն եղանակին մէջ յաճախ կը գտնուին, նոյն երգերուն դարձուածք ըլլալը կը ցուցնեն: սոյն երգերէն են Որ պարտաւորան ճշմարտութեան, Իմաստան հասանին, Փարսան հանդերձ կասօփն և ասոնց նմանները, զորս կարելի է իրենց խաղերուն ղիրքէն ճանչնալ որոշակի: Թէ և ասոնցմով բաւական էր ճանչել այս երգերուն դարձուածք լինելը, բայց այս մասին ուրիշ աւելի զօրաւոր ասպարոյց մը գտանք 'ի Ս. Երուսաղէմի վանքը, ուր տեղ այս երգոց սկիզբէն բուն ալ եղանակի մօտ ձեւով մը կ'երգեն ամբողջ առաջին տողը, և յետոյ պարզ քի եղանակի կը դարձունեն: այս սովորութիւնը հին ու կորսուած ձեւի մը մնացորդն է անշուշտ՝ նոյն վանքին մէջ պահուած: Բայց կարելի է թէ տուներուն զլուխը խաղերով նշանակեալ դարձուածքները իրենց համար յատուկ ձեւ մը ունեցած ըլլան՝ իրր ընդ մէջ պարզ և դարձուածք եղանակաց: Բի եղանակին՝ ինչպէս և քի և քի եղանակներուն դարձուածքները շատ այլալայտ են այսօր, զոր իրենց կարգին պիտի տեսնենք:

#### Գ. Եղանակ.

Այս եղանակին պարզ տեսակին օրինակ են Որ արարեք զբոսութեամբ, Այսօր որ են, Երկրորդեօր քեզ քրիստոս, Վերայգողն երկնից կա: Ասոր դարձուածքն է Որ ծագեցեր, Ո՛վ հրաշալի, Յորտե սարսեալ, Կսմասարութեամբ եկիք, Նմանեալ մովեօսի, և նմանները որ իրենց խաղերու կարգին բազդատութենէն ղիւրաւ կը ճանչցուին: Հարցերուն մէջ Գործատունէն դարձուածք են Մենդեան Ա. աւուր և մեծի Շարաթու Հարցերուն Գործատունները. Թէպէտ և այժմ սոյն վերջի Հարցը ամբողջ դարձուածք կ'երգուի քիչ մը տարբեր վերոյիջեալ դարձուածքի ձեւէն, այսինքն տաճկերէն եկի՞ճ ըսուած եղանակին նման, որպէս կ'երգուին այսօր ընդհանրապէս քի Հարցերուն Գործատունները: Այս ձեւը ըստ ինքեան թէեւ գեղեցիկ, բայց չգիտցուիր թէ ո՛րչափ վաւերական է իւր նախնականութիւնը, վասն զի շատ հիմնական դարձուածքներու ձեւեր երբ ամեն ուրեք կը գտնուին, սոյն ձեւը Հայաստանի ներսերը գրեթէ չգտնուիր. հաւանական է որ այս եղանակը բուն դարձուածքին մէկ ամանցումն ըլլայ, վասն զի մօտ է անոր կազմակերպութեանը. հաւանական է եւս՝ որ 'ի սկզբան վերոյիջեալ երկու Հարցերուն համար գործածուելով յետոյ ամեն քի Հարցերուն համար գործածել սովորութիւն եղած ըլլայ, որոյ ասպարոյց

է այն՝ որ շատերը անդր քան զՀարցը մղելով սոյն եղանակը ,  
 ք) Մեծացուցէ ներու և Ողորմեաներու համար ալ կը դործածեն  
 իբր կցուրդ Հարցին . ինչպէս և կան ոմանք որք սոյն եղանակը  
 ըստ կանս կը դործածեն՝ երգելով շատ անգամ ք) Հարցերուն  
 Գործատունները պարզ եղանակին վերայ :

Այս ք) եղանակին մէջ երգ մը միայն կայ որ թէ և ոչ խա-  
 ղերու կարգով այլ առներուն գլուխը դրուած խաղերովն ապա-  
 ցուցեալ է իւր դարձուածք ըլլալը . սոյն երգն է Տէր զւր + ո լուսայ :

Գկ Եղանակ .

Այս եղանակին պարզ տեսակին օրինակն է Երէնցե+ որդե+ ս'ծնի ,  
 Զանկը Բնաբար Բնասածն 'ի հօրե , Անկիղն հայր , և այլն : Այս եղա-  
 նակին երգերուն զբեթէ ամբողջը պարզ ձեւին վերայ կ'երգուին  
 այժմ , բայց անտարակոյս անհետ եղած են ասոնց շատին դար-  
 ձուած ձեւերը . այժմ քանի մը հատ մնացած են , որք են Նահա-  
 րոյ Բարէ , Զասորուածայն զբերեցմնուան , Յանճառ փառաց , Աւեալ և  
 Օր : Իսկ Այսօր երեւոածն երգը առանձին ձեւ մը ունի :

ԳՁ Եղանակ .

Այս եղանակին պարզ ձեւն է Ծափոածն հրաշալի , Զօրութեան  
 սորբ խալի , Զեղ օրհնութեամբ , Յորժամ 'ի խալին , և այլն , որոյ կը  
 պատկանին սովորաբար ամեն մանր երգերը . սոյն պարզ ձեւը  
 երկու մասնաւոր սեռ ունի . մէկն է Այսօր 'ի կտորոտածն , Որ զբեռն  
 սրբութեան , Այսօր ժողովեալ , և այլն . միւսն է Ասորիւն աղանաւոյ ,  
 Յնճայ այսօր եկեղեցի , Խորհորդ խորն , և այլն . և այս ամեն տե-  
 սակն ալ իրենց խաղերուն շարքին կ'որոշուին զիւրաւ :

Այս եղանակին դարձուածքները միւսներէն ճոխ են . ասոնց  
 գլխաւոր ձեւն է Նոր ս'ծն , Լեւորանարար ասորւած , Ամահարոր Բա-  
 ժակ , և այլն , որք իրենց խաղերէն կը ճանչցուին : Այս եղանա-  
 կին մէջ կան քանի մը երգեր , ինչպէս Լոյս 'ի լուսոյ , Մայր լուսոյ ,  
 Անարոր կոյս , Ֆրէսորոս ասորւած Օր , և այլն , որոնք դարձուած ե-  
 ղանակաւ կ'երգին այսօր՝ թէպէտ և դարձուած ըլլալու նշան մը  
 չունին , բաց 'ի կանանցն կանխելով երգէն , որոյ դարձուածք ըլլալը՝  
 տուներուն սկիզբը եղած նշաններէն կը ճանչցուի . հաւանական  
 է որ ասոնք ք) երգոց ոմանց պէս դարձուած եղանակներու հետ  
 պատահած ատեննին ասոնց պէս երգուելով՝ դարձուածքի ձեւն  
 առեր են , և ասոր ապացոյց է այն որ ասոնց մէջ տեղ տեղ դեռ  
 եւս պահուած են պարզ ք) եղանակի հետքերը :



Այս էջ եղանակին մէկ խառն ձեւն է Որ կռիցար յորդեփրութեան երգը և մէկ երկու նմանները : Տեսակ մ'ալ կայ իբր Ստեղի կամ էջ եղանակի և Ստեղիի խառնուրդ , և ասի ալ յատուկ ձեւ մի է որոյ կը պատկանին Երկնաոր փեսայ , Անժամանակդ ասորւած , Հրաշափառ ծագումն , Երկնայն զգրութեանցն , Անկանե՛ առաջի ք , Տեսեալ զեղ ծահո . սոյն կարգին կը պատկանին և հետեւեալ Որ յաօնայնի ցասցեր , Որ քարեքանեւալու ես , Որ 'ի քառակերպեան , Որ 'ի սիկլէն փրկութեան Հարցերուն Գործատունները , և Որ դասաց Երկնաորաց Հարցին վերջի տունը , իրարմէ քիչ շատ տարբերութեամբ՝ ըստ սեռի իւրեանց , թէպէտ և սոյն Հարցերու Գործատուններէն մէկ քանին էապէս դարձուածք չեն համարուիր : Դ՛ յստեղի ալ կայ , բայց եղանակը մի և նոյն է զի ստեղիին հետ : Ասորւածածին քերթոն երգը առանձին ձեւ մը ունի , իբր խառնուրդ պարզ և դարձուածք ձեւերուն , որոյ նմանը ասե՛ս 'ի Ստեղի եղանակն : Արարել և ճարտասեր Հանգստեան երգն ալ իրեն յատուկ ձեւ մը ունի :

#### Դ. Կ Եղանակ .

Այս եղանակին պարզ ձեւն է Խորհուրդ մեծ , Այսօր մեծ աստիճ , Այսօր քանն 'ի հօրե , Որ զլեռնաքերտուն , Բանն որ ընդ հօր , և այլն : Դարձուած ձեւն է սովորարար ոտանաւոր երգերը . ինչպէս . Նորահրաշ , Անճառելի քանդ ասորւած , Այսօր անճառ , Անչինք նոտելեալ , և այլն : Բայց կան քանի մը վարտուղութիւններ , ինչպէս , Զեղ աղակէք , որ առանձին ձեւ մը ունի ք՛ եղանակի դարձուածքին նման : Հայր աստուղ , վրան մերոյ փրկութեան , իբր է՛ եղանակ , բայց այս երկուքը սօլ ձայնաստիճանի վերայ երգուելով՝ վերոյիջեալ դարձուածքներուն կը համաձայնին ձայնաստիճանաւ : Սովորարար ոտանաւոր երգերու շատը զի եղանակի վերայ նըշանակուած են , բայց անոնց շատը յատուկ եղանակներ ունին , ինչպէս են Ասորւած անեղ , Նորաստեղծեալ , Արարչական , և այլն . ասոր պատճառն է որ ոտանաւոր երգերու շատը ժամակարգութեանց մէջ իբր արտաքոյ ձայնից գրած բանաստեղծութիւններ , միշտ զի նշանակուած են իբր վերջնական ձայնի վերայ :

Այս եղանակը ստեղի եղանակին մօտէն առընչութիւն ունենալով , կան շատ զի երգեր որք քիչ շատ ծանր երգուելով՝ սրեղի ի նմանութիւն մը կ'առնեն , որպիսի են Ստեղիլեպործ ասորւած , Իւղաքերից կանանցն , Լերկնք ցեծանցն , Այսօր 'ի Լերկն լաթօր , Այսօր ընդ հրեշտակս , Որ սիրտութեամբ , Որ վրան մեր յերկնից , Նորահր

հրաշ Կեօլեամբ, Յարտեցալ է Կերն, և պահոց Հարցն մերոց և Օրհնեալ Կեր ասորաած Հարցերուն Գործատունները . իսկ Փառասորեալ է անոան Կ Հարցին Գործատունը առանձին եղանակ մը ունի իբր Բէ ստեղի՝ որ զարտուղութիւն մ'է :

### ՍՏԵՂԻ ԵՂԱՆԱԿ .

Ստեղի եղանակ, կը նշանակէ, բազմաճիւղ, բազմաստեղն եղանակ, որ իւր մէջ շատ մը ձեւեր ու դարձուածքներ կը պարունակէ, (իբր աղւղէ ըստ տաճկաց) :

Ասոնք թէեւ շատ տեսակներ ու սեռեր ունին և իրենց խաղերովն ու եղանակներովը կ'որոշուին . բայց դարձեալ ամենուն մէջ ալ նմանաձայնութիւն մը կայ : Առաջին պարզ տեսակն է, Արտեալ ասորածոց, Երկնաոր հոս ընտրեալ, Արեւոցեալ, Լուսաստղածառ, Լերին Կեօլեամբ այսօր ցնձան, Լուսաստղակացն, Հեացան անմարմինին . այս տեսակին մէկ սեռն են Որ արդիւնհրաշ, Որ անպարտեղն, Պարտանակեալ : Երկրորդ տեսակն է Որ զանձառեղն, (որոց սկիզբը առաջին տեսակին երկրորդ սեռին կը պատկանի) Ողբմանեաց Բաշտող, Վասն Կարհոտ, Չարհոտեալ : Երրորդ տեսակն է, Կոնիտեալ յաջանոս, Մոգեալ աստածոց, Յոգնան մարգարէն, Յեոսս Ֆաթինն, Յոգնեղ Կեօլեամբ, Երանեղն ասորք մանկանին : Չորրորդ տեսակն է Որ յանըստեալ, Որ յանկեղն : Իսկ կան քանի մը ստեղի երգեր որք խառն ձեւ մը ունին, որոցմէ Յոյ Է՞ երգը ստեղիներու երրորդ ու չորրորդ տեսակէն խառն է, իսկ Արեւակալ, Չառաստոս, Կոնիտեալ Կերգերը յատուկ ձեւեր ունին մօտ Բէ ստեղիներուն :

Արեւագալի երգերն ալ տեսակ մը ստեղի են և աւելի առաջին տեսակին պիտի պատկանին իրենց խաղերու դրութեանը նայելով, բայց ներկայ սովորութիւնը թէ և ասոնց եղանակը պահեր է, բայց յորդոր կ'երգէ, նման Ասորածածին Գերմոյն ԳՁ երգին, և ընդ հակառակն ասոնց յորդորակները ծանր կ'երգէ, որք պէտք է յորդոր ըլլան նկատմամբ թէ՛ իրենց խաղերուն և թէ՛ անուան :

Պատշաճ էր որ այս առթիւ քանի մը դիտողութիւն ալ յամազրթի երգոց վերայ ընէինք, բայց ասիկայ յետոյ ուրիշ գրութեամբ մը կը խոստանամ զրկել ձեզ : Իսկ Շարականի երգոց մասին՝ կարծեմ այսօր արդէ կրցանք ըստ բաւականին բացատրել, թէ ի՞նչպէս՝ երգերու տեսակները և սեռերը իրենց խաղերու կարգերէն կ'որոշուին, և թէ՛ հին խաղերը, որոց օրէնքները լիովին ծանօթ չըլլալովն հանդերձ, ոչ միայն անօգուտ չեն, այլ և ըստ



կան առաջնորդութիւն մը կ'ընեն երգելու ատեն, թէ՛ իրենց հնարման ժամանակին նկատմամբ բաւական կանոնաւոր են եղեր, և թէ՛ պէտք է որ փոյթ ունենամք ասոնց ղիրքը քննել, խմանալ և օգուտ քաղել ՚ի բարեկարգութիւն եկեղեցական երգոց և ՚ի գիւտ նախնեաց երաժշտական ձեւերուն: Այսին ղի մինչդեռ լուսաւորեալ երօսարարք առ ՚ի զարգացումն զիտութեանց կը հետադատեն մինչեւ հնութեան խորերը, և կ'աշխատին ընթեռնուլ նաև հազարաւոր տարի յառաջ քանդակուած արձանագրութիւնները, և մասամբ իւրք կը յաջողին, մենք դեռ ևս քանի մը հարիւր տարուան մեր երաժշտական խաղերուն վերայ զորս ցարդ ՚ի ձեռին կը գործածենք ամեն օր և ամեն ուրեք և քիչ շատ անոնց առաջնորդութեանը կարօտ ենք երգելու ատեն, բնաւ երբէք ղիտողութիւն մը ըրած չունինք և ուշագրութիւն մը չենք մատուցած: Ստուգիւ ցաւալի սառնութիւն և անհոգութիւն է այս: Երգերու հետախուզութեան մասին այսչափ անխոյժ ըլլալ և բանիւ բերանոյ միայն երբեմն բարեկարգութիւն բնտուել:

Ահաւասիկ, արդոյ բարեկամ, մեր մտաղիր եղածէն աւելի երկար խօսեցանք այս խնդրոյն վերայ, զիտնալով որ փափագ ունիք և սիրով կ'ընթեռնուք մեր սրբազան երգոց վերայ եղած գրութիւնները: Մնամ. . . . .

Կ. Պօլէ. 26 Ապրիլ. 1870.

Ե. Մ. ՏԵՏԵՍԵԱՆ

Ա. . . . .

Ազնիւ բարեկամ.

Գիտնալով որ երաժշտութեան հմտութիւն միանգամայն և փափագ ունիք մեր եկեղեցական երաժշտութեան կոկորթեանը և քաղցրութեանը վերայ, և քանիցս տեսակցութեան ժամանակ այս մասին այլ և այլ հարցումներ ըրած էք մեզ, ուստի կը փութամ ներկայ գրոյս միջոցաւ ղրկել ձեզ, Ս. Պատարագի երգոց ձայնաստիճաններու միաձայն ղրութիւն մը որ հետեւեալն է:

Միջին լա (տիւկեահ) ձայնաստիճանը որ մեր եկեղեցական և արեւելեան երգոց մեծ մասին յենակէտը լինելուն՝ Ս. Պատարագի երգերն ալ որք անխօփօխ են, սոյն ձայնաստիճանին վերայ

պէտք է հիմնել . վասն զի Մեղեղինները , Ճաշուները և Տաղերը թէ և փոփոխելի են , բայց անոնց ալ շատը սոյն լա՛ ձայնաստի՛-  
ճանին վերայ կը յանդին : Այս ձայնաստի՛ճանը մեծի ու փոքրի  
ձայներուն ալ կը յարմարի , միանդամայն շատ մը ուրիշ ձայնաս-  
տիճաններէ եղած երգերու ալ դիւրայարմար է : Աստի ,

Խորհորդ խորհրդ իւր բնական ձայնաստի՛ճանին , այսինքն լա՛ ի  
վերայ կը վերջանայ : Ընդհանրապէս արդէն լա՛ ի վերայ կը վերջանայ :  
Մեղեղին ըստ պատշաճին և ըստ եղանակին , որ եթէ լա՛ ի վերայ  
չվերջացող եղանակ մ'ալ ըլլայ , ելեւէջի ձայնատիտութեամբ (չէ՛ն)  
կրնայ յարմարիլ լա՛ ձայնաստի՛ճանին : Խնկարկութեան շարականը  
դարձեալ լա՛ ի վերայ որ անոր բնական ձայնակէտն է , ուր տեղ և  
վերջացընելու է , և ոչ թէ րօ՛ ի վերայ , ուր սովորաբար կը վեր-  
ջացընեն : Ասոր յաջորդ Օրհնեա՛ րօ՛նը լա՛ ձայնաստի՛ճանի վերայ ,  
և այսպէս մինչ 'ի Ճաշու շարականը : Ճաշու շարական ըստ պատ-  
շաճին և ըստ եղանակին , բայց վերջաւորութիւնը դարձեալ լա՛ ի  
վերայ , որ ուրիշ ձայնից մեծ մասին կը յարմարի , և մնայեալներն  
ալ ձայնատիտութեամբ կը յարմարին . և այսպէս մինչ 'ի Քիւրքը :

Ճաշու սաղմուտը լա՛ ի կամ՝ ըէ՛ ի վերայ : Փորտ + Կեղ րօ՛նը ըստ վեր-  
ջաւորութեան Աւետարանին . (Թէ՛յլէս և կարելի է Աւետարանն  
ալ որոշ ձայնաստի՛ճանի մը լա՛ ի , րօ՛ ի կամ՝ ըէ՛ ի վերայ ընթեւնուլ ) :  
Ասկէ վերջի Օրհնեա՛ րօ՛նը դարձեալ լա՛ ի վերայ , և այսպէս մինչ  
'ի Սրբասացութիւնն . վերաբերում ալ եթէ ըլլայ , լա՛ ի վերայ  
կ'երգուի , որ անոր բնական ձայնակէտն է : Սրբասացութիւնները  
ամենն ալ կը յարմարին սոյն ձայնաստի՛ճանին , հետեւաբար և  
յաջորդ Եւ և խաղաղութեանը դարձեալ լա՛ ի վերայ կը յանդի , և  
այսպէս մինչ 'ի Մորթի սորթը . Եւ ըստիցն ալ լա՛ ի վերայ պէտք է  
երգել , և ոչ թէ ձայնաստի՛ճան փոխել , որպէս սովոր են ոմանք  
ընել , որ անախորժ է ականջի :

Մորթի սորթը ըէ՛ (նշվա) ձայնաստի՛ճանէն կը սկսի և «օլի (րաստ)  
վերայ կը վերջանայ , որ անոր բնական ձայնաստի՛ճանն է , և այս-  
պէս մինչ 'ի Հոբի սորթոյ , որոյ նախընթաց Օրհնեա՛ րօ՛նը ըէ՛ ի վերայ ,  
և Հոբի սորթոյն սկզբնաւորութիւնը «օլ՝ ըէ՛ , և վերջաւորութիւնը  
դարձեալ «օլ . (հոս տեղ ալ իրր ընդհանուր սովորութիւն է ձայն-  
աստի՛ճան փոխել , որ լա՛ ի չէ .) հոս տեղի անաջին Յիշեա՛ րօ՛նը  
«օլի վերայ , և երկրորդին վերջը բնական կերպիւ կ'երթայ կը  
յանդի լա՛ ի վերայ , և այսպէս մինչ 'ի Քահուրի վերջը եղած



Օրհնեա րէրը . (ունանք Պոհութեան սկիզբն ալ ձայնատիճանն կը փոխեն , որ բոլորովին աններդ աշնակ է) :

Ա՛հն , և ընդ հոգեւոյդ տու՛ր՝ այժմու սովորական եղած ո՛ր եղանակաւ ալ երգուի , արդէն լա՛ ձայնատիճանին դրիցը կը պատասխանէ , և վերջաւորութիւնը ֆո րիէդի (արաք) վերայ կ'ըլլայ , և այսպէս կ'ընթանայ մինչ 'ի Պոստիտուի Նախընթաց Օրհնեա րէրը : Պոստիտուի ըէի վերայ , մինչ 'ի յետագայ երրորդ Օրհնեա րէրը , որոյ յաջորդ Ա՛հնը և Օրհնեա րէրը դարձեալ լա՛ի վերայ կը վերջանան բնականաբար : Ա՛հն , հոյր տու՛րը և Տէր սղութան՝ այժմու սովորական եղած ո՛ր եղանակաւ ալ երգուին , լա՛ ձայնատիճանին կը համապատասխանէն , և վերջերինն հոն կը յանգի . և եթէ պատահի որ լա՛էն զատ ուրիշ ձայնատիճաններու վերայ ալ վերջանան , դարձեալ Սաղմո տաղե՛քը ըէի վերայ կ'երգուի , որոյ վերջը լա՛ի վերայ կը յանգի . հետեւաբար Բրեւոստ ստորագրեալը լա՛ի վերայ , որոյ բուն ձայնատիճանն է : Տաղը ըստ պատշաճին և ըստ եղանակին , որոյ մեծ մասը կա՛մ լա՛ի վերայ են կա՛մ անոր համապատասխան ձայնատիճանի : Աստուծ Վերը ըստ ձայնի տաղին , և կամ ըէի վերայ : Լցո՛ք դարձեալ լա՛ի վերայ , որոյ մէջտեղէն կամ վերջէն կը յանգի՝ միջին ֆոի (աճէ՛մ) վերայ , և այսպէս մինչ 'ի Գոհանութին վերջը և անտի մինչ 'ի Ա՛հ տաղե՛քը , որք կը վերջանան՝ ցած ֆոի (բէս աճէ՛մ) վերայ :

Եւ այսպէս Ս . Պատարագի անշարժ երգերը հինգ ձայնատիճանի վերայ կ'ընթանան , լա՛ , ու , ըէ , ֆո րիէդ , ֆո , որ իրարուներդ աշնակ ձայնատիճաններ են , և որոց հիմնակէտ կրնայ ըլլալ լա՛ ձայնատիճանը , որ արեւելեան երգոց մեծագոյն մասին ալ հիմնակէտ ձայնատիճանն է : Եւ եթէ սոյն ձայնատիճանը փոխել ալ պէտք ըլլայ , փոխուածը՝ իր ձայնավտութիւն համարելով լա՛ի գաղաբարին վերայ պէտք է ընթանալ և միւսներն ալ ըստ այնմ ըմբռնել :

Թէպէտ և քանիցս տեսած եմ այսպիսի ձայնական կարգադրութիւններ Ս . Պատարագի երգոց համար , սուկոյն անոնց մէջ ձայներու ներդաշնակ կարգ մը չկար : Ուստի և ես սոյնը կարգադրելով ըստ կարեաց , թէ և դուզնաքեայ ինչ՝ բայց վտանգ վնեւով թէ հաճոյ կը թուի ձեր Ազնուութեանը , փութացայ ուղղել ընդ բարեկամական ողջունիս , մնալով . . .

## Մեծայարգ բարեկամ .

Ահաւասիկ , ինչպէս որ խոստացած էինք մեր նախընթաց դրութեանը մէջ , կը դրկենք առ ձեզ նաեւ քանի մը տեղեկութիւններ Ճամադրքի երգոց վերայ , իբր լրացուցիչ դիտողութիւնք՝ վերաբերեալք առ եկեղեցական երգս մեր :

Ինչպէս յայտնի է արդէն , Ճամադրքի երգերը ութն ձայնի վերայ հիմնեալ չեն , այլ ամեն երգ իրենց համար յատուկ եղանակներ ունին . հետեւորար դարերու հրովման մէջ կարելի չէ եղած ճիշդ պահել ասոնց եղանակները , քանի որ ըստ կարելոյն պահուած են շարականի երգոց եղանակները ութն ձայներու և խազերու միօրինակ կարգադրութեանը միջոցաւ . և ասոնց խազերուն կարգէն եղանակներուն վերայ նոյն տեղեկութիւնները չենք կրնար ստանալ , ինչ որ կրցանք շարականի երգոց վերայ . մանաւանդ որ հին ու նոր Ճամադրքերու խազերն ալ իրարմէ մեծ տարբերութիւն ունին , քանի որ շարականի խազերն այնպէս չեն : Ուստի Ճամադրքի երգոց եղանակներուն վաւերականութիւնը միայն աւանդութեանց մէջ կրնանք բնութեւ և անո՛վ միայն ստուգել : Բարեբաղդաբար սոյն երգոց այսօրուայ վիճակը ըստ բաւականին կը նպաստեն մեզ , վասն զի մէկ քանի բացառութիւնները մէկ կողմ առնելով՝ այս երգոց եղանակներուն մեծ մասը էապէս մի և նոյն է յամենայն եկեղեցիս Հայաստանեայց :

Ասոնց մէջ գանուած ձայնացոյցերը , ինչպիս՝ ա՛յ , ա՛կ , և այլն , եղանակ չեն ցուցններ , հապա ձայնի կարգ . այսինքն ա՛յ նշանակեալ երգ մը՝ աւուր ձայնը ա՛յ եղած օրը պիտի երգուի , որպէս են և Աւետարանները , Քարոզները և այլք : Երբեմն այս ձայնացոյցները իրրեւ եղանակացոյց կարծուելով՝ կանոնադրութիւններն ալ ութն ձայնի եղանակաց յարմարցնելու փորձն ըրեր են , որ թէ և կանոնաւորութեան փափաքով եղած փորձ մը ըլլալուն՝ ըստ ինքեան գովելի էր , բայց սխալ ենթադրութեան վերայ հիմնեալ . ասի չընդհանրացաւ : Այս փորձին իբր մեծագոյն հարկ՝ միանգամայն և ապացոյց համարուած է կանոնադրութիւններու յաջորդ Հանգստեան շարականները . բայց յայտնի է որ կանոնադրութեան եղանակները՝ (եթէ ճշդիւ այժմեան եղանակներն ալ չըլլան) ,



չատ յառաջ են քան զհանդստեան շարականս և թերեւս քան զսարող շարականս . վասն զի յայտնի է որ նախ քան զկազմակերպութիւն շարականաց՝ եկեղեցւոյ երգերը մեծ մասամբ սաղմոսներն էին, և այսօրուայ կանոնագլուխներն ալ որ նոյն վաղեմի սաղմոսերդ ութեանց մնացորդներն են, ինչպէս և անուններնուն յայտնի է, ՚ի հարկէ յատուկ եղանակներ ալ ունեցած պիտի ըլլան անջատ ՚ի շարականաց, ինչպէս ունին այսօր Յուն բարեկեանդանի, Մեծի ուրբաթու և Նոր կիրակիի յատուկ կանոնագլուխները, և որք զեռ և ս թիւ սաղմոսներու հետ խառն երգուելովն՝ կը ներկայացնեն մեզ՝ վաղեմի ժամերդ ութեան ուրուագիծը: Եւ յետոյ երբ շարականները և անոնց ութն ձայները կազմուեցան, որք ընականաբար ըստ էութեանն բոլորովն նոր և օտար չէին ստջի եղանակներէն և թերեւս անոնց ընդարձակեալն էին, ուստի և հաւանականաբար ասկէ յառաջացած է կանոնագլխոց եղանակներէն մէկ քանիին՝ շարականի եղանակաց հետ նոյնութիւնը, ինչպէս հաւանական եւս է թէ դարաւոր գործածութեամբ՝ այս երկու եղանակներն իրար խառնուած են, որոյ զգալի մէկ նշանը կրնայ համարուիլ Ի Բալտիկան Գեորգի Բի շարականը որ ըստ երեւութին պարզ Բի երգ մի է նման Գալոց Է Ժամբնն երգին, սովորաբար Բի կանոնագլխին հետ երգուելով անոր գոյնն առեր է: Եթէ սոյն երգին եղանակը Բի եղանակի դարձուածքն ալ եղած ըլլայ, դարձեալ կը հաստատուի թէ կանոնագլխոց որպէս և Ժամագրքի ուրիշ երգոց եղանակները շարականի եղանակաց հետ առընչութիւն թէ և ունին բայց ոչ բոլորովն նոյնութիւն. քանզի կանոնագլխոց եղանակներէն՝ շարականի եղանակաց համաձայն չեղողներն ալ ամեն ուրեք միակերպ կ'երգուին այսօր, և այս և եթբաւական է ասոնց եղանակներուն հնութիւնը, վաւերականութիւնը և ուրոյն կազմութիւնը ցուցնել:

Ժամագրքի երգոց մէջ բաց ՚ի կանոնագլուխներէն՝ առանձին եղանակ ունին և հետեւեալները . Յիշոցոստ, Աշխարհ ամենայն, Աստուծոյ լուսոյ, Ալիւրք, Թագաւորք, Աւաւօտու երգք, Քալրոգք, (թէ և սաղմոսաց քարոզները, որպէս և Տեր շէ՛ Բալտիկան ըստ էութեանն թիւ են բայց հիմա շատ անգամ եղանակաւ կը կարդայուին.) երգք իւղարերից աւետարանի, Օրհնութիւնք անգաստանի, երգք արեւադալի, և այլն:

Ժամագրքի մնացեալ երգոց, ինչպէս՝ Սաղմոսներու, Ալիւրք

բռնկներու, Ալէլուքներու և այլ մանր երգոց, ինչպիս և Ս. Պատարագի երգոց մեծ մասը յատուկ եղանակ մը ունին որ շատ նման կամ համարեա թէ նոյն է քի և քի եղանակաց դարձուածքին : Եթէ քիչ մը մտադրութիւն ընեմք՝ կրնամք ըսել թէ սոյն եղանակն է որ ամենէն աւելի կը գործածուի մեր եկեղեցական երգոց մէջ իբր մայր եղանակ, որոյ նմանը կը գտնուին նաև քի և քի եղանակաց մէջ եւս : Կարելի է քիչ մը եւս յառաջ անցնիլ և ըսել թէ «ն» եղանակին մէկ ճիւղն է սա թերեւս՝ կամ թէ նոյն «ն» եղանակն է, վասն զի շատ մօտ է անոր ելեւէջին : Ո՞ր դիտէ գուցէ դարերէ ՚ի վեր գոյացեր է մասնաւոր տարբերութիւն մը ընդ մէջ սոյն երկու եղանակաց. և իցէ թէ ասոր ալ հետեւանքն են այն տարակոյսները և խնդիրները որք յուզուեր են «ն» եղանակին կազմութեանը և դիրքին վերայօք յաւուրս Նօթաճի Պատպա Համբարձուով, ինչոյէս պատմած է մեզ ականատեսն Աւետիս պատուելի Պէրպէրեան. և մինչեւ ցարդ եւս երաժշտաց մէջ տարածայնութիւն կայ սոյն «ն» եղանակին կազմութեանը և ելեւէջին վերայօք : Զասոնք՝ միայն իբր դիտողութիւն և իբր մտադրութեան արժանի խնդիր յառաջ կը բերեմք աստ. ապա թէ ոչ՝ արդէն կազմակերպեալ եղանակները իրենց ներկայ ձեւովը պահուելու են :

Ոմանք յերած շտաց՝ Գամազրքի սոյն եղանակը նոյն կը համարին ընդ հիւշարժին տաճկաց և ըէ (նէվա) ճայնաստիճանի վերայ կը դրեն, իբր ներդաշնակ ընդ «ն» (սէկեահ) ճայնաստիճանի որ հիմնաճայնն է նոյն եղանակին : Բայց եթէ այնպիս ալ ըլլայ՝ լա ճայնաստիճանի վերայ դրել աւելի յարմար է գոնէ մեր եկեղեցական երգոց՝ մանաւանդ Ս. Պատարագի երգոց համար, որով միայն կը համաճայնի մեր միւս եղանակներուն հետ. և յայնժամ քի «քի» (արաք) ճայնաստիճանն ալ կը վարուի փոխանակ «ն» ճայնաստիճանի, որոյ հետ իրեւ թէ լծորդ է արեւելեան եղանակաց մէջ :

Գամազրքի եղանակներէն շատը որք այսօր յորդոր կ'երգուին՝ ՚ի նախնունմն ծանր ըլլալին յայտնի է իրենց խաղերուն ստուարութենէն. շատ մը երգեր ալ որք այսօր թիւ են, ինչպիս են Գամամուտները, Մեսեդիները, Ուղիղ եղիցիները և այլն, երբեմն եղանակաւ կը կարգացուէին, որպէս յայտնի է հին Գամազրքերու մէջ ասոնց վերայ գտնուած խաղերէն : Շատ մը երգեր ալ կան հին Գամազրքերու մէջ որք այժմ անգործածելի են :



Ճամագրքի երգերուն վերայ այսչափ խօսել կը բաւէ, քանի որ իրենց խաղերէն հետեւութիւն մը հանել կարելի չէ, և աւանդութեան վերայ միայն հիմնեալ են այսօր. բայց սա պէտք է կրկնեմք որ ասոնց մէջ ալ ընդհանրապէս ընդունուած ձեւերը պէտք է յարգել և պահպանել, աւելորդ և նորամուտ գեղգեղանքներն՝ ի բաց խելով, և եկեղեցոյ վայելուչ պարզութեան և վսեմութեան վերածելով զսնոնք:

Մեծայարգ բարեկամ, մատուցանելով այս առթիւ մեր սիրոյ բարեւններուն հետ և մեր խորին յարգանքը, Մնամ . . .

Կ. Պօլէ . . . 1 Մայի . . . 1870.

Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Ա. . . .

101

### Արժանացարգ բարեկամ.

Ընկալար մօտ օրերս ձեր մէկ դրութիւնը որով կը հարցնէք մեր կարծիքը հայերէն ձայնագրութեան կազմութեանը և անոր եւրոպականին հետ ունեցած համեմատութեանը մասին:

Ուրախ եմք ձեր հարցասիրութեանը վերայ, և ամենայն սիրով կը պատասխանեմք, բայց որպէս զի գոհացուցիչ տեղեկութիւն մը տալու կարող ըլլամք, քիչ մը մանրամասնօրէն գրելու ստիպուած եմք, նախ՝ եւրոպական ձայնանիշներէն սկսելով:

Յայտնի է որ երաժշտական ձայնանիշներուն ամենէն առաջինն ու կանոնաւորը եւրոպական ձայնանիշներն են: Բայց թէ արդեօք ի՞նչպէս եղեր է որ ասի հնարուեր է: Ուշագրութեան արժանի խնդիր մ'է սա, և մեք թէպէտեւ այս մասին բան մը չեմք ընթերցած կամ լսած, բայց իրր զխտողութիւն՝ մեր թուիքը յառաջ կը բերեմք:

Կը կարծուի թէ եւրոպական ձայնագրութեան՝ գծերու վերայ գրուելու դրութիւնը՝ մարդուս ձեռաց հինգ մատներէն առնուած է. բայց այս կարծիքը եթէ հաւանական եւս ըլլայ, աւելի ձայնագրութեան ձեւին կրնայ պատկանիլ քան թէ ձայները դրի առնելու գաղաբարին, որ ըստ մեզ աւելի քնարի լարերէն յառաջացած պէտք է ըլլայ հաւանականաբար. վասն զի քնարը


աւելի մեծ առընչութիւն ունի ձայնադրութեան հետ քան զմար-  
դոյ ձեռաց մատները :

Ինչպէս որ մարդիկ նախ քան զգիւտ դրոց՝ իրերու պատկեր-  
ները և յետոյ ուրիշ գաղաբարներու յարմար պատկերներ նկա-  
րելով՝ անոնց միջոցաւ մտքերնին իրարու կը հազորդեն եղեր , և  
յետոյ այս պատկերներուն նմանողութենէն առաջին սյրութենը  
յառաջացեր է , նոյնպէս եղած է գրեթէ և ձայնանիչներու համար :

Շատ հին ժամանակներէ ՚ի վեր մարդիկ ունէին երգ և  
քնար : Քնարներու մէջ նախնական են հաւանականաբար եղեգէ  
սրինգները , տաւիղները , և յետոյ աղէլար , անկոթ քնարները՝  
աւելի յետոյ մետաղեայ թելերով և կոթով քնարները : Նախնա-  
կան աղէլար քնարները կը նմանէին այժմեան Ղանաձ , Հարբա ,  
Կէրա , Սանթաթ բառաւորներուն , որոց ամենուն վերայ ալ վարի  
կողմէն երկայն լարերով ցած ձայները կը սկսին , և հետզհետէ  
դէպ ՚ի վեր՝ լարերը կը կարծրնան ու ձայներն ալ կը բարձրանան :

Երեւակայէ՛ , նախ քան զձայնադրութիւնն եղած ասանկ քնար  
մը որ քսան ու մէկ լար ունենայ , և որոյ ամենէն երկայն լա-  
րը  $\phi$  + լէ ի վարի գծին վերայ եղած ցած «լ ձայնը ունենայ և  
անկէ դէպ ՚ի վեր ամեն մէկ լար հետզհետէ կարծրնալով ձայներ-  
նին բարձրանան , և ամենէն վերի կարծ լարը «լ + լէ ի վերի գծին  
վերայ եղած  $\phi$  ձայնն ունենայ , սապէս .

Սու + լէն վերի  $\phi$ ա յայն



$\phi$  + լէն վերի սուլ յայն



Եւ երբ այսօրինակ քնարի մը կազմութեանը և ձայներուն աստիճանին վերայ գաղաբար մը տալ ուզես գրով, բնականաբար լարերուն տեղ գծեր և ձայները որոշ իմացուելու համար մէկ մէկ կէտ կը գործածես որք լարերուն հանած ձայները ցուցնելու կը ծառայեն, աստիճանաբար 'ի վեր կամ 'ի վայր ելելէջ ընելով առ 'ի շեղ՝ ըստ երկայնութեան լարերուն: Բաղդատէ՛ զայս եւրոպական ձայնանիշներու սկզբանը հետ, այսինքն՝ գծերու վերայ կէտերով ձայներու ելելէջ ցուցնելու դրութեան հետ, և ահա կ'իմանաս թէ 'ի նչպէս քնարի գաղաբարէն՝ եւրոպական ձայնագրութեան գաղաբարը յառաջացեր է: Եթէ այսպէս շլլար՝ և պարզուպէս գրելու գաղաբարէն յառաջացած ըլլար ձայնագրութեան գաղաբարը, յայնժամ փոխանակ գծերու՝ այբուբենից պէս այլ և այլ ձեւերով նշաններ պէտք էր գործածուեր իբր ձայնանիշ: (Այս տեսակ քնար մը տասն կամ աւելի կամ պակաս լարերէ ալ կրնայ բաղկանալ. որպէս և տասնաղի քնարը 'ի նախնունմն՝ որ տասն լար ունեցող քնար մ'է անշուշտ: Այս պարագայիս մէջ տասն լարերը՝ երկու հնգեակի գծերը կը կազմեն. բայց տասն լարերու ձայնը՝ օր ըստ օրէ ճոխացեալ երաժշտութեան մը պիտոյից չբաւելուն համար, գծերուն միջոցներն ալ իբր ձայնակարգ գործածուած կ'ըլլան: Ասանց ո'րն ալ ըլլայ՝ մի և նոյն հետեւութիւնը կ'ելնէ, այսինքն՝ քնարի գաղաբարէն ձայնագրութեան գաղաբարին ծագումը:)

Բայց 'ի հարկէ այս գիւտը հետզհետէ կատարելագործուեր է և այս լարացոյց գծերը համառօտելու համար գծերու միջոցներն ալ իբր ձայնակարգ գործածեր են, ու մնացեր է տասնունմէկ գիծ: Չատէ՛ այս առանումէկ գիծը երկու հնգեակի, և ահա վարի հնգեակը կ'ըլլայ  $\text{Ֆ}^{\circ}$   $\text{Գ}^{\circ}$  'ի կարգը, և վերի հնգեակը  $\text{Յ}^{\circ}$   $\text{Դ}^{\circ}$  'ի կարգը ու մէջտեղի մնացեալ մէկ գիծն ալ կ'ըլլայ  $\text{Յ}^{\circ}$   $\text{Դ}^{\circ}$  'ի կարգին վարի յաւելուածը որ է ցած  $\text{Պ}^{\circ}$  ձայնը: Եւ այս հնգեակներու բաժանումը այսինքն՝ ձայները տարբեր  $\text{Գ}^{\circ}$ ներու բաժնելու դրութիւնը՝ ձայնաստիճաններն աւելի ղիւրրմիտներ ընելու համար է եղած, որպէս զի գծերու խտութիւնը աչքի դժուարութիւն չտայ: Քլէներն (բանալի)  $\text{Ե}^{\circ}$ ,  $\text{Յ}^{\circ}$   $\text{Գ}^{\circ}$ ,  $\text{Ֆ}^{\circ}$   $\text{Դ}^{\circ}$ ,  $\text{Պ}^{\circ}$   $\text{Գ}^{\circ}$ :

Եւրոպական ձայնանիշներու ամեն մասերն ալ բնական ու տրամաբանական օրէնքներու վերայ հիմնեալ են, ինչպէս են ձայներու տեւողութեան և ձայնահատերու նշանները որք հաստ գծե-

րով կը ցուցուին, և գծերը քանի՛ շատնան, տեւողութիւններն ալ կը շատնան. կէս տեւողութեան յաւելման կանոնն ալ փոքր կէտով մը կը ցուցուի, և ո՛ր ձայնանիշին հանդէպ դրուի՝ միշտ անոր կէսին չափ տեւողութիւն կ'աւելցընէ. կիսաձայները քէլին քով դրուելով կ'ազդեն այն ամեն ձայներուն վերայ՝ որոց կարգին վերայ դրուած են. ելեւէջներն ալ ինչպէս յայտ է՝ բնական օրէնքի վերայ հիմնեալ են. և այլն, և այլն: Մնացեալ ամեն կանոններն ալ այսպէս ըլլալով այս եւրոպական ձայնանիշներն ամենէն կատարեալներն են աշխարհի վերայ: Այսօրուայ օրս անոր համապատասխանող ուրիշ ձայնանիշ մը եւս չկայ. ոչ յունական եկեղեցւոյ ձայնանիշները և ոչ մեր հին խազերը կրնան անոր հետ բազդատութեան մտնել, բաց 'ի հայերէն նոր ձայնանիշներէն, որ իբր քառասունուհինգ տարի յառաջ հնարեց Տիրացու Համբարձում անուն հայ երաժիշտը, մի և նոյն եւրոպական դրութեան՝ այն է նշաններով որոշ ձայնատիճաններ գրելու գրութեան վերայ հիմնեալ:

Ասի մեծ գաղափար մ'էր որ յղացաւ մեծանուն հայ երաժիշտը ոչ միայն մեր ազգային երաժշտութեան յառաջադիմութեանը նկատմամբ որ գլխաւոր շարժառիթն էր իրեն այլ և 'ի մասնաւորի ընդհանուր արեւելեան երաժշտութեան նկատմամբ, վասն զի այս երկրորդ կանոնաւոր ձայնանիշներն էին աշխարհիս վերայ, ուրկէ օգուտ պիտի քաղէր բոլոր արեւելք, յորմէ զուրկ էր ցայնժամ: Այս ձայնագրութեան կազմութեանը և արեւելեան մասնաւորապէս մեր ազգային երաժշտութեան նկատմամբ ունեցած դիրքին վերայօք մեր կարծիքը հետեւեալն է:

Սոյն ձայնանիշներու դրութիւնը եւրոպականէն առնուած է. անունները թուրքականէն և ձեւերը հայկական հին խազերէն: Անունները թուրքականէն առնուելուն պատճառը թերեւս այն ըլլայ, որ հեղինակը իւր առաջին փորձերը և դասերը Ռամսուր ըստուած քնարին վերայ ընելով անոր ձայնատիճանաց թուրքերէն անունները գործածելու ստիպուած է որ մանաւանդ նոյն ատենները ընդհանուր գործածական էին: Չեւերն ալ հայերէն հին խազերէն առնուած է, հայերէն հին խազերու յիշատակը յարգելու գեղեցիկ խորհրդով մը 'ի հարկէ: Չայներու բարձրութեանը Բութով մը և ցածութիւնը փոքր Գծով մը և կիսաձայները Երկար նշանով մը ցուցուած է, որոնք դիւրին և կոկիկ կա-



նուններ են : Ասի չունի եւրոպականին պէ՞տէ (կէսվար) նշանը , այլ ամեն կիսաձայն միշտ կէսվերով (տիէ գիգ) կը ցուցուին . ամանակներու նշանները թէեւ եւրոպականին միօրինակ դիւրութիւնը չունին , այսինքն ամեն ամանակի նշաններու որոշ ձեւեր կան , բայց ձայնահատերը դիւրին կանոն մը ունին , այսինքն՝ ամեն ամանակի նշան երբ ձայնանիչներու կարգին մէջ գրուին , իրենց արժէքին չափ ձայնահատ կը ցուցնեն : Թէեւ ինչպէս յայտնի է՝ ձայնանիչներուն ձեւը եւրոպականին պէս որոշ ձայնատիճան ցուցնելու բնական դիրքը չունին , այսինքն՝ ոչ թէ դիրքէն այլ ձեւէն սխալ իմացուի ձայնատիճանին զաղարարը , այսու ամենայնիւ ասոնք ալ ուրիշ կանոն մը ունին թերեւս աւելի դիւրին քան գեւորականը՝ այսինքն ամեն մէկ չափ իրը մէկ մէկ բառ առանձին կը գրուին , այնպէս որ ամանակի տեւողութիւնը կամ քանի՞ ձայն մէկ չափ ըլլալը շատ դիւրին կերպիւ աչքի կը զարնէ , և առանց ամանակի նշանակներու անգամ կրնայ իմացուիլ իրենց տեւողութիւնը մանաւանդ երբ հաւասար ըլլան : Կը սոյն օրէնքին վերայ հիմնելով՝ ամանակի նշանները ամեն մէկ ոտքի համար առաջին ձայնանիչին վերայ դրուելով յետագայից ալ կ'ազդէ մի և նոյն չափին մէջ միայն , և այս ազդումը այն ատեն կ'ընդհատի երբ ուրիշ ամանակի նշան մը յաջորդէ ասոր , նման ըստ իմիջ եւրոպական երաժշտութեան մէջ կիսաձայներու սղջման օրէնքին : Հայերէն ձայնագրութեան կիսաձայնը միմիայն իւր գրուած ձայնին վերայ կ'ազդէ : Ամանակի նշաններն ալ մէկ ոտքի վերայ հիմնեալ են կէտ նշանով , եւրոպական ամբողջին պատասխանող 4/4 նշանը 'ի վերջոյ հնարուած է :

Այս ձայնագրութեան մէջ ամանակներու նշանները և անոնց անուաններն ալ անյարմար են . ասոնք ալ հին խաղերէն առնուած ըլլալով , որք են կէտ , Սոոր , Երկատոր , Մունկ , Մնկներ , Թաւ և այլն , այս անուանները բնաւ վերաբերութիւն չունին ամանակի զաղարարին հետ . եթէ աննշան բառեր ըլլային՝ հոգ չէր , բայց քանի որ ասոնք ուրիշ իմաստով նշանակութիւններ ունին , ամանակներու գաղարար բացատրելու չեն՝ յարմարիւր . զոր օրինակ . Թաւ անունը որ բաղաձայն տառի՛մը թանձր հնչումը կը նշանակէ , ի՞նչ վերաբերութիւն ունի ամանակի 3/8 տեւողութեան գաղարարին հետ . և այլն ըստ այսմ : Սակայն զիարդ և իցէ սոյն ձայնագրութիւնը եթէ եւրոպականին չափ ճոխ ու դիւրին ալ չըլլայ .

բայց մէկ քանի յատկութեամբը մանաւանդ արեւելեան եղանակաց վերարեբութեամբ՝ գրեթէ եւրոպական ձայնանիչներուն չափ կատարեալ կրնայ համարուիլ . և եթէ եւրոպականին նման ներդաշնակ ձայներէ զրուելու համար օրէնքներ չունի, այն ալ արեւելեան երաժշտութեան բնութեանն է որոյ օրէնքին վերայ հիմնուած են ձայնանիչք, և ոչ թէ իրենց սրահասութեանն . սչսու ամենայնիւ կարելի է զատ զատ տողերու վերայ գրել ճերդ աշնակ ձոյներէ եղանակներ և 'ի պահանջել հարկին երգել :

Ինչպէս լած ենք, պատուելի հեղինակը այս ձայնագրութիւնը հնարած առնն քանի մը մանր կանոններ կամ ձեւեր պահաս թողեր է, այսինքն 3/32 և 4/4 ամանակի նշանները, ուժգին ու մեղմ և այլ նշաններ, բայց ասոնք իւր աշակերտները թէ՛ իրեն կենդանութեանը և թէ՛ յետոյ լրացուցեր են եւրոպականին հետեւողութեամբ : Այսչափ առ այս իօտելէ գլխի, քիչ մ'ալ այս ձայնագրութեան ներկայ վիճակին վերայ խօսինք :

Ճամանակաւ թէ՛ 'ի կենդանութեան հեղինակին և թէ՛ յետոյ՝ եղեր են մեծանուն ազգայինք ոմանք որք ամեն սատարութիւն ըրեր են այս նոր ձայնագրութեան տարածմանը, և բաւական տարի է անկէջ 'ի վեր որ քիչ շատ դասախօսութիւններ կ'ըլլան, բայց տակաւին ազգին մջ քսուն հոգի հազիւ կան կանոնաւորապէս դիտող և քանի մ'ալ օտարազգիք . ասոր ուսման յետոյ իմութիւնը 'ի հարկէ պատճառներ ունի, որոց մէկ քանին նշանակէնք : Նախ՝ պէտք էր ձայնագրութիւնը երաժշտական գիտութեանն՝ այսինքն եղանակաց կազմութեան արուեստն զատել մանաւանդ արեւելեան այն եղանակներուն համար որոց ելեւէջներու կազմութիւնն ըմբռնելը արդէն՝ տարիներու կարօտ է . պէտք էր քանի մը հիմնական ու դիւրին եղանակներ ընարել, և անոնց վերայ ուսցընել ձայնագրութիւնը . աւելի եղանակ սովորիլ ուզողը կրնար 'ի վերջոյ ունիլ, զի ոյլ է երաժշտութիւն գիտնալը և այլ է ձայնագրութիւն կարդալը, որք թէեւ իրարու առնչակից բայց զատ ճիւղեր են . վասն զի երբ առանց ձայնագրութեան՝ միայն ամանակներու օրէնքը գիտնալով երաժիշտ կայ, ապա ուրեմն առանց ամեն եղանակներ գիտնալու՝ միայն քանի մը հիմնական եղանակներ գիտնալով ալ ձայնանիչ գիտցող կ'ըլլայ : Երկրորդ՝ ուսուցանողներու նախանձը որ չէին ուզեր ուսցընել, և ծածկը պայմաններ կ'առաջարկէին, և ինչպէս ըսինք դիւրութեամբ



մի թատ մ'ալ չըլլալով՝ խեղճ ուսանողը աստիճանի վրայ կերպիւ տա-  
րիններով կ'աշխատէր ու չէր կրնար աւարտել . մինչեւ անգամ  
երդուններ ալ ընել կու տան եղեր որ ուրիշի մանաւանդ օ-  
տարազդի շտովեցընէ : Երբորդ՝ դժուարութիւն մ'ալ են  
չափերու բաժանումները . հին տաճկական սուսուներն որք եր-  
կար և ձանձրալի պիւտիւններէ կը բաղկանան , յետ հնարման  
ձայնագրութեան աւելորդ լին ըլլալուն , պէտք էր որ փոխա-  
նակ ասոնց՝ պարզ և կարճ սուսուներ դորձածուէին , և այլն , և այլն :

Իսկ ազգային երաժշտութեան մանաւանդ եկեղեցական եր-  
դոց վերայ խօսելով , պէտք էր եկեղեցական եղանակաց վերայ  
զաս տրուէր , 'ի հարկէ յաւելցընելով ասոնց համապատասխանող  
և այլ ուրիշ աշխարհի պարզ ու հիմնական եղանակներ ալ որք  
սովորաբար կը դորձածուէին թէ՛ եկեղեցւոյ մէջ և թէ՛ դուրսը :  
Սմանակներու մասին եւս ազգային տաղաշարական օրէնքները  
պէտք էր նկատողութեան տուուլ և եթէ պէտք ըլլար՝ թուրքա-  
կանէն կ'առնուէին պարզ ու կարճ չափեր :

Բայց խնդրոյն ազգային մասը նկատողութեան չառնուելով ,  
և թուրքականն իրր օտար՝ մերժելու ջանք ըլլալով , փոյթ տարուեր  
է միայն որ թուրքական երաժշտութիւնը հայացընեն , և ասոր  
համար է որ Բասմալիէի թուրքական շարքը՝ իրր թէ թարգ-  
մանուեր է հայերէնի , այն է Տիրածին կոյս յերասի , եք .  
այլ և եկեղեցական երգերը արձանագրելէ աւելի փոյթ տարուեր  
է յօրինուելու թուրքերէն պիւտիւններու նմանողութեամբ և  
երբեմն բառական հետեւողութեամբ հայերէն երգեր՝ եւ լէ լէ  
լէ լէ լէ լէ Նասուրներով որք բոլորովին օտար են հայկականէն ,  
բազմաթիւ եղանակներով Յարեաւ քրիստոս , Տաղ , Մեղեդի և  
այլն , և ասոնցմով՝ իրաւ է որ ճոխացընել ուղեր են հայկական  
երաժշտութիւնը , բայց միանգամայն և խոնքեր են աւելորդնե-  
րով և դժուարացուցեր են , ինչու որ ասոնց եղանակաց շատը  
թուրքական երաժշտութեան մէջ անգամ հազիւ դորձածուէի են :  
Վերջապէս երկու կողմին ալ անմատչելի դիրքի մը մէջ մտեր է սոյն  
ձայնագրութիւնը . ոչ հայ երաժշտութեան պիտոյքը ըստ արժան-  
ւոյն լրացուցեր է և ոչ տաճկականինը . և այսօր հայը՝ Հայերէն  
ձայնագրութիւն կ'անուանէ զայս , առանց գիտնալու թէ Հայերէն  
ըսուելու ինչ յատկանիշ ունի . տաճկին ալ Օսմանլը Կոնստանդնուլիս  
կարծելով թէ յատուկ իրեն համար շինուած է , առանց նկատու-

դուժեան առնելու թէ ի՛նչո՞վս կ'ըլլայ որ ձախէն յաջ գրուած և հայկական ձևերով ձայնանիշները թուրքական եղած կ'ըլլան :

Վերջերս ոմանք ՚ի հայ երաժշտաց՝ թուրքական բաղմամբանի անունները փոխել ձեռնարկելով, այլ և այլ միաժանի բառեր հնարեցին յարմար կամ անյարմար, և ոչ մէկուն ըրածը միւսը ընդունեց . ոմանք ալ խաղերու հին անուանց սկզբնաժամակերպ գործածեցին, զոր օրինակ . ֆուշին ըսին ֆ, խոանձին ըսին ֆ, փընսֆուշին ըսին փ, քեհկորձին ըսին ք, և այլն . (տես ՚ի Քննար Հայկականս Կ. Պօլսոյ : ) Ասոնք թէ, եւ միաժանի բայց ըստ դրութեան անհեթեթ և ըստ հնչման խժալուր ըլլալուն՝ չընդհանրացաւ . վասն զի ինչպիս ըսինք ամանակներու նշաններուն համար, ասոնք ալ այնպէս են, այսինքն՝ հին անունները խաղերու սրաշտօնին նկատմամբ դրուած են և ըստ այնմ՝ նշանակութիւն մը ունին, որոց կրճատեալն իրր անուն գործածելը անհեթեթ է ըստ ուղիղ բանի : Ամանք ալ ուղեցին եօթն ձայնաւորներու անունով կոչել զձայնաստիճանները թերեւս հետեւիլ ուղելով եւրոպացւոց ոմանց այն սովորութեանը որք խաղերու գծերն ու միջոցները «, ք, ֆ ՚ի անուամբ կը կոչեն . այլ պէտք է գիտնալ որ ասոնք միայն մտաւորութեան և գծերուն կարգը գիւրբխունելի ընելու և վարժութեան գիւրբութիւն տալու համար կ'ընեն զայս, և ոչ թէ իրր խաղերու անուն կը գործածեն : Չայնական երաժշտութեան դասառութեան մէջ շատ անգամ պէտք կ'ըլլայ խաղերուն անունները իբր բառ հնչելով երգել եղանակը, և այս սլարագային մէջ թէ՛ թաւ բաղաձայնները և թէ՛ պարզ ձայնաւորները երկուքն ալ անյարմար են արտասանութեան, մէկը թանձրալուր և խժական բարբառ մը յառաջ կը բերէ, և միւսն շօթենթական կամ կատուային հնչիւն մը : Մենք շատ բնտակցինք տառերու մէջ նուրբ, կահուղ տառեր բայց տեսանք որ ամենէն յարմարները եւրոպացիք արդէն գործածեր են, ալ մեզի բան մը չը մնաց ընելու եթէ ոչ քէին բո ըսել, ւին լէ, և այլն . և այս ալ իմաստակութիւն մը ըլլալով՝ վաղուց սրուեցինք եւրոպական անունները գործածել մեր դասատետրին մէջ . և ի՛նչ հարկէ՛ արուեստական և աննշան միաժանի բառերու համար ուրիշ անուն բնտակել, քանի որ արդէն ալ չէ դրուած . եւրոպականը գործածելը սա օգուտն ալ ունի որ ասոնցմէ՛ մէկն ուսնողը միւսն ալ ուսած կ'ըլլայ :

Իսկ դաստիարակական անկանոն վիճակին վերայ արդէն խօ-



սեցանք : Գաստատուներուն վիճակն ալ արդէն ծանօթ է ձեզ :  
 Հոյ ձոյնագրութեան այս վիճակին նայելով մենք մեծ  
 յոյս մը չունինք ներկայիս համար , բայց երանի՛ թէ դանուէին  
 սմանք որ գեղեցիկ նախանձով որ ըստ օրէ զարգացընէին թէ՛  
 դէպ երաժշտութիւնն ու ձայնադրութիւնը և թէ՛ զարեւելեան  
 երաժշտութիւնը , որոյ բարեկարգութեան սարձանքը իւր որդ-  
 ւոց սեփնականէր մեր ազգը , և բոլոր արեւելից մէջ հոչակ-  
 ուէր թէ՛ սոյն հայերէն ձայնագրութեան և թէ՛ անոր հայտդի  
 հեղինակին անունը՝ փոխանակ զի այժմ անձուկ սահմանի մէջ  
 գրեթէ անծանօթ մնացած է :

Ուսմք կը կարծեն թէ կանոնաւոր ձայներու վերայ յատուկ  
 ուշադրութեամբ երգելու մասին զժողովութիւններ կան , բայց  
 առի սխալ է . եթէ եկեղեցւոյ երաժիշտները ընդ հանրապէս  
 ստակական խաղերու վերայ իրենց ունեցած ուշադրութենէն փոքր  
 մաս մը միայն նուիրեն եկեղեցական երգոց , այնչափը բաւական  
 է . որոյ օրինակ են մեր այն դպրները որք դործի տէր անձինք  
 ըլլալով հանդերձ կրցած են միշտ ժամանակ դանուլ եկեղեցա-  
 կան երաժշտութիւնն ուսնելու , և ձայնագրութիւն գիտցողներէն  
 ալ աւելի օգուտ ըրած են մեր եկեղեցւոյն , իրենց աւանդա-  
 պահութեամբը և աշխատութեամբը , և այս ալ ոչ միայն եկեղեցւոյ  
 մէջ այլ և ուրիշ ազգային դործոց մէջ ևս՝ իրենց համախոհու-  
 թեամբը և կարգութեամբ ընկերութիւններովը , որոց շատը դեռ  
 եւս կան և իրենց կալուածներն ևս ունին , ինչպէս և Կ. Պոլսոյ  
 Օրթոդոքսիէի ձերձանութեան թանգարանն ալ որ դեռ կը կենայ  
 և քանի մը հրատարակութեամբն ալ ծանօթ է ազգայնոց , նոյն  
 դիւղի դպրաց հիմնած թանգարանն է :

Սա եւս պէտք է յիշել թէ բարեյիշատակ Պէդճեան ամիրայն  
 յատուկ կտակաւ ամիսը հինգ հարիւր զուրուշի թոշակ մը թողու-  
 ցած է որովս զի անով երգերու չափահաս դպրաց համար դա-  
 սախօսութիւն ըլլայ Մայր եկեղեցւոյ ռուսմարանին մէջ :

Աղինւ բարեկամ , կարծեմ ձեր երկայնամութիւնը շարաշար  
 գործածեցինք՝ շատ երկարելով սոյն գրութիւնը , բայց չխօսուած  
 խնդիր մը ըլլալուն՝ ակամայ ստիպուեցանք երկարել , յուսալով որ  
 ուշադրութեան կ'առնուք և ձեր կարծիքը ևս կը հազորդէք մեզ :  
 Ընդունեցէք այս առթիւ և մեր խորին յարգանքը :

## ՏԻՐԱՅՈՒ ՀԱՄԲԱՐՉՈՒՄ (1)

(Տե՛ս 'Է Բաղձա՛վեդ Հանրէսարան 1875 Ս. որտէ՛ եւտճնէոյ )

Մեր ազգին մէջ շատ մեծ հանճարներ անժանօթ մնացեր են առանց լաւ մշակուելու : իրենց ձեռք տուող մը չունենալնուն համար : Ասոնցմէ մէկն է Տիրացու Համբարձումն , որուն անունը շատերը լաւ կ'ըլլան , շատերն ալ անսած են զինքը , բայց ո՛րքան աւելի անուանի կ'ըլլար , թէ որ սղտիկուց իրեն ձեռնառութեամբ մը ունեցած ըլլար : Քանովա՛ զեղացիի մը զաւակ էր իտալացի , մեր դարուն մէջ . մեծատուն մը անսնելով սա տըղուն քարէ ու փայտէ շինած խաղաղիկները , առաւ զինքը արձանագործութեան դարոց մը դրաւ . ասանկով Քանովան եղաւ մեր ատենի արձանագործներուն ամենէն երեւելին , ու այսօր գեղարուեստից ճարտարները կը զմայլին իր շինած արձաններուն վրայ : Իր ծնած գեղը Փոսանկոյ՝ ուխտատեղոց մը պէս եղած է , ուր հետու աշխարհներէ ալ շատերը կու գան ատենելու իր ճարտարապետած եկեղեցին , որուն մէջի արձաններն ու զարդերը դեռ չի լմնցուցած վախճանեցաւ : Թէ որ այն բարերար մեծատունը եղած չըլլար , Քանովան գեղացի կը մնար , իր մեծ հանճարն ալ չէր սրայծառանար :

Տիրացու Համբարձումն ունեցած երաժշտական հանճարն ալ ասանկով յայտնի եղաւ , ու աւելի ալ կը յայտնուէր , թէ որ իր առջի հասակը մինչեւ յերիտասարդութիւն՝ առանց կրթութեան անցուցած չըլլար : Իր հայրը՝ որ Խարբերդցի Սարգիս կ'ըսուէր , Խարբերդի Միւսէլիմին հարստաշարութենէն փախչելով՝ եկեր է 'ի Պոլիս կնճմալը , ու հոն ունեցեր է որդի , տիրացու Համբարձումը : Ասոր ծնած տարին ճիշդ չի գիտցուիր , բայց 1768 ին ատենները կ'իցնայ . վասն զի 1859 ին վախճանած ատենը 71 տարուան է եղեր :

Երբոր մեծցաւ , հայրը զինքը դերձակի մը քով դրաւ . տղան

(1) Այս և հետեւեալ հատուածները թէև թուականի կարգաւ յետոյ են քան զյետագայ գրութիւնները , բայց թղթակցութեանց կարգին սրտականկրան համար՝ ստա ղետեղեցիներ :



առաջ գնաց արուեստին մէջ . ան միջոցին դրադրութիւն ալ կ'ընէր մեծարոյ Պարոն Գրիգորին , որ մեր ազգային ճարտարապետներուն առաջինը եղաւ : Բայց մէկ զիէն կարօտութիւնը , մէկալ զիէն ալ իր երաժշտական հանճարը ստիպեցին զինքը տիրացու ըլլալու , եկեղեցեաց մէջ դպրութիւն ընելով : Իր ուսկից սորվելը ստ երգերը չի գիտցուիր . բայց Շարականի խաղերուն վրայ անանկ վարժութիւն մը ունէր՝ որ անոնցմէ իմանալով եղանակներուն բերնէ բերան անցնելով աւրուիլը , կը գուշակէր անոնց առաջուց ինչպէս շինուած ըլլալը , ու առանց խաղերուն մեծ փոփոխութիւն մը ընելու կը կենդանացընէր շարականներուն բուն եղանակը , սահելով միշտ ութ ձայնից դանաղանութիւնը , որով եղանակներն ու խաղերը իրարմէ բոլորովին տարբեր ըլլալով , չէր մնար ձանձրալի միաձայնութիւն մը , ու չէր փոխուէր մեր ազգային երաժշտութիւնը , որ մեր ազգին սրբազան աւանդից մէկն է , իր մեծալայելուչ արարողութեանցը հասակակից : Ափսո՛ս , որ անոր յարգը չի ճանչցողներէն ոմանք սկսեր են հիմայ ազգային երաժշտութիւննիս փոխել , ու եւրոպական կամ տաճկի եղանակներ խօթել մեր եկեղեցեաց մէջ :

Իր մեծ վարպետութիւնը երաժշտական ամանակին վրայ էր . անոր համար իր աշիերաններուն կը սորվեցընէր՝ եւրոպացւոց պէս ձեռքի ելեւէջով չափել ամանակը , մանաւանդ տղոց՝ որոնցմէ դեռ կենդանի մնացողներ կան , ու երգելուն կերպէն ալ կ'իմացուի վարպետուն կանոնաւոր երաժշտութիւնը :

Տիւղեանց ազգասէր ընտանեաց ան ատենի զխաւորն , Յոհաննէս Չէլէպին , շատ սէր ունենալով ազգային եկեղեցական երգոց , երբոր ծանօթութիւն ունեցաւ Տիրացու Համբարձումին , ձեռք դրաւ վրան , ու տոէպ կը կանչէր զինքը՝ լսելու անոր երգերը . հետեւաբար անոր կարօտութիւնն ալ կը լեցընէր , ինչուան բնակութիւն ալ տուաւ Գուրուչէլմէ իրենց պալատին մէջ :

Ան ատենները Ղալաթիա՝ Լատինացւոց Ս . Գէորգ ժամունքովի տունը , ( որ հիմայ Խռուաթներուն ազգային ժամն ու հիւրանոցն է ) , Լուսաւորչեան անունով մեր ազգին տղոցը համար դպրատուն մը բացուած էր , նոյն բարերար Տիւղեանց և ուրիշ ազգային մեծամեծաց ողորմութեամբը , և ղենետիոյ Մխիթարեան վարդապետաց տեսչութեամբը : Յոհաննէս Չէլէպին ուղեց որ ան դպրատան տղոցմէ ձայնեղները՝ մեր եկեղեցական երգերն

ալ սորվին, ու երաժշտութեան վարժապետ դրաւ հոն Տիրացու Համբարձումբը: Շարափը երկու օր կու դար, ու քսան քսանը-հինգ աղբց կը սորվեցընէր շարականներ, տաղեր ու ձայնաւոր պատարագին երգերը, նոյն ոճովն որ ըսինք, այսինքն ձեռքի զարնուածքով, որ ինքք Տեաֆէ+ կ'անուանէր: Երբոր ամենքը մէկտեղ նոյն շափով ու ելեւէջով կ'երգէին սորված երգերնին, անանկ ակտրժելի կը լսուէր անոնց համաձայնութիւնը, որ սրահին սաջլեւի փողոցը կը լեցուէր Սօֆտաներով, Տերպիլներով ու ժողովրդով: Աս կերպով սորվուած երգերուն մէկ օգուան ալ աս էր որ՝ աղաք առանձին երգելու ատեննին ալ, միշտ նոյնպէս ու իրարու նման կ'երգէին, ու եղանակները չէին փոխուէր. և այսպէս իր եղանակները՝ պահուած էին ՚ի Պոլիս, մինչեւ հիմայ ալ պահուած են յ'Էնեոտի սուրբ Ղազարու վանքը:

Բայց Տիրացու Համբարձումբ այսչափով գո՛չ չէր. սկսաւ ետեւէ ըլլալ եղանակները գրելու կերպին ալ, որպէս զի չիմացուին, ու բերնէ բերան անցնելով չիփոխուին: Մեր ազգային խաղերը որչափ ալ եղանակը զխոցողին կ'օգնեն յիշելու երգին ամանակն ու ելեւէջները, եղանակը չիփոցողը չիկրնար անոնց ուժովը չիտրված երգը երգել: Եւրոպացւոց խաղերն ալ, այս ինքն ռե՛սաները շէն բուեր մեր եղանակները գրելու. խաղացի վարժապետ երաժիշտ մը շատ աշխատեցաւ փորձեց մեր ձայնաւոր պատարագին երգը ռե՛սայի վրայ անել գրել, ու դրածը սխտոր հրատարակուի, բայց միշտ սխալատու է. որովհետեւ եւրոպական երգերը աստիճանէ աստիճան չիտակ կ'ելլեն կ'իջնան, իսկ մեր երգերուն աստիճանները մանրամասունք ունին. այս ինքն աստիճանէ աստիճան խաղերով կ'ընեն ելեւէջը: Անոր համար Տիրացու Համբարձումբը ետեւէ էր աս թերութեանը ճարը ընելու. նոր խաղեր ալ հնարեց, բայց մահը վրայ հասաւ, կիսկատար մնացին: Այսու ամենայնիւ մեր Բժշկեան Տրտղորդնցի Հ. Մինաս վարդապետը որ ժամանակակիցն էր, անոր օգնութեամբ մեր երաժշտութեանը վրայ տեղեկութիւն մը գրած է. որ և ատենօք կրնայ հրատարակուիլ: Տիրացու Համբարձումբն աչկերան ալ՝ Չէօմէկձեան Տիրացու Պետրոսը, որ ասանդապահ եղաւ վարժապետին եղանակներուն, իր վարպետութեամբը ետեւէ եղաւ անոր սկսած արուեստը կատարելագործելու, բայց իր կեանքն ալ չիրաւեց: Անկէ ետեւ ալ Տիրացու Գարբիլը ե-



լաւ, որ նոյն իրազերը կատարելագործել ջանալուն համար նշանակեց ըստեցաւ, բայց ինքն ալ վախճաբին չիհասած՝ վախճանեցաւ ։ Ստոնց գրուածքները որուն քով մնալը շենք գիտեր . երանի թէ չիկորսուէին, և ուրիշ ազգային վարպետ երաժշտի մը օգտակար ըլլային ։

Աս կարճ տեղեկութիւնը տալինք, որպէս զի հիմակուան ազգատէր երգասպետներուն յորդոր մը ըլլայ, որ մեր սրբոց հարց Սահակայ ու Մովսէսի և այլոց սրբոց քերթողաց շինած շարահաններուն հոգեչունչ եղանակները կենդանացնեն, ու անոնց աննուաց և անիտօտի մնալուն կերպը գտնան . որպէս զի պահուի ազգային հոտութիւնը, որ իրեն յատուկ բնականութիւն մըն ալ ունի, ինչպէս և բոսպոլսի վարպետ երաժիշտներն ալ կը վիպեն ։

ԳԵՐ. ԵԳՈՒՆՆԻ Գ. ՀԻՒՄԻՒՆՉԵԱՆ

### ՔԱՆԻ ՄՐ ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

(ՏԷ՛՛ Ի Մասէս Լրագիր, ԹԷ՛՛ 1397 .)

Վենետիկոյ Մխիթարեան հարց հրատարակած Բաղմապիկ Հանդիսարանի առաջին եռամեայ սրահին մէջ (1873) յօդուած մը կարդացինք, որ զխաւորացիս կը պարունակէր տիրացու Համբարձում (նօթածի կամ պատրա) անուն երաժիշտ դասատուին կենտադրութիւնը ։

Մեք՝ ամեն երախտադէտ ազգայնոց կողմէն յատուկ շնորհակալութիւն մատուցանելով Գեր. Եղուարդ Վ. Հիւրմուրեանի որ բարեհաճեր է սոյն մեծանուն Հայ երաժշտին կենտադրութիւնն ՚ի լոյս ածել, կը փութամք այս տութիւ քանի մը դիտողութիւններ ընել, սոյն յօդուածին մէջ ազգային երաժշտութեան նկատմամբ եղած քանի մը ակնարկութեանց վերայ ։

Սոյն յօդուածին մէջ կ'ըսուի թէ « տիրացու Համբարձում նոր խաղեր ալ հնարեց բայց մահը վրայ հասնելով՝ կիսկատար մնաց » : Մեր գիտցածը սապէս է որ տիրացու Համբարձումի հնարած խաղերուն մէջ ինչ ինչ պահաններ թէ և կան եղեր, բայց

անոր աշակերտները թէ՛ իրենց վարպետին կենդանութեան ատեն և թէ՛ յետոյ դանոնք լրացուցեր են, այնպէս որ նորա վերջին տարիներէն և մահուանէն քիչ յետոյ սոյն խազերով ըստ բուսականին կանոնաւոր գրուած երգեր կան :

Իսկ Չէօնկէկճեան տիրացու Պետրոսը, որ իրբեւ երաժշտութեան վերանորոգիչ և տիրացու Համբարձումի աւանդապահը կը ցուցուի, ասի տարակուսելի է ըստ մեզ : Չէօնկէկճեան՝ տաճակական եղանակաց հետեւողութեամբ մեր եղանակները սրբազրոյ մը և կարելի է հայերէն նոր խազերու կատարելադործուելուն աշակից մը կրնայ համարուիլ, բայց ոչ երբէք իւր վարպետին աւանդապահը, և չեմք ուզեր հաւատալ թէ Չէօնկէկճեանի անունով եղած երգերը տիրացու Համբարձումի աւանդներն ըլլան. վասն զի մեք թէև չեմք տեսած զՉէօնկէկճեան, բայց իւր երգերէն մէկ քանին լսած ըլլալով՝ սոյն դատաստանը կ'ընենք :

Տիրացու Գարբիէլի վերայ ալ քանի մը խօսք կայ յիշուած, որ հաւանականաբար՝ Երանեանն է. ըսուած է թէ « Չէօնկէկճեան տիրացու Պետրոսէն ետեւ ալ տիրացու Գարբիէլը ելաւ որ նոյն խազերը կատարելադործել ջանալուն համար Նօնաճէ ըսուեցաւ » . այս խօսքը սխալ է. ժողովուրդը Նօնաճէ կ'անուանէ սոյն ամեն երաժիշտ դասատուները, որ կա՛մ տիրացու Համբարձումի հնարած խազերուն քիչ շատ տճղեկութիւն ունին, և կա՛մ եկեղեցական երգերու մէջ փոքր 'ի շատէ նորութիւն մը կը մտցընեն, թէև շատ անգամ յանդատե՛ն, որոյ համար իրաւամբ կ'ափսոսայ և Գեր. Հիւրմիւղեան : Տիրացու Գարբիէլէն շատ յառաջ և տիրացու Համբարձումի աշակերտներէն Յօհաննիսեան Արիս աղայն հայերէն նոր խազերու դասատուութիւնը կ'ընէր, և կը շարունակէ մինչեւ ցարդ, որոյ աշակերտն է տիրացու Գարբիէլ (Երանեանն) . ըսել է որ տիրացու Գարբիէլին Նօնաճէի համբաւ առնելէն շատ յառաջ նոյն խազերը կատարելադործեալ էին, և ասոնց դասախօսութիւններն ալ կ'ըլլար. և բաւական դիտցողներ ալ կային : Տիրացու Գարբիէլին համբաւը իբր Նօնաճէ աւելի անկէ յառաջացաւ, որ ինք վերջերը եւրոպական Նօնայի ուսման պարապելով, անոնց հետեւողութեամբ՝ բաւական ազգային երգերու եղանակներ հրատարակեց, ուրիշ աշխատակիցներ եւս ունենալով. և ասով ազգային երգերու տարածմանը մեծ աջակցութիւն ըրտծ կ'ուս :



Այս մէկ քանի զիտողութիւններն ընելէ զինի, կը փափաղ լո՞ք որ Բժշկեան Հ. Մինաս վարդապետի քով մեր երաժշտութեան վերայ գտնուած տեղեկութիւնները հրատարակուին 'ի մօտոյ, որպէս զի իմանամք թէ տիրացու Համբարձում ի՛նչ գաղաբար ունէր մեր եղանակներուն կազմութեանը և անոնց հին խաղերուն վերայ: Ամանակը որ երաժշտութեան հոգին է, չեմք գիտեր թէ տիրացու Համբարձում ի՛նչպէս կը գործածէր շարականաց համար. տիրացու Համբարձումի գիւմբէ՛ անուանած չափերը եթէ տաճկական գիւմբէ՛ներն են, ասոնք մեր եկեղեցական երգոց մեծ մասին չեն յարմարիր: Մեր երգերն իրենց յատուկ ամանակներն ունին, որք տարբեր են տաճկական գիւմբէ՛էն:

Եւրոպական խաղերով մեր եկեղեցական եղանակները գրեւ լու մասին ալ կ'ըսեմք թէ, մեր խաղերն երբ եւրոպականին համեմատեմք՝ գրեթէ այնչափ տարբերութիւն կայ ասոնց երկուքին մէջ՝ որչափ տարբերութիւն որ կայ Հայերէն ու Ղաթիներէն տառերուն մէջտեղ: Թէպէտ և խաղերն ալ եղանակի մը վերայ քիչ շատ ազդեցութիւն ունին իրենց կարգադրութեանը համեմատ, բայց խնդիրը եղանակին վերայ է, խաղերը ի՛նչպէս որ ըլլայ կրնան յարմարիլ:

Այս մասին շատ անգամ խաղերը չեն պակասաւոր քան մանաւանդ եւրոպացի երաժիշտները՝ որք չեն կրնար ինչպէս որ է ըմբռնել մեր եղանակները: Աւելի լաւ կ'ընէր վենետկոյ Միխիթարեանց բազմադիւն միաբանութիւնը, եթէ Ս. պատարագի երգերը զորս խոսակցի երաժշտի մը գրել տուած է և պիտի տպագրուի եղեր, նախ քան զտպագրութիւնն՝ մերազնեայ երաժշտաց զիտողութեանը ներկայացընէր, որով գոնէ աւելի՛ քիչ պակասաւոր կ'ըլլար, եթէ երբէք անպատճառ պակասաւոր պիտի ըլլայ՝ եւրոպական խաղերով գրուած ըլլալուն համար (1): Եւ եթէ եւրոպական խաղերն ստուգիւ անբաւական են մեր եւ

(1) Եթէ մեր եղանակները աստիճանէ աստիճան խաղերով կ'ընեն իրենց ելեւէջը, ասիկայ ձոյնաստիճաններով շրջուցուիք այլ ձայներու Զօրութեանց և այլ ուրիշ երաժշտական նշաններով, որք եւրոպական գործիքական երաժշտութեան մէջ յաճախ կը գործածուին բայց մեր նոր խաղերուն մէջ հապիւ ուրեք, զի երգողը ասոնց զօրութիւնը ականջի վարժութեամբ կը հասկնայ. բայց աւելի լաւ է թէև դժուար՝ որ խաղերուն վերայ գրուին այն նշանները:

ղանակները դրելու, ինչո՞ւն փոյթ չտանիմը մեր խազերը տարածել գոնէ մեր եկեղեցական երգոց համար :

Բերկրութեամբ կը տեսնեմք որ մեր 'ի վաղուց ունեցած փափաքը օրըստօրէ իրականութիւն կ'առնու, և եկեղեցական երգոց խնդիրը կը յուզուի, և մինչեւ անգամ Գեր. Եղուարդ Հիւրմիւզեան, որոյ յորդորը և հմտութիւնը մեծ արժէք ունին նաև այս մասին, կը բարեհաճի ակնարկ մը ձգել սոս խնդրոյն վերայ : Թո՞ղ վտահ լինի Գեր. հայրը, և իրեն հետ ամեն եկեղեցասէր ազգայինք, որ Աստուծո՞ք քիչ ժամանակէն լրացեալ կը տեսնեն իրենց փափաքը, և մեր երջանկայիշատակ նախնեաց հոգեշունչ երգերուն եղանակները կը կենդանանան և անսոռաց ու անփոփոխ մնալու վիճակի մէջ կը դրուին, քանի որ Ազգ. կեդրոնական Վարչութեան առաջարկութեամբ և հաւանութեամբ՝ ազգային երաժիշտներէ ու դրագէտներէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմուած է այս գործին հոգ տանելու համար : Թէեւ ուրիշ ատեն ալ ասանկ յանձնաժողովներ եղան, բայց ասոր մինչեւ իւր չորրորդ նիստը ցուցած եռանդեան նայելով՝ քաջայոյս եմք որ պիտի յաբառուէ և այս կարեւոր գործն 'ի կատար հանէ . միայն թէ հմուտ ազգայինք եւս օգնեն իւր ձեռնարկութեանը, ունեցած տեղեկութիւննին իրեն հազրդելով կամ հրատարակելով :

Եւ սակայն այսպիսի խնդիր մը՝ որ շատերուն անծանօթ է հետեւաբար ասոր վերայ հազիւ ուրեք գրուած ու խօսուած ըլլալուն, այս մասին իրարու կարծիք իմանալ և ըստ այնմ խորհրդածել ըստ մեզ օգտակար համարուելով, մենք 'ի զիւրութիւն ամեն անոնց որք այս նիւթին վերայ մտածել կը սիրեն, կը յիշեցընենք աստ ասոր պատկանեալ հրատարակութիւնները, որչափ որ կը յիշենք, թէ՛ երգերով տպուածները և թէ՛ պարբերական թերթերու մէջ եղածները, որպէս զի ուզողը զիւրութեամբ ձեռք բերէ . վասն զի՝ մանաւանդ պարբերական թերթերու մէջ եղածները՝ դրեթէ առ օրին մոռացութեան կը մատնուին և շատերուն անմատչելի կը մնան : Ասոնցմէ են . . . . .

Վստահ եմք որ ներողամիտ աչօք պիտի նային մեր զիտողութեանց ինչպէս ամեն բանազէտք՝ նոյնպէս և Գեր. Հիւրմիւզեան, զորս իւր յօդուածոյն առթիւ համարձակեցանք ընել և մեք իրեն պէս՝ յօդուտ ազգիս և Ս. Եկեղեցւոյ մերոյ : ԵՂԱ. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ



Մեր սոյն դիտողութեանց վերայ, Գեր. Հիւրմիւզեան բարեհաճած է գոհունակութեան նամակ մը գրել մեզ Ս. Ղազարու վանքէն 'ի 25 օգոստոս 1875 և ընդ նմին զրկել օրինակ մը Երզնէ Հայաստանեայց Եկեղեցւոյ անուն տետրէն որ եւրոպական երաժշտական խաղերով տպած են վենետիոյ Միսիթարեան Հարք 'ի 1865: Այս նամակով շնորհակալութիւն կը յայտնէ Գեր. հայրը՝ իւր յօդուածին վերայ նոր լոյս մը համարելով մեր գրածները:

Ասոր 'ի պատասխանի հոկտեմբեր 4 թուականաւ նամակ մը մեր ուղղած եմք նորին գերապատուութեան յայտնելով մեր խորին շնորհակալութիւնը թէ՛ զրկած տետրին և թէ՛ այն բարեհաճութեանը համար որով ընդունել է մեր դոյզն դիտողութիւնքը հանդերձ շնորհակալութեամբ. և այս առթիւ քանի մը հարցում ևս ուղղած եմք իրեն մեր եկեղեցական երգոց վերայօք:

Մեր նամակին 'ի պատասխանի նամակ մը եւս ուղղած է մեզ 'ի Հոռովմայ 'ի 14 նոյեմբերի 1874, որուն մէջ մեր երգերուն և անոնց երաժշտական խաղերով գրուելու կերպին վերայօք հրատապոյն դիտողութիւններ ու խորհրդածութիւններ ընելով, փափագ կը յայտնէ և կը յորդորէ որ մեր եղանակները կանոնաւորեմք պահելով միանգամայն անոնց ընականութիւնը, ազգային գրոշմը և պարզութիւնը, և չկորսնցնենք այսպիսի ազգային բազմադարեան ու մեծազին աւանդ մը, և այլն:

Սոյն նամակները անձնական թղթակցութիւններ ըլլալուն հրատարակելը պատշաճ չտեսանք, և այսքանն ալ անոր համար յիշեցինք, որպէս զի իմացուի թէ Գեր. Հիւրմիւզեան ո՛րչափ փոյթ և փափագ ունի մեր եկեղեցական երգոց վերայ, որ իւր գրական զբաղմանցը մէջ ուշադրութիւն կը մատուցանէ նաեւ ազգային երաժշտութեան խնդրոյն:

Գեր. Հիւրմիւզեան գոհունակութիւն յայտնած ըլլալով նաև երգերու խնդրոյն վերայ եղած հրատարակութիւնները նշանակելու համար, որով յայտնի եղաւ թէ շատերը չէին կրցած այն ցիր ու ցան հրատարակութիւնները ընթեռնուլ, ուստի և ասկից թելադրուելով մասնաւորապէս՝ ձեռնարկեցինք զանոնք ամենը 'ի մի ամբողջութեամբ սոյն տետրս հրատարակել:



# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԵՑՄՈՒՆԲ

(ՏԵ՛՛ Ի՛ Մ՛՛՛՛ ԼԵ՛՛՛՛, ԹԻ՛՛ 1368, 1369.)

Մեր ազգային եկեղեցական երգոց ներկայ անկերպարան վիճակին վրայ քանիցս անգամ հրապարակաւ խօսուած ըլլալով, ներկայ յօդուածիս նպատակն այս մասին մանրամասն տեղեկութիւններ հրատարակել չէ, այլ՝ դործնական արդիւնք մը ներկայացընել ընթերցողաց, և անոր վերայ քանի մը ծանօթութիւն հրատարակել:

Մեր եկեղեցական երգոց ներկայ վիճակին մէջ, անոնց ճիշդ եղանակները գտնել և ՚ի գիր առնուլն որչափ ալ անհնարութեան մօտ դժուարութիւն մ'է, սակայն բազմօրեայ փորձերով ու հետաքննութեամբ հաւաքած մեր տեղեկութիւններն համարձակութիւն տուին մեզ՝ որ Շարականի երգերը ամբողջ ձայնագրելու ձեռնարկենք (1), որն որ անկէ երկու տարի յառաջ (1870) աւարտեցինք, բայց հրատարակութիւնն այլ և այլ պատճառներով յապաղեցաւ ցարդ:

Նախ և յառաջ հարկ է որ այս խնդրոյս վրայ մեր արդէն հրատարակած մէկ քանի հատուածներն յիշեցընենք ապա համառօտիւ, որպէս զի ընթերցողներէն անոնք՝ որք այս նիւթիս վերայ որոշ դադարաբար մ'առնուլ կ'ուզեն՝ կարենան դանոնք աչքէ անցընել և ըստ այնմ՝ մեր ներկայ առաջարկը դատել, . . . . . (2):

Չասոնք յիշեցընելէ զկնի, գալով մեր ձեռնարկութեանը

(1) Այս գործին ուրիշներ ալ կարելի է որ ձեռնարկած ըլլան, բայց ասոնցմէ՝ հանգուցեալ Պալէան Կարապետ ամիրայի ստորութեամբ ձայնագրուածը միայն ծանօթ է մեզ, որ թէև մեծ դործ մ'է, սակայն մէկ երգովի և մէկ ձայնագրովի՝ այսինքն երկու անձի կարծիք է, և չունի այն քննական ուղղութիւնը որ անհրաժեշտ է այսպիսի ձեռնարկութեան մը համար. միանգամայն՝ ինչպէս կը նշմարուի, ձայնագրողը քիչ շատ յանգուզն փորձեր ըրած է՝ մեր եզանակները ամառկանին վերայ սրբազրկու:

(2) Այս տեսակ տեղեր համառօտուած են այն յօդուածոց յիշատակութիւնները որք սոյն տետրին մէջ կան: (Ծ՝ւ՛՛՛՛ Բ՛ Ե՛՛՛՛.)



վերայ տրուելիք տեղեկութեանց, հարկադրած ենք ըսել որ, կարծես ՚ի նպատակ մեր դեռ չգտանք այնպիսի դրութիւն մը որ կարող լինէր հիմնապէս փոփոխել մեր կարծիքը, քան զոր հրատարակած էինք ցարդ . ուստի, ինչպէս ըսինք, աւանց մեր առաջին կարծիքը փոփոխել կարեհնալու, միայն քանի մը ամիսփումններով ձեռնարկեցինք սոյն գործին . զոր օրինակ, խաղերու դրութիւնը մեր նախընթաց Տեսութեանց համաձայն պահեցինք բաց ՚ի քանի մը այնպիսի անգերէ յորս օտար և անանգի դրութիւն մը կար, ինչպէս՝ Յարութեան ալ Հարցերուն վերջինը Անդանելեոս ասորոսած երգը, ալ երգերու ընդհանուր օրէնքին յարմարացուցինք, որ ըստ ինքեան անհեթեթ դաշնակի մը ունէր . նոյնպէս և Անիէն և Կաթոլիկ երգը տաղերգութեան ընդհանուր օրէնքին յարմարցնելով՝ ամեն տուն մի և նոյն եղանակի վերածեցինք, և այսպիսի դէպքերո՛ւ մէջ միայն խաղերու կարգը փոխեցինք՝ աւելի հաստատուն ձեւի մը փոխադրելու համար . իսկ այն տեսակ երգերն՝ որոց ամեն հատուածին մէջ համաձայնութիւն մը կար, նոյնը պահեցինք և յարգեցինք, ինչպէս կ'երեւի և մեր Տեսութեանց մէջ, յերես 23 : Սոյն բաղդատական դրութեամբ՝ երդերու երկու հինգերորդը պակսեցան, այսինքն՝ շատ մը երգեր գրեթէ ձիւղ մի և նոյն եղանակի վերածեցան, ինչպէս և էին սլ իրօք, և տարբերութիւննին աղաւաղութենէ միայն յառաջացած էին :

Ասկից ալ բացայայտեցաւ թէ և ըստ մտոին՝ խաղերու այն շարայարութիւնը, որով մի և նոյն խաղ եթէ ոչ ամեն տեղ՝ գոնէ նմանօրինակ տեղեր միշտ մի և նոյն դրութեամբ կը գործածուի, ինչպէս որ՝ երգոց մէջ Այսբ ՚ի կարտունօն, Որ զընէն որբութեան և ուրիշներ . ալ երգոց մէջ Որ նախեմայ, Արեգակնն արդարութեան և ուրիշներ որոց վերայ շատ շարակնոցներու մէջ Երկար, Պարոյկ և այլ խաղեր խառն ՚ի խուռն կարգաւ կը դանուին :

Սոյն ոճը ուրիշ գիւրութիւն մը ևս տուաւ մեզ . զոր օրինակ . մեք երգերու կարգը ալ եղանակէն սկսելով շարունակեցինք, ուստի շատ մը երգեր, ինչպէս ալ եղանակէն Ուրախացիք եկեղեցի և Պայծառացիք Հարցերը և նմանները . ալ եղանակէն Որ նախեմայ, Երոհարբն անճար, Արեգակնն արդարութեան, երգերը և նմանները . Բի եղանակէն Որ պարտաբան, Իմաստուն Կոստանի, Փարսուն հանդերձ կարօն երգերը և նմանները, և վերջապէս աս

մեն եղանակի երգոց նմանօրինակները յաջարդարար գրելով, մէկն զմիւսը այնպէս դիւրացուց որ կարծես թէ ամենն ալ մի և նոյն երգի այլ և այլ հատուածներն են, ինչպէս և իրօք ալ են. ասով 'ի սկզբան մէկ կամ քանի մը երգերու վերայ փորձ մը ընողը միւսներուն վերայ լիով տեղեկութիւն մը կրնայ առնուլ:

Երգերու սկզբնաւորութեանց համար ալ միեւնոյն կանոնը պահեցինք ինչ որ ցուցած էինք մեր Տեսութեանց մէջ (տես յերես 22.) բայց սա սէտք է ըսենք որ նմանաձայն երգոց մէջ նախադասութեանց կամ տողերու վերջին մասերը պէտք է իրարու յար և նման ըլլան, և ասոնց մէջէն վանկի կամ բառի աւելորդը հատուածին կամ տողին կամ նախադասութեան սկիզբը կամ սկզբան մօտերը կը մնայ. զոր օրինակ.

Որ ըզնախադրեալն յառաջագոյն գուշակութեամբ մարդարէից .  
 . . Որ 'ի լրումն անճառ ծննդեան ըստեսայեայ քո 'ի կուսէն .  
 Նահապետացն արբահամու իսահակայ և յակոբայ .  
 . Աղախին և մայր կենաց աջոյն ծընող հօր միածնին . և :

Արեգականն արդարութեան ծագման արուսեակդ առաւօտեալ .  
 . Բարձրելոյն . . անճառ խորոց տեսանող իմաստիւք հոգւոյն  
 . . . Խորհուրդն անճառ ծածկեալն յաղագաց և յաւիտեանց .  
 . Ողորմած ատէր ողորմեա հոգւոցըն մեր նընջեցելոց .  
 Ի յօթեվանս հօր քոյ լուսոյ ըլլընջեցեա լըս մեր հանդո' .  
 Նորաստեղծեալ բանն յանէից 'ի սկըղբանէ զերկինս երկնից .  
 . Սիօնի որդիք զարթիք հարսին լուսոյ տուք աւետիք . և :

Ինչպէս սոյն համառօտ օրինակներէն կ'երեւի, թէ՛ արձակ և թէ՛ չափական երգերու մէջ վերջին մէկ կամ երկու բառերը իրարու կը համեմատին, և աւելին ու պակասը սկիզբը կը մնան:

Սոյն բառերու և վանկերու համեմատութենէն խաղերու դրուութեան քանի մը կէտերը ըստ բաւականին լուսաբանեցան. ցր :  
 'Վ ի տեղ 'Վ . 'Վ ի տեղ 'Վ . 'Վ ի տեղ 'Վ . և այլն . (տես յերես 20) :  
 Երականի երգոց նախադասութեանց կամ լաւ և ստղերու ու հատուածներու վերջաւորութեանց մէջ ալ ուշադրութեան արժանի բան մը կայ, ա՛յն է, երկար վանկերէն յետոյ մինչ 'ի վերջ եղած պարզ վանկերուն թիւը ընդհանրապէս կոճատ է. ցր :

Սեկ զանկ .

Սսե՛լով : Իմաստիւք հո՛գւոյն : Եւ սուրբ կո՛ւսանքն . և այլն :



Երեւ չանի :

Էակից հօ՛ր և հողւոյն : Աստուած հա՛րցըն մերոց : Ըզ թըւ-  
նամին խո՛ր սակեցիք . և այլն :

Հինգ շնչ .

Այսօր ծընա՛ւ յամուլ յարդանդէ : Այսօր ցընծան երկնայինքն :  
ՉՆոյի՛ն և զարբահամուն : Բըղխու՛մս 'ի հօրէ՛ զհօղին ճըւմարիտ . և օ :

Եօն շնչ .

Կնքի՛ մատանեաւ քահանայիցն : Մըդար կ'ս և սուրբ է քս  
տէրութիւնդ : Մեղա՛յ ողորմեա ինձ աստուած . և այլն : Ինն ,  
տասնումէկ և տասներեք վանկով ալ կը գտնուին :

Այս օրինակներն ընդհանուր օրէնք են , մանաւանդ հնգա-  
վանկ վերջաւորութիւնը (տե՛ս յերես 34 .) զարտուղութիւնը  
այնչափ ստիպաւ և անսովոր է որ կարելի է սխալ համարել . միայն  
բի երգերուն մէջ Մենդեան Գ . աւուր օրհնութեան Բ . մասին և  
ասոր նման երեք երգերու մէջ քառավանկ վերջաւորութիւն մը  
կայ , որ այն ալ դարձեալ իւր մէջ երեք և հինգ վանկով վեր-  
ջաւորութիւն կը պարունակէ . սոյն քառավանկ վերջաւորութիւնն  
է "Մ նշաններով , ինչպէս , Մա՛՛րդասէր փրկիչ , և այլն : Բայց  
հաւանական է կարծել , թէ սոյն քառավանկ վերջաւորութիւն-  
ներն եւս հնգավանկ ըլլան . այսինքն երկար վանկերը երեք կամ  
հինգ ոտք տւելութիւն ունենան փոխանակ երկու կամ չորս  
ոտքի , և այս երկար վանկերէն աւելցած մէկ ոտքերը յետագայ  
ղոյգ վանկերուն վերայ բարդուին և ասով դարձեալ կոճատ  
վանկ վերջաւորութիւն ունենան , որով և իրենց մէջ եղած զար-  
տուղութիւնն ալ անհետանալով՝ համաձայնին ընդհանուր կանո-  
նի . վասն զի դրչագիր շարականաց մէջ սոյն վերնախողերուն  
վերայ երկու կէտեր նշանակուած են որ տպագրեալներուն մէջ  
չկան : Եռաչափ ու հնգաչափ ոտքերու վերայ տե՛ս յերես 27 :  
(Սոյն վերջինը իբր դիտողութիւն միայն յառաջ կը ըբերեմք աստ ,  
վասն զի մեր գրութեանը մէջ ներկայ սովորութիւնը յարգած  
եմք , այսպիսի տեղեր քառավանկ վերջաւորութիւնը պահելով) :  
Հարկ է ըսել որ սոյն ձեռնարկութեանս մէջ ըստ կարելոյն  
խորշեցանք այն օտարոտի և աւելորդ զեղզեղանքներէն , զորս  
չատերը սովոր են դորձածել : Իրարմէ տարբեր երգուածներուն  
յարմարագոյնն ընտրեցինք : Վերջապէս եթէ ներելի է ըսել , աշ-  
խատեցանք , և թերեւս մեծ մասամբ յաջողեցանք ալ , ներկայ

երգերու մասին աւանդութիւն , տաղաչափութիւն ու երաժշտութիւն իրարու համաձայնեցընել որչափ որ կարելի էր , պահելով միանգամայն այսպիսի սրբազան աւանդի մը պարտուպատչաճ եղած ամենայն ակնածութիւն և հաւատարմութիւն :

Մեր ձեռնարկութեան վերայ այսչափ տեղեկութիւն տալէ զինի , գիտնալով և այն դժուարութիւնները որ այսպիսի ձեռնարկի մը պաշտօնառէս քննութեան և վաւերացման մասին կը գըտնուին , ուստի այս դժուարութիւնները գոնէ մատամբ իւրը բառնալոյ աղագաւ կը յայտարարեմք ահա որ Կ . Պօլոյ համար թուականէս սկսեալ մինչև երեք ամիս և հետևոր տեղերու համար մինչև վեց ամիս ժամանակ որոշած եմք , և կը փափագիմք ու կը խնդրեմք որ սոյն միջոցին մէջ այս խնդրոյն վերայ դիտողութիւն կամ կարծիք ունեցողը և կամ հետաքրքիր եղողը բարեհաճի թըղթալցիլ մեր հետ , և կամ անձամբ այցելութիւն ընէ մեզ՝ որ մը առաջ իմաց տալով . որպէս զի և մեք կարող ըլլամք սոյն խընդրոյն հմուտ եղող ազդայնոց կարծիքները կարելի եղածին չափ 'ի մի ամիտիւելու , և ապա պայմանաժամին յետոյ սոյն երգերուն քանի մը մասերը ձայնագրութեամբ 'ի լոյս ածելու : Վստահ եմք թէ ամեն անոնք որք այսպիսի ձեռնարկութեան մը յաջողութեանը կը փափագին , պիտի փութան ընդունել մեր հրաւէրը , և պիտի քաջալերեն զմեզ զիմադրաւել այն արգելքներուն՝ որք անբաժան են յայս տեսակ ձեռնարկութեանց :

Եթէ հնար ըլլար՝ այժմէն իսկ հրատարակութեամբ կը ցուցընէինք քանի մը խնդիրներ և անոնց մասին կարծիք կը հարցընէինք . բայց երաժշտական խաղերով ըլլալիք դորժ մը լրագրոյ միջոցաւ բացայայտ ցուցընելու մասին դժուարութիւններ ըլլալուն , ներկայ յայտարարութիւնս յարմար թուեցաւ մեզ : Բայց եթէ պէտք ըլլայ և կամ հրապարակաւ պահանջում մը ըլլայ , սոյն տեղեկութեանց վերայ կը խոստանամք այլ եւս յաւելցընել հրատարակութեամբ :



## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Եկեղեցական երգերու կանոնաորութեանը համար եղած բանակցութիւններն ահաւասիկ ամբողջայան : Այժմ՝ պարտիմք քանի մը տեղեկութիւն տալ երաժշտական յանձնաժողովոյն վերայ, որ կազմեցաւ 'ի 1873 Ապրիլ ամսոյ 22ին . վասն զի սորա կազմութիւնը նախընթաց հրատարակութեանց հետեւանքն է :

Քանզի երբ Նուազաց բովանդակութիւնը հրատարակուեցաւ 'ի 1864 թուին (տե՛ս յերես 8.) և անոր վերայ վիճարանութիւն բացուեցաւ (տե՛ս յերես 9—13.) նոյն միջոցին հրաւեր մը ընդունեցանք Ուսումնական Խորհուրդէն, և երբ ներկայացանք, Խորհրդոյն փոխ. Ատենապետ Յ. Մանուէլեան էֆէնտին որ եկեղեցական երգոց սիրող և հմուտ մէկն էր, երկարօրէն տեսակցելէ և երգոց մասին մեր կարծիքներուն հաւանութիւն տալէ զինի յայտնեց նաեւ իւր փառիպղը և ջանքը այս խնդրոյն կարգադրութեան համար յանձնաժողով մը կազմուելուն մասին : Յետոյ երբ շարականի խաղերուն Տեսութեանց հրատարակուելուն առթիւ (տե՛ս յերես 18—21.) կրկին անգամ բանակցութիւն բացուեցաւ այս խնդրոյն վերայ, յայնժամ ևս Ս. Պատրիարք հօր կողմէն հրաւիրագիր մը առինք 'ի 23 սեպ. 1864, որով կը ծանուցանէր երաժշտական ժողովոյ մը կազմութիւնը և մեր ալ անոր անդամակից ընտրուիլը՝ հրաւիրելով որ յառաջիկայ կիւրակէ ներկայ գտնուիմք 'ի սենեակի Ղալաթիոյ Եկեղեցւոյն . նոյն օրը Յովնաննիսեան Արխ էֆէնտին և մեք միայն ներկայացանք և շատ մը սպասելէն զինի մեկնեցանք : Ասոր վերայ Ս. Պատրիարքի կողմէն վերստին հրաւիրագիր դրկուեցաւ երաժշտաց 'ի 8 դեկտ. 1864, որոց մեծամասնութիւնը սոյն անգամ ներկայանալով Աղգ. Կօնական ժողովին, հոն տեղ որոշուեցաւ որ երաժիշտք իրենցմէ մասնաժողով մը ընտրեն, երգերու խնդիրը նկատողութեան առնելու համար . քիչ մը յետոյ սոյն մասնաժողովն ընտրուեցաւ քուէարկութեամբ, բայց մենք ժամանակ չունենալով խմանալ նաեւ քուէից արդիւնքը՝ նոյն օրերը ուղեւորեցանք յԵրուսաղէմ : Յետոյ խնայանք թէ նիստ մը միայն ըրեր և ցրուեր է :

Վերջին անգամ երբ հրաւէր մը ըրինք հայ երաժշտաց 'ի 1875 վասն 'ի նկատի առնելոյ մեր ձայնադրած շարականը (տե՛ս յերես 98) և ահա հրաւիրազիր մը ևս ստինք Ուսումնական Խորհրդէն, որով երաժշտական յանձնաժողովի մը կազմուելը և մեր ալ անոր անդամակցութիւնը կը ծանուցանէր, կոչելով զմեզ 'ի խորհրդարանն Ղալաթիոյ եկեղեցւոյն, և ահա սոյն յանձնաժողովն է որ մինչեւ ցարդ կը շարունակէ և մօտ է իւր ձեռնարկն աւարտելու և Ասպքէն եթէ լրջաբար դիտեմք՝ կը տեսնեմք թէ կա՛մ այն է որ սոյն հրատարակութիւնքն են ստիթ տուած յուզելու երաժշտական յանձնաժողովոյ մը պէտքը և կա՛մ ազգեցութիւն մը կայ որ աշխատեր է միշտ ընդ յանձնաժողովիւ քօղարկել գրական հրապարակին վերայ եկեղեցական երգոց մասին եղած հրատարակութիւնքը, բայց զիարդ և իցէ, անցնինք բուն խնդրոյն ։

Վերջապէս սոյն յանձնաժողովը կազմուեցաւ, որուն անդամակից ընտրուած էին ։

Արժ • Տէր Բարթուղիմէոս (Ղալաթիոյ) .

» » Յարութիւն »

» » Գարրիէլ Խանճեան .

Աւիքսան էՖ • Գրիգորեան .

Արիս » Յովհաննիսեան .

Ե • » Մ • Տնտեսեան .

Կարապետ » Դերձակեան .

Կարապետ » Յակոբեան .

Մկրտիչ » Զարպճանկլեան .

Յակոբ » Գպրապետ Սամաթիոյ .

Յովհաննէս » Տէրոյենց .

Յովսէփ » Մալէզեան .

Նիկողոս » Ս • Թաշճեան .

Ուեթէոս » Փափազեան .

Բայց այս անգամ խնդիրը տարբեր կերպիւ ներկայացաւ յանձնաժողովին։ Բաւական ժամանակէ 'ի վեր էր որ ազգային երաժշտաց մէջ տարբեր կարծիքներ կային եկեղեցական երգոց վերայ . ոմանք կ'ուզէին մեր եղանակները սրբազրել թուրքական եղանակաց վերայ . ոմանք կը բազմային եւրոպական ճաշակ մտցընել անոնց մէջ . ոմանք ալ բնաւ վուրիտութիւն մը չէին ուզեր ընդունիլ, թէև շատ երգերու վերայօք իրենք ալ անմխարան կը գտնուէին իրարու



հետ . ոմանք կ'ուղէին եղանակները համառօտել . ոմանք ալ այս ինչ կամ այն ինչ ձեւը կամ ասմունքը կ'ուղէին ընտրել . և 'ի հարկէ ասոնք ամենն ալ իրենց զօրաւոր կամ տկոր փաստերն ունէին . աւելցո՛ւր վերոյիշելոց վերայ նաև ունակութեան ազդուութիւնը և շատ անգամ ալ անձնասիրութեան կիրքը , և ահա կ'իմացուի ասոնց մէջ համաձայնութիւն մը գոյացընելու դժուարութիւնը . Ասոնցմէ երկրորդը մեծամասնութիւն չունէր . երրորդը թէև քան զսակնն աւելի հետեւողներ ունէր , բայց ասոնց մէջ զբաւոր երաժշտութիւն գիտցողներ շատ սակաւ շահուելուն համար՝ առաջին կարծիքը ըստ երեւութիւն ամենէն զօրաւոր էր մանաւանդ որ այս կարծեաց հետ կը միանային և ամեն դուստներգակ (հանէնտէ) դպիրները :

Երաժշտական յանձնաժողովոյ հանդէպ այոչափ տարածայն կարծիքներ կային , երբ դրութիւն մը եւս ներկայացոյց ազդային երաժիշտ Յօհաննիսեան Արիս էֆէնտին , որով կ'առաջարկէր թէ շարականի երգերուն ամեն մէկ տունները հաւասար թուով չափերու պէտք է բաժնել իրբ չափական երգ . և թէպէտ ասով երգերու 'ի վաղուց հետէ սովորական եղած ընթացքը մեծ մասամբ կը փոխուէր , այլ ինքը սոյն ներկայ ընթացքը իբր աղոււթիւն կը համարէր և կը սնդէր թէ պէտք է իւր առաջարկած կերպիւ հիմնական բարեկարգութեան մը ձեռնարկել :

Նախընթաց յանձնաժողովներու մէջ սոյն տարածայն կարծիքները իրարու հանդիպած էին , և չկրնալով համաձայնիլ՝ ցրտուած էին . բայց այս անգամ , ինչպէս ըսինք , խնդիրը ուրիշ կերպիւ ներկայացաւ : Արդէն եղած հրատարակութիւններէն՝ քիչ շատ ընդհանուր կարծիք մը գոյանալ սկսած էր երաժշտաց մէջ . վասն զի մեր վերջին հրատարակութենէն յետոյ ոմանք յազգային երաժշտաց՝ այս խնդրոյն վերայ տեսակցութեան եկան մեզ : Մեր հրատարակութեանց դէմ երբեմն ընդդիմախօս Ն . Ս . Թաշճեան էֆէնտին ալ վերջապէս զգացեր էր հին մէթոտին ծուռ դրութիւնը , և ոչ միայն դասախօսութեան մէջ՝ այլ և շարականի երգոց մասին ալ իւր կարծիքը փոխել սկսեր էր , և անոնց եղանակներն ու խաղերը վերլուծելով և ըստ այնմ միայն ներկայ երգերը բարեկարգելու դրութեանը հակամիտութիւն մը կը ցուցընէր , որն որ մեր վերջին հրատարակութեանց վերայ լուսութիւն պահելէն և առանձնական տեսակցութեանց մէջ յայտնած

կարծիքներէն կը նշմարուէր : Երաժշտական յանձնաժողովոյ մեծագոյն մասին 'ի մի կէտ միանալուն առիթ մը եւս եղաւ նաեւ Արիս էֆէնտիի առաջարկած դրութիւնը, որուն վերայ երաժշտաց մեծագոյն մասին մէջ արդէն տհաճութիւն մը գոյացած էր, ուստի երբ ներկայացոյց զայն յանձնաժողովոյն՝ սորա մեծամասնութիւնը 'ի բաց թողլով իրենց մասնաւոր կարծիքները՝ միացան անոր առաջարկած դրութեանը դէմ մանաւանդ երբ նա վերջին աստիճան կը պնդէր իւր առաջարկութեան վերայ՝ առանց բնաւ պիջում մը ընելու :

Հետեւաբար մեք եւս ներկայացուցինք դրութիւն մը, ա'յն է՝ ներկայ եղանակները իրենց գտնուած վիճակին մէջ պահել և միայն սխալ եղած և անհամաձայնութիւն գտնուած տեղերը միեւնոյն սեռէ երգոց և շարականի ընդհանուր օրինաց հետ և չափական երգերն ալ ոտանաւորի կանոնաց հետ բաղդատել և ըստ այնմ եթէ պէտք ըլլայ սրբագրել զանոնք . (և այս դրութեան վերայ մեր ձայնագրած ամբողջ շարականը յանձնաժողովոյն ուշադրութեանը յանձնեցինք, որուն մէջ իբր ծանօթութիւն նշանակուած էին երգերու մէջ գտնուած այլ և այլ ձևերը որչափ որ կրցած էինք հաւաքել) : Այս քննական և բաղդատական դրութիւնը Հայ երաժիշտներու տարածայն կարծիքներն համաձայնող կէտ մը ըլլալուն, մեծամասնութեամբ ընդունուեցաւ : Հետեւաբար յանձնաժողովոյն մէջ Արիս էֆէնտիէն և մեզնէ զատ գրաւոր կամ բանաւոր դրութիւն մը՝ առաջարկութիւն մը ներկայացընող չեղաւ, որ ինչպէս յայտնի է, առաջինը չընդունուեցաւ և որոյ համար ներկայացընողն ալ հրաժարեցաւ յետոյ, և յանձնաժողովն ալ երկրորդ դրութիւնն ընդունած ըլլալովը՝ ըստ այնմ կը շարունակէ ցարդ :

Հարկ է աստէն յիշել թէ երաժշտական յանձնաժողովը նկատելով որ եկեղեցւոյ ամենօրեայ պաշտամանց և խորհրդոց մատակարարութեանց ժամանակ խաղերու վաղեմի դրութեամբ տպագրեալ շարականներն ալ անհրաժեշտ պէտք են, կը բաղձար որ անոնց խաղերն ալ սխալներէ ազատ ըլլան ըստ կարելոյն . ուստի լսելով 'ի համբաւոյ թէ 'ի Ս . Երուսաղէմի վանքը ըստ հին դրութեան շարական սլոտի տպուի, խնդրեցինք 'ի մասնաւորի յմեկնապատիւ սրբազան Պատրիարքէն Ս . Երուսաղէմայ, որ եթէ ստոյգ է նոյն լուրը՝ բարեհաճի քիչ մը եւս յետաձգել նոյն տպագրութիւնը որպէս զի անոր խաղերն ալ երաժշտական



յանձնաժողովոյն երդերու մասին ընելիք որոշման համեմատ ուղ-  
ղութիւն, որն որ ուրիշ բան չպիտի ըլլար, եթէ ոչ՝ արդէն զգալի  
եղած սխալներուն ուղղութիւնը: Արոյ 'ի պատասխանի՝ բարե-  
հաճեր էր Նորին Ամենապատիւ Սրբազնութիւնը յատուկ դրու-  
թիւն մը առաքել մեզ (Յ յուլիս 1877, թուահամար 95) որուն մէջ  
դեռ շարական տպագրելու մտադիր չըլլալը իմացնելով՝ կը գովէ  
յանձնաժողովոյն նախանձախնդրութիւնը, յաւելցընելով 'ի վերջոյ  
իւր յորդորն ու օրհնութիւնը 'ի քաջալերութիւն յանձնաժողովոյն:

Երաժշտական յանձնաժողովը բաղձալով նաև որ Պալեան կա-  
րապետ Ամիրայի ձայնագրել տուած շարականն ալ տեսնէ, բայց  
անիկայ բարեպաշտ ազգայնոյ մը քով պահուած ըլլալով՝ վերջապէս  
միջնորդութեամբ Տ. Մկրտիչ Խրիմեան Սրբազն Արքեպիսկոպոսի  
հաղիւ ուրեմն յաջողեցանք ձեռք բերել և անկէ քանի մը  
մաս օրինակելով ներկայացընել Երաժշտական Յանձնաժողովոյն,  
ուրիշ տեսնուեցաւ թէ այն օրինակը պարզ գրութիւն մ'էր միայն  
և ոչ աւելի ինչ, այսինքն՝ քննական ոճ մը՝ բաղդատութիւն մը  
չէր պարունակէր, և ոչ ալ այն կարծիքները 'ի քննին տեսնուած  
էին զորս ունէր Յ. Մանուէլեան էֆէնտի շարժառիթն նոյն ձեռ-  
նարկին, ուստի և Յանձնաժողովը տեսնելով թէ քանի որ նոյն  
օրինակը աւելի ինչ չներկայացընէր քան զայն երգողը, և անոր  
նման երգող անդամակից մը ժողովոյն մէջ գտնուելովը, ա՛լ ևս  
կարեւորութիւն մը չտուաւ նոյն գրութեան:

Զասոնք յիշենուս զլիաւոր պատճառն այն է որ իմացուի  
թէ Յանձնաժողովը ս'րալիս շրջահայեցութեամբ և զգուշաւոր  
քննութեամբ իւր ձեռնարկն յառաջ տանելու վերայ է, որպէս  
դի ս'րչափ հնար է կարենայ արդարանալ ապագայի դատաս-  
տանին առջեւ: Այսու ամենայնիւ անակնկալ դէպք մը պատահե-  
ցաւ որ թէեւ չկասեցոյց զՅանձնաժողովն, սակայն նորա վերայ  
մեծ տպաւորութիւն ընելուն և անոր ձեռնարկին պատմութեան  
հետ անմիջական կապակցութիւն մը ունենալուն՝ պէտք է անոր  
համար եւս քանի մը խօսք ընենք:

Յանձնաժողովոյն Ե. Նիստին ('ի 1874 հոկ. 5) Ն. Ս. Թաշճեան  
էֆէնտի կ'իմացընէ թէ ինք ձամբայ պիտի ելնէ 'ի Ս. Էլմիածին՝ հոն  
տեղ ձայնագրութեան դասատուութիւն ընելու համար: Ինքն  
որ մինչ ցայն վայր համամիտ էր Յանձնաժողովոյն՝ այժմ եւս  
չուղելով հրաժարեալ համարուիլ, ուստի իրեն ներկայացուցիչ

կը ցուցընէ զոմն յանդամակցաց ժողովոյն, խնդրելով որ նշանակութեան արժանի խնդիր մը ծաղած ատեն իրեն կարծիքն ալ հարցուի գրով՝ յորմէ բնականաբար կը հետեւէր թէ երաժշտական որ և իցէ խնդրոց վերայ ինքն ալ պատրաստ էր տեղեկութիւններ հաղորդել յանձնաժողովոյն՝ յորմէ չէր ուզեր բաժնուած համարուիլ :

Յետ ժամանակաց յանձնաժողովն խնայաւ որ 'ի Ս. Էջմիածին շարականի ձայնագրութեան սկսեր է թաշճեան էֆէնտի և պիտի տպագրուի ալ եղեր : Յանձնաժողովոյ մեծամասնութիւնը ըստ սպողեցութեան ոմանց կարծեցեալ մտերմաց և բարեկամաց անդրքան զչափն խոհեմութիւն ընելով իւր գործառնութեանց մասին որ և իցէ հրատարակութիւն ընելու չէր ձեռնարկած և լռելեայն իւր գործոյն պարսպելով՝ մտադիր էր որ զանիկայ աւարտելէ զինի ներկայացընէ Ազգ. կրօնական ժողովոյն : Ուստի Յանձնաժողովը գործին ելքը դիտելու համար ատեն մը սպասեց, բայց երբ հետզհետէ Ս. Էջմիածնէն հասած անուզղակի տեղեկութիւններն սկսան հաւաստել հոն տեղ ձայնագրեալ շարական տպուելու լուրը, տեսնելով ալ մէկ կողմէ իւր անդամակցաց ոմանց հրաժարիլը և ոմանց առ զբաղման և առ տկարութեան կամ առ բացակայութեան ներկայ չլինալ գտնուիլը, երկու անդամակից աւելցընել հարկ տեսաւ՝ հաճութեամբ Ուսումնական Խորհրդոյ, որք են Գեր. Խուլէն եպիսկոպոս Նարայէյ և Մարտիրոս էֆէնտի Գրիգորեան. հետեւաբար և ընդհանուր անդամակցաց ժողովով մը որոշեց գրել 'ի մասնաւորի առ Ղեհ. Կաթուղիկոսն ամենայն Հայոց և իւր ձեռնարկին վերայ Նորին վեհափառութեան տեղեկութիւն տալ, և այս առթիւ յիշեալ տպագրութեան մասին ստոյգ տեղեկութիւն մը առնուլ : Եւ որպէս զի իւր ձեռնարկն կարենայ փութով աւարտել, որոշեց նաեւ որ ժողովին սովորական նիստերուն մէջ առանց սպասելու մեծ մասի ներկայութեան՝ Յ—Յ անձանց ներկայութիւնը իրր գործադիր ժողով բաւական համարուի գործը շարունակելու (1) և միայն ամեն մէկ ձայնի վեր-

(1) Սոյն շաբաթական նիստերուն գրեթէ շարունակ ներկայ գտնուած են,  
 Ալեքսան էֆ. Գրիգորեան.  
 Ե. " Մ. Տնտեսեան.  
 Մկրտիչ " Զարպհանելեան.  
 Քեթևոս " Փափաղեան.



ջը ընդհանուր ժողով մը ըլլայ յանձնաժողովոյ անդամակցոց մեծագոյն մասովը, և հոն տեղ նոյն գործադիր ժողովը իւր որոշումները և ըրածները ներկայացընէ ամենուն հաւանութեանը ։ Սոյն որոշումները գործադրուեցան . և աշխատութեանց բաժանման զրութեամբ սկսաւ աւելի յառաջ երթալ գործը ։ Սակայն 'ի Ս. Էջմիածնէն պատասխան մը չստանալով, և ոչ ոյ թաշճեան էֆէնտիէն՝ որ ստեղծ կը թողնուի ալ և անձանց հետ նաեւ երաժշտական խնդրոց վերայ՝ այլ և այլ եկեղեցական երգեր եւս ուղերվ անոնցմէ, ուստի Յանձնաժողովն որոշեց գրել առ Աղգ. Կրօնական ժողովն, խնդրելով որ իւր յանուն ազդին ըրած աշխատութիւնը ներկայացընէ 'ի պաշտօնէ՛ն՝ նորին վեհափառութեան՝ Կաթողիկոսին ամենայն Հայոց ։

Աղգ. վարչութեան Կրօնական ժողովն փութաց երաժշտական յանձնաժողովոյ սոյն խնդիրը գործադրել և գրեց առ վեհ. Կաթողիկոսն, յորմէ քիչ մը ետքը վերագարձաւ յէջմիածնայ Ն. Ս. թաշճեան էֆէնտի, առանց բնաւ ցուցընելոյ այն համամտութիւնը զոր ցուցած էր յառաջագոյն ։

Սոյն միջոցին և ահա ժամանելով վեհ. Կաթողիկոսի պատասխանին առ Ս. Պատրիարք հայրն և Աղգ. Կրօնական ժողովն վասն խնդրոյ երաժշտական Յանձնաժողովոյն, հրաւիրուաւ Ս. Պատրիարք հօր՝ ներկայացանք Աղգ. Կրօնական ժողովոյն երեք անձինք ի դիմաց յանձնաժողովոյն, ուր հրաւիրեալ էին նաեւ Յօհաննիսեան Արիս և Ն. Ս. թաշճեան էֆէնտիք ։ Արիս էֆէնտիի առանձին հրաւեր ըլլալն անհրաժեշտ պէտք մ'էր, քանզի նա թէ՛ 'ի յանձնաժողովն հրաժարեալ էր և թէ՛՝ վեհ. Կաթողիկոսն աւոր առաջարկած զրութեան վերայ հարցումներ ըրած էր . բայց Ն. Ս. թաշճեան էֆէնտիի մասնաւոր հրաւեր ըլլալը զգացոյց մեղ թէ՛ նա դադարած էր պաշտօնապէս 'ի գործակցութենէ յանձնաժողովոյն և առանձին իմն կարծիք կը ներկայացընէր նա՝ Ս. Էջմիածնայ մէջ տպագրելի շարականին վերայօք ։

Ս. Պատրիարք հայրն հաճեցաւ ընթեռնուլ վեհ. Կաթողիկոս հօր մերոյ առաքած գրութիւնը, յորմէ կ'իմացուէր Նորին վեհափառութեան գովելի փոյթն 'ի մասին կանոնաւորութեան եկեղեցականի երաժշտութեան, կ'իմացուէր թէ՛ շատ ուրախ եղեր է ինքն վեհափառը լսելով երաժշտական յանձնաժողովոյն կազմութիւնը բայց յետոյ իմացեր է թէ՛ ցրուած է նա, և թէ՛

վասն անհրաժեշտ պիտոյից տեղւոյն ստիպուեր է Վեհ. Հայրապետը սակաւաթիւ օրինակ և իբր փորձ տպագրել տալու եկեղեցական երգերը, և թէ լեւելով հիմայ յանձնաժողովոյն շարունակութիւնը՝ դայրեցընել տուեր է երգերու տպագրութիւնը, որպէս վի յանձնաժողովոյն պատրաստած օրինակները առ ինքն զրկուին տեղեկագրով մը զձեռնարկութիւնէ՝ յանձնաժողովոյն, և թէ ինքն Վեհ. Հայրապետը կը բաղձայ որ Ա. Պօլոյ վաղեմի պարզ ու վսեմ երգեցողութիւնը պահուի ու ծաղկի յեկեղեցիս Հայաստանեայց :

Ասոր վերայ երբ մեր կարծիքը հարցուեցաւ, նախ յանձնաժողովոյ դադարեալ ըլլալուն համբաւին վերայ մեր դիտողութիւնն ու ցաւը յայտնելէ զինի, պատասխանեցինք թէ ակամայ ստիպուած եմք չընդունիլ յանձնաժողովոյ օրինակներուն յձմեռածին զրկուիլը վասն քննութեան, քանի որ հոն տեղ վարպետ ու ճայնագրագէտ երաժիշտ մը չկայ որ պէտք եղած քննութիւնն ընէ, սակայն իցէ թէ Վեհափառ Աթոռիկոսը բարեհաճէր հոն տեղի օրինակը հաս զրկել տալու, որոյ գրողն ալ հոս ներկայ դրուեալով, զիւրաւ կրնայ բազղատուիլ ՚ի ներկայութեան այլոց : Նոյն օրը ըստ որոշման Ազգ. Կրօն. Ժողովոյ՝ մեր այս դիտողութիւնները տեղեկագրով մը հանդերձ դրաւ որ կերպիւ ներկայացընելու խօսք տալէ զինի մեկնեցանք : Եւ քանի մը օրէ յետոյ պէտք եղածը գրելով ՚ի գիմոց երաժշտական յանձնաժողովոյ ներկայացուցինք Ազգ. Կրօնական Ժողովոյն, որ և նա զրկեց առ Վեհ. Աթոռիկոսն, որոյ պատասխանը դեռ չէ եկած : Հարկ չէ ունի գրութեան օրինակը յառաջ բերել աստ, քանզի անոր իմաստը շատ տեղ յիշուած է մեր խօսքի կարգին մէջ :

Ահաւասիկ Վեհ. Աթոռիկոսի սոյն գրութիւնը լուծեց մեր տարակոյսը որով կը տարակուսէինք թէ Նորին Վեհօթիւնը որ այնքան մեծ սէր և գեղեցիկ ձաչակ ունի եկեղեցական եղանակներուն և Ա. Պօլոյ վաղեմի պարզ ասմունքին վերայ, և որ մեծ համակրութիւն և վստահութիւն ունի Պօլոյ համբաւաւոր երգիչներուն վերայ, և որոց շատը անձամբ ծանօթ են Նորին Վեհափառութեան, միթէ կարելի էր որ ասոնցմէ կազմուած յանձնաժողովի մը ձեռնարկութեանը՝ վերայ գոնէ իբր հետաքրքիր ոք տեղեկութիւն մը չուզած՝ հրամայէր տպագրել եկեղեցական երգերը : Բայց ահա Նորին Արքայապետութիւնը իմացեր է թէ ցրուած է սոյն յանձնաժողովը, ուստի և ՚ի հարկէ լաւ համարելով զգոյն ինչ



քան զշինչ, ստիպուեր է վասն անհրաժեշտ պիտոյից անգլոյն սակաւաթիւ օրինակ ապագրել տալ իբր փորձ: Այո՛, ամենայն վատահոթեամբ կարելի է ըսել որ Վեհ՛. Կաթողիկոսը եթէ գիտնար երաժշտական յանձնաժողովոյն շարունակուելը, Ն. Ս. Թաշճեան էֆէնայի հոն եղած ատենէն պիտի ուղէր յանձնաժողովոյն օրինակները, քանի որ նորա վերադառնալէն ետքը ուղեց:

Եթէ Վեհ՛. Հայրապետը ասիէ յառաջ քանիցս անդամ կազմուած երաժշտական յանձնաժողովներուն նման այս վերջինն ալ ցրուած ըլլայ շէր, և ասոնցմէ իւր յոյսը չկարէր, եկեղեցական երգերու վերայ ունեցած մեծ փափագովն հանդերձ՝ չեմք կարծէր թէ պիտի աճապարէր ըստր եկեղեցական երգերը անմիջապէս ապագրել տալու, քանի որ ասոնց ամենը ՚ի միասին նաեւ վասն անհրաժեշտ պիտոյից անգլոյն գործածելի ըլլալու համար ւարիներ պէտք էին և մի միայն փորձի համար ալ այնչափ ծախք ընել չէր տար Վեհ՛. Կաթողիկոսը, և քանի որ այսչափ դարերէ հետէ քիչ շատ սլահուած եղանակները գոնէ մէկ երկու տարի եւս կրնային պահուիլ ու չկորուել. և եթէ Ս. պատարագի երգերը ապագրուեցան որ ամենէն աւելի ստիպուղական համարուածներն էին և աւելի դիւրաւ կրնային տարածուիլ իրենց միօրինակութեանը և կարծութեանը համար, բայց շարահանի համար քիչ մը ատեն եւս կ'սպասէր Վեհ՛. Հայրապետը դոնէ երաժշտական յանձնաժողովոյն կարծիքը խմանալու չափ ատեն. և եթէ ստուգիւ աճապարէր եւս՝ յայնժամ երաժշտական յանձնաժողովն ալ հարկաւ իւր աշխատութիւնը կը կրկնապատկէր և կը հասցնէր ՚ի տարագրութիւն:

Եւ եթէ յանձնաժողովոյ պատրաստած բնագիրը ապուելու ըլլայ, չպիտի ստիպուի Վեհ՛. հափառ Հայրապետն մեր իւր բազմազրաղ կացութեան մէջ երգերու կանոնաւորութեան խնդրովն եւս զբաղելու, քանի որ այս գործին հմուտ անձինք պէտք եղած քննութիւններն արդէն ըրած են: Քանցի ինքն Վեհ՛. Հայրապետը որչափ ալ հմուտ լիւն ունենայ երգոց վերայ, բայց զբաղեալ գոլով աւելի կարեւոր գործոց ուղղակի առ ինքն վերաբերելոց՝ անհնար կ'ըլլայ իրեն քննել ըստ ամենայնի այնչափ ստուար գործ մը: Հետեւաբար երկար և բազմակողմանի քննութիւններու կարօտ այսպիսի գործքի մը՝ շտապաւ և իբր փորձ եղած ձեռնարկութենէն կարելի է դուշակել թէ անշուշտ պակասաւոր

պիտի ըլլայ, եթէ հասած ալ չըլլային 'ի Պօլիս նաև այնպիսի գրաւոր տեղեկութիւնք, որոց պարունակութիւնը սոյն ձեւնարկութեան նպաստաւոր չէ, և զորս չէ հարկ 'ի մէջ բերել առ այժմ: Սորա ասպացոյց են նաև մօտերս յԷջմիածին տպագրեսոյ Ս. պատարագի երգոց ձայնագրութեանը մէջ եզած բազմաթիւ վրիպակները՝ որոց վերայ քննադատութիւն ընել ներկայ նպատակէս դուրս է:

Ի վերայ այսր ամենայնի երաժշտական յանձնաժողովոյ անդամակիցք որք նիւթական զոհողութիւններ ևս ընելով՝ մեր ազգին մէջ հազիւ ուրեմն նմանը տեսնուած յարատեւութեամբ մէկ ու կէս տարիէ 'ի վեր է անձանձիր կ'աշխատին, թէև ցաւեցան որ իրենց զոյութիւնն անգամ իրր անդոյ ցուցուեր է Վեհ. կաթողիկոսին ամենայն Հայոց, թէև իրաւաօր գայթակղեցան այն մտերիմ կարծեցեալ ոմանց պատ 'ի պատ ընթացքին վերայ, որք յանձնաժողովոյ անդամոց մեծադոյն մասին՝ ճրագն ընդ գրուանաւ դնելու չափ խոհեմութիւն քարոզած ատեննին՝ թերեւս և զանոր կազմութիւնը իրր ցրուեալ կը համբաւէին յականջս Վեհ. կաթողիկոսի, զրկելով Նորին Վեհապառութեան ստուգիւ մեծ ձեւնարկը (այն է մեր եկեղեցական երգոց ձայնագրութեամբ տպագրութիւնը) երաժշտական յանձնաժողովոյն գործակցութենէն: Բայց յանձնաժողովը ցարդ կը շարունակէ և պիտի շարունակէ դոնէ իրր 'ի մասնաւորի, եթէ երբէք չունենայ ալ իրեն աջակից՝ ձեւնհաս սպիտակ մարմին մը, թէև սոցա պարտքն է քաջակերել և պաշտպանել զայն, քանի որ անոր կազմութիւնը Ազգ. կեդրոնական Վարչութենէն կը բղխի և Ազգ. կրօնական Թողովոյն մէկ գործադիր ճիւղը կը համարուի, և որոյ ստանձնած պաշտօնը եկեղեցական պաշտօն մի է. ինչպէս և տակից առաջ ալ այս տեսակ յանձնաժողովներու կազմութիւնը Ս. Պատարիարքաներու կողմէն հաստատուած են:

Ապաքէն կարելի է բժանք ըսեն թէ յանձնաժողովոյն գործը շատ երկար տեւած է. բայց գործոյն ծանրութիւնը զխոցողներն արդէն կ'զգան թէ ինչ գժուարութիւններ կան երաժշտական յանձնաժողովոյն հանդէպ, քանի որ տարիներով անգործադրելի մնացած խնդիր մը գործնականապէս կանոնաւորութեան վերածելու պիտի աշխատի: Արդէն սոյն հրատարակութեան մէջ կըրնան նմարել ուշադիր ընթերցողք ոյն գժուարութիւնները որոց հանդիպած է սոյն յանձնաժողովը:



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ա Կ Ն Ա Ր Կ ՈՒ Թ Ի Ի Ն Մ Ը

Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ Ա Ց Վ Ե Ր Ա Յ

Մեր եկեղեցական երաժշտութեան նախնական վիճակին վերայ ընդարձակ ծանօթութիւններ չունիմք : Պատմութիւնը դասեր է մեզ զայդ , և սա՛ միայն աւանդեր է թէ ութն ձայն եղանակները Ս . Թարգմանչաց օրերէն սկսած են , որոց ութն թիւերու բաժանումը հիմնուած ըլլալու է հաւանականաբար՝ ութն կանոն սաղմոսներու բաժանման վերայ : Ար կարծուի թէ երաժշտական խաղեր ալ շկային յայնժամ , և ինչպէս են մինչեւ ջարդ արեւելեան ազգաց եղանակները , բերնէ բերան դաս կը արուէին երգերը : Շարականաց երաժշտական խաղերը իբր ԺԹ . դարուն հնարուած կը համարուի . կ'ըսուի թէ Տարօնացի Խաչատուր վարդապետը հնարած է դանոնք՝ բարեկարգելով և իւր ժամանակուայ երգերը . կամ աւելի հաւանական է ըսել թէ նասոյն խաղերը արեւմտեան Հայաստանէն առնելով՝ ուր ծագիւած էր այն առեն ազգային գրականութիւնը , մուծած է զայնս յարեւելս կամ յարեւելեան (վերին) Հայաստան , բարեկարգելով այն կողմի եղանակները , որք 'ի պատճառս քաղաքական յուզմանց բնականաբար խանգարեալ էին աւելի քան գարեւմտեանին Հայաստանի : Թէպէտ այս բարեկարգութիւնն ալ երգոց մէկ մասին համար պէտք է իմանամք : Քանզի շարականի և ուրիշ երգերու մէկ մասը գեռ շկային . մէկ մեծ մասն ալ նոր շինուած ըլլալով չէին կրնար խանգարուած ըլլալ : Արնայ ըսուիլ նաեւ թէ Տարօնացիին երաժշտական խաղերուն հետ նաեւ Ս . Շնորհալուոց յօրինած երգերը և այլ կարգաւորութիւնները եմոյժ 'ի վերին Հայաստան . ուր ջայնժամ հաւանականաբար չէին կրցած մուտ գտնել վասն դաւն ժամանակին : Այս բարեկարգութեանց մէջ ըլլալու է նաեւ կարգ մը անյարմար երգերու բարձումը , որպէս եղել և յաւուրս Տ . Ներսէսի Շինողի 'ի ժողովն Գլխոյ , ու նաեւ մօտ ժամանակներս յաւուրս Տ . Պօղոսի և Տ . Կարապետի Պատարարաց կոստանդնուպօլսոյ :

Վերոյիշեալ խաղերը այժմեան խաղերու կատարելութիւն-

ները չունենալով հանդերձ՝ շարականի երգոց ձևերն ու եղանակները պահելու մեծ նպաստ ըրած են :

Շարականաց խաղերուն ինչպէս և ներկայ դարուս մէջ հայկական նոր խաղերուն հնարուելը արդարեւ մեծ պարծանք մ'է մեր ազգին, որ միմիայն ազգն է ասիացւոց մէջ որ ունեցած է և ունի երաժշտական խաղերու գործածութիւնը :

Բայց արդեօք մեր եկեղեցական ներկայ եղանակները ճիշդ նախնեաց եղանակներն են, կամ թէ ո՞րչափ այլայլած են : Չայս զիտնալու համար պէտք է իրարու հետ բազդատեմք այլ և այլ դարերու մէջ յօրինուած շարականները, ՚ի բաց առնելով ժամագրքի երգերը, որոնք ճայներու վերայ շինուած ջրլալով՝ շարականի երգոց միաճայն դասակարգութեանը մէջ չեն մտներ :

Ղերոյնչեալ բազդատութիւնն ընելու համար պէտք է երկու ժամանակամիջոց որոշել : Նախ՝ շարականի երգոց սկզբնաւորութենէն մինչեւ վերջը, այսինքն՝ Ե. դարէն մինչ ՚ի ԺԳ. դարը : Երկրորդ՝ ԺԳ. դարէն մինչ ՚ի ներկայ դարս : Սոյն բազդատութիւնը շարականաց ընդհանուր և հիմնական դրութեանցը վերայ պէտք է հիմնել, քանզի զարտուղութիւնները և մասնաւոր աղաւաղութիւնները մեծ կշիռ մը չունին երգոց ընդհանուր կարգին մէջ :

Սոյն բազդատութիւնը ընելու ատեն կը տեսնեմք որ շարականաց մեծ մասին ամանակը, ձեւը և եղանակը մի և նոյն են ըստ իւրեանց սեռի՝ սկսեալ ՚ի Ե. դարէ մինչ ՚ի ԺԳ. դար, որոցմէ քանի մը օրինակ յառաջ կը բերեմք աստ :

ԱՁ եղանակէն Մարտիրոսաց և Հանդատեան հարցերը և այլն՝ ԺԱ. դարուն . Հրաշակերտ՝ Է. դարուն . Մարմնացեալդ՝ Ե. դարուն . Գարձեալ՝ Այսօր յարեալ՝ ԺԲ. դարուն . Տներնեցալ՝ Ե. դարուն :

ԱԿ եղանակէն Որ նախնեաց՝ ԺԳ. դարուն . Խորհուրդն անճառ՝ ԺԲ. դարուն և ասոնց նմանները՝ ՚ի ԺԱ. դարէ մինչ ՚ի Ե. դարը կը հասնին : Գարձեալ՝ Մարտիրոսաց և Հանդատեան հարցերը և այլք՝ ԺԱ. դարուն . Նշանաւոր յայլք՝ Է. դարուն . Լոյս քառաց Բանդասարգա՝ Ե. դարուն (1) :

(1) Ուշագրութեան արժանի է որ ԱՁ եղանակի աւազին տեսակին և ԱԿ եղանակի երկրորդ տեսակին վերայ ԺԱ. դարէն յետոյ երգ չէ յօրինուած . և այս երկու եղանակներուն ԺԱ. դարէն յետոյ քիչ գործածուած ըլլալէն յառաջ եկած է թերեւս ասոնց մէջ միւս եղանակներէն աւելի կէտէջի թերութիւններ սպրդած ըլլալը :



ԲՁ եղանակէն Յասուրս Էրէզն՝ ԺԳ. դարուն : Նոյն և Նճճ՝  
 ԺԲ. դարուն : Արտ-Էնեցոտ՝ Է. դարուն : Աճեղ՝ Է՛ հօրէ՛ Է. դարուն :

Բկ եղանակէն Որ շըյս ո՛նճառ՝ ԺԳ. դարուն : Որ պարտախրան՝  
 ԺԲ. դարուն : Փարսուծն հանրեթի՝ Էսուսէն՝ Է. դարուն : Իմաստանն հաս-  
 օանէն՝ Է. դարուն : Դարձեալ՝ Որ շըրեցոց՝ ԺԳ. դարուն : Որ շըր-  
 բահանո՝ ԺԲ. դարուն : Խաչն կենարար՝ Է. դարուն : Յոյս իճ Էս քոս  
 տէր՝ Է. դարուն :

ԳՁ եղանակէն՝ Այսօր որ Էն՝ ԺԲ. դարուն : Օքնակն ընթանելի՝  
 Է. դարուն : Որ յախոս փառաց՝ Է. դարուն : Դարձեալ՝ Նմանեալ  
 Էրէզնի՝ ԺԳ. դարուն : Ի Էնն հայցեմէ հոյր՝ ԺԲ. դարուն : Որ ճագե-  
 ցեր՝ Է. դարուն : Անկշքնակն Բունն՝ Է. դարուն :

Գկ եղանակէն Երթեցէտ որդի՝ ԺԳ. դարուն : Երթեցէտ որբուն  
 երթ՝ ԺԲ. դարուն : Դարձեալ՝ Արարակեցոց հօր՝ ԺԲ. դարուն : Ես-  
 իստախրանն՝ Է. դարուն : Հաճանի ուղյ յեւնն՝ Է. դարուն :

ԴՁ եղանակէն Խորհարար խորն՝ ԺԲ. դարուն : Յնճոյ ոչոք եկե-  
 ղեցի՝ Է. դարուն : Արտեւելոյ աղանաւոյ՝ Է. դարուն : Դարձեալ՝  
 Այսօր ի՛նչ արարանն՝ ԺԲ. դարուն : Այսօր ժաշմալ՝ Է. դարուն :  
 Դարձեալ՝ Նոր սին ծնեալ՝ ԺԳ. դարուն : Անմահարար Բոճակ՝ ԺԲ.  
 դարուն : Բողբերանի՝ ԺԱ. դարուն : Օրհնեցէտ շրեր՝ Բ. դարուն :  
 Կենդանարար ասարած՝ Է. դարուն :

Դկ եղանակէն Արեւելի քերթի՛նն՝ ԺԷ. դարուն : Էս աստղի տէր  
 ոչըրեւ՝ ԺԱ. դարուն : Դարձեալ՝ Իմաստախրանն երկնային՝ ԺԲ. դա-  
 րուն : Որ Էնն շեռնեանն՝ Բ. դարուն : Դարձեալ՝ Այսօր շնճառելի՝  
 ԺԲ. դարուն : Էջիֆաննն՝ Է. դարուն : Խորհարար Վեճ՝ Է. դարուն, ևն :

Ստեղի երգերն ալ թէկոյիտ և բաւական զարուղու թեամբ՝  
 այն համեմատական կարգն ունին իրենց յօրինման թուականի  
 կարգաւ, որոց համար եւս օրինակներ բերել հարկ չէ : (1)

Այսչափ օրինակ բաւ է խմանալու համար որ շարականաց կը-

(1) Խորենացոյ հեղինակութիւնը համարուած երգերուն մէկ մեծ մասը  
 Ճոն Բարսիկը կը համարին ոմանք. կարելի է թէ այն երգերուն մէկ մասը  
 իրօր Ճոն Բարսիկ յօրինածն ըլլան, բայց ոչ թէ ամենը, քանզի այս երգերուն  
 գոնէ մեծ մասին Խորենացոյն ըլլալը հաստատելու համար աւելի հաւանակա-  
 նութիւններ կան քան թէ Ճոն Բարսիկն ըլլալը : Ի հայրապետութեան Տ. Ներ-  
 սեփ Էփնոզի կը բազմացած էին շարականի երգերը, անոնց ընտրութեանը  
 համար Ժողով մը կըլու. Կ Գունն և հոն անը երգերու ընտրութիւնը Յոն  
 Բարսիկ յանձնուած ըլլալէն յառաջացած է յիշեալ երգերուն ամենը անոց  
 հեղինակութիւնն ըլլալու կարծիքը :

գերուն թէ՛ կապուեթիւնը և թի՛ գաշնակը իրօրու համաձայն են, օւստի և եղանակին ալ ՚ի հարկէ համաձայն եղած սկիտի ըլլան հիմնապէս, այնքան դարերու տարբերութեանց մէջ ևս. հոգ չէ թէ մտանաւոր զարտուղութիւններ եղած ըլլան ասե՛ն ատեն, և կրտ խաղերը վերջէն դրուած ըլլան. վասն զի չենք կրնար ենթադրել թէ խաղերու դասաւորութեան յառաջ եկած է երգերու այս միութիւնը. քանզի եթէ երգոց բանաստեղծական հաղմութիւնը չսահանջէր՝ միթէ կարելի՞ էր միմիայն խաղերու շարքով այսպէս միացնել այլ և այլ դարերու պատկանեալ այսչան երգեր : Աւելի դիւրին է ըսելը թէ այս երգերը ամենն ալ միեւնոյն վերջին դարուց կը պատկանին, որ այս ալ տարաւորյանն կարծիք մ'է :

Այս տեսութեամբ երգերու պատմութիւնը լեզուի պատմութեան կրնայ նմանիլ : Եւ դարու դրականութիւնը իրաւ է որ հեռաչեւեռ փոփոխութիւններ կրեց և օրէ օր ինկաւ, սակայն անհար է ըսել թէ վերջին դարերու լեզուն բոլորովին նոր լեզու մ'էր. և թէ եւ հուսկ ուրեմն յանդգնեցան ոմանք աւելի փոփոխութիւններ մտածանել անոր մէջ, բայց և գտնուեցան այնպիսիք որք նախնական ձեւը պաշտպանեցին և տարածեցին : Այսպէս և երաժշտութիւնն ալ այլ և այլ դարերու մէջ փոփոխութիւններ և ազաւաղութիւններ կրեց, բայց ըստ հիման բոլորովին չփոխուեցաւ, այլ նոյն հիման վերայ յառաջացաւ, և գրտնուեցան այնպիսիք որք բարեկարգեցին և ճոխացունին նախնական ձեւը : Եղանակներուն բոլորովին չկորսուելուն համար կ'օգնէր նաեւ անցեալ դարուց մեր ազգային կեանքին դրեթէ գլխովին եկեղեցւոյ մէջ պարիակեալ ըլլալը և ժողովրդեան առայն ունեցած սէրը, որով երգերու տեղեակ անձինք շատ կը գտնուէին և որք երկիւղած աւանդապահութիւն մ'ալ ունէին, զանոնք ճիշդ պահելու մասին : Եւ եթէ տեղ տեղ փոքր վիճակներու մէջ չգտնուէին ալ, բայց մեծ ու բազմամարդ քաղաքներու և նշանաւոր վանքերու մէջ ամեն դար անընդհատ գտնուած են և նշանաւոր երաժիշտներ. որոցմէ երգեր յօրինողները թէ և հանրածանօթ են, բայց միմիայն երաժիշտ եղողներէն մի քանին միայն յիշուած են ազգային պատմութեանց մէջ, որոցմէ են Ստեփաննոս Ասողիկ Ժ. դարուն, Թէոդորոս վարդապետ Աւսթասի ԺԱ. դարուն, ծերունի տիրացու Ստեփաննոս (վարդապետ)



ԺՅ. դարուն, և այն. որոց շատին ալ անունները անյլատառ և մնացած են դժբաղդարար :

Երգեր ուսուցանելու համար կ'երևի թէ մեր նախնիք ալ կը դործածէին՝ նախապէս սկուածներ ուսուցանելու պարտիւնը, որ կը դործածուի մինչեւ զայսօր. աշակերաւ նախ և յառաջ ձայներու սկուածները ուսնելով իրր ելեւէջ՝ կը տղաւորուին ասոնք իրեն յիշողութեանը մէջ, որով երգերու եղանակները զիւրու կ'ըմբռնէ. յետ ժամանակաց երբ ատենցմով երգ մը կը սկսի, անոր եղանակին երեւէջը կը նորոգի իւր յիշողութեանը մէջ, երգին ձեւն ու դաշնակին ալ խաղերու օղնութեամբ և ակամջուրբ յիշողութեամբ կը գտնէ, և ըստ այնմ կրնայ երգել զրեթէ ամեն ընթացիկ երգեր նաեւ ստեղծներ. թէպէտ և ծանր երգերու համար աւելի մտադրութիւն պէտք է՝ քանզի դիտաւորարար ասոնց մէջ կը գտնուին երգերու ընդհանուր օրէնքէն զարտուղութիւն համարուածներն :

Ահաւասիկ երգերու կարգութեան բաղդատութենէն տեսնոք որ Ե. դարէն մինչ 'ի ԺԳ. դարը յօրինուած երգերը մի և նոյն հիմնական ձեւն հետեւարար մի և նոյն եղանակն ունին, և եթէ համարիմք թէ շարականի երգերու սկզբնաւորութիւնը Ը. դարէն յառաջ շանցիք, յայնժամ և սփոխանակ ինն դարու՝ հինգ դարու միօրինակ գրութիւն մը կ'ունենամք : Այժմ՝ սեսնեմք թէ երգերը ԺԳ. դարէն մինչ 'ի մեր օրերը ինչպէս հասած են :

Երեքասաներորդ դարէն մինչեւ մեր օրերը հինգ դարու միջոց կայ, որոց մէջ երգերու ընթացքը պիտի քննեմք : Ասի շատ դժուար չէ. քանզի թէև սոյն երկրորդ շրջանին մէջ ալ ազգին նեղ կացութեանը պատճառաւ՝ ինչպէս ամեն բան՝ նոյնպէս և երգերը ազաւազութեան մատնուած են, այլ թողլով որ խաղերու հնարուելէն վերջը աւելի զիւրացած էր երգերու ուսողութիւնը. և անոնց պահպանութիւնը, յաւանդութենէ ալ զիտեմք որ սոյն ստեղծները ազգային դրականութեան պահարան եղած վանքերուն և մէկ քանի միճակներու մէջ հին եղանակները պահուած ըլլալով, անոնցմէ դասատուներ ելած են սակալ, և երգերու նախնական ձեւերը տարածած են. զորօրինակ եղած է և հայերէն լեզուի ուսմանը համար : Եւ եթէ դիտենք որ մեր ազգը իւր ամենանեղ կացութեանը մէջ բնաւ չէ թողած իւր եկեղեցին, և մանաւանդ 'ի նա ազատանած է ոգւով չափ, սաղա

ուրեմն և չէ կարելի երեւակայել թէ եկեղեցական երգերը իսպառ բարձի թողի եղան, և անոր ուսուցիչները և ուսանողները չգտնուեցան միշտ: Եւ ահա ներկայ եղանակները եթէ դիտուեմք՝ կը տեսնուե՞ք որ մինչև անցեալ դարու կէսը կը հասնին ասանց մեծ փոփոխութեան մը, շնորհիւ նախնի դպրաց աւանդապահութեանը:

Եկեղեցական երաժշտաց դասակարգութեանը վերայ յաջորդաբար յիշատակութիւն մը կարի հետաքրքրական ըլլալով թէ և չկրցինք ամբողջապէս դանել վասն զի դրաւոր յիշատակարաններ չկան, այլ ինչ որ թաւական աշխատութեամբ կրցանք քաղել ծերունի երաժիշտներէ և այլ ժամանակակից հմուտ անձերէ՝ կը նշանակուե՞ք աստ, յուսալով որ այս մասին աւելի տեղեկութիւն ունեցողները կը հրատարակեն և կամ եթէ կամին առ մեզ կ'ուղարկեն որ պատեհ առթիւ մը հրատարակուե՞ք (1):

Թողլով ազդային հին վանքերու մէջ եղած երաժիշտները որք յաջորդաբար ուսած են ՚ի միմեանց, թողլով և ուրիշ տեղերու երաժիշտները որոց վերայջ տեղեկութիւն ստանալ անհնար եղած է մեզ, միայն Կ. Պոլսոյ երաժիշտներուն կարգը կը նշանակուե՞ք, որ բոլոր թուրքիոյ Հայ եկեղեցեաց երաժշտութեան հիմը կը համարուի. քանզի որ և իցէ գիտութեան հմուտ ազդայինք մանաւանդ անցեալ դարերուն մէջ ասպատանած են ՚ի Պօլս իբր ասպահով և անդորր վայր, և անդ բնակեալ ազդայնոցմէ՝ պաշտպանութիւն և քաջալերութիւն գտած են. ուրիչ վերլուստին սփռուած են յայլուր՝ որ իցէ ուսման դասասուք:

Անցեալ դարու հայ երաժիշտներուն մէջ մեծ անուն ունի Պաղտատայի տիրացու Յօհաննէս մեծն, որուն համար կ'ըսեն թէ շարականի երգոց շատին եղանակները բարեկարգեր է. ասոր կենաց թուականը կամ վարպետին ու աշակերտին ո՛վ ըլլալը չկրցինք ստուգել: Սոյն դարուն մէջ ծագիւած է Կեսարացի Պրիլս որ

(1) Պերպրեան Աւետիս պատուելի ժամանակագրութեանց մէջ գրեւէ կը յուսայինք դանել այս նիւթին վերայ քանի մը յիշատակութիւններ՝ բայց չգտանք: Ինքն պատուելի հեղինակը անձամբ յարտերութիւն անեցած է հայ երաժշտաց շատին մանաւանդ տիրացու Համբարձումի հետ, ուստի և կ'արժէր որ սորա հայերէն նոր խաղեր հնարելն յիշեր գրեւէ իւր քրոնիկոնին մէջ, որ ոչ նուազ կարեւոր էր քան Պոլսոյ այս կամ այն թաղերու մասնաւոր օրհնածները:



դպիրն Գաղատացիքն որ երկու հատ տաղարաններ ալ հրատարակած է (տես յերես 56) : Անցեալ դարուն մէջ կը յիշուինաեւ Պարկեշտ մականուանեալ Տէր Արրահամ անուն երաժիշտ դասատու մը յԼուսիւտար, որոյ սշակերտ եղած են իւր որդին տիրացու Յովհաննէս սարկաւազ և տիրացու Արրահամ և տիրացու Պօղոս Զիննէ մականուանեալն : Ըստ աւանդելոյ ժամանակակից բազմահմուտ ազգայնոյ մը՝ Տէր Արրահամու որդի սոյն տիրացու Յովհաննէս սարկաւազը եկեղեցական երգերը ուսած է իւր Սարա անուն քրոջմէն : Սարա 'ի հարկէ իւր հօրմէն է ուսած, և յետոյ 'ի ծերութեան հօրն կամ յետ վախճանի նորա ուսուցեր է իւր եղբորը՝ կամ ամբողջ երգերը կամ անոնց մէկ մասը : Արդէն արեւելքի մէջ շատ անգամ գտնուած են կին երաժիշտներ ամեն ազգէ, ըստ աւանդելոյ արժանահաւատ անձանց, այլ մասնաւորապէս մեր ազգին համար խօսելով՝ զըտնուած են Հայ կոնայք մանուանդ սոյն դարու կէսէն առաջ, որք արեւելեան երաժշտութեան և մասնաւորապէս եկեղեցական երգերու մեծ հմուտիւն ունէին : Ահաւասիկ բաց 'ի վերջիչեալ Տէր Արրահամեան Սարայէն, նաեւ հանգուցեալ Սամանճեան Մկրտիչ ազայի մայրը Արրուհի տիկինը որ Մեծի Ուրբաթու Ստեղծի Համբարձին և ուրիշ մէկ երկու ծանր երգեր ուսուցեր է ատենօք Բերացի ծերունի տիրացու Անտոնին՝ եղբոր հանգուցեալ տիրացու Բառնիկին : Երթազ իւղցի հանգուցեալ Գրիգոր աղայն Ղազանճեան՝ մեծ սէր ունենալով երաժշտութեան, եկեղեցական երգերու համար ալ յատուկ դասատու բերել կու տայ եղեր իւր աղջկանը դաս տալու համար : Ասոնց նման շատ օրինակներ կան որք թերեւս շատերու ծանօթ են, որովք կը հաստատուին այն հանրածանօթ անգիր աւանդութիւնը թէ Սրբոյն Վահանայ Գողթնացոյ քոյրը նուազ երէ իւր եղբորը վերայ այն գեղեցիկ շարականը, Զարմանալ է էն, որ մինչեւ ցայսօր կ'երգէ եկեղեցին : Տէր Արրահամեան տիրացու Յովհաննէս սարկաւազ դասատուութիւն ըրած է 'ի Պրուսա, ուր դեռ ևս կը պահուին իւր եղանակները, և վախճանած յԼուսիւտար իբր 'ի 1848, 'ի հասակի իբր 90 ամաց : Սմա աշակերտած են Սէֆէրեան տիրացու Յարութիւն Բերացի, և եղբայր սորուն Սէֆէրեան Տէր Բարդուղիմէոս որ է այժմ յեկեղեցին Ղալաթիոյ : Սէֆէրեան տիրացու Յարութիւնի աշակերտ է Էնրսէրճեան տիրացու Աւետիս վարժապետ 'ի Բերա :

սորա երկուքն ալ վախճանած են բաւաշուտ արտադրութեամբ :

Ամուսնաւոր սարկաւազ Պօղոս վարժապետ Զէննէ մականուանեալ՝ սրապ Տ. Ներսէս Արքեպիսկոպոսի վարժապետեան՝ այժմեան ամենապատիւ Պատրիարքի Կ. Պօլսոյ, դասատու եկեղեցական երաժշտութեան 'ի Զինճիլլի խան . սա նոյն ժամանակ առ 'ի չգոյէ հայկական նոր խաղերուն, յունական եկեղեցւոյ երաժշտական խաղերն եւս ուսեր է : Բազմաթիւ աշակերտներ ունեցած է սա՝ որոցմէ են տիրացու Պետրոս վարժապետ որ իրեն օգնականութիւն ալ կ'ընէ եղեր . իւր որդին տիրացու Յովհաննէս վարժապետեան՝ հօրեղբայր Ներսէս սրբազանի, որ կը բնակի 'ի Պէշքեթաշ, և է այժմ իբր 75 տարեկան : Ըստ ոմանց սոյն տիրացու Պօղոսի աշակերտած է զառաջինն՝ և տիրացու Համբարձում՝ որ հնարեց յետոյ հայկական նոր խաղերը : Տիրացու Պօղոս վարժապետ վախճանած է 'ի թուին 1728 իբր 80 տարեկան :

Տիրացու Պետրոս վարժապետ ամուսնաւոր կիսասարկաւազ՝ շատ տարիներ երաժիշտ դասատուութիւն ըրած է յՕրթագիւղ ուր տեղի վարժարանը նոյն ատենները ամենէն բարեկարգն է եղած : Տիրացու Պետրոս ալ շատ աշակերտներ ունեցած է, որոցմէ են Աճէմեան տիրացու Գաբրիէլ և Մինէճեան տիրացու Յովհաննէս : Տիրացու Պետրոս վախճանած է 'ի 1858, 75 տարեկան : Սորա աշակերտներէն դասատուութիւն ըրած են յՕրթագիւղ Երէցեան տիրացու Յովհաննէս և Թաղւորեան տիրացու Գրիգոր (յետոյ Տէր Պօղոս), որոցմէ ուսած եմք և մեր :

Մինէճեան տիրացու Յովհաննէս երաժշտութեան դասատուութիւն ըրած է 'ի Պալատ թաղն Կ. Պօլսոյ և բազմաթիւ աշակերտներ ունեցած է . և վախճանած է 'ի 1842 յունուար 24 'ի հասակի 47 ամաց : Սորա աշակերտներէն այսօր դասատուութիւն կ'ընեն այլ և այլ տեղեր՝ Մինէճեան Սիմօն, Գերձակեան Կարապետ . սորա աշակերտ Ալիքսան Գրիգորեան և այլք : Մինէճեան Սիմօնի աշակերտ Ռեթէոս Փափազեան և այլք :

Խարթալցի տիրացու Յարութիւն որ յաւուրս Պէշքեան Ամիրայի եկեղեցական երաժշտութեան դասատու է եղեր 'ի Մայր եկեղեցին Կ. Պօլսոյ :

Սա եւս ունեցած է շատ աշակերտներ, որոցմէ Մկրտիչ Զարալիսանէլեան, չափահաս դպրաց համար երաժիշտ դասա-



տուութեան պաշտօնը կը վարէ այժմ 'ի Մայր Եկեղեցին :

Նօթածի տիրացու Համբարձում Պապա կոչեցեալ . սա եկեղեցական երգերը ուսած է գառաջինն՝ ըստ ոմանց՝ Չէնէ Պօղոս վարժապետէն , և ըստ այլոց՝ Մասխալաճի մականուանեալ Հայ երաժիշտէ մը : Ուսած է նաեւ Յունաց եկեղեցւոյ երաժշտական խաղերը . իսկ արեւելեան երաժշտութեան վերայ իւր ընդարձակ հմտութիւնները քաղած է Քուրքաց Տէրվիշ երաժիշաներէն : Սորա կենսագրութիւնը տե՛ս յերես 92 : Ըստ աւանդելոյ ոմանց՝ ձեռնարկած է սա յիւսկիւտար 'ի տան ճարտարապետ Գրիգոր Ամիրայի Պալեան՝ ձայնագրելու շարականի երգերը իւր հնարած նոր խաղերովը , բայց սկիզբէն մինչև Չատկի Օրհնութիւնը կըրցեր է շարունակել , և այնչափն ալ յետոյ կորսուեր է : Իւր գրութիւններէն բաւական Մեղեդիներ , Տաղեր և ուրիշ երգեր կան մնացած , որոց մէկ մասին եղանակները իւր յօրինածն են , բայց շարականի երգոց գրութիւններ գրեթէ չկան , գոնէ մեք չեմք տեսած : Ար կարծուի որ թերեւս նորութիւններ կամ բարեկարգութիւններ մտցընել ուզած ըլլայ շարականաց մէջ , և այն ատենի շարականագէտք որք բազմաթիւ էին ու կանոնաւոր դաս մը կը ձեւացընէին և խիստ ալ աւանդապահ էին իրենց գիտցածին , ընդդիմացած ըլլալու են իրեն . ուստի և ինքն ալ չէ կրցած այս մասին ձեռնարկութիւն մը ընել , և իւր հանձարը նուիրեր է Տաղերու , Մեղեդիներու և այլ ուրիշ երգերու , որոնք թէև եկեղեցական երգեր են , բայց նոյն ժամանակի եկեղեցական երաժշտաց ամեն փոյթը շարականի երգերուն վերայ ըլլալով ասոնց կարեւորութիւն չէին տար , և Պարտաբէլ Կիւրացու (1) կ'ըսեն եղեր և դեռ կ'ըսեն , երգիչներու համբակներն իմացընելու համար : Ոմանք կը հաստատեն թէ տիրացու Համբարձում մեր երգերը թուրքական եղանակաց վերայ սրբագրելու հակամէտ է եղած . այսու ամենայնիւ մեք որոշակի չգիտնալով ի-

(1) Շարականներու փոյթ չտանելով միայն պատարագի երգերուն հետեւիլ՝ աւելի մեր հռոմէական ազգայնոցմէ սկսած է . որոց մէջ թէև գանձուած են միշտ շարականի և ժամակարգութեանց մասին մեծ փափագ ունեցողներ , բայց իրենց մեծամասնութիւնը երբևէ նոյն սերը չունենալով հայաստանեայց եկեղեցւոյ արարողութեանց վերայ , իբր առհարկի հետեւած են միայն Ս . պատարագի երգոց :

րեն սոյն հետեւողութեան պատճառները և աստիճանը, չեմք կրնար դատաստան մ'ընել այս մասին . այլ ինչ որ ալ է, սա՛ յայտնի է որ ինքն մեծ երախտիք ունեցած է հայ երաժշտութեան վերայ՝ ոչ միայն իւր ընտիր երգերովը այլ և գլխաւորապէս հայկական նոր խաղերն յորինելովը : Սա եւս ունեցած է բազմաթիւ աշակերտներ յորոց Չէօմէկճեան տիրացու Պետրոս դասատուութիւն ըրած է նախ յԻսկիւտար և ապա 'ի Բերա առ Հոովմէական ազգայինս մեր : Արիս Յօհաննէսեան որ այժմ՝ դասատուութիւն կ'ընէ 'ի Գումգարու և յայլուր, որոյ աշակերտ եղած են, Երկանեան Յարութիւն դասատու 'ի Պէշիկթաշ, վասնճանեալ 'ի 1865, Երանեան Գարրիէլ վասնճանեալ 'ի 1860 : Նա և Խանճեան Տէր Գարրիէլ, Չէրշիեան Համբարձում (1) և այլք որք այժմ՝ դասատուութիւն կ'ընեն այլ և այլ տեղեր : Գարրիէլ Երանեանի աշակերտներէն է և Նիկողոս Ս. Թաշճեան :

Գարուս սկիզբը և յաւուրս Պէզճեան Ամիրայի (որն որ այս մասին եւս մեծ երախտիք ունի ազգիս մէջ, իւր ատենը գտնուած ազգային երաժիշտներուն ալ մեծ քաջալերութիւններ ընելուն համար,) գտնուած են շատ Հայ երաժիշտներ ու դասատուներ, որոցմէ են տիրացու Սրապիոն 'ի Պալատ՝ վասնճանեալ 'ի 1852 յունվարի 22, Տիրացու Գարրիէլ 'ի Գուզկունճուք, տիրացու Գրիգոր յԻսկիւտար, տիրացու աւետիս 'ի Գուրուչէճմէ, տիրացու Մազար վարժապետ որ է այժմ՝ յԻսկիւտար, Պաղտատլը Յօհաննէս փոքր՝ յՕրթագիւղ, Խախմաճի տիրացու Սերօբէ, սորա որդին Տէր Յարութիւն որ է այժմ՝ 'ի Ղալաթիոյ Եկեղեցին, միւս որդին Տէր Մեսրոպ յՕրթագիւղ, Խախմաճի տիրացու Գէորգ 'ի Սամաթիա, Տէր Յովհաննէս որ է այժմ՝ 'ի Ղալաթիայ, Հայէսլեան տիրացու Յովհաննէս և Գամաղիէլեան տիրացու Գրիգոր և այլք 'ի Մայր Եկեղեցի, ոսկերիչ տիրացու Յարութիւն ձայնագրագէտ որ բնակի այժմ՝ 'ի Պէշիկթաշ, և այլք : Սոցա մէկ մասը դասատուք են և ուսնը միայն երդիչք . ասոնց ամեն մէկուն ո՛ւստի սովրելնին չեմք գիտեր, բայց սովորաբար

(1) Սա ինքն է որ Պալեան Կարապետ Ամիրայի ծախքով ձայնագրած է մեր եկեղեցական երգերը հայկական նոր խաղերով՝ ըստ երգերոյն տիրացու Կարապետ Դերձակեանի : Սոյն օրինակը պահուած է այժմ՝ Տիփլիթեան Յակոբ էֆէնտիի քով :



փորքն 'ի մեծէն' և իրերաւարժութեամբ, և ս և ունկնդրութեամբ  
ուսած են. ինչպէս և 'ի վեր անգր դասատուներու կարգին մէջ  
յիշուածներէն ալ շատը փոփոխակի մէկէն կամ միւսէն սովորած են:

Բարձրագոյն կարգի ազգայնոցմէ սկսեալ մինչեւ խարթալցի  
երկրագործը և Վոսուրի նաւաւարը ամեն կարգի ժողովրդոց  
նաեւ կանանց մէջ՝ արեւելեան երաժշտութեան և մասնաւո-  
րապէս եկեղեցական երգերու հմուտ երգիչներ ու դասատուներ  
գտնուած են մանաւանդ սոյն դարու առաջին քառորդին մէջ և  
յաւուրս Պէզճեան Սմիրայի: Ասոնցմէ ոմանք արեւելեան ընդ-  
հանուր երաժշտութեան մէջ ալ մեծ յառաջադիմութիւն ունեցեր  
են և Օսմանեան արքունեաց գոհունակութիւնն ու վարձատրու-  
թիւնը վայելած են:

Թէեւ մեր ընելիք բազդատութենէն քիչ մը հեռացանք սոյն  
միջանկեալ յիշատակութեանց համար, բայց նախ քան զայն  
հարկ կը համարիմք, դպրաց համար դարուս սկիզբը տրուած և  
տետրակի ձեւով ալ հրատարակուած կոնդակի մը օրինակը մէջ  
բերել աստ, 'ի հետաքրքրութիւն բանասիրաց և 'ի նկարագիր  
նոյն ժամանակի դպրաց վիճակին:

## Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ն Կ Ո Ն Դ Ա Կ Դ Պ Ր Ա Յ

### Հ Ա Տ Ս Ս Ս Ա Ն Ե Ն Ա Յ Յ Ս ՈՒՐԲ Ե Կ Ե Ղ Ե Յ Ռ Ո Յ

Հաստատեալ երանաշնորհ Տեառն Յօհաննիսի Արքազան Արք  
Եպիսկոպոսի և Աստուածաբան Պատրիարզի կոստանդնուպօլսի.

Խորհրդով և հաւանութեամբ Աստուածասէր և գերապայծառ  
Իշխանապետաց:

Տղեալ Յօֆ Տեառն 1814 և ի թուականութեան Հայոց ՌՄԿ. փոր. 3:

Ի կոստանդնուպօլսի, 'ի Տպարանի սուրբ Աստուածածնի,

'ի Մայր Դպրատան:

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Յօհաննէս Արք Եպիսկոպոս՝  
և շնորհիւ սուրբ Հոգւոյն Պատրիարզ մեծի մայրաքաղաքիս կոս-  
տանդնուպօլսի: Յորմէ սիրով սուրբ Հոգւոյն Ողջոյն Փրկչական՝

Շնորհք Առաքելական Աստուածային բաղմատաւորիկ օրհնութեամբ  
 եկեալ հանգիցէ 'ի վերայ ընտրեալ դասուց պատուական Գրգ-  
 րաց համայն սուրբ Եկեղեցեաց՝ մեծաց և փոքունց առհասարակ  
 մերս սիրելի Զաւակացդ, կալ մնալ ձեզ 'ի ծոց սուրբ Ե-  
 կեղեցւոյ սուրբ սրտիւ՝ անարատ հոգւով՝ պարզ մտօք կատարեալ  
 սիրով՝ մեծաւ յուսով՝ արիաբար և յօժարամիտ առանց  
 ծուլութեան ահիւ և դողութեամբ սպասաւորել Աստուածային  
 պաշտամանց, 'ի փառս Աստուծոյ և 'ի պայծառութիւն սուրբ  
 Եկեղեցւոյ :

Որոյ ամենից սիրելի և օրհնեալ Որդւոցս՝ պատուիրեմ հայ-  
 րական սիրով և գթութեամբ՝ ճանաչել իմաստութեամբ զաս-  
 տիճանին ձեր զոր ունիք՝ զբարձրութիւն զպատիւ և զգօրութիւն :  
 Զի դուք զօրէն հրեշտակաց հանապաղօք կայք 'ի փառաբանու-  
 թիւն Աստուծոյ 'ի մէջ սուրբ Եկեղեցւոյ իբր առաջի հանդիսա-  
 վեհութեան ահաւոր Աթոռոյ ամենասուրբ Երրորդութեանն : Որ-  
 պէս զի քաղցրանուագ երգով ձերով շարժեալիք զհօգիս հաւա-  
 տացելոց 'ի ջերմեռանդ յալօթս առ Աստուած . որով և սիրտ  
 մարդասիրին քաղցրացեալ՝ պատճառ լինի՞լիք հեղին շնորհաց և  
 ողորմութեանն Աստուծոյ առ իւր արարածս . և Եկեղեցի Քրիս-  
 տոսի շքեղազարդ վայելչացեալ պսակեցի անդրդուելի հաստա-  
 տութեամբ : Վասն որոյ Մեք՝ և Գերապատիւ Իլխանապետքս՝  
 յարգելի Իլխանք և առհասարակ ընդհանուր Ազգս մեր միշտ  
 ունիմք զձէնջ զամենեցունցդ շնորհակալութիւն և յատուկ սէր  
 խնամք և յարգութիւն ըստ իւրաքանչիւր պատուոյ և յարգու-  
 թեան ձերոյ : Հոգին սուրբ Աստուած վարձատրեալ հոգեւոր  
 շնորհիւ փառաւորեսցէ զձեզ զամենեսին . ամէն :

Ապաքէն հայրախնամ սիրով շարժեալ 'ի խնդրոյ Աստուա-  
 ծասէր և գերապատիւ Իլխանապետացս՝ յօժարեցաք տնօրինել  
 ձեզ նոր 'ի նորոյ զարժանաւոր կանոնս . զի հաստատեսցի 'ի ձեզ  
 բարեկարգութիւն սէր և երկնաւոր խաղաղութիւն : Ուստի հո-  
 գեւորական բարձու Իլխանութեամբ մերով սահմանեալ՝ հրա-  
 մայեմք ձեզ սիրելի Որդւոցս՝ զգասակարգութիւն կառավարու-  
 թեան ձերոյ միշտ ունել այսպէս :

Գիտասլիք ամենեքեան, զի 'ի վերայ ամենայն դպրաց  
 գլուխ և իլխօղ է մեծապատիւ Գայրապետն . զոր յատուկ կոն-  
 դակաւ հաստատեալ՝ ըստ հրամանի կոնդակին մերոյ պարտիք



ամենեքեանդ միշտ յարդուծիւն պատիւ և հնազանդութիւն նմա  
ցուցանել, և սպա իւրաքանչիւր ձայնի Չայնապետն՝ դասա-  
դրուխ Ճամասացն, և Թիկինապահն. որք միանգամայն ժողովեալ  
միտրան սիրով պարտիք հոգալ և տնօրինել զկառավարութիւն  
դպրոց Դասուն. այսինքն Չայնապետք և Թիկինապահքդ՝ ՚ի  
միասին եղբայրական սիրով ընտրեալ կացուցէ՛ք զգործակալս  
ձեր՝ զգանձապետ, և զյայն ըստ կարգի. և զհամայն հաշիւս  
տարին միանդամ տեսեալ, գիտասմիք զեւս և զմուտս՝ զարդիւնս  
վիրաւունս՝ և զծախս բոլոր դպրական հասից. և ՚ի դպրութեանն  
ստորագրեցէ՛ք ըստ կարգի Չայնապետքդ և Թիկինապահքդ :

Եւ յորժամ հարկաւորի ընտրել զնոր ՄիւթէվէԱի դպրական  
վախճից՝ որոշեցէ՛ք զարժանաւոր չորս դպիրս՝ երկու ՚ի ձայնա-  
պետաց և երկու ՚ի Թիկինապահաց, վիճակս արկէ՛ք ՚ի վերայ չո-  
րեցունցն, յորոյ անուն ելցէ վիճակն, նա եղիցի ՄիւթէվէԱի  
այնր ժամանակին :

Իսկ զառհասարակ զկառավարութիւն դպրաց դասուն պարտ  
է առնել ըստ հետեւեալ ինն կանոնացս :

Արդ՝ համայն Դասք դպրաց ունին զհանդէս ՚ի յերկուս ա-  
տեանս՝ հրապարակական և առանձնական. ըստ որոց որոյի և  
հանդիսաւորութիւն դպրաց : Հրապարակական հանդէսն է ա-  
տեան սուրբ Եկեղեցւոյ, ուր կատարի Աստուածային պաշտօն  
ժամերդութեանց :

Առանձնական հանդէսն է ՚ի պահարանի ժողովն դպրաց, ուր  
ընտրեալ տնօրինի բարեկարգութիւն դպրաց դասուն : Ուստի  
ըստ երկուց հանդիսաւորութեանցս պատշաճաւորեալ սահմա-  
նեմք զկանոնքս :

#### Կ-ն-ին Ա.

Ի հրապարակական հանդիսի յատեան սուրբ եկեղեցւոյ ՚ի  
մէջ դասին՝ քաղցրանուագ և համեղաձայն Դպիրքն ունիցին զա-  
ռաջնութիւն և զյարգութիւն : Քանզի այս ատեան սուրբ եկե-  
ղեցւոյ է հաւաքումն ընդհանուր Ազգիս. ուր հանդիսացեալ  
կանդինն Աստուածային Քահանայապետք՝ Եպիսկոպոսունք՝ վար-  
դապետք՝ Քահանայք, և համայն եկեղեցականք. այլ և Գերա-  
պատիւ Իշխանապետք, յարգոյ իշխանք, և առհասարակ օրհ-

նեալ ժողովուրդք . որք ո՛չ խնդրեն զմեծութիւն և զաւազութիւն զպրաց , այլ զքաղցրութիւն և զհամեղութիւն երգեցմանց . զի քաղցր ամօք և համեղ ժամերգութեամբ միայն լինի սուրբ Եկեղեցւոյ շքեղութիւն և սլայծաութիւն : և բորբոքի Աստուածապաշտութեան ջերմեռանդութիւն : Իսկ անախորժ տղեզ ձայնիւ շարժին լսողք 'ի աաղտկութիւն , դուցէ և յարհամարհութիւն իսկ երգողին , և շիջանի սէր . Աստուածային պաշտաման :

Արա 'ի մէջ դասին յատենի սուրբ Եկեղեցւոյ՝ գեղեցկաձայն զսիրք միայն երգեսցեն . իսկ բազաձայնք՝ թէ և մեծամեծք և աւագագոյնք իցեն , բնաւին լուսեցեն :

#### Կանօն Բ.

Յատանձնական հանդիսի՝ յորժամ միայն Գպիրքդ ժողովիք 'ի պահարանի , հարկ և պատշաճ է , զի մեծագոյն և աւագագոյն Գպիրքն ունիցին զառաջին տեղի՝ զարժանաւոր յարգութիւն և զիրաւունս . իսկ փոքրագոյնք և նորահասք՝ թէ և դեղեցկաձայնք իցեն , հարկիւ ունիցին զպատկառ խոնարհութիւն և զհնազանդութիւն մեծագունից և աւագագունից , ամենայն բանից յարգութիւն և հարատակութիւն ցուցանելով :

#### Կանօն Գ.

Յամենայն կիւրակէի մեծասպատիւ Գարսպեան՝ ութեքին Չայնապետք և թիփնապահօքդ ժողովեալ 'ի միասին նստէ՛ք 'ի պահարանի . եղբայրական սիրով խորհեցէ՛ք զհարկաւորսն պաշտօնին ձերոյ . և համակամութեամբ միաբանեալ հաստատեցէ՛ք զբարեկարգութիւն Գպրաց դասուն . արդար դատաստանաւ դատեցէ՛ք զյանցաւորսն , անաչառ յանդիմանութեամբ սատեցէ՛ք զստահական , և արժանաւորաց զսպաշխարանս եղեալ՝ զղղացեալսն եղբայրական սիրով ընդունեցէ՛ք , ներելով յանցանացն՝ ըստ արժանեացն պատուեալ միսիթարեցէ՛ք , և թէ ծանր յանցանք և գործ գտանիցի , սարտաւորիք ծանուցանել բարձրագոյն ատենի :

#### Կանօն Դ.

Դասագլուխ ժամասացն պարտի լինել գեղեցկաձայն քաջափարժ Գպիր . երկրորդ ժամասացն անասցէ՛ առաջին ժամասա-



ցին, և երրորդն հեռեւեցի՝ երկրորդին. և այսպէս ամենայն դասակիցք ըստ դասակարգութեանն հրամանաւ վերնոյն սկսեացեն՝ և երգեացեն ամենեքին ներդաշնակութեամբ, զձայնն ցածուն հեռեւեցուցանելով ՚ի ներքոյ ձայնի սկսողին. այսինքն մի՛ ոք գոչեսցէ բարձր ջրան զսկսողն, և մի՛ երկարեսցէ վինի աւարտման սկսողին :

Կանոն Ե .

Ամենայն Գպիրք պարտին լսել Քահանայական աղօթից՝ մաղթմանաց, և գինի աւարտմանն սկսանիլ, և սյս եւս մանաւանդ ՚ի սուրբ Պատարագին. ուր Յարկաւազուք և Գպիրքն պաշտօնեայք են պատարազիչ Քահանային. սարկաւազն զգուշութեամբ նկատէ առ կատարումն խորհրդոյն. և զպրաց հա՛րկ է հայիլ և հետեւիլ սարկաւազին. որոց միանդամայն սարկաւազաց և զպրաց պա՛րա է գյորդոր և զծանր երգեցմունս յարմարել բանից Պատարագիչ Քահանային. և սպասել, զի Պատարագիչն վա՛ճարեսցէ զբանն, և ապա սկսանիլ :

Կանոն Զ .

Ամենայն ժամերգութիւնք պարտին ըստ պատուոյ աւուրն և ըստ վայելչութեան բանին երգել. այսինքն ՚ի հասարակ աւուրս միջակ ձայնիւ յորդոր ասացուածովք. յապաշխարութեան աւուրս պահոց՝ ողորմագին մեղմ կղանակաւ, և յերեւելի աւուրս՝ բարձր և ծանր կղանակելով, ըստ ամենայնի հրամանաւ ժամօրհնողին. և մի՛ ոք հակառակ գրեւոցս ըստ ակործակին անբանաբար զօղանչեսցէ : Մի՛ ոք զհոգեւոր երգսն յեղափոխեսցէ ըստ մարմնաւոր երգոց, զի ՚ի փոփոխիլ կղանակին՝ փոփոխի և զխաւարութիւն լսողին, և շիջանի ջերմեւանդութիւնն :

Կանոն Է .

Ամենայն ձայնապետք և թիկնապահք յաւուր ձայնի իւրեանց պարտին անխափան գտանիլ ՚ի սուրբ Եկեղեցին. զի առանց պարսաւանաց կատարեսցեն զպաշտօն իւրեանց ինքեանք՝ կամ ՚ի ձեռն քաջալարժ հմուտ զպրաց. այսինքն զձայնաւորսն հա-

մեղաձայնքն երզեսցեն, և զթիւ ընթերցուածսն ուղիղ առողա-  
նութեամբ կարդացողքն ընթերցցին և մի՛ ոք առաւել քան  
զկարողութիւն իւր ձկտեալ խայտառակեսցի :

Կ-ն-՞՞ Ը .

Ի ձայն գրելի զմանկունսն արժա՛ն է փորձել ՚ի ժամանակս  
ինչ . որք թէ գացին պատկառ և պարկեշտ վարուք, հլու հնազանդ-  
բարութք, և ուղիղ առողջ յընթերցուածս, և յօժարակամ յանձ-  
նառու դպրակսն կարդաց կանոնաց, ապա հաւանութեամբ  
ժողովոյն գրեսցի յարժանաւոր ինչ ձայնի . և յանձնեալ ձայնա-  
պեահին և թիկնապահին՝ կրթեսցին ՚ի բարին . զաստուեալ վար-  
ժեսցին ՚ի շարականս ՚ի տալս և ՚ի մեղեդիս . և զամենայն աւուրս  
փոխն ըստ ձայնին կարգաւ ասացեն :

Կ-ն-՞՞ Թ .

Վերջինս ըստ կարգի և առաջին ըստ աստուածային հրամանի  
և սրբազան Հայրապետացն կանոնաց՝ այս է . զի ամենայն Գպիր՝  
թէ և առաջին ժամասաց և ձայնապետ իցէ, հարկիւ պարտա-  
ւորի ցուցանել զհնազանդութիւն բարձրագոյն աստիճանաւորաց  
Եկեղեցւոյ . այսինքն խոնարհիլ՝ վարդապետաց Քահանայից զաջնն  
համբուրել . և Աւագ սարկաւազաց զարժանաւոր յարգութիւն և  
պատիւ մատուցանել՝ ուր և պատահեսցին, մանաւանդ ՚ի մէջ  
սուրբ Եկեղեցւոյ . մի՛ և մի՛ լիցի բնաւին խօսել՝ կամ լրբաբար  
համարձակեալ յանդգնութեամբ կարգադրել զպաշտօն նոցին :

Չայս կանոն հարկ է և ձեզ պահել և ՚ի մէջ միմեանց . իբր  
զի փոքրագոյն զպիրքդ՝ թէ և հրեշտակային եղանակս ունիցիք,  
միշտ պարտական էք պատկառանօք յարգութիւն պատիւ և խո-  
նարհութիւն առնել մեծագունից և աւագագունից, ուր և սե-  
սանիցէք . և մի՛ վասն պաշտօնին կամ գեղեցիկ ձայնի ձերոյ  
յանդգնեալ՝ լրբենի զիմօք համարձակ խօսեսլիք առաջի աւա-  
գագունից . զի այնպիսիքն միշտ արհամարհեալ ատելի են յԱս-  
տուծոյ և ՚ի մարդկանէ ըստ գրեցելումն, զիբրն և զյանդուգն  
առաւել ատեսց Աստուած՝ քան զյանցաւորսն :

Բայց մեծամեծացդ և աւագագունիցդ եւս պատուէր տամք,  
ի ինամս սիրոյ ունել՝ ձերովդ խոհեմութեամբ շահել զփոքրա-



գոյնսն . զի ո՛չ կարէ ակն ասել ցձեռն , թէ շես ինձ պիտոյ . և դարձեալ գլուխ ցոտս՝ թէ չէ՛ք ինձ պիտոյ . քանզի Աստուած խառնեաց զմարմինն . նուազին առաւել եւս պատիւ ետ , զի մի՛ իցեն հերձուածք 'ի մարմնի անդ . այլ զի նոյնք զմիմեանց հոգայցեն անդամքն : Որովք 'ի պատիւ զմիմեամբք ելեալ՝ յամենեցունց յարգեսցին Առաքելական պատգամքս . Ո՛րդ իք՝ հնազա՛նդ լերուք ծնողաց ձերոց , և թէ չա՛րք՝ մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր :

Վերջապէս հարկիւ պատուիրեմ ամենեցունցդ Աստուածային սիրով՝ զելս և զմուտս՝ զնստիլ և զկանգնիկն ձեր 'ի շուկայս , 'ի փողոցս և յամենայն տեղիս , յարմարեցէ՛ք հրեշտակային պաշտօնին ձերոյ . պարկեշտ հանդերձիւ՝ ամօթխած երեսօք չըջեցէ՛ք . 'ի զինետունս մի՛ երթայք . 'ի խահվէս մի՛ նստիք . յանպարկեշտ զբօսարանս և յառասպել թէատրօնս ('ի մէջտան օյինիս ) մի՛ գտանիք . մանաւանդ 'ի մէջ սուրբ Եկեղեցւոյ բնաւին տաճկերէն մի՛ խօսիք :

Ապաքէն՝ հոգեւորական բարձու իյխանութեամբ մերով վերլստին հարկեալ պատուիրեմք ձեզ բանաւոր տատրակաց՝ սիրելի և օրհնեալ Գպրաց համայն սուրբ Եկեղեցեաց՝ մեծաւ սիրով և հնազանդութեամբ յառաջ տանիլ զայս հոգեպատգամ կանոնադրութիւնքս , ամենեքին 'ի ձեռս և 'ի ծոցս ունել , անձանձիր կարդալ , և զհրամայեալս անպակաս կատարել . զխառնիք , զի հնազանդութիւնն է մայր և ծնող ամենայն բարեաց :

Հա՛պա՛ սրբեցէ՛ք զանձինս ձեր յամենայն արատոյ , կատարեցէ՛ք սրբութեամբ զպաշտօն ձեր ահիւն Աստուծոյ . յամենայն խորհուրդս 'ի բանս և 'ի դործս ձեր վերադասեցէ՛ք կամաց ձերոց զկաման Աստուծոյ , որ է սէր սրբութիւն , հեղութիւն խընդութիւն և խաղաղութիւն . մի՛ զանձանց և եթ խնդրէք , այլ և զընկերին . զի երկնաւոր խաղաղութիւնն հաստատեցի 'ի հողիս ձեր : Որովք որպէս աստ յերկրաւոր եկեղեցիս զինուորեալ՝ պայծառացուցեալ քաղցրաձայն երգովք փառաւորէք զԱստուած՝ արժանի՛ լիջիք ամենեքին և յեկեղեցիս անդրանկաց յարքայութեան երկնից ընդ ձեզ պաշտօնակից հրեշտակաց փառաւորիլ յԱստուծոյ յանգրաւ յաւիտեանս . ամէն :

Սահմանեցաւ Կանոնական Կոնգրակն 'ի թրատկանութեան Հայոց՝

ՌՄԾԸ՝ Մարտի 21 , 'ի Պարթևոբարան Հայոց :

Սոյն կոնդակը թէ եւ դարաց դատուն յատուկ կազմակերպութիւն մը տալու համար տնօրինուած է, բայց անկից առաջ ալ դպրոք այս տեսակ կանոններ ունին եղեր, ինչպէ՛ս որ տեսանք սոյն Յովհաննէս պատրիարքին մէկ կոնդակէն որ սուած է 'ի թուին Հայոց ՌՄԾ, 'ի հաստատութիւն դպրապետութեան տիրացու Զաքարիայի՝ յրակիւտար Սէլամիյէ թաղը : Սոյն կանոնները յարատեւած են մինչեւ մօտ ժամանակներս, որպէս կ'երեւի դպրապետաց և դպրական հասոյթից միւթ վելլիներուն համար տրուած պատրիարքական կոնդակներէն որք շատ եկեղեցեաց մէջ կը գտնուին : Սոյն կոնդակներէն կ'իմանանք թէ դրոյրապետաց ընտրութիւններն ալ ըստ կարելոյն անկողմնակաութեամբ կ'ըլլայ եղեր, և առանց ընտրելոյն վիճակը և կրչու մը նաշելու՝ միայն անոր վարելիք պաշտօնին նկատմամբ ունեցած յարմարութիւնը կը բնառուի եղեր : զոր օրինակ, երկու հատ պատրիարքական կոնդակներ տեսանք յրակիւտար՝ Սէլամիյէ Ս. Խաչ Եկեղեցին՝ տուեալ 'ի 1810 և 'ի 1851, 'ի հաստատութիւն դպրապետութեանց՝ մին վասն մէյլսանաճի տիրացու Մկրտչի և միւսն վասն տէր Սնդրէաս Փահանայի :

Եկեղեցական երաժշտաց շարունակութեանը վերայ այսքան խօսելէ զինի, դառնա՞նք շարունակել ներկայ եղանակաց՝ նախնականին հետ մեր ընկիւք բաղդատութիւնը, յիշելով այլ ևս քանի մը մասնաւոր և ընդհանուր պարագաներ, որչափ որ մեր յիշողութիւնը կը ներէ և որքան որ կրցած եմք հետազօտել :

Մինչեւ երեքտասներորդ դարը՝ երդերու հեղինակութեանց վերայ հիմնեցինք մեր բաղդատութիւնը. անտի և այսր աւանդութեանց և ներկայ եղանակաց հետազօտութեանը և անոր կիրառութեանը վերայ պիտի հիմնեմք մեր բաղդատութիւնը :

Երեքտասներորդ դարէն յետոյ երկու դար եւս՝ նախնական եղանակաց դրութիւնը ճշդիւ պահուած էր արդէն. քանզի սոյն երկու դարերուն մէջ և աւելի ետքերն անգամ ըստ նախնի դաշնակին շարականներ յօրինուած են, որոցմէ ոմանք եկեղեցւոյ մէջ ալ կը գործածուին, ինչպէս են, Յատուտ վերջին, Սեբեւթ Գերբէն, և այլն :

Վերջին հինգ դարուցս մէջ եկեղեցական երդերու պահպանութեանը համար օգնած են բաց 'ի հին խաղերու դասաւորութեանէն՝ նաեւ նոյն ժամանակի ուսողութեան ձեւերը. քանզի



նկատելու արժանի է թէ, գալոցական ոճով գասատուութիւններ չըլլալով, (ուր տեղ վարժապետը կարող է նաեւ ըստ հաճոյս ալ ուսցընել և աշակերտք սուանց դիտողութիւն ընելու կ'ընդունին մեքենապէս) և այն տոննի ուսանողք ընդ հանրապէս չափահաս ըլլալով ուսած ատեննին կրնային դիտողութիւններ ընել, և կամ իրենց գասատուն թողուլ և ուրիշն ուսանիլ : Եւ ըսց 'ի գասատուներէ որ առաջները շատ չկային ալ, ամենն ալ ճիշտ երգողներ ըլլալով, իրենց մէջ ալ ժողովրդեան սակն կարգէն մարդիկ կը գտնուէին, և կամ ընդհանրապէս խօսելով գրեթէ բոլոր ժողովուրդը երգող էր, ուստի և անհնար էր որ ըստ կամս փոփոթիւններ տեղի ունենային երգերու մէջ. և եթէ եղած ալ ըլլան, ասոնք ալ սովորական երգերու մէջ չեն, այլ ծանր և անսովոր երգոց մէջ : Եւ թողով որ գալոց խումբերը յատուկ ժողովքներ կ'ընէին ուր երգերու վերայ կը խօսակցէին, և ընդհանուր կարգէն շեղողները իրր ստահակ կ'արտաքսին և իրենց այս իրաւունքը ազգովին ճանչցուած էր, արդէն ժողովուրդն ալ գէտ կու գար որ և իցէ նորութեան, չուզելով իւր գիտցած եղանակները փոխել զոր կը պահպանէր իրր սրբազան աւանդ : Սա եւս պէտք է գիտնալ թէ երբ որ և իցէ բան մը մասնաւոր կարգ մը անձերու շարտականալով ամբողջ ժողովուրդի մը կը պատկանի, դանիկայ փոխելը շատ դիւրին չէ : Աւրիշ խօսք է երբ որ դարերը անգգալապէս անոր վերայ ազդեցութիւն կ'ընեն, և քիչ շատ փոփոխութիւններ կը պատճառեն նոյն իրին մէջ, բայց սակայն և հիմն միշտ կը մնայ ժողովրդեան մէջ՝ իւր յատուկ կազմակերպութեամբը՝ նաեւ հազարաւոր տարիներ : Ինչպէս կան այնչափ ոճեր, սովորութիւններ, նախապաշարմունքներ անգամ զորս ջնջելու համար այսքան աշխատութիւն եղած է և դարձեալ ժողովուրդը պահած է զանոնք, հապա ինչպէս չափաի պահէ զայն որոյ պահպանութեանը համար յատուկ աշխատութիւններ կ'ըլլան : Քանզի մինչդեռ կը տեսնենք որ հարիւրաւոր տարիներէ 'ի վեր դովասանք երգողները Ս. Գերեզմանի և Ս. Կարապետի մի եւնոյն գովասանքները միեւնոյն եղանակաւ կ'երգեն առանց այլայլութեան, որոց մէջ եկեղեցական երգ գիտցողներու ալ հանդիպած ենք երբեմն, մինչդեռ գոնէ անցեալ դարէն 'ի վեր ամեն տեղ եկեղեցական երգոց շատը միեւնոյն հիմնական եղանակաւ կ'երգուին, այս արեւելեան անշարժութիւնը և միօրինաւ

կութիւնն անգամ՝ կ'ապացուցանէ թէ եկեղեցական երգերը գոնէ ըստ հիմնական ձեւոյն պահուած են մինչ 'ի մեր դարը : Եւ արդէն հինգ դարու համար յաջորդարար տասն անձ ենթադրելու որ ըլլա՞մք իբր յիսունական տարու՝ մեծ տարբերութիւն մը չպիտի ընէ՝ տասն անձերէ բերնէ բերան անցնող երգերը՝ եթէ դիտամսր չաղաւաղեն :

Կան նաեւ ուրիշ ապացոյցներ որք կը ցուցնեն թէ երգերու նախնականութիւնը դիտովին չէ կորսուած . զոր օրինակ . Շարականաց բացատրութեան յառաջարանին մէջ երես ԺԱ . հին օրինակէ մը առնելով սոյն առանձին կանոնը յիշուած է թէ « Մեծացուսցէն և Ողորմեայն ցած պիտի և Տէրերկնիցն բարձրագոյն » . և ահա այսօր եւս նոյնպէս կ'ընեն . ըսել է որ երգերու աստիճաններն ալ պահուած են ըստ մեծի մասին : Վերջապէս մեր տղէտ կարծած դպիրներուն յամառութիւնն ու տըգիտութիւնն անգամ՝ օգնած է երգերու ձեւերուն պահպանութեանը որք բնաւ երբէք չեն ուզած զիջում ընել՝ երբեմն և ըստ հարկին բարեկարգութեան ձեռնարկող երաժշտաց . և այժմ ալ 'ի պահանջել հարկին երգերու հին ձեւերը գտնելու համար անոնցմէ ծերագունից դիմելու ստիպուած եմք , և որոց երգածները յարգելի է մեզ միշտ՝ թերութիւններովը հանդերձ :

Թեւեւ այսչափ ապացոյցք բաւական էին հաստատելու ներկայ երգոց նախնական ձեւեր ըլլալը , բայց աւելի պիտի համոզուինք եթէ քննեմք , ինչպէս ըսինք կանխաւ դարերու կարգաւ , թէ ԺԳ . դարու Նոր Ռեմ երգը՝ Ե . դարու Կենդանաբար Աստուած երգին և ԺԵ . դարու Այսօր զանաւելի երգը՝ Ե . դարու Խորհուրդ Ռեմ երգին նման կ'երգի այսօր : Ասկէ աւելի մեծ ապացոյց կրնա՞յ ըլլալ թէ այսօր սոյն երգերը ըստ հիմնական ձեւոյն նախնեաց նմանն են : Եթէ միեւնոյն սեսէ երգերը իրարմէ տարբեր երգուէին այսօր , ինչպէս որ կան քանի մը երգեր , յայնժամ պիտի ըսէինք թէ կա՞մ մէկը կա՞մ միւսը սխալ է , և ճիշտ նախնականը ո՞րն ըլլալը թերեւս դժուարաւ ձանձէինք . (երգերու միաձեւութեան և անոնց խտտորման վերայ տես՛ս յերես 28 և այլ ուրիշ տեղեր : ) Այս ամենէն կրնանք եզրակացընել թէ երգերու ներկայ եղանակաց մեծ մասը ըստ հիմնական ձեւոյն նախնեաց եղանակներուն նմանն են , այսինքն իրենց հնութիւնը գոնէ մինչեւ ԺԳ . դարը կը հասնին :



Չայս հաստատելէ վինի, քանի մը տեսութիւնն եւս կը մնայ մեզ ընել, նախ թէ երգերու մէջ եղած մասնաւոր աղաւաղութիւնները ե՛րբ և ի՛նչ առթիւ եղած են, և թէ անոնք ո՛ր երգերուն մէջ են և ի՛նչ աստիճանի մէջ: Երկրորդ, թէ արդեօք ՚ի նախնեաց անտի եղանակներու յառաջադիմութիւն մը չէ՞ եղած, և մեքենայէս միեւնոյն ձե՞ւն է պահուած:

Երգերու մէջ թերութիւններ կրնան մտնել երկու կերպիւ, ահամայ և կամաւոր. ահամայն բնականաբար կրնայ ըլլալ դարերու հոլովմանց մէջ՝ ուրկէ խուսափել գրեթէ անկարելի է. բայց սա՛ կայ որ այս տեսակ փոփոխութիւնները մէկ ձեւէն ՚ի միւսը անխափառ համրաքայլ ընթացքով մը կ'ըլլան որ նորը հինին մէջ կ'ընկղմի, անոր հետ կը միանայ և կ'ըլլայ նոր ձեւ մը յաջորդ նախնի ձեւին, որ տեսակ մը յառաջադիմութիւն կրնայ համարուիլ՝ դարերու հոլովմանց մէջ. բայց այս պարագային մէջ նորը հինէն բոլորովին օտար չըլլար, այլ անոր կերպարանափոխեալ մէկ յաջորդը: Մինչեւ անցեալ դարու վերջը եղած փոփոխութիւնները այս կարգէն են, երբ ազգայինք այլ և այլ տեղեր գաղթելով ուրիշ ազգերու ազդեցութեանց ներքեւ ինկած են և անզգալազէս անոնց երաժտական ձեւերէն ըստ իւրիք մտած է մեր երգերուն մէջ: Այս տեսակ փոփոխութիւնք ալ քիչ գործածուած երգոց կամ ծանր եղանակաւ և առանձինն երգածներու համար կրնայ պատահիլ աւելի՝ քան թէ առօրեայ և ամենուն գիտցած երգերուն: Ծանր երգերու ոմանց ահամայ փոփոխութեանց մէկ պատճառն ալ տեղ սեղ անոնց եղանակաց մուգուելովն ՚ի հարկէ ստիպեալ նոր եղանակներ շինուիլն եղած է, թէեւ ասի երգոց ընդհանուրին վերայ մեծ ներգործութիւն մը չընէր:

Երգերու կամաւոր փոփոխութիւնն երկու տեսակ եղած է. նախ՝ մասնաւորապէս այն ատեն երբ երգողներու համար քաջալերութիւններ ու վարձատրութիւններ ըլլալ սկսեր է. քաջալերողներուն բարեմտութիւնը առիթ տուեր է ոմանց երգողաց, երգերուն մէջ աւելորդ գեղգեղանքներ մտցընելու՝ որպէս զի իրենց երգածը հրապուրիչ ցուցընեն՝ յուսով վարձատրութեան: Երկրորդ՝ փոփոխութիւնք եղած են առանց մեր եղանակներուն կազմութեանն ու կանոններուն մտադրութիւն ընելու՝ օտար եղանակաց մեքենայէս հետեւողութենէն, որ երբեմն յունականին ու տաճկականին վերայ կ'ըլլար, վերջէն եւրոպականն ալ

աւելցաւ : (Այս մասին տե՛ս յերես 16, 17 և 30 — 33) : Եթէ ուշադրութեամբ դիտեմք պիտի տեսնուե՞ք որ մանաւանդ այս մաս տարիներուս մէջ երբ երգերու ջերմեռանդ պաշտպանները որ ըստ օրէ պահեսցան, դարաց խումբերը մեծ մասամբ ցրուեցան և ժողովուրդը շատ տեղ ցրտացաւ եկեղեցիէն . որոց մեծ մասն ալ միայն Ս. սրտատրայի հազիւ ներկայ կը գտնուի, և Հասարակաց աղօթից ժամերգութիւնները գրեթէ ասանց ներկայութեան ժողովուրդին իբր սովորութիւն ի՛նչ կ'ըլլան, ամենայն ա՜նճապարանք :

Այս վերջին տարիներուս մէջ եկեղեցական երգերու վերայ այնքան փոփոխութիւններ եղած է տեղ տեղ, որ կարելի է տեսլ թէ անցեալ հինգ դարերուն մէջ այնքան չէ եղած . մանաւանդ երբ այս փոփոխութիւնները վարժարաններէն սկսան, և այս մասին ոմանք նաեւ յեկեղեցականաց՝ յանդէսս քաջալեր դրոնուեցան անուղղակի : Հետեւորար թէ՛ ըստ կամս և թէ՛ յանուն բարեկարգութեան եղած փոփոխութիւններն ա՛յնքան շատցած են սոյն վերջին տարիներս՝ որ մանաւանդ մկ քանի երգեր գլխովին այլափոխեալ են, և անկարելի պիտի ըլլար անոնց նախնական ձևը ձանչել եթէ ուրեք ուրեք չգտնուէին հին ժամասաց դպիրներ, որք դեռ ևս կը պահեն նոյն երգոց վաղիմի ձևերը :

Այժմ՝ տեսնեմք թէ երգերու փոփոխութիւնները ո՛ւր և ի՛նչպէս եղած են : Ամաւոր փոփոխութիւնք եղած են երգերու այն տեղերը յորս կը տարբերին ասոնք օտար եղանակներէ : Իսկ ակամայ փոփոխութիւններուն ո՛ւր տեղեր ըլլալը լաւ իմանալու համար սխալ է երեք տեսակի վերածել երգերու կազմութիւնը . Տեւողութիւն, Ելեւէջ և Արտահնչում :

Տեւողութիւն : Արդէն յայտնի է որ ծանր երգոց տեւողութիւնները ո՛րչափ ալ ամանակով շափուած ըլլան՝ դարձեալ ըստ հաճոյս երգողին կը տեւեն . իսկ միաբերան երգոց տեւողութիւնը արդէն մեծ մասամբ պահուած են, ինչպէս կը տեսնուի երգերու ընթացքէն : Այս մասին տե՛ս և յերես 20—29 :

Ելեւէջ : Երգերու դաքաւոր կիրառութեանը մէջ եղանակաց ելեւէջը քիչ մը աւելի փոփոխեալ կ'երեւի, քանզի բերնէ բերան աւանդութեամբ և շատ անգամ երգողաց ձայնի բերմամբ կըրնան այլալի անոնց ելեւէջին կիսաձայները՝ հետեւաբար և ամբողջ ելեւէջները, բայց ասոր համար ալ չեմք կրնար ըսել



թէ բոլորովին այլայլեալ է . քանզի ինչպէս ըսած եմք ուրիշ տեղ մեր եկեղեցական եղանակներն ալ իրենց ամեն մասնաւորութեամբը հանդերձ արեւելեան եղանակաց սեռէն ըլլալով, երբ ուրիշ արեւելեան ազգաց ելեւէջներուն հետ կը բաղդատեմք, կը տեսնեմք որ նոյն ընդհանուր ընթացքէն դուրս ելած չեն . և եթէ տեղ տեղ մասնաւոր տարրերութիւններ կան՝ անոնք ալ նոյն արեւելեան ելեւէջներուն ընդհանուր օրինաց դէմ չեն, ուստի և այս տարրերութիւններուն ՚ի նախնեաց մնացած ազգային յատուկ ձեւերը ըլլալին կը հաստատուի: ՍՁ. սպարդ և Ա.Կ. դարձուածք եղանակներուն՝ մէջ քիչ մը աւելի զարտուղութիւններ մնած են ելեւէջի մասին, որոց պատճառը մանաւանդ ՍՁ. եղանակին գլուխները եղածներուն մէջ՝ սոյն ելեւէջներու կիսաձայներուն դրութիւնն է: Հաւանական է որ ազգային մասնաւոր ձեւերով ուրիշ ելեւէջներ եւս կային ՚ի նախնուն որք այժմ այլայլած կամ կորուսած են, այլ արդի երգերուն մէջ՝ ՚ի բաց սունելով մէկ քանի սխալները որք ակամայ սպրդած են, մնացեալ մասնաւոր ձեւերը բաւական են ցուցընելու թէ ներկայ եղանակներն ըստ ելեւէջին եւս դոնէ մեծ մտտամբ նոյն են ընդ նախնեաց . և փորձառութեամբ ալ տեսանք որ երբեմն կարծածնուս շարի ալ փոփոխեալ չեն եղեր ներկայ եղանակաց հիմնական ձեւերը:

Արտահնչում: Ահաւասիկ այս կէտն է միայն որ ամենէն աւելի կորսուած է, որուն համար ուրիշ եղանակներէ ալ չեմք կրնար վիճարկութիւն մը յառաջ բերել, քանզի ասի դուտ ազգային է: Ասի ճիշդ կը նմանի մեր ստոերու հնչմանց . քանի որ մեր ազգայինք իրենց բնազաւտուն գաղթելով հեռացեր են, այնչափ ալ հետզհետէ ազգային բասերու և տառերու հնչումը, արտասանութիւնը նախնականէն հեռացեր է . բայց ասի այնպիսի երեւոյթ մ'է որ բուն իսկ Հայաստանի մէջ ալ միշտ կայ եղեր (սոյն արտասանութեան, հնչման տարրերութիւնը) ինչպէս որ լեզուի համար, հարկաւ և երաժշտական հնչման համար: Եւ սակայն քանի որ երգերու եղանակը, ելեւէջը և ամանակը միօրինակ է, ճիշդ է, բուն ազգային և նախնականին համեմատ է, այս երաժշտական հնչման կորսուիլը կամ սղակիլը երգին ընդհանուր կազմութեանը վերայ մեծ տպաւորութիւն մը չըներ, և մեք ալ ստիպուած եմք այսօր յարգել մեծ մասին երաժշտական հնչուիլը՝ բարձարով որ քիչ շատ դատնուածներն ալ կա-

մովին չկորսնցընեմք : (տե՛ս զպայմանէ Երես 48, 49) : Ահա ուրոշակի տեսանք որ եղանակաց փոփոխութիւնը մասնաւորապէս ելեւէջներու և ընդ հանրապէս արտահնչելու կերպին մէջ եղած է, և այսչափին համար ալ չեմք կարող ըսել թէ նախնականէն բոլորովին հետացած են անոնք, քանի որ ուրիշ բարեմամբ յատկութեամբք նախնականին հետ նոյն ըլլալնին տեսանք :

Բայց թէ արդեօք լու՛ւ է երգոց նախնական ձեւին սոյն միօրինակութիւնը և անչարժութիւնը՝ այսինքն ոչ—յառաջադիմութիւնը և կամ թէ նախնիք ալ բնաւ յառաջադիմութիւն մը չե՞ն ըրած այս մասին, և այլն . ասի կարեւոր առարկութիւն մ'է որոյ վերայ քանի մը դիտողութիւն ընել կ'արժէ :

Եթէ նկատեմք որ բանաստեղծութիւնն ու երած շառութիւնը խաղաղ ու անդորր դարերու մէջ կրնան յառաջանալ, յայնժամ զգալի կերպիւ պիտի իմանամք մեր նախնեաց երած շառական հանձարը որք այնպիսի աղմկալից դարերու մէջ այնչափ երգեր ու եղանակներ յօրինեցին և մեզ յանձնեցին, որք թէ և ութն եղանակ կը կոչուին, սլլ իրենց մասնաւոր դարձումներովը և ութն ձայնի կարգէն դուրս եղած ուրիշ եղանակներով՝ քանէն աւելի են :

Ութն ձայն եղանակները թէ և Ե. դարէն յօրինուած են, այլ անոնց մէկ մասը յետոյ աւելի մշակուել է : Առաջին անգամ յատուկ երգերու համար սուկոյ գործածուած եզանակներն են ԲԶ, ԳԶ, ԴԶ, ինչպէս կ'երեւի Մննդեան և Մեծի Շարաթու երգերէն : Այլ եղանակի Ու նոյնեաց կերպին ձեւը (1) ՚ի սկզբբան շատ քիչ գործածուած և յետոյ ընդարձակուած է, որպէս կ'երեւի յետին դարերու մէջ յօրինուած ԱԿ երգերէն : ՍԶ եղանակին պարզ տեսակէն և ԱԿ եղանակին դարձուածք տեսակէն ԺԱ. դարէն յետոյ կերպէ յօրինուած : ԲԿ եղանակին Ու պատահական ճշմարտութեան երգին ձեւը Թ. դարէն յետոյ աւելի գործածուած է . նոյնպէս և ԳԶ եղանակին Առօր 'ի կարարութիւն և Խորհորք Խորին երգերու ձեւերը աւելի ԺԱ. և ԺԲ. դարերուն մէջ, և ԴԿ եղանակին բանն որ ըստ հօր երգին ձեւը Ես ԺԲ. դարուն մէջ է ծաղկած . և այլն, և այլն : Բայց թէ արդեօք պէտք չէ՞ որ եկեղեցական երգոց համար ՚ի սկզբանէ անտի որոշեալ եղանակներուն թիւը հետզհետէ աւելնար . իրաւ ասի յառաջա-

(1) ԱԿ եղանակի այս ձեւը գործածուածը կը համարուէր, թէ և ըստ երատչտական օրինաց բուն ԱԿ եղանակ պէտք է համարուի սա :



գիմութիւն մը եղած կ'ըլլար քայց այն ատեն եկեղեցական երգոց և եղանակաց համար միութիւն մը չէր գտնուէր և յանհունս կը բազմանար անոնց տեսակները և թերեւս անյարմար գեղգեղանքներ ալ մնաւ կը գտնուին եկեղեցւոյ մէջ : Ուստի և նախնիք ալ որոշեալ չափով մը ընտիր եղանակներ ընտրել և իրենց երգերը անոնց վերայ նուազեր են և մեք եւս եթէ պէտք եղածին պէս նուազեմք այն եղանակները քաւ է և աւելի եւս է : ոչ միայն մեր եկեղեցական երգոց համար, այլ և եթէ ուզեմք և արտաքոց եկեղեցւոյ եղած երգերու համար ալ :

Բայց կան ոմանք որք օր ըստ օրէ նոր եղանակներ կազմելու փախազ և յարմարութիւն ունին, կրնան իրենց աստարէզ ընտրել եկեղեցիէ դուրս երգեր, և բուն խի եկեղեցւոյ մէջ անգամ՝ եղանակ չունեցող տաղերու և մեղեդիներու վերայ նոր եղանակներ յօրինել, միայն թէ պահեն եկեղեցական պատշաճը :

Նախնական երգոց ձեւերուն ո՛ր դարերու պատկանիլը աւելի ճշդիւ որոշելու համար հարկ էր անոնց գրական աստիճանը քննել, քայց ասի մեր սահմանէն դուրս ըլլալով՝ շարականաց յօրինողներու ցանկը միայն կը դնեմք հատուածիս վերջը՝ հետեւելով մեծ մասամբ Բացատրութեան Շարականաց տպելոյ ի Վենետիկ :

Բայց թերեւս առարկէ որ թէ քանի որ երգոց այժմեան եղանակները նախնեաց եղանակներուն հետ կրցեր են նոյն պահուիլ գոնէ ըստ հիմնական ձեւոյն, ուրեմն ինչ հարկ է այնչափ կարեւորութիւն տալ զանոնք ձայնագրելու որ անկորուստ մնան : Կը պատասխանենք և մեք թէ պէտեւ ըստ կարելոյն ապացուցինք եղանակաց պահուած ըլլալը, այլ ասի անոր համար էր որ ցուցնեմք թէ ներկայ եղանակները պէտք է հաւատարմութեամբ պահպանել : քանզի այժմ կան շատեր որք սոյն եղանակաց նախնականութիւնը չեն ուզեր ճանչնալ և յարգել, հետեւաբար և ըստ կամս փոփոխութիւններ կ'ընեն՝ իբր արդէն հեռացեալ համարելով պանոնք նախնական ձեւերին : սպա թէ ոչ մեք պահէնք արելի կը փոփոխուիմք ձայնագրութեամբ անոնց անկորուստ պահուելուն քանզի երբ իննամով ձայնագրուին, յայնժամ ոչ միայն այժմու քննած փոփոխութիւններէն կ'ազատին եկեղեցական երգերը, այլ և պարզայ դարերու մէջ յակամայս ըլլալիք փոփոխութիւններէն ալ կը զերծին : միայն թէ այս ձայնագրութիւնն արեւմտեան իննամով և քննութեամբ ըլլալու է պարտ թէ ոչ՝ մեծ արդիւնք

մը յառաջ չբերէր, և երգոց ապագայն միշտ անստոյգ կը մնայ: Քանզի եթէ ապագային մէջ մէկը ելնէ և պէտք եղած գգուշու-թիւնները չըլլալով եղած ձայնադրութեան մը թերութիւնները հաստատէ, և յուցընէ թէ անի միակողմանի ձեռնարկութիւն մ'է, յայնժամ ամբողջ դործը իւր համարումը կը կորուսանէ: Թէեւ ստոյգ է որ ո՛րչափ ալ քննութիւններ ըլլան տակաւին կրնան դռնուիլ ի՛նչ ի՛նչ կէտեր որ ուշադրութենէ կը վրիպին և կամ անկարելի կ'ըլլայ անոնց վերայ գոհացուցիչ քննութիւններ ընել, սակայն եթէ ըստ կարի գգուշութեամբ քննուած ըլլան, գոնէ թէ՛ դործը ըստ ինքեան քիչ պակասաւոր կ'ըլլայ և թէ՛ ապագային մէջ ասանկ ձեռնարկ մը խիստ քննադատութիւններէ ազատ կ'ըլլայ. և ներկային մէջ եղած ուշադիր քննութիւնները ճամբայ կը հորդեն ապագային մէջ աւելի լաւագոյն խուղարկութեանց:

Եւ արդէն հեղինակութիւնը մերը չեղած գործի մը վերայ երբ ձեռնարկութիւն մը պիտի ընեմք, ո՛րչափ քննութիւն և ուշադրութիւն ընեմք կ'արժէ, որպէս զի կարելի եղածին չափ անոր հեղինակութեան ուղղութենէն չխտորիմք:

Բայց թէ ի՛նչպէս ճանչելու է երգերու նախնական ձեւն, ի՛նչ հիման վերայ հաստատելու է անոնց բաղդատութիւնը, և այլն, ասոնց վերայ սոյն հրատարակութեանց մէջ բաւական խօսուած է. աւելի մանրամասն տեղեկութիւններ՝ Երաժշտական Յանձնաժողովոյն ձեռնարկին աւարտման ատեն պիտի հրատարակուի, որ Աստուծով մօտերս կը լրանայ:

## ՅՈՒՑԱԿ

### ՇԱՐԱԿԱՆԱՅ ԵՒ ԶԱՆՈՒՔ ԹՕՐԻՆՈՂԱՑ

Ե. ԴՐԷ:

ՄԵԾՆ ԻՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ: Ղաղարու յարութեան, Մաղկազարդի և Աւագ Շաբաթու կանոնները, բաց ՚ի Մաղկազարդի այժմեան Հարցէն, քանզի հին Հարցը անգործածելի է այժմ: (Թէեւ Ղաղարու կանոնը օրինակի մը մէջ Շնորհալուոյն համարուած է, բայց կ'երեւի թէ Օրհնութեան մէկ կամ միւս մասը Շնորհալուոյն է թերեւս. քանզի Օրհնութիւնք սովորաբար երկու մասէ կը բաղկանան. և երբ երրորդ մաս մը եւս ունենան որն որ



կրնայ ըլլալ թէ յօրինողը աւելի դրած ըլլայ դայն, բայց երբ կը տեսնեմք որ ընդհանրապէս երկու մասէն աւելի եղածներուն համար կ'ըսուի թէ այս ոք կամ այն ոք յօրինած է, յայնժամ կրնամք հետեւեցնել որ սոյն աւելորդ մասին մէկը ուրիշ հեղինակի մը գործ է, մանաւանդ երբ ուրիշ եղանակաւ ըլլայ այն. որոյ ապացոյց է և խաչի չորրորդ աւուր օրհնութեան վերջի Գ. հատուածը :

ՄԵԾՆ Մ:ՍՐՈՊ : Ապաշխարութեան կարգը :

ՄՈՂԱՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ : Ճրագալուցի, Ծննդեան ութն աւուրց կանոնները, Մեծացուցէները, բաց 'ի ո՛չ. Ո՛՛՛ Բերհարէն որ յետին դարու գործ է. Տեաւնընդառաջի կանոնը (ասոր ալ օրհնութեան քանի մը մասերը ուրիշի հեղինակութիւն ըլլալ կը կարծուի) : համօրէն Առաքելոց Հարցը իւր սարօքն, Յարութեան կարգը, Գլխատման Յովհաննու Հարցը իւր սարօքն, Հոգեդաւրստեան և Վարդավառի և Փոխման առաջին աւուր կանոնները, Մարգարէից ա) Հարցը և Հայրապետաց կանոնը : (Թէեւ Մարգարէից ա՛յ օրհնութիւնն ալ Որ զսորոսածայնը սմա կ'ընծայուի, բայց հաւանական է որ անի յետին դարուց գործ ըլլայ, թերևս Շնորհալուոյնը, քանզի ա՛յ եղանակի այս ձեւը մեծ մասամբ վերջէն յօրինուած երգերուն յատուկ է (1). մանաւանդ որ ասոր յատուկ Հարցն Շնորհալուոյնն է : Հետեւաբար և Խորենացին կ'ուենեայ երեք հատ ա) Հարց, ա'յն է Համօրէն Առաքելոց, Մարգարէից, և Գլխատման Յովհաննու, որոց կազմութիւնն ու եղանակները բացայայտ կը ցուցնեն միեւնոյն յօրինողի երգ ըլլալնին : Վարդավառի Առաջին աւուր կանոնն ալ թէեւ Խորենացուոյն կ'ընծայի բայց քանի մը հեղինակի գործ ըլլալ կ'երեւի : Յարութեան կարգին համար ալ թէև Ճոն Բարսղի կամ Անանիայի կ'ըսուին այլ հաւանական չէ :)

ՅՈՂՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ : Անտոնի և Թագաւորաց կանոնները, Յովհաննու Մկրտչի Հարց քն. Չարքարէ Բարբեւոյն, Լուսաւորչի կանոնը, Հռիփսիմեանց աւուր Համբարձին՝ Անկէշն, Տապանակին և Շողակաթին կանոնները : Հաւանականաբար և Սլխարհամատրանի Հարցը իւր սարօքն : Անտոնի և Թագաւորաց կա-

(1) Ահաւասիկ կ'երեւի որ եղանակաց քննութեանը համար որչափ որ երգաց գրական քննութեանը պէտք կայ, նոյնչափ ալ գրական քննութեան համար եղանակաց քննութեանը :

նանները խորհնացույցն եւս կ'ընծային որ շատ հաւանական չէ . աւելի հաւանութեան է Շնորհալուոյն ըլլալը որպէս ոմանը կ'ըսեն . զանէ Օրհնութիւններուն համար : Լուսաւորչի կանոնը Ո՛վ երջանկի՛ զոր ոմանը խորհնացույցն կ'ընծայեն , թերեւս՝ ինչպէս արդէն ըստինք՝ Օրհնութեան մէկ մասին համար ըլլայ , վասն զի երկու զոյգ է . մէկը խորհնացույցն և միւսը Մանկակուենիին ըլլալու է :

Է. Դար :

ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ : Հոխիսիմեանց կանոնը : ՍՍՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՁՈՐԱՓՈՐԵՅԻ : Նաւակատեաց և Խաչի ու թորկից , վարազայ և Գիւտ Խաչի կանոնները :

Ը. Դար :

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԻՄՍԱՍՍԱՍԷՐ ՕՋՆԵՅԻ : Մեծ տօնից կանոնները : ( Թէ և այս շարականներէն մէկ քանին ուրիշներու ըլլալ կը կարծեն ոմանը , մանաւանդ Դաւթի մարդարէի կանոնը , բայց Հարցը Մեղաք յոմեայնին՝ իմաստասիրին կ'ընծայուի միշտ )

ԱՏԵՓԱՆԵՆՈՍ ՍԻՒՆԵՅԻ : Աւագ օրհնութիւնները , բաց 'ի քի ձայնէն : ( Բայց ասի տարակուսելի է թէ ինչո՞ւ քի ձայնը չէ յօրինած , քանի որ ձայներու կարգաւ յօրինուած ուրիշ երգոց մէջ ասանկ պակաս մը չկայ , թերեւս վրիտակ մը ըլլայ այս կարծիք . այս պահարութիւնը կայ և 'ի Բացատր . Շարականաց երես 872 : )

ԱՇՈՏ ԻՇԻՍԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ : Չորս շար պարիերէ՛ Ո՛վ Ե՛ աւուր Խաչի : Թ. Դար :

ԱՏԵՓԱՆԵՆՈՍ ԱՊՐԱՆԵՅԻ Եպիսկոպոս Մոկաց : Աբեու-Է-Էն սբէոց՝ վերջին մաս Օրհնութեան չորրորդ աւուր Խաչի :

Ժ. Դար :

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՏԱԳԱՐՉ : Յատուկ Մանկուկներու մեծ մասը , Մարտիրոսոց ու Հանգստեան կանոնները : Ս . Վահանայ Գողթնացոյ շարականին համար կ'ըսուի աւանդութեամբ թէ իրեն քոյրը երգած է զայն :

ԺԲ. Դար :

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍՄԻՆԱԻԱԳ ՎԱՐԴԱՊԵՏ : Ղեւոնդեանց Համբարձին՝ Պայծառոցանը :

ԳՐԻԳՈՐ ՀԱՅՐԱՊԵՏ ՊԱՂՀԱԻՈՒՆԻ : Աւետեաց և երկրորդ Մարկագարդի կանոնները :

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ : ՀԲ . Աշակերտաց , Յովնանու և Աշոից



հիւրակէից կանոնները, Մուսնի վերապի Հարցը իւր սարօքն, Ծաղկազարդի Հարցը, Մեծի Ուրբաթու գիշերին Այօր 'Էհարսածնը, Հոգեգալտեան Բ, Գ, Դ, աւուրց կանոնները, Յովհաննու Ծննդեան Հարցը Որ աւորուող իւր սարօքն, Վարդապետի Բ, Գ, աւուրց կանոնները, Մարդարէից Հարցը Որ Ընդ Եղիշն իւր սարօքն, Հրեշտակապետաց կանոնը, Վարդանանց Ստեղին և Նորահաշը, Ղեւոնդեանց կանոնը, և վառ Չայն Աւագ Օրհնութիւնը՝ ըստ հիւրակոս պատմիչի: Նաեւ Այօր անճառը, Նորարեքեթեալը, Արարչականը, Ճաշու ժամու և խաղաղականի Երգերը և Աստուած անեղը: Ըստ տմանց նաեւ Սրբոց Քառասնից և Բեթղէնի Մանկանց կանոնները: (Մարդարէից ալ Օրհնութիւնն ալ Որ շարսածայնն՝ կարծեմք թէ ասորն է, հետեւընկերով երգին ու եղանակին կազմութիւնէն և Հարցին իրենն ըլլայէն):

ՆԵՐՄԵՒ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ: Չատկի առաջին աւուր, Նոր հիւրակէի, Համբարձման, Հոգեգալտեան Չ, Է, աւուրց և Որդւոց ու Թոռանց կանոնները:

ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԱՐՈՆԱՅԻ: Խորհուրդ խորհնը:

ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՈՍՅԻ: Ծննդեան Յովհաննու կարապետի Օրհնութիւնը Արեւիկանն որդարուսեանը:

ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ: Յովակիմայ և Աննայի կանոնը, Երկուտասան Առաքելոց շարականը՝ Ի յանուհեան թիւն, Սրբոյն Սարգսի շարականը և Սրբոց Թարգմանչաց կանոնը:

ՅԱԿՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԼԱՅԵՅԻ ԿԱՄ ՏԱՐՈՆԱՅԻ: Ծննդեան Աստուածածնի կանոնը:

ՅՈՎՀԱՆ ԵՋՆԿԱՅԻ (սըսուզ) 'Ի վերջն յ. Գ. և 'Ի սկիզբն յ. Գ. դարուն: Լուսաւորչի շարականներէն Այօր շարսածայեալ և Լեբնէ աւիւնն. մեծին Ներսէսի և սրբոյն Յակոբայ կանոնները:

ԵՒՐԱԿՈՍ ԵՋՆԿԱՅԻ: Փոխման Անճիւքը:

Ռաֆայի Զուլ իւր սարօքն, և խնկարկութեան շարական Յայտուր՝ որո՛ւ հեղինակութիւնն ըլլալը յայտնի չեն:

Կան նաեւ քանի մը Շարականներ որը խափանեալ են այժմ, որոցմէ են Ս. Գէորգայ և Թաղէոսի ու Բարդուղիմէոսի առաքելոց շարականները, և այլն:

Հաւանական է թէ խմբովին եղած երգերու, ինչոյէս, Աղցից օ  
Յինանց, Մարտիրոսաց և Հանգստեան երգերուն մէջ գանուին  
երգեր որք ուրիշ հիղինակի դործ ըլլան: Մարտիրոսաց կարգին  
մէջ ալ Ս. Սարգսի և Ս. Գևորգայ վերտերեալ երկու երգերը  
թէ եւ յատուկ Մանկունքներու կարգին կը պատկանին, բայց  
Մարտիրոսաց կարգին մէջ դրուած են:

Կան այնպիսի շարականներ ալ որք հին գրչագրաց մէջ չեն  
գանուիր. ինչոյէս Օրթագլուղի վերմանութեան Թանգարանը եւ  
ղած դրչագրի մը մէջ Արքեւ և Ժարասեր և Ես տասնէ երգերը  
չկան. այս գրչագիր շարականը դրուած է բուրազիր 'ի թուին  
ՉԾԵ 'ի թագաւորութեան Հայոց Աւչին . . . և 'ի Հայրապետութեան  
Կոստանդեայ . . . դրեալ 'ի քաղաքն Սիս և այլն: Ասոր մէջ Ասորոս  
ունչը կ'ընէ կէսին վերայ լինցած և ներքեւը ծագիկ մը նկարուե-  
լով անմիջապէս շարունակուած են Աւագ Օրհնութիւնները. ե-  
թէ այսպէս չըլլար կարելի էր ըսել թէ թուղթ ինկած է: Վեր-  
ջէն յօրինուած շարականները որ իրր յաւելուած 'ի վերջոյ դըր-  
ուած կ'ին անոնց մէջն ալ չէին գանուէր վերոյիշեալ երգերը:

Շարական մը եւս տեսած եմք 'ի Ս. Երուսաղէմայ գրատունը  
Շարական Գրեթէրէ Անարդէցոյ անուամբ որ այլ և այլ անտփոր շա-  
րականներ կը սարունակէ, (կը ցաւիմք որ քանի մը մաս չեմք օ-  
րինակած). այս շարականը կ'արտացունէ թէ Գրիգոր Անաւոր-  
դեցին ազգային ծէսերու մէջ նորութիւններ մտցունելու հետա-  
մուտ եղած է: Մօտերս ձեռքերնիս անցաւ վերջին դարուց մէջ  
Ունիթօռաց ոճով դրուած թերթ մը շարական խաղերով տպեալ  
որուն համար այսչափ միայն կրցանք իմանալ թէ 'ի վաղուց վե-  
նետիկ տպուած ժամագրքի մը վերջը իրր յաւելուած դրուած  
քանի մը շարականներու կտորն է այն և որ 'ի հետաքրքրութիւն  
ընթերցողաց յառաջ կը բերեմք աստ:

Կանոն սրբոյն Յովնակոյ Աստուածահօրն:

Օրհնութիւն. բի:

Որ երբէ ըստ եղանակի կանոնի սրբոյն հրեշտակապետացն Մէտոյելէ և Գաբրի-  
էլէ 'ի Վլքանէ օնկե ցլտիման խորց շրեպան: Եւ Թեօպոսոցն որ 'ի օնն,  
երբէ ըստ եղանակի Բձացոսացն շրբոյն կերպիէ շառանարդաց պահոց:

Որ զորդին դաւթի գյովսէփ ծառայ քո, հայր անօրինա-  
բար որդոյդ կարգեցեր. բնդ նմին և մեք գովեմք բզհայրդ





մեր ձեռնարկած նիւթին բնութեանէն է, այսինքն դժուարաբացատրելի ըլլալէն, մասամբ իւրք եւս մեր գրելու տկարութեանէն ըլլալը կը խոստովանիմք :

Կրնան գտնուիլ տեղ տեղ և այնպիսի բացատրութիւններ որ իրարու հակառակ երեւնան, այլ ինչպէս ըսինք, ասոնք ըստ պարագային՝ և առանց իրարու հետ բաղդատութեան դրուած ըլլալով՝ ճիշդ իրենց գրուածին պէս պահեցինք զանոնք և իբր հաւաքածոյ ինչ կը ներկայացընեմք ընթերցողաց : Քանզի թէ եւ կարելի էր սոցա ամենէն քաղելով ընդհանուր եզրակացութիւն մը հանել, բայց խնդիրն իւր բուն կերպարանքովը ներկայացընելու համար զանց ըրինք զայս :

Եթէ սոյն հրատարակութիւնս քաջալերութիւն գտնէ, յայնժամ ասոր յարակից տետրերն ալ պիտի հրատարակեմք, որպէս խոստացած եմք ՚ի սկզբան գործոյս :

### ԳԻՏԵԼԻՔ

Հրատարակութեանս ութերորդ տետրը տպուելէն յետոյ իմացանք թէ Խարթալցի տիրացու Յովհաննէս եկեղեցական երաժշտութիւնն ուսած է Պարկեշտ Տէր Արբահամու աշակերտ տիրացու Արբահամէն, և ՚ի ձեռն Պէղճեան Ամիրայի նախ ՚ի Խարթալ և ապա ՚ի 1828 Մայր եկեղեցւոյ ուսումնարանը դասատուութիւն ըրած է և վախճանած է ՚ի 1839, 35 տարեկան : Այլ Խարթալցի կոչուած է՝ հոն տեղ դասատուութիւն ընելուն համար :

Երեւ 88, Տող 18. Յովհ. վարդ. տետր է լի է Յովհ. վարդ. 4. Պօլսեցի.  
 > > > 24. Սիմէօն Զուգա. > Սիմէօն վարդ. Զուգայեց.



Ներկայ հրատարակութեանս միջոցին Հայ եկեղեցւոյ երաժշտաց յաջորդութեանը վերայ տեղեկութիւններ հաւաքելու համար այլ և այլ անձանց ղիսելէ և քանիցս Պօլսոյ այլ և այլ կողմերը շրջելէ զատ, բարեկամաց ոմանց ալ յանձնարարութիւնները բաժնէ ինք որ տեղեկութիւններ հաղորդեն մեզ, որոց ամենուն մանաւանդ Փափազեան Ռեթէոս Լֆէնտիի այս մասին ցուցած փոյթը շնորհակալութեան արժանի է: Թէեւ կը յուսայինք քանի մը տեղեկութիւն եւս հաւաքել և սակայն հրատարակութիւնս այրուական ժամանակէ ՚ի վեր մամուլը ներքեւ լինելով՝ այլ ևս սպասուել աւելորդ համարեցինք, և մտադիր եմք որ եթէ ուրիշ տեղեկութիւններ հասնին և սխալներ եթէ կան ուղղուին, զամենք ալ յարմար առթիւ մը հրատարակեմք:

Վերջի տեսրին տպագրութեանն ատեն իմացանք թէ Ռէյէգեան տիրացու Սոեփան՝ Գումգարու տան մը մէջ եկեղեցական երաժշտութեան դասատուութիւն կ'ընէ եղեր և որոյ օգնական է եղեր տիրացու Մելքոն անուն մէկը: Սոյն տիրացու Սոեփանի վարպետը յայտնի չէ: Վախճանած է սա ՚ի 1836 իբր 70 տարեկան: Սորա աշակերտներէն են իւր թոռները Տէր Հմայեակ, Տէր Միքայէլ (վախճանեալ) և Տէր Բարթուղիմէոս ՚ի Գումգարու: Նաեւ Հիւրմիւղեան Տէր Յովհաննէս ՚ի Գումգարու և Քիւրքճեան տիրացու Յովհաննէս յԵջնի դարու:

Կ. Պօլիս որ Հայ եկեղեցւոյ երաժշտութեան կեդրոնը կրնայ համարուիլ գոնէ թուրքաստանի նկատմամբ և ուր բաւական թուով ծերունի երաժիշտներ ու ժամասացներ կան՝ երբ միայն այս տեղեկութիւններն հաւաքելու համար այսքան դժուարութիւններ կան, ապա ուրեմն ո՛րքան դժուարութիւններ կան հեռաւոր տեղերէ բուն իսկ երաժշտական խնդրոց համար Պօլիսէն տեղեկութիւն խնդրելու մասին, երբ նկատեմք մանաւանդ թէ մեր ժամասացք բաց ՚ի իրենց պաշտօնէն՝ այսպիսի խնդիրներու վերայ հետաքրքրութիւն չեն ըրած, որով և պատմածնին իրարու համեմատ չըլլալով՝ հաղիւ ուրեմն կարելի է ճիշդ հետեւութիւն մը հանել անոնց պատմութենէն և այն ալ այլ և այլ հարցումները ներով:







730

~~592~~





6013